Ս. ՎՐԱՅԵԱՆ

ԿԵՎՆԵՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ՊԵՏՐԵՐ
ՊԵՄՐԵՐ
ՎՐՈՒՄՆԵՐ

Ա. ՀԱՅՈՐ
ՊԼՅՈՒՐ
1967

ARAM webaram.com

ARAM webaram.com

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ՊԷՏՔԵՐ
ՊԷՄՔԵՐ
ՊԱՐՈՒՄՆԵՐ

Ա. ՀԱՏՈՐ
ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՊԱՐԱՆ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»
ՊԷՅՐՈՒԹ
1967

ARAM webaram.com

ԱՅՍ ՀԱՏՈՐԸ

Սիրով ձուլիրում եմ Մասիսը չտեսած, բայց, տարագրութեան մէջ, Մասիսի երազով տոչորող հայ տղաներին եւ հայ աղջիկներին, որոնց մատաղ սիրտը բաբախում է Հայաստանի համար:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ARAM webaram.com

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

12 տարի առաջ, 1955ին, Գահիրէում լոյս տեսաւ «ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ» իմ հատորը, ինձ համար որպէս «պարապ վախտի խաղալիք», բայց ընթերցողները եւ մամուլը այդպէս չհասկացան. ապացոյց՝ մի քանի ամիսների ընթացքում շուրջ երկու հազարնոց տպաքանակը ամբողջապէս սպառուեց: Մամուլի եւ ընթերցողների համակրական վերաբերումը բարոյական պարտադրանք եղաւ հեղինակի համար, «ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆ» երկարելու մինչեւ վեցերորդ հատոր եւ դարձեալ ընթերցողների պահանջի վրայ՝ մտածելու առաջին հատորի վերահրատարակութեան մասին: Մի քանի բարեկամների եւ ընկերների նիւթական աջակցութիւնը հնարաւոր դարձրեց վերահրատարակութիւնը այս հատորի, որոնց յայտնում եմ իմ սրտագին շնորհակալութիւնը:

«ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ» բոլոր հատորները հրատարակուած են երկու հազարական տպաքանակով: Ներկայ հատորը տպուած է 1500 քանակութեամբ: Նորից իմ երախտագիտութիւնը եւ համակրանքը ինձ աջակցողներին, որոնց թիւը, ուրախ եմ ասելու, եղաւ շատ եւ համակրանքը ջերմ:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ARAM webaram.com

ARAM webaram.com

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ապրում ես երկար տարիներ այս մոլորակի վրայ եւ չես նկատում, որ կեանքն էլ ունի, այսպէս ասած, իր հանգրուանները, իր ուղիները եւ այդ ուղիների վրայ՝ բազմաթիւ ու բազմապիսի կայաններ:

Անցնում ես կայանից կայան: Մի տեղ կանգ ես առնում երկար, մի ուրիշ տեղ կարճ եւ ամէն տեղից առնում ես, հետդ քերում տուն յուշառարկաներ: Մի տեղից թանկագին քար ես առնում, մի ուրիշ տեղից՝ անարժէք մի խեցի: Մի այլ տեղից՝ մի արձանիկ, մի նկար, մի պսպղուն կոճակ կամ մի զարդասեղ: Անհաշիւ առարկաներ ես հաւաքում սենեակներումդ կամ գզրոցներիդ մէջ տարիների ընթացքում, որոնց մէջ տեսնում ես կեանքիդ մէկ կտորը, էական մասնիկը քո գոյութեան: Ու գերի ես դառնում իրերի եւ յուշերի...

Ու մի օր էլ մտածում ես մաքրել սենեակներդ ու գզրոցներդ, դուրս նետել ինչ որ հնացած է այլեւս եւ անկարեւոր, ինչ որ ծածկրւել է ժամանակի անագորոյն փոշիով, իմաստից գուրկ է դարձել, բայց ինչպէ՞ս նետել կեանքիդ կտորը...

Յիշում եմ՝ մեր դաստիարակ կոմիտաս վարդապետի անշուք խցում, նուագարանի վերեւ, պատին, երկար ժամանակ կախուած էր մի ծաղկեփունջ: Ծաղկեփունջ՝ անունն էր միայն, իրապէս՝ խունացած տերեւներ ու չոր ցօղուններ՝ տժգոյն ժապաւէնով միացած: Մենք, նրա աշակերտները, ծիծաղում էինք այդ, ամօթ է ասել, ծաղկեփունջի վրայ, բայց Կոմիտաս հայր-սուրբը պահում էր խնամքով, պաշտպանում սրբապիղծ ձեռքերից, մաքրում էր փոշուց ու

ARAM webaram.com

միջատներից եւ գուրգուրում վրան: Ո՞վ գիտէ, ինչ սիրելի մի ձեռք նուէր էր բերել եւ կախել պատին· ժամանակին փարթամ այդ ծաղկեփունջը, որից այժմ մնացել էին տժգոյն ժապաւէնով կապուած խուճացած տերեւներ միայն եւ չոր ցօղուններ, որպէս թանկագին ու նուիրական յիշատակ· կոմիտասը ինչպէ՞ս նետէր դուրս իր սրտի մէկ մասնիկը···

Ընթերցողը կարող է խնդալ ե՛ւ իմ այս չորացած ու խուճացած «ծաղկեփունջ»ի՝ այս տժգոյն հատորի վրայ: Կարող է ափսոսալ այն թուղթն ու մելանը, որ վատնուած է վրան: Ցաւ յայտնելով ճոյնիսկ, որ այս անարժէք շարադրութիւնները վերածուած են գրքի՝ փոխանակ դուրս նետուելու, իբրեւ այլեւս անպէտք թուղթ:

Գիտեմ նաեւ, որ բնաւադատն էլ, — եթէ այդպիսին գտնուի երբ եւ իցէ, — բնաւադատն էլ գլուխս պիտի չշոյէ բնաւ, ոչ էլ ընթերցողից գովասանք եմ սպասում: Բայց ինձ համար այս շարադրութիւնները թանգ են ու սիրելի, որպէս կեանքիս ուղիների կայանիներից մնացած յուշառարկաներ, ինչպէս հաղցր յիշատակ անցեալի եւ յոյս ապագայի, ինչպէս պատից կախուած ծաղկեփունջը կոմիտասի համար: Հետեւաբար, ինչպէ՞ս փչացնել եւ դուրս նետել կեանքի կտորը հոգու, որի մէջ կեանք է դրուած: Անմեկնելի մի ոյժ ստիպում է ինձ ի մի հաւաքել այս հատորի մէջ, լոյս աշխարհ հանել կեանքի ուղիների կայանիներից հաւաքուած այս անպատոյն յուշառարկաները: Եւ եթէ, ինչպէս ուկրայնացի մեծ հայրենասէր Տարաս Շեւչենկոն է ասել իր բանաստեղծութիւնների մասին·—

Մի կաթ արցունք աչքերից սեւ՝
Ես պանիրից պան կը լինեմ.
Ծոհեր իմ, ո՛հ, մոայլ ծոհեր,
Ցաւ էք դուք ինձ եւ վիշտ դժխեմ...

Այո՛, եթէ իմ այս անսեթեւեթ շարադրութիւնները եւս մի կաթ արցունք համեն ընթերցողի աչքերից սեւ, ես էլ կը լինեմ պանիրից ամենապանը, ուրախ եւ երջանիկ: Մի կաթ արցունք *աչքերից հայ...*

***

Ներկայ հատորում ամփոփուած կտորների մի փոքր մասը, — *«Ինչպէս Դաշնակցական եղայ»*, *«Մեր Դաշնակցական Ծումբը»*, *«Սասունի Ազատութիւնը»*, — տպուած է «Ցուսաբեր» օրաթերթում:

ARAM webaram.com

«Կեանքի եւ Մահուան Մէջեւ» առնուած է «Հայրենիք Տօնացոյց–Տարեգիրք»ից: Միւս բոլոր կտորները, անտիպ, առաջին անգամն են լոյս տեսնում այստեղ: Այս կտորները գրուած են զանազան ժամանակ, այլեւայլ վայրերում, այս կամ այն առիթով, ա՛յն օրուայ տրամադրութեան տակ, բայց միացած են միեւնոյն գաղափարով ու միեւնոյն ոգիով:

Ընթերցողը կարող է խաբուել գրուածքների արտաքին ձեւից՝ կարծելով, թէ հեղինակը զուտ գրականութիւն է փորձում անել, այսինքն՝ երեւակայական բաներ է պատմում: «Զուտ գրականութիւնը» իմ կարողութիւններից վեր է ու նպատակից դուրս: Ինչ որ գրուած է այս հատորում *զուտ իրականութիւն է*, պատմական փաստեր, որոնց ես մասնակից եմ եղել, տեսել ու զգացել եմ, ուրախացել ու տխրել, ապրել իմ բովանդակ էութեամբ...

Գրականութեան կամ երեւակայութեան պտո՛ւղ— բնա՛ւ երբեք: Իրական պատկերներ հա՛յ կեանքի մօտիկ անցեալի, «դէպքեր, դէմքեր եւ ապրումներ», հեղինակի տկար վրձինով գծուած հոգեբանական վիճակներ — ահա՛ սոյն փանոսի հատորի բովանդակութիւնը: «Կեանքը ինչպէս որ էր», պիտի ասէր Զօհրապը:

1955, Օգոստոս — Ս· ՎՐԱՑԵԱՆ

Բուա դը Բուլոն, Լիբանան

ARAM webaram.com

ԹՈՌՂԱՅԸ

Ի սկզբանէ էր Աչխարհն Հայոց եւ թագաւորութիւնն Բագրատունեաց, Անի:

Եւ Անի եղեւ Վոլկա: Եւ Վոլկա եղեւ Խրիմ: Եւ Խրիմ եղեւ Դոն: Եւ Դոն եղեւ Հանրապետութիւն Հայաստանի: Եւ Հանրապետութիւն եղեւ աչխարհ ամենայն: Եւ հայն եղեւ աչխարհացրիւ, աչխարհաքաղաքացի...:

Այս է պատմութիւնը իմ: Անուններըը փոխելով՝ պատմութիւնը բոլոր հայերի: Անցեալը եւ ներկան...:

Ինը հարիւր տարիներ առաջ, քրիստոնեայ ու մահմեդական հարեւանների, հեռաւորների ու մերձաւորների անդադրմ հարուածների տակ, վերջ գտաւ հայոց անկախութիւնը Հայաստանի հողի վրայ: Հայոց աչխարհը արտրուեցաւ արեւելքից ու արեւմուտքից խուժող բարբարոսների ձիերի ամրակների տակ: Գետերով արիւն հոսեց: Մարդոց պակաս ձգած աւերի դործը լրացրեց բնութիւնը՝ պարզեւելով հայերին երկրաչարժ, սով, համաճարակ հիւանդութիւններ, արտագաղթ: Կործանուեց չէն Անին: Եւ ապաքինո դաւակները Հայկի, բազմահազար ու խուճապահար, անէծք ու նզովք կարդալով անգութ ճակատագրին, լաց ու շիւանով, լքեցին իրենց դարաւոր բոյները եւ բնաւեր թռչունների երամներով ցրուեցին հիւսիս ու հարաւ, արեւելք ու արեւմուտք, ի սփիւռս աչխարհի:

Եւ երեսուն հազար ընտանիք էլ — Անիի զաւակները, ասում են տարեգիրները — ասիական վայրենի ջոլիրներից մազապուրծ, մայր

ARAM webaram.com

հողից պոկուելով, խուճապահար՝ չարժուեցին հիւսիս՝ Կովկասի ուղղութեամբ, դէպի Սարմատեան տափաստանները դորչ:

Ո՞ւր էին գնում հայութեան այդ մտամոլոր բեկորները. իրենք էլ չգիտէին: Մի խաղաղ անկիւն երկրագնդի երեսին, մի ապահով տանիք իրենց գլխի վերեւ, մի կտոր հաց եւ աշխատելու ու ընչելու ազատութիւն — այս էր նրանց փնտռածն ու չգտածը:

Ճանապարհին, հազիւ Կովկասեան բարձրաբերձ լեռները անցած, նրանցից մի փոքր հատուած հրապուրուեց ազատասէր չերքեսներից եւ հաստատուեց նրանց երկրում: Դարերի ընթացքին հարբատացաւ ու բարգաւաճեց, կորցրեց մայրենի լեզուն, ընդունեց օտար բարքեր ու կերպարանք՝ պահելով միայն Լուսաւորչի սուրբ հաւատը՝ վերջը կապմելու համար Հիւսիսային Կովկասի չերքեսահաւս Արմաւիր հայաւանը, Կուբանի եղերքին:

Մնացեալ բազմութիւնը, սակայն, տարերային մղումով չարժուեց առաջ, դէպի հիւսիս: Ի՞նչ ուղիներով, ինչպիսի՞ պայմաններում, որքա՞ն ժամանակից — յայտնի չէ. վերջապէս, հասաւ Վոլգայի եղերքները, Թաթարների մօտ, Հաչտարխանի եւ Կազանի միջեւ: Ամանները սիրով հիւրընկալեցին արուեստաների եւ արհեստների վարժ չինարար այս ժողովրդին՝ չնորհելով նրանց ապրուստի տեղ եւ աշխատանքի ազատութիւն: Եւ Անիի հայերը դարձան Թաթարահպատակ՝ Վոլգայի ափին:

Սակայն, Վոլգան երկար չհրապուրեց Հայկի զաւակներին. հազիւ կէս դար անցած՝ նրանք որոշեցին հեռանալ Թաթարների մօտից, յայտնի չէ, ինչ պատճառով: Արդեօք խանների իշխանութիւնի՞ց զոհ չմնացին. բայց խանները զոհ էին նրանցից եւ չէին ուզում, որ հեռանան: Կլիմա՞ն անյարմար դուռն: Տափակ դաշտե՞րը անսիրելի էին լեռնաբնակների սրտին: Ո՞վ է իմանում:

Հայերը արտօնութիւն խնդրեցին Մեծ խանից ազատ հեռանալու երկրից: Ամանը մերժեց: Յորդորեց նրանց մնալ: Նոր բարիքներ եւ արտօնութիւններ խոստացաւ. հակառակ դէպքում՝ սպառնալով չարաչար պատժել: Թաթար ժողովուրդը ազատ էր, որ մնան: Հայերը անդրդուելի էին: Եւ զաղտնի պատրաստուելով, մի մութ գիշեր, սայլերով, ձիերով, հետիոտն, առնելով ինչ որ կարելի էր առնել, լքելով տուն ու դործատեղի, եկեղեցիներն ու սիրելիների չիրմները, անազմուկ փախան:

Յանկարծակիի եկած Թաթարները առաւօտեան հետապնդեցին փախստականներին: Յորդոր, աղաչանք, սպառնալիք՝ ի զուր անցան: Առանց յետեւ նայելու՝ հայերը առաջացան Սարմատեան դաշ-

ARAM webaram.com

տերով, դէպի հարաւ–արեւմուտք: Առաջուց պիտէի՞ն, ծրագրե՞լ էին, թէ ուր պիտի երթային եւ ինչ պիտի անէին, յայտնի չէ: Վաթսուն տարիների թաթարահայ գաղութի պատմութիւնը Վոլգայի ափին՝ մնում է անորոշ:

Դէպի հարաւ ու արեւմուտք չարժուելով յառաջ ու յառաջ՝ հայերի բազմամբոխ կարաւանը կանգ առաւ Ղրիմ թերակղզու մուտքի առջեւ:

Ղրիմում իշխում էին խալամ թաթար խաները, Օսմանեան Թուրքերի հովանաւորութեան ներքեւ: Արեւմուտքում գտնւում էր քրիստոնեայ Լեհաստանը: Ըստ երեւոյթին, տարակարծութիւն ու վէճ է ծագում գաղթականների մէջ: Մի մասը բաժանւում եւ շարունակում է ճանապարհը դէպի արեւմուտք, ի վերջոյ, նոր հայրենիք գտնելով լեհական Գալիցիայում: Այսպիսով կազմւում է Լեհաստանի հայոց նշանաւոր գաղութը՝ իր փայլուն ու տխուր պատմութեամբ: Հայերը, հետզհետէ Գալիցիայից տարածուելով, գաղթավայրեր են կազմում նաեւ Հունգարիայում: Կաթոլիկութիւնը գալիս պոկում է նրանց ազգային մարմնից եւ ձուլում լեհերի ու մաճառների հետ: Այսօր կարելի է այնտեղ գտնել հայկական ծագումով, հայկական աչքերով ու հայկական քթերով լեհախօսներ ու մաճառախօսներ՝ փոշիացած բեկորները տարապիր անեցիների...

Մնացեալ մասը, կարելով ծոցը, մտնում է Ղրիմի թերակղզին: Թաթար խաները ու ժողովուրդը ընդունում են նրանց ջրկաթաց, հող եւ արտօնութիւն չնորհում: Ղրիմի թաթարներին էլ ծանօթ էր, անշուշտ, հայերի աշխատասիրութիւնն ու չինարար ոգին: Ղրիմը պէտք ունէր նրանց:

Հայերը տեղաւորւում են Ղրիմի քաղաքներում ու գիւղերում, գլխաւորապէս, Բախչի–Սարայի եւ Փեֆէի շրջաններում: Հիմնում են զուտ հայկական գիւղեր, վանք ու եկեղեցիներ, դպրոցներ: Մեղմ եւ առողջ կլիման, արգասաբեր հողը, ծովը՝ բանուկ նաւահանգիստներով, աշխատանքի ազատութիւնը, վերջապէս, իշխանութեան բարեհաճ վերաբերումը արագ կերպով նպաստում են հայերի զարգացման եւ տնտեսական ու մշակութային վերելքին: Ճարտար արհեստաւորներ, անխոնջ այգեգործներ, համարձակ վաճառականներ՝ հայերը շուտով չէնացնում են Ղրիմի թերակղզին, աճում ու բազմանում են եւ առաջնակարգ տեղ գրաւում թաթարական պետութեան մէջ, այնքա՛ն, որ մի քանի դար շարունակ, քարտէսների վրայ, Ղրիմի փոխարէն, նշանակւում է Armenia Maritima — Ծովային Հայաստան: Թաթար խաներն ու ժողովուրդը գնահատում ու սիրում են

ARAM webaram.com

հայերին, որոնք Ղրիմի վաճառականութիւնը հասցրին մինչեւ Կոստանդնուպոլիս, մինչեւ Վենետիկի ու Ջենովայի աշխարհահռչակ շահատաններըը:

Զարմանալի համանմանութեամբ Անիի դպրոցականութեան երկու հատուածներն էլ զոհ են գնում հայ կղերի տգիտութեան, ընչաքաղցութեան ու փառասիրութեան: Լեհահայութիւնը կործանուեց ախորհուրդ հաւատուրացմամբ մի կղերականի՝ Նիկոլ Թորոսովիչի փառասիրութեան եւ Լվովի ժամանակի դեկավարների տգիտութեան ու չհամոզութեան հետեւանքով: Տարբեր պայմաններում, բայց նոյնպէս հայ կղերի ձեռքով հողմացրիւ եղաւ նաեւ Ղրիմի հոյաշէն ու բարգաւաճ դաղութը:

18րդ դարում սասականում է ռուսական դրոհը դէպի հարաւ՝ Պարսկաստանի եւ Օսմանեան կայսրութեան ուղղութեամբ՝ թիրախ ունենալով Հնդկաստանն ու Պոլիսը: Պետրոս Մեծի բանակները հասնում են մինչեւ Դերբենտ, անծայրածիր ամայի դաշտեր կապելով Ռուսաստանին: Եկատերինա Մեծի սիրականները՝ Պոտեմկինն, Ռումեանցեւ եւ ուրիշներ ռուս զօրութիւնը հասցնում են մինչեւ Սեւ ծով՝ նորանոր տարածութիւններ միացնելով կայսրութեան: 18րդ դարի երկրորդ կէսերին, ռուսները արդէն բախում էին Ղրիմի դրռները՝ այդ հարուստ ու դեղեցիկ թերակղզին եւս յափշտակելու դիտումով: Ղրիմի քրիստոնեայ բնակիչները՝ հայերն ու յոյները պէտք է զործէք զառնային ռուս դիւանագիտութեան ու զօրահրամանատարութեան ձեռքին: Միւս կողմից՝ Ղրիմի քրիստոնեաները թանկագին ոյժ էին ռուսների նոր նուաճած ամայի հողերը լեցնելու եւ ծաղկացընելու համար:

Ռուսների այս դաժան ծրագիրների իրագործման նպաստում են ինքը Ղրիմի Շահին Գիրէյ խանը, որ ռուսների հովանաւորեալն էր եւ ռուսներից կաշառուած քրիստոնեայ կղերը, աւա՛ղ, այս անդամ հայրենասէր Յովսէփ Արղութեան արքեպիսկոպոսի մեղսակցութեամբ:

Ռուսական բանակի ընդհանուր հրամանատար կոմս Ռումեանցեւի պահանջի վրայ Շահին Գիրէյ խանը հրաման է արձակում տեղահան անելու եւ Ղրիմից հեռացնելու յոյն եւ հայ բնակչութիւնը: Թաթար ժողովուրդն ու միւս խանները ըմբոստանում են դրա դէմ: Մերժում են Գիրէյի հրամանին ենթարկուել նաեւ քրիստոնեաները: Եւ ահա հրապարակ է իջնում ռուսներից կաշառուած քրիստոնեայ հոգեւորականութիւնը յորդորելու համար իրենց հաւատակիցներին, որ անյապաղ մեկնեն Ղրիմից, որովհետեւ թերակղզին չուտով պա-

ARAM webaram.com

պերպմի դաշտ պիտի դառնար ռուսների եւ օսմանցիների միջեւ։ Միեւնոյն ժամանակ, հաւատախօսում է տրուում, որ տեղահանութիւնը լինելու է ժամանակաւոր. պատերազմը վերջանալուց յետոյ, ամէնքը կը վերադառնան իրենց տեղերը։

Շուր են անցնում թաթարների յորդորն ու խնդրանքը եւ տեղական իշխանների ընդդիմութիւնը. հրամանը զօրծադրւում է 1778 թ. Ապրիլ 23ին։ Այդ օրը սեւ սուգի օր եղաւ Ղրիմի հայութեան համար։

Ամէն պատրաստութիւն տեսնուած էր արդէն։ Քաղաքարնակ հայերը զոցել էին իրենց արհեստանոցներն ու խանութները եւ բանալիները տուել բարեկամ թաթարներին՝ վերադառնալիս յետ առնելու պայմանով։ Թանկագոյնք իրերն էլ պահել էին զաղտնի թաղըտոցներում։

Ինչ որ կարելի էր առնել իրենց հետ՝ բեռնել էին սայլերի ու զրաստների վրայ։ Հոգեւորականները իրենց հետ էին տանում եկեղեցական անօթները, սրբազան մատեաններն ու մատաղաթները, վէմ քարերը։

Ապրիլ 22ի երեկոյեան ամէնքը գնացին գերեզմանատները, վերջին այցելութեան հոգի տակ ննջող իրենց հարազատներին։ Մոմ վառեցին շիրիմների վրայ, խունկ ծխեցին։ Լացին։

Ապրիլ 23ի առաւօտեան բոլոր հայերը հաւաքուեցին եկեղեցիներում։ Զանգակները զօղանջում էին ախուր, կարծես մեռել էին թաղում։ Եկեղեցիներում ոխրում էր յուզում, խռովք ու լաց։ Սըրտակեղեք տեսարաններ...

«Տէ՛ր, ուղեա զճանապարհս»... Եւ գիւղերից ու քաղաքներից սայլերով, զրաստներով ու հետիոտն, տարաւոր բազմութիւնները, թողնելով ինչ որ ունէին, իրենց զարաւոր վառտակի պատուղը, չարժուեցին հիւսիսի ուղղութեամբ, դէպի անյայտութիւն...

Ինչքա՞ն էր Ղրիմից տեղահանուած հայերի թիւը, ո՞վ կարող է տալ։ Թերակղզուց դուրս գալով՝ գաղթականութիւնը ուղղւում է դէպի արեւելք եւ կանգ առնում Ազովի վերերը, հետագային եկատերինոսլաւ կոչուած նահանգում՝ բաց երկնքի տակ, ամանք վրանների կամ թեթեւ փորուած նկուղներում, ամանք բաց դաշտում։ Նրանց հաւատացրել էին, որ այստեղ պիտի տարաէին պատերազմի վերջին, ապա պիտի վերադառնային իրենց տեղերը։

Վրայ է հասնում ցրտաշունչ ձմեռը։ Մեղմ կլիմային վարժուած խրիմցիները չեն դիմանում խիստ սառնամանիքներին։ Հազարաւորներ, մանաւանդ փոքրերը, զոհ են գնում ցրտին ու համաճա-

ARAM webaram.com

բակ հիւանդութիւններին: Եւ դարձեալ՝ ո՞վ կարող է ասել այս դո-
հերի թիւը...

Գարունը բերում է նոր ու ծանր յուսախաբութիւն: Պատե-
րազմը վերջացել էր, բայց հայերին թոյլ չի տրւում վերադառնալ
իրենց տեղերը: Ցայտաբարում է, որ իրենց համար ուզած տեղը
ընտրեն եւ բնակութիւն հաստատեն: Խրիմ վերադառնալու յոյս չկար
այլեւս: Ի՞նչ կարող էր անել խաթրուած ու խեղճացած բազմութիւնը:
Պատուիրակներ են ուղարկւում զանազան կողմերը նոր բնակավայր
գտնելու համար: Ընտրութիւնը ընկնում է Դոն գետի աջ եղերքի
վրայ, որ դիրքով ու տեսարաններով Խրիմին էր յիշեցնում մի քիչ:
Այդ տեղ է համախմբւում Խրիմից դուրս եկած հայութեան ողջ մնա-
ցած մասը:

Ցոմախի Աբբ. Արղութեանի միջնորդութեամբ, Եկատերինա
կայսրուհին, 1779 թ. Նոյեմբերը 4 հրովարտակով, իր հովանաւո-
րութեան տակ է առնում հայերին, նրանց հող եւ արտօնութիւններ է
շնորհում եւ նիւթական աջակցութիւն ցոյց տալիս տեղաւորուելու
եւ իրենց կեանքը կազմակերպելու համար: Ցովսէփ Արղութեա-
նի նախաձեռնութեամբ հիմնւում է Նոր Նախիջեւան հայաքաղա-
քը, Դոնի հիւսիսային բարձրանիստ ափին, Ռոստով փոքրիկ բեր-
դաւանի կողքին: Քաղաքից դէպի հիւսիս, 10—20 կիլոմետր հեռա-
ւորութեան վրայ, շարքով, հիմնւում են հինգ գուտ հայաբնակ գիւ-
ղեր Խրիմում թողնուած գիւղերի անուններով — Զալբը, Թոփխի,
Փոքր Սալա, Մեծ Սալա եւ Նիւխիտա կամ Սուրբ Կարապետ: Մեծ
Սալայի եւ Նոր Նախիջեւանի միջեւ, քաղաքից 4—5 կիլոմետր հե-
ռաւորութեան վրայ, ընդարձակ, ծառապարզ ձորի բարձունքին,
հինւում է Սուրբ Խաչ վանքը՝ համանուն Խրիմում մնացած վանքի:

Իր ժամանակ, Նոր Նախիջեւանը չուրջ 30·000 բնակչութիւն
ունեցող քաղաք էր, որի կէսից աւելին հայեր էին, մնացածը՝ ռուս-
ներ: Գրեթէ մէկ դար փայլուն կեանք անցընելուց, արհեստներով եւ
առեւտրով նշանաւոր դառնալուց յետոյ, 19րդ դարի կէսերից Նոր
Նախիջեւանը սկսել էր տեղի տալ հարեւան Ռոստովի առջեւ: Կով-
կաս տանող երկաթուղու շինութեան ժամանակ կառավարութիւնը
կամեցել էր Դոնի կամուրջը եւ պլխաւոր կայարանը շինել Նոր Նա-
խիջեւանի մօտ, բայց հայերը ընդդիմացել էին՝ առարկելով, թէ
ռուս մառուշկաներով կը լեցուի քաղաքը, եւ երիտասարդութեան
բարքերը կ'ապականուին: Յետոյ, թէ՝ չոգեմեքենայի ծուխը կ'աղ-
տոտէ քաղաքի օդը: Թէ՝ երեխաները եւ հաւերը կարող են ընկնել

ARAM webaram.com

անցնող դնացքի տակ: Թէ՝ ազմուկից դիշերը կը խանգարուի քաղաքացիների հանդիստը...

Այսպիսի խելացի առարկութիւնների վրայ՝ կառավարութիւնը կամուրջն ու կայարանը չինում է Ռոստովի մօտ, որ արագ աճում ու բարգաւաճում է, իսկ Նոր Նախիջեւանը յետ է մնում: Բոլշեւիկների օրով Նախիջեւանը միացում է Ռոստովին Պրոլետարական թաղ անունով, եւ հայկական անունն էլ անհետանում է խոպառ:

Նոր Նախիջեւանը կոկիկ, մաքուր ու բարեկարգ քաղաք էր՝ հայկական վարչութեամբ: Ունէր 7 հայ եւ մէկ ռուս եկեղեցիներ, թեմական դպրոց, արական եւ իգական միջնակարգ վարժարաններ, քաղաքային եւ արհեստաւորաց, ինչպէս նաեւ ծխական դպրոցներ, քաղաքային մեծ թատրոն, ձմեռուայ եւ ամառուայ ակումբներ, հանրային ու բարեգործական ընկերութիւններ: Իր վարչակարգով ու բարեշինութեամբ Ռուսաստանի քաղաքների առաջին դծի վրայ էր գտնուում:

Քաղաքի մէջտեղը, հրապարակի վրայ, գտնուում էր բարձրահայեաց Սուրբ Լուսաւորիչ մայր եկեղեցին, որի մեծ դանգերի հընչիւնները հասնում էին մինչեւ Դոնի միւս եղերքը: Եկեղեցու առջեւ, բարձր պատուանդանի վրայ, կանգնած էր Եկատերինայի արձանը: Պատուանդանի վրայ, ոսկի տառերով, փորագրուած էր. «Եկատերինա Մեծին՝ երախտապէտ հայերը»: Եկատերինան արձանացած էր տաճարից դուրս դալու ձեւով, այսինքն՝ եռւերը դէպի եկեղեցին, եւ այդ պղրիւր էր ծառայում շատ սրամիտ բնակիչների, մանաւանդ որ, պատուանդանի վրայ Եկատերինայի ներքեւ, փորագրուած էր Յովսէփ Արղութեանի դլուխը: Բոլշեւիկները մէկ կողմ էին նետել Եկատերինային եւ պատուանդանի վրայ դրել էին, կարծեմ, կարլ Մարքսի արձանը: Ի՞նչ խորհրդաւոր յաջորդութիւն...

Իմ ժամանակ, Նոր Նախիջեւանի հայ դիւղերի բնակչութեան թիւը հաչւում էին 15—18·000: Ամենից մեծը Զալիբերն էր, ապա՝ Թոփխին ու Մեծ Սալան դրեթէ բնակիչների հաւասար թուով: Փոքր Սալան ու Նիովիտան իւրաքանչիւրը չուրջ 1500 բնակիչ ունէր:

Սուրբ Խաչ վանքը բոլոր դիւղերի եւ Ռոստովի ու Նախիջեւանի համար ուխտատեղի էր եւ դբօսանքի վայր: Այստեղ էին եւ Մելքայէլ Նալբանդեանի, Գամառ Քաթիպայի, Յար. Ալամդարեանի դերեզմանները՝ կիսանդրիներ վրան:

Բոլոր դիւղերում կային բարեկարգ եւ ապահով ծխական դպրոցներ բաւմահազար երկաեռ աշակերտութեամբ ու մեծ մասամբ տեղական ուսուցիչներով:

ARAM webaram.com

Նոր Նախիջեւանն, իր գիւղերով, կարեւոր դեր է խաղացել հայութեան ազգային – մշակութային կեանքում եւ շատ նշանաւոր դէմքեր է տուել, ինչպէս Միքայէլ Նալբանդեան, Ռափայէլ Պատկանեան (Գամառ Քաթիպա), Գաբրիէլ ու Քերոբէ Պատկանեաններ, Մինաս եւ Ռուբէն Բերբերեաններ, Ակադ. Ալ. Թամանեան, նկարիչ Մարտ. Սարեան, Աղեքսանդր Միսաքեան, Սարգիս Սրապիոնեան (Լուկաչին), Գէորգ Զ. Կաթողիկոս Զէօրէքչեան եւ բազում ուրիշներ:

Գիւղերի մէջ ամենից հարուստը եւ, այսպէս ասած, ամենից քաղաքակիրթը մեր գիւղն էր՝ Մեծ Սալան: Փոքր Փարիզ էին կոչում՝ ոմանք հեգնանքով, ուրիշներ՝ հպարտութեամբ:

Մեծ եւ չէն գիւղ էր Մեծ Սալան, Նոր Նախիջեւանից մօտ 20 կիլոմետր հեռու, դէպի հիւսիս: Հիւսիսից հարաւ ձգուող ցեխոտ ձորը, որի միջից երբեմն ջուր էլ էր հոսում, բաժանում էր գիւղը երկու թաղերի՝ միացած երկու փայտաշէն կամուրջներով: Դէպի արեւելք՝ ժամի մահալան: Այստեղ էր Սուրբ Աստուածածին եկեղեցին, ընդարձակ պարտէզի մէջ, որտեղից աշակերտներս, պահապանի քթի տակից, կարող էինք թռցնել անոյշ ծիրաններ ու խնձորներ: Ժամի կողքին՝ տղայոց եօթնամեայ դպրոցը մօտ 500 աշակերտներով, իսկ քիչ այն կողմ՝ հին գերեզմանատունը, ուր Աստուածածնի ուխտի օրը մատաղ էին ուտում եւ մատաղի գլուխների համար գոտեմարտում էին երիտասարդները:

Եկեղեցուց քիչ վար, ձորի ափին, գտնւում էր գիւղի կենտրոնական հրապարակ – չուկան: Այստեղ էին պետական օղեվաճառատունը, սափրիչ Մելքոն աղայի խանութը եւ Խուռպաղա Նալոզ Միքիթի նպարեղէնի խանութը, ուր կարող էիր գտնել ամէն բան, բացի քեզ պէտք եղող ապրանքից:

Հրապարակի վրայ, ամառը, ամէն կիրակի, շրջակայ ռուս գիւղերից սայլերով բերում էին ծախելու ձմերուկ, սեխ, վարունգ, կաղամբ, այլեւայլ պտուղներ. հայերը դեռ վարժուած չէին բոստան ու բանջարանոց մշակելու: Մախած ապրանքի գրամով ռուս գիւղացիները պետական խանութից վոդկա էին գնում եւ տեղն ու տեղը, հրապարակի վրայ, խմելով մինչեւ ուշ գիշեր մելամաղձոտ երգեր էին երգում:

Հրապարակից քիչ անդին գրոնցի էր — դեղատեսութեան չէնքը, ուր թաղաւորում էր իմ քեռի Միքիչկան: Գրոնցի իրական իշխանաւորը, սակայն, գիւղի միակ ոստիկան Զոլախ Մարտինն էր

ARAM webaram.com

եւ, թերեւս, նաեւ պիւղի գրպիր Իւանը, երբ հարբած չէր, որ սակաւ էր պատահում:

Ձորի միւս կողմը, վերի ու վարի թաղերով, տարածուած էր պիւղի մեծ մասը: Այստեղ էին աղջկանց հնդամեայ դպրոցը եւ պրոպիմնազիան: Այս թաղում էր, կամուրջի կողքին, հարբան Իւանի դարբնոցը: Երկու իւաններով վերջանում էր Մեծ Սալայի օտար բնակչութիւնը: Սրանց էլ դժուար էր օտար համարել, քանի որ հայի պէս խօսում էին հայերէն: Միայն վոդկա էին խմում ռուսի պէս:

Գիւղը բաժանուած էր ընդարձակ բակերի: Ամէն ընտանիք ունէր իր տունը, ախոռ ու դոմով կողքին: Դոմի առջեւ, ճմեռը, դիզուում էր անասունների աղբը, որից թէզաֆ ու հաթմա էին պատրաստում: Բայց գլխաւոր վառելիքը քարածուխն էր, որ սայլերով բերուում էր Շախախից:

Բակի մէջտեղը դռնուում էր հարմանը, ուր ցորեն ու գարի էին կալսում: Բակի ծայրին բարձրանում էին յարդի եւ խոտի դէզերը՝ անասունների ճմեռուայ կերը: Ամառը տաւարը արածում էր գիւղի շուրջը, արօտավայրերում, որոնցից այն կողմ տարածւում էին ցորենի, գարու եւ վարսակի անծայրածիր արտերն ու խոտհարքերը:

Գիւղից դուրս, չորս կողմը, թեւաւոր հսկաների նման, կանգնած էին հողմաղացները, ուր գիւղացիք աղում էին իրենց ալիւրը: Վերջին տարիները, իրրեւ մրցակից, նրանց սկսեց փոխարինել շոգիաղացը:

Գիւղի տները քարից էին, աղիւսից կամ հաստ տախտակից՝ թիթեղէ կամ կղմինարէ տանիքներով, ամուր ու հաստատուն:

Շէն ու հարուստ գիւղ էր Մեծ Սալան, մե՛ր գիւղը:

Մեր տունը, մենաւոր արագիլի պէս, բարձր կանգնած էր ընդարձակ ու մերկ բակի ծայրը, վերի թաղում, ժամի մահալայի դիմաց, կամուրջի մօտ, ձորի դլխին: Մեր սուփայից, լայն ու երկար պատշգամբից, բացւում էր գեղեցիկ տեսարան եկեղեցու եւ գիւղի մեծ մասի վրայ: Այս սուփայում անցաւ իմ վաղ մանկութիւնը՝ վերը, կաուրի տակ բոյն դրած ծիծեռնակների ընկերակցութեամբ:

Մայրս պատմում էր, որ ամէնքի ուշադրութիւնը դրաւող երեխայ եմ եղել ես՝ «տեսօք», «թմրոսքոս», «իսկը ծիվա», ժամի մահալայից Օպուռ Օսկանի կնիկը, չար աչքերով ճաաու Սուլթանը, այն, որ տէր Աբսէնի սիրուհին է եղել, մի օր տեսել է ինձ եւ, մօրս տեսլով, ապշահար կեցել է:

— Օ՛ֆ, աս ի՞նչ թոռուն տղայ է, բացապանչել է նա եւ ուզե-

ARAM webaram.com

ցել է գրկել ու համբուրել: Ես, մօրս ասելով, սաստիկ վախեցել եմ եւ լացով ու դոռոցով մօրս գիրկը ընկել:

Դրանից յետոյ, ես ծանր հիւանդացել եմ եւ հազիւ ազատուել մահից:

— Ձատու սուլթանի աչքը քոռնար, անիծում էր մայրս, տղաս մոմի պէս հալեցաւ՝ քիչ մնաց ձեռքէ երթար...

Երբ վտանգը անցնում է իմ գլխից, մայրս թաշկինակի մէջ կապում է մի տասնեակ հաւկիթ եւ գնում է դիւղի նշանաւոր բախտագուշակ Բաբուն Եանկայի մօտ, հաւկիթները գնում առջեւը եւ խնդրում է.

— Ողջ պագնիմ, Բաբուն Եանկա, նայէ, ի՞նչ պիտ ըլլայ սա մեր Սիմաւոնի հալը...

Բաբունը խնամքով պարպում է թաշկինակը եւ հաւկիթները պահում տոլապում: Ապա առնում է պատից կախուած մաղը, դնում է պղնձէ մեծ սինիի վրայ: Մի բուռ սիսեռ եւ մի բուռ գարի է լեցնում մաղի մէջ, խառնում է եւ ծածկում մեռաքսէ սեւ թաշկինակով: Ու միաժամանակ, առանց մօրս վրայ ուշադրութիւն դարձնելու, խորհրդաւոր բառեր մրմնջում քթի տակ, իբր թէ ոգիների հետ է խօսում.

Զամի, չիչի, չիմլա, չի՛,
Զոփչի, չիչակ, ճիփչա, չի՛,
Զալի, լիչա, չամլի, չի՛,
Զամօ, չիչօ, միչօ, չի՛...

Եւ, յանկարծ, կարծես դիւահար, մէկ կողմ է չպրտում մաղի երեսից մեռաքսէ թաշկինակը ու բացագանչում՝ հայեացքը յառելով մաղի պարունակութեան.

— Սաւէթ հարսը, մէմը հոս նայէ, չո՛ւտ, հոս նայէ մէմը:

Մայրս անձկութեամբ ու սարսուռով նայում է մաղին:

— Մէմը հոս նայէ... Սա պալապան ծառի ճուխքի վրայի խուշը կը տեսնո՞ւս, չոէ՛, քու Սիմաւոնիդ բախտն է. Թըռ – կ'երթայ թռողայի պէս:

Մայրս սարսափով լսում է Բաբունի խօսքերը. մանաւանդ նրբան ահաբեկում է թռողայի — ճնճղուկի յիշատակութիւնը: Այս թռչունը լաւ համբաւ չունէր մեր դիւղացիների աչքում — թեթեւամիտ, թեթեւաբարոյ, աննկարագիր, անակդռունք, աստանդական ու անհաւատարիմ, առաւ–փախաւ: Վիրաւորական խօսք էր դիւղում՝ «թռողայի խելքի տէր», «անառուն–անտէր թռողայ դառնաս»...

ARAM webaram.com

Տարբեր խնդիր՝ ծիծեռնակը. լուրջ, պատուաւոր ու հաւատարիմ թռչուն էր, բոյնին ու զաւակներին նուիրուած, իսկ թոռդա՛յը — թո՛ւ, թափառական դնչուռ. այսօր մի տեղ, վաղը՝ ուրիշ տեղ. ուր հաց, այնտեղ կաց....

Եւ տեսնելով մօրս դէմքի սարսափը՝ Բաբունը փոխում է լեզուն.

— Խասեւէք մ'աննիր, Սաւէթ հա'րսը, Սիմաւոնդ աղէկ կ'ըլլայ: Մեծ մարդոց հետ կը նստի-կ'ելլէ... Սա ճամբան կը տեսնո՞ւս, Սիմաւոնիդ ճամբան է: Շատ՛, հետու տեղեր պիտ երթայ, Մեծ-մեծ մարդոց հետ պիտ տեսնուի: Ինքն ալ մեծ մարդ պիտ ըլլայ...: Խասեւէք մ'աննիր, Սաւէթ հա'րսը, վերջը աղէկ կ'ըլլայ... Շէ՛ն կենաս: Ջումեսիդ ածամանի մէջ հաւկիթը անպակաս ըլլայ: Շէն կենաս...

Մայրս տխուր ու մտամոլոր՝ հեռանում է Բաբունի մօտից՝ կտրուած սրտով:

— Սաւկած չուն, լեզուդ չորնայ, սատանայի պաջախ դառնաս, դիշերը գորեկէն չչուկիս, հարամ ըլլայ կերած հաւկիթդ, անէծք էր թափում նա բախտազուրկի դլխին...

Եւ մինչեւ մահ մայրս չմոռացաւ ու չներեց Բաբունին, մանաւանդ որ զուշակութիւններն էլ իրար յետեւից իրականանում էին:

Երբ ես մեկնում էի Էջմիածին Գէորգեան Ճեմարանը մտնելու համար, մայրս, արցունքը աչքերին, անվերջ համբուրում էր երեսս ու կրկնում ցաւով.

— Վա՛խ, վա՛խ, Թոռդայ դարձաւ տղաս, քոքէն չորնար Բաբունի լեզուն...

Եւ Էջմիածնից յետոյ՝ Պետերբուրգ: Եւ Պետերբուրգից յետոյ՝ Տաճկաստան: Ապա՝ Եւրոպա եւ Ամերիկա: Եւ նորէն Թուրքաստան, Կովկաս ու Հայաստան: Եւ Ախա ու Ափրիկէ... Զորս մայր ցամաք, երեք ովկիանոս եւ հօթը ծով...

Ի սկզբանէ էր Աչխարհն Հայոց, Անի: Եւ Անի եղեւ Վոլգա: Եւ Վոլգա եղեւ Խրիմ: Եւ Խրիմ եղեւ Դոն: Եւ Դոն եղեւ Հանրապետութիւն Հայաստանի: Եւ Հայաստան եղեւ աչխարհ ամենայն: Եւ հայն եղեւ աչխարհացրիւ, աչխարհաքաղաքացի: Թոռդայ...

Ահա է պատմութիւնը իմ: Անուններդ փոխելով՝ պատմութիւնը ամէն հայի: Թոռդայ...

1955 Սեպտեմբեր
Բուա դը Բուլոն, Լիբանան

ARAM webaram.com

ՁԷՐ ՄՆԱՑԵԼ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏՔ

I.— ՄԵՐԿԵԱՆԻ ՔԵՐՈՒԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

Մեր տունը Մեծ Սալայի հանրածանօթ մեծ տներից էր, որ մի չարք նշանաւոր պիւղապետներ՝ օդամաններ էր տուել գիւղին: Վերջինը՝ իմ պապը, Մերկեանի Քերոբը, ուսող-խմող, էֆֆ սիրող մարդ էր: Հօր ամբողջ հարստութիւնը վատնելուց յետոյ, նա, մի ոչ-պեղեցիկ օր, հանդիստ սրտով մեկնել էր առ հաւս, կտակելով, որ իրեն թաղեն էֆֆի ընկերները դաւուլ-զուռնայով եւ գերեզմանի վրայ նուագել տան իր սիրած եղանակները:

Այդպէս էլ կատարուում է: Ի զարմանս գիւղացիների եւ ի մեծ զայրոյթ ծխատէր քահանայ տէր Ալեքսանի, հանդուցեալի դագաղին հետեւում են զուռնաչիները ու գիւղի նշանաւոր լոթիները: Հռչակաւոր զուռնաչի Քաուխուշը եւ ընկերները, ամբողջ ճանապարհին, մինչեւ գերեզմանատունն, նուագում են պապիս սիրական «Ղարիպ Մելքոնի» տխուր մեղեդին՝ դառն արցունքներ քամելով յուղարկաւորների աչքերից:

Մեծ հօրս միւս աչխարհ մեկնելուց յետոյ, իր յետեւը մնացել էր չատ ընդարձակ, ամայի մի բակ եւ բակի ծայրում կղմինարէ տանիքով մի մեծ տուն՝ լայն պատշգամբով, որտեղից հիանալի տեսարան էր բացւում եկեղեցու թաղի վրայ: Ընդարձակ բակում մնացել էին մի տանեակ հաւեր եւ մեծ տան մէջ՝ Մերկեանի Քերոբի ժառանգները՝ մեծ մայրս երեք տղաներով. երէցը՝ Ղազարոս, իմ հայրը, միջնեկը՝ Կարապետ եւ կրտսերը՝ Մերկեան: Պապիցս ժա-

ARAM webaram.com

ռանդութիւն էին մնացել նաեւ անհաչիւ պարտք ու պարտաւէրեր:

Երբ ես աչքերս բացի եւ սկսեցի հասկանալ աշխարհի բանները, տեսայ պապիս փառաւոր նկարը, օդամանի արծաթէ հաստ չղթան վզին, կախուած մեր դահլիճում, Մարիամ Աստուածածնի պատկերի կողքին: Աստուածածնի պատկերը լուսաւորող պատկերից լոյս էր հասնում եւ պապիս:

Կարապետ հօրեղբայրս, կնոջ ձեռքը բռնած, հեռացել էր տնից, ի մեծ վիշտ տատիս: Վերջինիս կշտամբանքի վրայ Կարապետ հօրեղբայրս պատասխանել էր անվրդով. «Ուզածդ ի՞նչ է, մէկ չէլաֆ կաթ չէ՞ տուածդ, կը վերադարձնեմ»...:

Եւ, ի հարկէ, երբեք էլ չվերադարձրեց:

Փոքր հօրեղբայրս՝ մշտազուարթ եւ կատակարան Մերկեանը, ըղձաք էր մի հարուստ դիւղացու մօտ: Հայրս, որի դէմքը ես դեռ չէի տեսել, հեռու տեղ կառավարիչ էր մի ինչ որ կալուածքի:

Պապիս թողած ամայի տանը մնացել էինք մեծ մայրս — մեր սիրելի մեծան — մայրս եւ ես մի քրոջ եւ եղբօր հետ: Մայրս, ամէն առաւօտ մեզ համար մի պատառ ուտելիք պատրաստելուց յետոյ, գնում էր հարուստ քեռուս տունը, աշխատում էր այնտեղ ամբողջ օր եւ երեկոյեան տուն էր վերադառնում՝ հետը բերելով ուտելիք — հաց, պանիր, մածուն եւ ուրիշ բաներ:

Մենք՝ երեխաներս մնում էինք տատիս հետ՝ խաղալով պատըշգամբում կամ բակում հարեւան երեխաների հետ: Մեր անբաժան խաղընկերն էր նաեւ սիրելի Սուլթանը՝ նոյնպէս պապիցս ժառանգութիւն մնացած չունը:

Ցաճախ անօթի՝ լաց էինք լինում եւ տատիցս հաց խնդրում: Տատս մատով ցոյց էր տալիս իր օդաման ամուսնու պատկերը եւ ասում.

— Սո՛ւս արէք, պապին զէնկին մարդ էր, չուտով դուք ալ չատ ուտելիք կ'ունենաք:

Բայց մենք չէինք համոզւում. պապի հարստութեան պատմութիւնները մեր փորը չէին կշտացնում:

Կշտացնում էր մեր մայրը, որ երեկոյեան, դռդռոցը լեցուն ամէն բարիքով, խնդումերես վերադառնում էր քեռուս տնից, եւ մեզ մօտ բացւում էր խրախճանքի սեղանը: Ուտում ու լսում էինք մայրիկի զուարճալի պատմութիւնները: Ապա՝ սկսւում էր երգն ու պարը. մայրս գիտէր ուրախանալ եւ ուրախացնել:

Եւ ձմեռուայ մի ցուրտ երեկոյ, մեր տանը երեւցաւ բարձրահասակ, դեղնցիկ մօրուքով, ժպտադէմ մի տղամարդ: Տատս ու

ARAM webaram.com

մայրս հրճուանքի մէջ էին։ Նրա տոպրակից դուրս եկան սիրուն առարկաներ եւ համեղ ուտելիքներ։ Նա մեզ համբուրեց ու փայփայեց։ Հայրս էր։

Մեր մեծ եւ ամայի տունը լեցուեց խինդ ու ծիծաղով, որ, սակայն, երկար չտեւեց։ Մի օր էլ հաւաքեցինք ինչ որ ունէինք, աւելի ճիշտ, ինչ որ չունէինք եւ ամբողջ ընտանիքով հեռացանք գիւղից։ Հայրս տարաւ մեզ իր ծառայած կալուածքը Կուբանի նահանգում, կազակների Տիմաշկովա գիւղի մօտ։ Եւ մեզ համար սկսուեց նոր, կարելի է ասել, անհոգ եւ երջանիկ կեանք։

II.— ԾԱՏՈՒՐ ԱՂԱՅԻ ԿԱԼՈՒԱԾՔՈՒՄ

Կալուածքը պատկանում էր նոր նախիջեւանցի Ծատուր աղա Զափրընին։ Կարճահասակ, նիհար եւ անդիմի նման չարժուն մարդ էր Ծատուր աղան։ Մենք՝ երեխաներս նրան կոչում էինք Ծակ Տապլա, որովհետեւ, առաջին անգամ որ տեսանք, նրա մահուդէ նեղ անդրավարտիկի եաեւը պատռուած էր։ Նա ապրում էր Նոր Նախիջեւանում եւ տարին հազիւ մէկ-երկու անգամ էր երեւում կալուածքում։ Ամբողջ գործերը ձգել էր հօրս վրայ եւ ինքը, ասում էին, գուարճութեան էր անձնատուր եղել։ Երբեմն կնոջն էլ էր բերում հետը. նիհար, փխրուն կազմով, անհօս մի էակ, որ ամուսնու ստուերը լինէր կարծես։ Երբ գալիս էին, «Ծատուր աղայի չուքը» մեզ բերում էր տեսակ-տեսակ խաղալիքներ եւ համեղ անուշեղէններ։ Մենք սիրում էինք նրան եւ անհամբեր սպասում էինք, թէ ե՞րբ պիտի գայ։

Առաւտ ձկներով հարուստ գետակի ափին, բարձունքի վրայ, երկկարդ չարուած էին քսանի չափ հողաշէն անզարդ հիւղակներ, ուր ապրում էին մշակները իրենց ընտանիքներով — ներքին նահանգներից գաղթած ռուսներ, որոնք չնչին վարձատրութեան, գրեթէ մէկ փոր հացի փոխարէն ծառայում էին Ծատուր աղային, աւելի ճիշտ՝ հօրս, որովհետեւ Ծատուր աղան նրանց երեսը չէր տեսնում բնաւ։

Այս, այսպէս կոչուած, գիւղի ծայրը, մեկուսի, կանգնած էր Ծատուր աղայի մեծ տունը մանր ու խոշոր սենեակներով, պէսպէս կարասիներով, գեղեցիկ տեսարանով գետակի վրայ։ Տունը չրջապատուած էր բաւական մեծ պարտէզով, ուր կային ծիրան ու կեռաս, սալոր, խնձոր ու տանձ, բայց, մանաւանդ, առատ բալ եւ բազում ծաղիկներ։ Պարտէզի ծայրը չարք-չարք կանգնած էին մեղուի

ARAM webaram.com

վեթաիները, որոնցից այն կողմ տարածւում էին չքեղ մարդագետիններ հոտաւէտ ելակով ու կոկանով, եւ մշակուած արտեր ցորենով, գարիով, հաճարով ու վարսակով եւ ընդեղէնի ու արեւածաղկի դունագեղ տարածութիւններով:

Մեծ տան կողքին կանգնած էր տախտակէ ընդարձակ ամբարը, մի քանի աչքերով, որոնք բերնէ բերան լեցուած էին ամէն տեսակ բարիքներով, — հացահատիկ, արեւածաղկի կուտ, լոբի, ոսպ, սիսեռ, չորացած պտուղներ, մեծ ամաններով մեղր, ձմերուկի ռուպ, տակառներով թթուներ, պանիր, իւղ, հարիւրներով հաւկիթ: ... Հայր Աբրահամի օրհնութիւնը իջել էր մեր վրայ:

Կեանքը եռում էր Ծառուր աղայի կալուածքում: Հազար հեկտարի չափ հողը, երեք կողմից չրջապատուած ծոյլ գետակով, բաժանուած էր զանազան կտորների. մեծ մասը յատկացուած էր հացահատիկների, երկրորդ մասը յատկացուած էր անասուններին — ձի, եզ, կով, ոչխար, խոզ. ապա խոտհարք, բոստաններ: Կէս հարիւրեակ մշակներ իրենց կանանցով աշխատում էին արտերում եւ ագարակում: Նորաձեւ գութաններով, ցանելու, հնձելու, կալսելու եւ հերկելու մեքենաներով:

Մի խօսքով՝ մեծ տնտեսութիւն էր Ծառուր աղայի կալուածքը, եւ այդ բոլորի վարիչը հայրս էր: Ես հպարտ էի, որ այդպիսի հայր ունէի: Հպարտ էի եւ սիրում էի մօրս, որ իր ձեռքի տակ ունէր բազմաթիւ սպասուհիներ ու սպասաւորներ, որոնց միջոցով վարում էր ագարակի տնտեսութիւնը՝ չէնութիւն տարածելով չուրջը:

Անհուն էր է՛ւ տատիս ուրախութիւնը: Մեր տունը, ասում էր նա, միայն թռչունի կաթ կը պակսի... Սահման չունէր, ի հարկէ, եւ մեր՝ երեխաներիս երջանկութիւնը: Մեր թիւը տարուէ-տարի աւելանում էր: Մեզ խաղընկեր էին ուս մշակների երեխաները: Առաւօտից մինչեւ երեկոյ մենք անցկացնում էինք նրանց հետ. թափառում էինք դաշտերում, նայելով տարուայ եղանակին՝ գնում էինք ելակ, կոկան կամ կոճղեզ հաւաքելու, կամ բոստաններից վարունգ ու ձմերուկ թողնելու, գետում լողանալու, ձուկ կամ խեցգետին որսալու, թռչունների հաւկիթ հաւաքելու բներից... Ամառալ ուզողին խաղ չէր պակսի: Մեր ժամանակը անցնում էր անհոգ, ուրախ, երջանիկ...

Այո, երջանիկ, բայց ինչո՞ւ մայրս այդքան դժգոհ էր, ինչո՞ւ դառն խօսքեր էր ասում մեզ, գանգատւում էր հօրս, թէ մենք մոռանում ենք «հայնակ կալաճի անել», թէ մեծ քոյրս բոլորովին մարդուշ-ֆա է դարձել, թէ իմ անունս այլեւս Սիմաւոն չէ, այլ Սեոմկա է...

ARAM webaram.com

Ճիշտ է, մենք միայն տանն էինք գործածում «հայնակ լեզուն», այն էլ դժուարութեամբ, իսկ դուրսը ամէնքի հետ խօսում էինք ռուսերէն, է՛, դրա մէջ ի՞նչ վատ բան կար: Յաճախ, Տիմաշովկայից մեզ հիւր էր գալիս Սեւեան ընտանիքը մեզ հասակակից մանչ եւ աղջիկ զաւակներով. նրանք բոլորովին հայերէն չգիտէին, ինչո՞ւ մեր մայրը դժգոհ էր մեզանից: Շրջակայ գիւղերում, կազակների մէջ, ուրիշ հայ ընտանիքներ էլ էին ապրում. նրանց երեխաները նոյնպէս հայերէն չգիտէին: Նրանց էլ Մարիամը դարձել էր Մաշա, Պետրոսը՝ Պետեա, Շուշանը՝ Սուսաննա — ի՞նչ վատ բան կար դրա մէջ...

Ինչքան ժամանակը անցնում էր, այնքան մօրս դէմքը մռայլւում էր:

— Եո՛ւ պիտի ըլլան մեր զաւակները, դանգատւում էր նա հօրը՝ արտասուքը աչքին: Եո՛ւ պիտի ըլլան, ի՞նչ պիտ անինք:

Արդէն մեծ տղայ էի, ժամանակ էր դպրոցի մասին մտածելու, բայց ես սարսափում էի դպրոցի մտքից, որովհետեւ պիտի հեռանայի ընտանիքից:

Մի կիրակի հայրս գնացել էր Տիմաշովկա գիւղը: Վերադարձին բերել էր խաղող, որ այդ շրջանում հազուագիւտ էր: Կէս օրին, երբ ճաշը վերջանալու վրայ էր եւ ես մի մեծ ողկոյզ առած պատրաստւում էի ուտելու, հայրս, կարծես սովորական բան լինէր, մօրս ասաց հանդարտ.

— Վաղը Սիմաւոնին վարժատուն պիտ տանիմ. դոշակ-հոռդաւը հազիր արա...

Կարծես կայծակ զարկից գլխիս: Խաղողը ընկաւ ձեռքիցս, եւ ես, սուր ճիչ արձակելով, դուրս թռայ տնից: Փախչում էի խելայեղ: Ո՞ւր — չէի իմանում: Հասայ խոտի դէզերին: Այստեղ, յաճախ, ես խաղում էի մեր խոհարարի տղայի՝ Նիկիտայի հետ: Ահա այն խոտունկ ծակը դէզի մէջ, ուր ես պահւում էի Նիկիտայից: Ներս սողոսկեցի խորը, խորը: Խոտով ծածկեցի մուտքը...

Այժմ ես մենակ էի, բոլորովին կտրուած աշխարհից, խաւարի մէջ, ծածկուած խոտով...

Պառկած մտածում էի. այս ի՛նչ անիրաւ մարդիկ են — դըպրո՛ց... ուզում են հեռացնել ինձ տնից, զրկել խաղի ընկերներից, բաժանել, զրկել հարազատներից, օտար մարդկանց յանձնել... Ես լսել էի հօրս եւ մօրս խօսքերը, թէ ինձ մի կազակի ընտանիքում դիւրաթիկ պիտի տեղաւորէին: Ի՞նչպէս չէ, կը տեղաւորեն...:

Գլխումս հազար ու մէկ մտքեր էին վխտում: Ո՛չ, ես է՛լ տուն

ARAM webaram.com

չեմ վերադառնայ: Թող ինչքան ուզում են փնտռեն, ես կը մնամ այստեղ, խոտի դէզում, մինչեւ որ անօթութիւնից մեռնեմ: Չեմ ուզում ոչ նրանց հացը, ոչ խաղողը... Էլ ոչինչ չունեմ ես այս աշխարհում, ոչ մէկ բարեկամ: Մայրս ու հայրս էլ թշնամի են ինձ: Դպրոց են ուզում ուղարկել. ուզում են ռադ անել գլխից: Ես նրանց դպրոց ցոյց կը տամ...

Կամաց-կամաց, սակայն, մտքերս ուրիշ ընթացք սուացան. ինչքան պէտք էր մնալ այս ծակում, մինչեւ մեռնելը, մինչեւ երեկո՞յ, ամբողջ գիշե՞ր:

Մթից ես վախենում էի: Գիշերները սատանաներն են չարժուում, խորթլախների դուրս են գալիս եւ փոքր տղաների արիւնը ծծում: Մարմնովս սարսուռ էր անցնում, երբ պատկերացնում էի, թէ ինչպէս չար ոգին պիտի խմէր արիւնս, եւ ես պիտի մահանայի նրա ճիրաններում...

Եւ յետոյ, ի՞նչ յիմարութիւն է մնալ խոտի դէզի մէջ: Տանը, երեւի, չեն էլ նկատում իմ բացակայութիւնը: Ճաշը կերան-վերջացրին, խաղողն էլ անուշ արին, նրանց ի՞նչ հոգը, թէ ուր եմ ես եւ ինչ դրութեան մէջ: Գոնէ Նիկիտան երեւար: Հիմա որտեղից որ է կը լսուի նրա ձայնը... Եւ, յիրաւի, չուտով հեռուից ականջիս հասաւ նրա զիլ ձանչը.

— Սեռմկա, ո՞ւր ես:

Զլաղ ձեւացրի: Նորից սատանան մտաւ փորս: Չեմ պատասխանի: Դուրս չեմ գայ: Ինչ ուզում է լինի, ես դպրոց գնացողը չեմ...

— Սեռմկա՛, լսուեց մօտից Նիկիտայի ձայնը: Ապա խոտը խշխշաց, եւ Նիկիտան սկսեց քաշել ոտներիցս:

— Դուրս եկ, ի՞նչ ես անում այստեղ:

— Չեմ գայ, պատասխանեցի ես խռոված. թող ինձ հանգիստ:

Բայց Նիկիտան այն տղաներից չէր, որ հանգիստ թողնէր: Շուտով լոյս աշխարհ հանեց ինձ:

— Ես տուն պիտի չերթամ, ասացի ես վճռական կերպով:

— Ինչո՞ւ, հետաքրքրուեց Նիկիտան:

— Պիտի չերթամ... Հայրս ուզում է ինձ դպրոց տանել Տիմաշովկա...

Նիկիտան լուրջ դէմք առաւ, տխրեց: Պինդ բռնեց ձեռքս ու.

— Մի վախենար, ես էլ կը գամ հետդ: Հայրիկիդ կը խընդրենք, որ ինձ էլ տանի...

Կը լինի՞ – չի՞ լինի: Լուրջ խորհրդակցութիւնից յետոյ հա-

ARAM webaram.com

մաճայնութեան եկանք. հիմա մխասին պիտի երթանք մեր տունը եւ — վերջը կը տեսնենք ինչ կը լինի:

Բայց տուն չդնացինք: Գետակը վարից այնքան հրապուրիչ էր. ինչո՞ւ չլողանանք տուն երթալուց առաջ, մանաւանդ որ ջրի մէջից լսւում էին հիւղակների մեր ընկերների զուարթ բացագանչութիւնները...

Երբ ես վախվխելով վերադարձայ տուն, արդէն մթնշաղ էր, եւ մեր ընտանիքի բոլոր անդամները նստած էին ընթրիքի, սեղանի չուրջ, իրենց տեղերը: Իմ աթոռը պարապ էր եւ առջեւը, սեղանի վրայ, ափսէիս մէջ դրուած էր մի մեծ ողկոյզ խաղող: Ինձ որ տեսան, մէկէն տիրեց լռութիւն. հայրս, սեղանի գլխից, մեղմ հայեացքով նայում էր ինձ: Մայրս ժպտաց, եւ ես խենթի պէս նետուեցի նրա գիրկը ու լացի, լացի ջղաձգօրէն...:

Մայրս քնքշօրէն չոյում էր գլուխս, փայփայում էր, քաղցր խօսքերով աշխատում էր ամոքել մեծ վիշտս:

Տատս մօտեցրեց ինձ խաղողը եւ խանդաղատանքով ասաց.

— կեր, բալաս, անուշ արա, մեծաղ քու ցաւը առնէ:

Քոյրս, Շուշանիկը, լուռ կարեկցութեամբ իր համակրանքն էր արտայայտում ինձ: Իմ վիշտը, սակայն, անսահման էր, անյատակ, հաւասարը չունեցող: Դպրոց պէտք է երթայի:

Առաւօտ կանուխ հայրս տարաւ ինձ դպրոց...:

III.— ՏԻՄԱՇՈՎԿԱՑԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Ամբողջ ճանապարհին հայրս լուռ էր. անվերջ ծխում էր մտախոհ: կառքին լծուած զոյգ ձիերը վազում էին աշխուժով առանց կառապանի մտրակին սպասելու:

Աչուն էր: Հնձուած արտերի մէջ, այստեղից ու այնտեղից, լսւում էին լորամարգինների զանչերը: Ես էլ անխօս ու վշտահար, հօրս կողքին, դիտում էի չուրջս: Սիրտս ճմլւում ու լալիս էր. դեռ այսերս այրւում էին մօրս համբոյրներից:

— Նայէ, հայնակ չմոռնաս, եղաւ մօրս վերջին խօսքը:

Կառքը կեցաւ գետի եղերքին: Միւս ափից եկաւ նաւակը: Անցանք Տիմաշովկա գիւղը եւ բարձրացանք ակացիաներով ու բարդիներով չրջապատուած մի մեծ տուն. գիւղի օդամաւն եւ հօրս բարեկամ Տերենտի Բուհրիեւի տունն էր, ուր ինձ վիճակուած էր գիշերօթիկ ապրելու:

ARAM webaram.com

Հայրս մնաց հիւր, իսկ ես Տերենտիի աղջկայ, ինձ գրեթէ տարեկից Մարիայի հետ դնացի դպրոց: Կարմիր թուշերով, լեցուն մարմնով, ժպտուն աչքերով զուարթ աղջիկ էր Մարիան: Թէեւ մի քիչ հեգնանքով վերաբերուեց ինձ, բայց առաջին տպաւորութիւնս լաւ էր: Կողք-կողքի քայլելով՝ հասանք դպրոց, որ չատ հեռու չէր:

Ուսուցիչը, բարձրահասակ, նուրբ կազմով, չիկահեր մի սարկաւագ, ինձ նստեցրեց Մարիայի կողքին եւ սկսեց հարցաքննել: Կարդալ գիտե՞մ — ոչ: Գրել գիտե՞մ — ոչ: Ի՞նչ գիտեմ — ոչինչ:

Գրատախտակի վրայ կաւիճով գծեց մի կլոր նշան.

— Այս ի՞նչ է:

— Բուբլիկ (սիմիթ), պատասխանեցի ես անհամարձակ:

Դասարանի աղջիկներն ու տղաները բարձր հռհռացին: Ծիծաղեց եւ Մարիան, որ իմ վրայ վատ ազդեց:

— Բուբլիկը դու ես, կատամբի պլուխ, ասաց ուսուցիչը՝ նոյնպէս ծիծաղելով:

Ուսուցիչը քնքշութեամբ չոյեց պլուխս եւ ասաց.

— Ոչինչ, տղաս, չվախենաս. չուտով կը սովորես, Մարիան քեզ կ'օգնէ, հանդիստ եղիր:

Բայց անունս մնաց Բուբլիկ:

Այսպէս սկսուեց իմ դպրոցական կեանքը կազակների Տիմաշովկա գիւղում:

Մեր դպրոցը գտնուում էր եկեղեցու բակում, տախտակէ երկար մի շէնքում, թիթեղէ կանաչ կտուրով: Ունէինք երկու ուսուցիչ. տնօրէնը եւ բոլոր առարկաների դասատուն էր սարկաւագ Իւան Վոյինովը, կրօնուսոյցը՝ գիւղի երէց հայր Նիկոլայը:

Աւելի խիստ հակապատկեր կարելի չէր երեւակայել:

Հայր Իւանը բարձրահասակ, գեղադէմ, մետաքսի նման նուրբ մազերով, ահագնադղրդիռ բամբ ձայնով, անչահասէր մի մարդ էր:

Քահանան կարճահասակ էր, վտիտ մարմնով, այծի մօրուքով եւ այծի ձայնով, յարաչարժ եւ անհանդարտ, չահամոլ ու նախանձոտ: Մահացու թշնամի էին միմեանց քահանան ու սարկաւագը. մեկ մեկնոց կապը նրանց միջեւ օղին էր:

Խմելու մէջ էլ, սակայն, նրանք հակապատկեր էին: Սարկաւագը կարող էր տակառներով օղի խմել եւ երբեք չէր հարբում. մինչեւ աւելի զուարթ ու սրամիտ էր դառնում: Քահանան երկրորդ դաւթիկ արղէն գլուխը կորցնում էր եւ սկսում չարախօսել ու կռիւ փնտռել:

Դասամիջոցներին եւ յաճախ նաեւ դասի ընթացքին, տէրտէր

ARAM webaram.com

ու սարկաւագ քաշւում էին ժամկոչի սենեակը եւ կոնծում: Երբ սկսում էին եկեղեցական մեղեդիներ երգել, այդ նշանակում էր, թէ մենք՝ աշակերտներս էլ կարող էինք թողնել դասարանը եւ երթալ լողանալու դեռում:

Երբեմն էլ պատահում էին այսպիսի տեսարաններ. հարբած երկուսով մտնում էին դասարան եւ սկսում էր իրաւաւոուկ դասաւանդութիւնը:

— Պետրով, հարցնում էր տէրտէրը, ասա նայենք Նոյի տապանում ի՞նչ կենդանիներ կային:

— Ձի, կով, չուն, արագ պատասխանում էր Պետրովը, կատու, գայլ, աղուէս, խոզ...

— Խոզը դու ես, յիմա՛ր, կարում էր սարկաւագը, քո հայրն էլ խոզ է, մայրիկդ էլ խոզ է...

Մենք դիտէինք, թէ ինչ էր սպասում ապաբախտ Պետրովին:

Նրա հայրը, եկեղեցու նախկին տիրացուն, ինչ որ խնդիր էր ունեցել Հայր Իւանի հետ, որի մեղքը այժմ որդին էր քաւում:

— Այստեղ արի նայենք, կանչում էր սարկաւագը:

Պետրովը անհամարձակ քայլերով մօտենում էր սարկաւագին, եւ սա ականջի կակուղ մասից բռնելով՝ բարձրացնում էր վեր, վե՛ր, մինչեւ որ տղան սկսում էր ցաւից ճչալ:

— Աա՛, ես խոզ եմ, հրամայում էր սարկաւագը:

— Ես խոզ եմ, չռռալում էր պատասխանել Պետրովը:

— Աա՝ հայրս էլ խոզ է:

— Հայրս էլ խոզ է:

Տէրտէրը եւ սարկաւագը հռհռալով՝ հեռանում էին դասարանից:

Հայր Նիկոլայը ինձ չէր սիրում: «Արմեաշկա» կոչում էր արհամարհանքով: Հայր Իւանը, ընդհակառակը, սիրում էր: Բաւական ուշ ես հասկացայ մէկի սիրոյ եւ միւսի ատելութեան պատճառը: Մի անգամ քահանան հարբած եկել էր մեր տունը օրհնելու, մայրս լաւ չէր վարուել հետը, թոյլ չէր տուել տունը օրհնելու եւ առանց դրամ տալու կամ օղի խմցնելու ճամբու էր դրել:

— Տէրտէր չես, ռախիի փիչի ես, — ասել էր նրա երեսին մայրս:

Ընդհակառակը, հայր սարկաւագին մեր տանը յարգում էին: Հայրս, յաճախ, նուէրներ էր ուղարկում նրան:

Հայր Իւանը, սովորաբար, ինձ էր ուղարկում օղի բերելու:

— Սեմկա, առ այս քսան կոպեկը, թռիր չուռով օղի բեր:

ARAM webaram.com

Եւ ես թռչունի թեւերով թռչում ու վերադառնում էի օդիի չիչը ձեռքիս: Սարկաւագը ինձ էր յանձնում դասարանը, որ լռութիւն պահեմ, իսկ ինքը քահանայի հետ քաշւում էր ժամկոչի սենեակը:

Հետեւեալ դէպքը աւելի եւս դրդռեց քահանային իմ դէմ:

Մի օր, երբ քահանայ ու սարկաւագ սկսեցին երգել հոգեւոր երգեր, եւ մենք պատրաստւում էինք դեռ երթալու, յանկարծ, դասարանի դուռը բացուեց եւ մեր ուսուցիչները աղմուկով մտան ներս: Երկուսն էլ լոլիկ էին գարձել:

Սարկաւագը բացեց մի գիրք եւ սկսեց թելադրել, քահանան կաւիճը ձեռքին գրում էր սեւ տախտակի վրայ:

Ապա հայր Իւանը հրամայեց.

— Սեռ՛ական, ա՛ռ կաւիճը եւ սրբագրիր տէր – հօր սխալները: Սխալներ տեսնո՞ւմ ես:

Ես մօտեցայ. տէրտէրը բաւական կոպիտ սխալներ էր արել: Կաւիճով ընդգծեցի մի քանիսը:

— Մալադեց — ապրի՛ս — քաջալերեց սարկաւագը:

Քահանան, այծի մօրուքը վեր–վար շարժելով, ջղագրգիռ եւ արհամարհանքով չպրտեց երեսիս.

— Վանիուչիյ արմեաշկա — հոտած հայուկ — եւ այնուհետեւ երբեք չներեց իմ «ստահակութիւնը», մինչ սարկաւագը աւելի սիրալիր դարձաւ: Քահանան փորձեց ինձ հեռացնել եկեղեցու երգչախմբից, բայց սարկաւագը թոյլ չտուեց: Ես հաւատում էի, թէ ձայնիս եմ պարտական այդ չնորհքը, բայց վերջը անհերքելի փաստեր եկան հաստատելու, որ մօրս կողմից սարկաւագի կնոջ նուէր ուղարկուած անուշեղէններն էին ինձ հասցրել մինչեւ երգչախումբ...

Ինչպէս ասացի, հայր Իւանը սիրում էր ինձ: Ես էլ փոխադարձաբար սիրում էի նրան: Սիրելը, թերեւս, չափազանցութիւն է, աւելի ճիշտ՝ ես յարգում եւ խղճում էի նրան:

Երբեմն այդ վիթխարի մարդը ինձ տուն էր հրաւիրում: Փոքրիկ ու փխրուն սարկաւագուհին հիւրասիրում էր անուշով ու խմորեղէնով, իսկ ամուսինը հետս խօսում էր այնպէս, կարծես ես նրան հաւասար մէկը լինէի: Այդ ինձ դիւր էր գալիս:

Հայր Իւանը զանգատւում էր աչխարհից, մարդկանցից, իր թշուառ կեանքից: Բողոքում էր, որ իրեն անարդար տեղը ուղարկել են Տիմաչովկա կոչուած արջի որջը: Ինքը վաղո՛ւց քահանայ ձեռնադրուած պէտք է լինէր, բայց տեսէք՝ այդ խոզ Նիկոլայը, այդ ոջիլը քահանայ էր, իսկ իրեն պահում էին սարկաւագի աստիճանով... Ինչո՞ւ: Որովհետեւ ինքը արժանապատուութեան տէր է,

ARAM webaram.com

սեփական դաղափարներ ունի, ամէն մի անասունի առջեւ չորս թաթերի վրայ չի կանգնում: Մա՛րդ պէտք է լինել, հասկանո՞ւմ ես, մա՛րդ եւ ոչ թէ հայր Նիկոլայի նման հարբեցող խոզ...

Ես փաստով համոզուեցի, որ հայր Իւանը սեփական դաղափարներ ունէր: Մի օր նա հարցրեց ինձ.

— Սեո՛մկա, ասա՝ դու արմեաշկա՞ ես:

Ես չպատասխանեցի:

— Ցիմա՛ր, ինչո՞ւ ես լռում, դու հպարտ պէտք է լինես, որ հայ ես:

Ես առանձին պատճառ չէի տեսնում հպարտանալու:

— Աա՛, հայ եմ, բարկացաւ նա:

— Հայ եմ, կրկնեցի ես թուխթակի պէս:

— Աա՛, հպարտ եմ, որ հայ եմ, պահանջեց նա, կարծես ինձ տանջելու նպատակով:

— Հպարտ եմ, որ հայ եմ:

— Հասկանո՞ւմ ես դու, ով կաղամբի գլուխ, Աստուած մարդու ճակատին ինչ որ գրել է, այնպէս էլ կը լինի: Այնպէս էլ պէտք է լինի: Ես ռուս եմ, հարբեցող սարկաւագ, անունս էլ Իւան: Իւան ծնուել եմ, Իւան ապրում եմ, Իւան էլ պիտի մեռնեմ: Դու էլ հայ ես եւ հայ էլ պէտք է մնաս, հասկանո՞ւմ ես, կաղամբի գլուխ: Հայ էլ պէտք է մնաս:

Ես գլուխս կախ՝ մտիկ էի տալիս: Ոչինչ չէի հասկանում հայր Իւանի խօսքերից: Ի՞նչ նշանակութիւն ունէր՝ հայ թէ ռուս: Ինձ թւում էր, թէ հայր Իւանը օղու ազդեցութեան տակ էր այդպէս խօսում: Բայց վերջը իմացայ, որ հօրս էլ յանդիմանել էր, որ ես ուրիշների առաջ ծածկում եմ հայութիւնս եւ ամաչում եմ հայերէն խօսել: Ամէն եկեղեցի իր զանգակատունը ունի, ասել էր նա հօրս եւ ամէն զանգ՝ իր հնչիւնը... Հայրս չատ հաւանել էր այդ խօսքը եւ յաճախ գործ էր ածում.

— Ամէն եկեղեցի իր զանգակատունը ունի:

Հայր Նիկոլայը հայր Իւանի երեսովն էր տալիս.

— Դու ապատ մտածող ես, հայր սարկաւագ, դու հերետիկոս ես, պիղծ, քո տեղը եկեղեցին չէ, այլ Սիբիրի բանտերը... Դէ՛, ուղարկիր, օղի բերեն, խմենք...

Ես սէրտերի խօսքերից բան չէի հասկանում: Հայր Իւանը ի՞նչ մեղք էր գործել, որ Սիբիրի բանտերին է արժանացել: Ես դեռ դիտէի հետեւեալ քառեակը Սիբիրի մասին եւ վրդովւում էի, որ սէրտերը իր սարկաւագ ընկերոջ այնտեղ էր ուղարկում — Սիբիր:

ARAM webaram.com

Այնտեղ յաւիտենական լռութիւն,
Այնտեղ՝ անթափանց խաւար,
Ինչո՞ւ, անիծեալ դու երկիր,
Երմակը ձեզ գտաւ...

Վերջը տարիներ անցած, ես հասկացայ թէ՛ հայր Իւանի վիշտը, թէ՛ հայր Նիկոլայի կոպիտ խօսքերը: Երկուսն էլ մխեւնոյն հոգեւոր դպրոցի աշակերտ էին եղել եւ երկուսն էլ վռնտուել էին դպրոցից կիսաւարտ. հայր Իւանը՝ ազատամտութեան յանցանքով, հայր Նիկոլայը որպէս հարբեցող եւ խառնակիչ: Հայր Նիկոլայը աղեցիկ եպիսկոպոս ազգական է ունեցել եւ նրա չնորհիւ քահանայ ձեռնադրուել: Հայր Իւանը ազդեցիկ մարդ չէ ունեցել եւ հազիւ տարկաւագութեան է հասել: Ճակատագիրը երկուսին էլ միասին Տիմաշովկա յետամնաց գիւղն էր նետել...

...Ո՛չ մօրս լացն ու դանդաղն էին օգնում, ոչ հայր Իւանի յորդորները: Փաստը մնում էր փաստ. ես ուսանում էի շատ արագ: Երբ տօներին վերադառնում էի ազարակ, այլեւս դժուարութեամբ էի հասկանում մեծայիս խօսածները. քոյրս՝ Շուշանիկը թէեւ դեռ հայերէն խօսում էր, բայց ինձանից փոքր եղբայրներս ու քոյրս արդէն բոլորովին ռուսախօս էին դարձել: Մօրս բոլոր ճիգերը՝ խօսեցնելու նրանց հայերէն, ի զուր էին անցնում: Ռուսական ծովը կլանում էր ամէնքին անխնայ:

Տարին մի անգամ Եկատերինոդարից Տիմաշովկա գալիս էր մի հայ քահանայ: Այդ առթիւ չրջակայքից 8–10 հայ ընտանիքներ հաւաքւում էին Յոնքուրեանի տունը: Քահանան ժամ էր ասում եւ բոլորիս հաղորդութիւն տալիս: Մեծերը քահանայի հետ խօսում էին հայերէն, բայց նոր սերունդը ոչինչ չէր հասկանում քահանայի խօսքերից: Ոչ միայն չէինք հասկանում, այլեւ ծաղրում էինք նրա հայերէն լեզուն: Եւ աչքաւորում էինք չուտ ազատուել ու փախչել, որպէսզի մեր ռուս ընկերները չմտանային, որ արմեաշկա քահանան մեզ հաղորդութիւն է տուել: Եւ ի՞նչ էր այդ հաղորդութիւնը — գինու մէջ թրջուած մի չոր նշխարքի կտոր, մինչդեռ ռուս տէրտէրը մեր բերանը դնում էր սպիտակ, փամփլիկ դաթայի նման հացի կտորներ...

Դպրոցում ես առանձնապէս մտերմացել էի Մարիայի հետ, որ շատ ընդունակ աշակերտուհի էր: Հնչեղ ձայն ունէր եւ ի՛նչ ծիծաղ: Մխեւնոյն նստարանի վրայ էինք նստում եւ մրցակից էինք դասերի մէջ՝ առանց նախանձի:

ARAM webaram.com

Մարիայով հետաքրքրուած էր նաեւ դիւղի պետական օղեվաճառի որդին՝ Հրիհորիյը։ Սիրուն տեսքով, զուարճասէր տղայ էր Հրիհորիյը եւ այդ ես չէի հաւանում, նա ամէն առիթով ունէր, որ Մարիան էլ փոխադարձէր նրա սիրաառչոր զգացումները։

Բայց Մարիան գերազասում էր ինձ...

IV — ԵՐԲ ՍԻՐՏՆ Է ԽՕՍՈՒՄ

Դպրոցում իմ ամենամօտիկ մարդը Մարիան էր։ Եւ ոչ միայն դպրոցում, տանն էլ, դուրսն էլ, ամէն տեղ։ Հաճելի էր դասարանում նստել նրա կողքին, պտալ նրա տաք մարմինը։ Տանը պարապել ու խաղալ միասին։ Պարտիզում, բալենիների խիտ ոստերի տակ, երդել ու չնչել միասին։

Առաջին գիրքը, որ ես կարդացել եմ, միասին կարդացինք — Գոգոլի «Տարաս Բուլբան»ն։ Կարդում էինք հերթով՝ սկիզբը հազիւ բառերը իրար կապելով, վերջը արդէն սահուն, «վարժապետի պէս»։ Եւ ինչ հրճուանք էր այդ ընթերցանութիւնը մեծ տան եռեւը, պարտէզի մէջ, բալենիների ներքեւ...

Կամաց-կամաց Մարիան դարձաւ իմ էութեան անբաժան մէկ մասնիկը։ Երբ նա բացակայում էր, չուրջս թւում էր ամայութիւն։ Երբ նա ուրիշի հետ էր լինում, ես սկսում էի ինձ ուտել խանդից։ Մանաւանդ, անտանելի էր, երբ նա զուարթ շաղակրատում էր Հրիհորիյի հետ։

Հրիհորիյը նոյնպէս իմ մտերիմ ընկերն էր։ Դասարանում, ինձանից եւ Մարիայից յետոյ, նա էր ամենալաւ առաջադէմ աշակերտը։ Հայր Իւանը նրան էլ էր սիրում. նրա հայրը նոյնպէս լաւ խմիչքներ էր նուիրում մեր ուսուցչին։

Հրիհորիյը խոստովանել էր ինձ, թէ սիրում էր Մարիային, եւ նոյնիսկ պարզել իր ծրագիրը. 18 տարեկան դառնալուց յետոյ, պիտի ամուսնանար Մարիայի հետ, ամբողջ դիւղը պիտի հրաւիրէր եւ մեծ հարսանիք պիտի սարքէր։ Մարիայի հայրն էլ, իբր թէ, արդէն հաւանութիւն էր տուել իր հօրը...

Ինձ այդ խոստովանութիւնը բնաւ չյուզեց. ի՞նչ կայ որ, ուզում են թող ամուսնանան. ի՞նձ ինչ։ Բայց հետզհետէ հոգիս սկսեց խռովուել։ Ի՞նչպէս թէ ամուսնանան. հապա ե՞ս ինչպէս պիտի ապրէի առանց Մարիայի... Մի գրա ոեխին մութ տուր. ուզում է Մարիային առնել։ Ինչպէ՞ս չէ...

ARAM webaram.com

Մարիայի մէջ էլ, կարծես, ինչ որ փոփոխութիւն էր զգացուում. զպրոցում նա աւելի Հրիհորիյով էր զբաղւում — կամ ինձ այդպէս էր թւում — իսկ տանը այնպէս սիրալիր էր ինձ հետ, այնպէս քնքոյշ չոյում էր մազերս, կամ, անզգուշութեամբ, չամամ կուրծքը սեղմում մարմնիս...:

Մի երեկոյ ականջիս հասաւ այսպիսի մի խօսակցութիւն: Մարիայի հայրը եւ մայրը, նստած կիսախաւար սենեակում, զրոյց էին անում.

— Գիտե՞ս ինչ, ասաց մայրը, մեր Մարիան չատ է երես տալիս Սեմկային. լաւ տղայ է, բայց արմեաշկա է:

— Ի՞նչ յիմար բաներ ես ասում, պատասխանեց հայրը, Մարիան պէտք է Հրիհորիյի կինը լինի — ես խօսք եմ տուել Հրիհորիյի հօրը:

— Խօսք-մօսք չեմ հասկանում. աղջիկը արդէն հասնելու վրայ է. չե՞ս տեսնում ի՛նչպէս բացուել է: Արմեաշկան էլ արդէն երեխայ չէ: Մի բան դուրս չգայ...

— Ի՞նչ պիտի դուրս գայ. Մարիան իր գործը գիտցող աղջիկ է...

— Ինչ բան եմ ասում, բարկացաւ կինը. վերջը չասես թէ չասացի...

Այսպէս, ուրեմն, ես՝ արմեաշկա. Մարիան պէտք է լինի Հրիհորիյի կինը: Բայց ի՞նչ է մտածում Մարիան ինքը:

Շուտով այս հարցն էլ պարզուեց:

Մի օր, դասերից յետոյ, նստած էինք եկեղեցու պարտէզի ծայրում, եղրեւանիի թփի տակ: Օդը յագեցած էր ծաղիկների արբեցնող բոյրով: Մարիան չիկնել էր տաքից՝ լուռ, խորասուզուած ինձ անծանօթ մտքերի մէջ: Լուռ էի նաեւ ես եւ մտքիս մէջ բառեր էի փնտռում ասելու համար այն ամէնը, որ պահանջ էի զգում արտայայտելու:

Մէկ էլ Մարիան, ընդոստ, ցատկեց տեղից եւ ոտքը ամուր գետնին խփելով՝ պոռաց երեսիս.

— Դու տղամարդ չե՞ս...

Ես, ի հարկէ, տղամարդ էի, թէեւ հազիւ 14 տարեկան, բայց ի՞նչ պէտք կար այդպէս պոռալու:

— Լսել ես, որ հայրս ուզում է ինձ տալ օդեվաճառի տղային...

Ա՛յ, այդ էլ դիտէի, բայց զարմանալ ինչո՞ւ պոռալ...

Եւ, յանկարծ, ինձ համար բոլորովին անսպասելի կերպով,

ARAM webaram.com

Մարիան նեռուեց վզիս: Ուրիշ անգամներ էլ պատահել էին նման բաներ, բայց վերջը փակուել էր կատակով: Հիմա տարբեր էր. Մարիան պինդ փակել էր կրծքիս եւ յորդ արցունքները էր թափում:

Երբ, վերջապէս, հանդստացրի, Մարիան ամուր սեղմուեց ինձ եւ պատմեց.

Երէկ Հրիհորիյը իրեն պաչտօնապէս առաջարկութիւն է արել եւ փորձել է մատը հագցնել նշանի արծաթէ մատանի, բայց ինքը մերժել է: Ասել է, թէ, վերջնական պատասխան տալուց առաջ, պիտի հարցնէ իմ կարծիքը. ի՞նչ եմ ասում ես...

Էլ ասելու բան մնա՞ց որ... Բայց իմ լեզուն կարկամում էր:

— Ի՞նչ ես ուզում, որ ասեմ... — Նա նորից բարկացաւ ու ոտքի ելաւ.

— Աա, որ դու անխելք երեխայ ես... որ Հրիհորիյը տղամարդ է, իսկ դու՝ թրջուած հաւ... Որ Հրիհորիյը քեզանից լաւ է...

Օ՛, ո՛չ. այդ արդէն չեղաւ: Սրտիս ամենազգայուն լարերին էր դիպել:

— Սատանան տանի քո Հրիհորիյին, բարկացայ ես, նատիր մօտս...

Եւ վերջը ինչ որ պատահեց կարող են պատկերացնել միայն 14 տարեկան պատանիները եղբեւանիի բուրմունքից արբեցած:

— Աա, դու ինձ սիրո՞ւմ ես, ասա սիրո՞ւմ ես, անընդհատ կրկնում էր Մարիան:

Ես, անշուշտ, սիրում էի: Մենք երդուեցինք, որ մինչեւ մահ պիտի սիրենք միմեանց — Տիմաշովկայի օդամաւն Տերենտի Բուհրիեւի աղջիկը եւ Մեծ Սալայի օդամաւն Մերկեանի Քերոբի Թոռը...

Աստուած դիտէ, թէ ինչ ճանապարհով Մարիայի եւ իմ սիրավէպի լուրը հասել էր քրոջս՝ Շուշանիկի ականջը: Երբ ես տարուայ վերջը, Մարիային վերջին անգամ համբուրելով եւ չուտով յետ դալու խոստումով, ամառուայ արձակուրդի համար վերադարձայ մեր ագարակը, Շուշանիկը արդէն ծանօթ էր իմ սրտի պատմութեան: Սրտի պատմութիւն էլ ինքը ունէր:

V.— ԶԱԻԱԿՆԵՐՍ ՁԵՌՔԷ Կ'ԵՐԹԱՆ

Շուշանիկը, իմ մեծ քոյրը, արդէն 16 տարեկան էր: «Վարդի պէս բացուել է», ասում էր մեծ մայրս: Հասակով, եղնիկի թեթեւ քայլուածքով, սպիտակ, նուրբ մորթով, խաժ ծիծղուն աչքերով եւ

ARAM webaram.com

երկար, ճոխ մազերով աղջիկ էր։ Կարելի չէր չհիանալ նրա տեսքով, չսիրել նրա զուարթ բնաւորութիւնը։

Ես շատ էի սիրում Շուշանիկին, եւ մենք մտերիմ էինք։

Մեր ծնողների պարծանքն էր Շուշանիկը։ Եւ վիշտն ու տառապանքը միաժամանակ։ Եւ միայն Շուշանիկը չէր, մենք ամէնքս, Մերկեանի Քերոբի թոռներս մեծ ցաւ ու տանջանք էինք պատճառում մեր ծնողներին։ Ակնյայտնի կերպով օտարանում էինք, մոռանում հայերէն լեզուն, կտրւում հայութիւնից։ Ես արդէն ռուսախօս էի, դժուարանում էի արտայայտուել մայրենի լեզուով։ Ռուսացման համբու վրայ էին եւ՛ քոյրերս ու եղբայրներս։

Աւելին. մենք նոյն իսկ ամօթ էինք զգում, երբ յիշեցնում էին մեր հայ լինելը. ամաչում էինք հայերէն խօսել օտարների ներկայութեամբ։ Տիմաշովկայում, Մարիայինոյ տանը, ես բոլորովին մոռացել էի, որ հայ եմ։ Շատ քիչ բան էր մնացել իմ մէջ հայութիւնից. մի քանի հայերէն բառերի եւ մի քանի կտորուանք մեծայիցս սովորած աղօթքներից։ Եւ այն էլ ի՛նչ ապաւաղուած ձեւով։ Օրինակ.

Զարբշխաւիճն հալածաւ, մորճուրծառայիդ ճումարտիկին,
Արեւ ելաւ ցշաւ խաչին, աւեր եւ ուր կործաւեցին...

Տատս սովորեցրել էր, որ եթէ այս աղօթքը արտասանենք մի քանի անգամ, չար ոգիները կը փախչեն ու մեզ երբեք ձեռք չեն տայ։ Եւ մենք արտասանում էինք թուխակի պէս, առանց հասկանալու միտքը։ Շատ ուշ միայն ես վերծանեցի այդ խորհրդաւոր բառերի իմաստը.

Զար իշխաւիճն հալածին, որճ ընդ ծառայս ճո մարտնչին,
Երեւելով ցշաւ խաչին, աւերեւոյթճ կործաւեսցին։

Երբ մենք հարցնում էինք տատիս.

— Մեծա, ինչ կը նշանակէ «քու մարտիկին», նա պատասխանում էր.

— Զաւակս, աղօթք է, մարդ հասկանալու չէ։

Աղօթքը պէտք չէ հասկացուելը։ Եւ արդէն առանց դրան էլ մենք չէինք հասկանում ոչ միայն դրաբար աղօթքներ, այլ եւ հայերէն սովորական խօսքեր։ Թէ՛ դուրսը, թէ՛ տանը մեր խօսակցական լեզուն ռուսերէն էր։

Ռուսերէն էինք մտածում, ռուսերէն արտայայտւում, ռուսերէն էինք ապրում։ Մենք՝ երեխաներս, զոհ էինք ու երջանիկ։ Ունէինք ամէն բարիք. լողում էինք առատութեան մէջ։ Ծառուր ապակի կալուածքը արդէն մեր սեփականութիւնն էր։ Հարուստ էինք։ Առողջ

ARAM webaram.com

էինք։ Ամէնքը յարգում եւ մեծարում էին մեզ։ Թուում էր, թէ, վերջապէս, բախտը բոյն էր դրել Մերկեանի Քերոբի ժառանգների յարկի տակ։ Էլ ի՞նչ էինք ուզում։

Մեր ընտանիքը բաբելամական լայն շրջանակ էր ձեռք բերել — մերձակայ հարուստ կալուածատէրերը եւ շրջակայ գիւղերում ապրող հայ ընտանիքները։

Տիմաշովկայում կային երկու հայ խանութպան ընտանիքներ՝ Սեւեան եւ Յոնդուրեան, որոնց հետ մենք բաբելամական յարաբերութիւն էինք պահում։ Նրանց երեխաները հայերէն չէին խօսում, բայց դեռ հայ էին։ Ամէն Ծնունդի կամ Զատիկի Եկատերինոդարից գալիս էր հայ քահանայ։ Շրջակայքի բոլոր հայ ընտանիքները հաւաքւում էին Յոնդուրեանի տունը։ Քահանան ժամ էր անում, մեզ համար անհասկանալի քարոզ խօսում եւ բոլորիս հաղորդութիւն տալիս։ Այդ օրը մենք խելօք էինք մնում, որ մեզք չգործենք, իսկ մեծերը էֆ էին արքում։ Յաջորդ օրը քահանան լիառատ վարձատրուած մեկնում էր, իսկ հիւրերը դեռ մէկ–երկու օր էլ չարունակում էին էֆը...

Ռուսական ովկիանոսում հողմացրիւ հայկական բեկորները հայութեան հետ չաղկապող միակ ապրակը մնացել էր դրսէն եկող քահանան եւ հաղորդութիւնը։ Ժամանակը աւելի եւ աւելի թաղում էր մեզ ռուսացման ալիքներում։

Մայրս սուգի մէջ էր։ Չէր կարողանում, չէր ուզում հաշտուել ճակատագրի հետ։ Իր զաւակները ձեռքից գնում էին։ Յաճախ, պատմում էր իրեն հետ պատահած մի դէպք. գարնան Թուխաերից մէկի տակ դրել էր բադի մի հաւկիթ։ Երբ դուրս էին եկել ճտերը, մայր հաւը չէ նկատել հաւի եւ բադի ճուտերի տարբերութիւնը։ Մի օր, սակայն, երբ Թուխսը իր ճտուկներով շրջապատուած մօտեցել էր գետին, բադիկը յանկարծ նետուել էր ջուրը եւ սկսել լողալ։ Հաւը սարսափահար վեր ու վար էր վազել, թեւերը թափ տուել, կչկչացել, բայց բադիկը չէ լսել ու երջանիկ լող է տուել իրեն համար։

Մայրս ծնկները ծեծելով՝ կրկնում էր արտ մորմոքով.

— Ի՛նկը մեզի նման է, մեր ճիպչաճներն ալ (ճուտիկները) ձեռքէ կ'երթան...

— Ի՞նչ պիտի ըլլայ սա մեր ազոց հալը, հարցնում էր նա հօրս. եո՛ղ կ'ըլլան. միտք արա՝ ի՞նչ անինք։ Քեզի կ'ասիմ, կ'իմանա՞ս։

ARAM webaram.com

Բայց ի՞նչ կարող էր անել «կ'իմանաս»ը: Նրա սիրտն էլ ցաւում էր, սակայն, ի՞նչ անէր:

Մայրս նրան հանդիստ չէր թողնում. «էլլինք–էրթանք գեղ. զաւակներս ձեռքէ կ'երթան»...

Հեշտ էր ասել ելնենք–երթանք: Տարիների աչխատանքով հազիւ մի կտոր բարեկեցութիւն էր ձեռք բերուած, ի՞նչպէս կարելի էր ձգել ու հեռանալ: Գիւղ վերադառնալ նորից աղքատութիւն ճաշակելու վտանգո՞վ: Հայրս չէր ուզում լսել կալուածքից հրաժարուելու մասին. ինչպէս ուրիշները, այնպէս եւ մենք կ'ապրինք: Մեծ է Աստուծոյ զօրութիւնը...

Մայրս էլ հեշտ սրտով չէր, որ մտածում էր գիւղ վերադառնալու մասին: Նա դեռ չէր մոռացել գիւղում քաչած տանջանքները: Մեզ գիւղ տանէր ու փրկէր, հապա ի՞նչպէս թողնէր Գայիանուչին ու Մարտիկին, որոնք կողք–կողքի պառկած էին Տիմաչովկայի գերեզմանատան մէջ, ակացիայի ոստերի ներքեւ: Ի՞նչպէս լքէր նրանց ու հեռանար...

Ամէն մեռելոցի նա մեզ տանում էր նրանց այցելութեան: Զոյգ գերեզմանների վրայ մէկ–մէկ մոմ էր վառում, խունկ էր ծխում, աղօթում ու լալիս էր: Մենք թողնում էինք նրան մենակ, որպէսզի գլուխ–գլխի զրոյց անէր Գայիանէի եւ Մարտիկի հետ: Երեկոյեան մեզ հետ վերադառնում էր հանգստացած...

Ես անհամբեր էի, թէ ե՞րբ պիտի վերջանար ամառը, որպէսզի նորից գնամ Մարիայենց տունը: Երազում էի, թէ ինչպէ՞ս պիտի դիմաւորէր ինձ Մարիան, ինչ երջանիկ օրեր պիտի անցընէինք միասին:

Երջանիկ էր եւ Շուշանիկը: Մեզ մօտ յաճախ այցելութեան էր գալիս հարեւան հարուստ կալուածատէր պան Կորժեւիչը իր երիտասարդ որդու՝ Ադամի հետ: Զուարճասէր ու զուարթախօս մարդ էր պան Կորժեւիչը. հաճելի էին նրա այցելութիւնները: Բարեկազմ, գեղեցկատեսիլ ու չէնշող տղայ էր եւ Ադամը: Ինչո՞ւ, ուրեմն, զարմանալ, որ Ադամն ու Շուշանիկը չուտով մտերմանում են: Մտերմութիւնը փոխւում է սիրոյ: Շուշանիկը ինձ խոստովանուեց, որ անտարբեր չէր դէպի երիտասարդ լեհը:

Այժմ մենք աւելի մտերիմ էինք՝ Շուշանիկն ու ես: Մեզ աւելի միացնում էր մեր զաղտնիքը եւ միասին ապագայի ծրագիրներ էինք երազում: Շուշանիկը պիտի դառնար պանի Սուսաննա Կորժեւիչ. ես պիտի լինէի կազակների օդաման Տերենտի Բուհրիեւի փեսան: Մենք երջանիկ էինք:

ARAM webaram.com

Երջանիկ չէին սակայն մեր ծնողները: Մօրս սիրտը մղկըտում էր: Ճակատը աւելի եւ աւելի ծածկւում էր խիտ կնճիռներով: Ազամ կորժեւիչի եւ Մարիայի պատմութեանը դեռ ծանօթ չէր, բայց մայրական սիրտը կծկւում էր, երբ տեսնում էր, թէ ինչպէս արագ օտարանում էին իր զաւակները:

— Միտք արա, ա՛յ մարդ, ի՞նչ անինք, ապաչում էր նա հօրս:

Եւ միտք էին անում, բայց ելք չէին գտնում:

— Հարամ ըլլայ մեր կերած հացը, կրկնում էր մայրս արցունքը աչքին: Աւելի աղէկ է գեղը չոր հաց ուտէինք, քաղցած ապրէինք, միայն թէ տղաքս հայ մնային, հայի ժամէ չզրկուէին, հայնակ կալաճի անէին...

Մեզ համար անըմբռնելի էր մօրս սուգն ու լացը: Ինչո՞ւ է ուզում, որ անպատճառ հայ մնանք: Ամէնքը ռուս են, հայութիւնից ի՞նչ օգուտ մեզ: Շուչանիկն ու ես՝ մենք արդէն ընտրել էինք մեր ճակատագիրը: Ով ինչ ուզում է ասի, մեր ապագան որոշ էր...:

VI.— ՎԵՐԱԴԱՐՁ

Երեկոյեան, ոսկեզօծ մատեանը ձեռքիս, հրաժեշտ տուի ուսուցչիս: Հոգիս հրճուանքի մէջ էր. Հայր Իւանը ինձ հետ խօսել էր, կարծես ես արդէն մեծ մարդ լինէի: Մարիան թող տեսնէր՝ տղամա՞րդ էր իր Սեոմկան...

Շտապում էի տուն: Երեւակայում էի, թէ ինչպէս ձեռքէ-ձեռք պիտի խլէին ոսկեզօծ կազմով մրցանակը, ինչպէ՛ս պիտի ուրախանային: Իմ խաղընկերները ինձանից արդէն դող պիտէին Տարաս Բուլբայի պատմութիւնը: Հիմա պիտի նայէին դրքի պատկերները, պիտի նախանձէին ինձ:

Բայց ուսուցչիս ամբողջ ասածները պէտք չկար պատմելու. մայրս էլ օրն ի բուն նոյնն էր կրկնում՝ «Հայ մնացէք»: Հայս ո՞րն է: Այս աշխարհը, տեսէք, ինչքան գեղեցիկ է, մարդիկ որքան լաւ են. հայ, ռուս, խալմուխ, — միեւնոյնը չէ՞: Ես պատրաստ էի սիրել բոլոր մարդկանց, նոյն իսկ այծի մօրուքով քահանային: Սիրել, աղօթել, պաշտել...:

Մութը կոխելու վրայ էր, երբ ես մօտեցայ մեր տան: Ի՞նչ էր պատահել սակայն. ոչ ոք չդիմաւորեց ինձ:

Բակում տարօրինակ իրարանցում էր տիրում:

Մեր ռուս ծառաներն ու աղախինները մեծ անտուկներ ու կա-

ARAM webaram.com

պոցներ էին տեղաւորում մեր երեք մեծ փուրգոնների մէջ։ Ներսը հազիւ ինձ վրայ ուշադրութիւն դարձրին։ Մեծաս կծկուել էր մի անկիւնում՝ լուռ։ Մայրս սենեակից սենեակ՝ ինչ որ բաներ էր հաւաքում եւ սպասաւորներին հրամաններ տալիս։ Հայրս օգնում էր նրան։ Շուշանիկը չէր երեւում մէջտեղը։ Սենեակներում ամէն կողմ տիրում էր խառնափնթորութիւն. կարծես պատրաստւում էին տունը դատարկելու։

Ի՞նչ էր պատահել, Տէ՛ր Աստուած։ Այս ի՞նչ չփոթ էր։ Ինչո՞ւ էին տխուր ամէնքը։ Աղախինները փէչերով սրբում էին աչքերը եւ անխօս վազվզում այս ու այն կողմ։ Ոչ ոք չէր նկատում իմ ներկայութիւնը։ Գիրքը ձեռքիս՝ չուարած չորս կողմս էի դիտում։ Չէի հասկանում ի՞նչ է պատահել, ի՞նչ է տեղի ունենում։

Վերջապէս, մայրս նայեց ինձ։ Փորձեց ժպտալ, բայց ժպիտ դուրս չեկաւ։

— Պիտ երթանք։ Տուն պիտ երթանք, ասաց նա ու նորից անցաւ գործի։

Պիտի երթանք, ո՞ւր, ինչո՞ւ համար եւ ինչո՞ւ այսքան հապճեպով։ Անհասկանալի էր։ Տարօրինակ։

Դուրս եկայ պարտէզ։ Ծառերի միւս կողմը, ծաղիկների մէջ, չարքով կանգնած էին մեզուի փեթակները։ Իմ սիրական պարտէզն էլ կարծես սուգի մէջ էր։ Անկիւնում, ակացիայի տակ, Շուշանիկը նստած էր տխուր, արցունքոտ աչքերով։

Նա աղմուկով փաթաթուեց վզովս եւ երկար չէր կարողանում զսպել հեծկլտանքը։ Փորձում էր խօսել եւ չէր կարողանում։ Ինչո՞ւ էր այսպէս յուզուած իմ սիրելի քոյրիկը. ի՞նչ էր պատահել։

Իսկ պատահել էր սարսափելի մի աղէտ։ Մի քանի օր առաջ հիւր էր եկել պան Կորժեւիչը իր մի քանի բարեկամների հետ։ Նստել, քաղցր զրոյց էին արել։ Վերջը, պան Կորժեւիչը, հանդիսաւոր խօսքերով, յայտնել էր, թէ եկել են խնդրելու Շուշանիկի ձեռքը իր որդու՝ Ադամի համար։ Մայրս չէր կարողացել իրեն զսպել եւ լալով դուրս էր եկել։ Հայրս, նոյնպէս յուզուած, պատասխանել էր, թէ մեծ պատիւ է իրեն համար պան Կորժեւիչի նման պատուաւոր մարդու հետ խնամի լինել, բայց պէտք է ընտանեկան խորհուրդ անել եւ Շուշանիկի համաձայնութիւնն էլ հարցնել, նախ քան վերջնական պատասխան տալը։ Մի քանի օրից նորից գալու խոստումով պան Կորժեւիչը եւ իրեն ընկերացողները մեկնել էին։

— Ցեսո՞յ, վե՞րջը ինչ եղաւ, անհամբեր էի իմանալու ես։

Վերջը, պան Կորժեւիչի հեռանալուց յետոյ, մայրս վայնա-

ARAM webaram.com

աունով ու պայրոյթով յարձակուել եւ ամէն տեսակ ծանր խօսքեր էր թափել խեղճ հօրս գլխին: — Դուն ամօթ չունի՞ս, մարդ: Եղ՛ր լալ աս փանն ալ, իրեն փիճի ալ: Ես աղջիկ չունիմ անոր տալու, հասկցա՞ր, չունիմ: Օգանի մէջ իմ ձեռքովս կը խզդիմ, համա անհաւատին աղջիկ չիմ տար, հասկցա՞ր: Վախ, վախ, գաւակներս ձեռքէ կ'երթան... Դուն մարդ չիս, խղճմտանք, նամուս չունիս... Դուն հայ քրիստոնեայ չիս, խաչ ու հաւատ չունի՞ս: Ի՞նչպէս աղջիկդ անհաւատ փոլիսմէին կու տաս: Քու ձեռքովդ աղջիկդ հողի տակ կը դնիս:

Ու խելայեղ թափով փաթաթուել էր Շուշանիկին, լաց ու կոծով անվերջ համբուրել, կարծես իրօք գերեզման պիտի մտնէր աղջիկը:

— Ինչպացի՞լ իս, կնիկ, իրենից դուրս էր եկել հայրս, մէմը վրաղ նայէ. ի՞նչ կ'ուզիս, որ անինք:

— Ի՞նչ կ'ուզի՞մ: Վաղը սապախտան կ'առնում գաւակներս, գնդ կ'երթամ: Դուն հոս կեցիր քու խազախներուդ հետ: Կ'երթամ լուացք կ'անիմ, տախտակ կը սրբիմ, չոր հաց կ'ուտինք, բայց գաւակներս հայ կը պահիմ... Ի՞նչ կ'ուզի՛մ — ա՛ս է ուզածս...

Քիչ-քիչ մայրս հանդարտուել էր. հօրս բարկութիւնն էլ իջել էր: Նստել էին խորհուրդի: Մեծաս էլ խառնուել էր մէջ, մօրս կողմը բռնելով: Եւ որոշել էին մի քանի օրից վերադառնալ Մեծ Սալա: Խորհուրդը կարճ էր տեւել: Մինչեւ այդ ես էլ եկած կը լինէի: Շուշանիկը գաղտնի հեռեւելիս է եղել խորհրդակցութեան, ուր վճռուել էր մեր բախտը: Շուշանիկը լալիս էր դառն արցունքով: Ծօդս ցընդում էին և՛ւ իմ ոսկի երազները...

Երեք օր է, պատմեց Շուշանիկը, մեր տունը տակն ու վրայ էր: Հաւաքում, անտուկների մէջ էին դասաւորում, կապկպում ու փուրգոնները լեցնում: Կալուածքի հոգատարութիւնը հայրս յանձնել էր մեր աւագ գործակատարին: Վաղը առաւօտ ճամբայ պիտի ընկնէինք: Ինձ էին սպասում:

Այո, սարսափելի աղէտ էր պատահել: Ոսկեկազմ գիրքս ընկաւ գետին: Շուշանիկը վրան չնայեց անգամ: Արցունքը ինձ էլ էր խեղդում: Ուրեմն, էլ Մարիային պիտի չտեսնէի: Ուրեմն, ամէն բան վերջացա՞ւ: Այս ինչ դաժան աշխարհ էր: Ինչ անսիրտ մարդիկ...

Երեկոյեան մեր ընթրիքը կարծես մեռելահաց լինէր: Ամէնքը լուռ քաշուեցին իրենց անկողինները:

ARAM webaram.com

— Աղէկ քուն եղէք, սապախտան կանոխ տեղէ պիտ էլլինք, պատուիրեց մայրս:

Աղէկ քուն եղէք... Ո՞վ կարող էր քնել, ինչպէ՞ս քնել, երբ երկինքը փուլ էր գալիս մեր գլխին:

Ամբողջ գիշեր անքուն՝ ես աշխատում էի լուծել ահաւոր կընճիռը. ի՞նչպէս հեռանալ, ո՞ւր եւ ինչո՞ւ համար: Հեռանալ առանց գոնէ մի անգամ Մարիային տեսնելու: Թող նրանք երթան, եթէ ուզում են, ես պիտի մնամ: Աննկատելի կերպով դուրս կը գամ տնից, կը պահուեմ խոտի դէզի մէջ, կը մնամ պահուած: Կը փնտռեն, «Սիմաւոն, Սիմաւոն» կը կանչեն, բայց ես ձայն չեմ հանի: Մայրս բարկացած կ'ասի. «էրթանք. եո՛ւ թող ըլլայ. թող մնայ հոս, էրթանք»: Ու կ'երթան: Վերջը ես դուրս կը գամ, կը վազեմ Մարիայենց տունը եւ այլեւս երբեք չեմ բաժանուի նրանից:

Բայց... այս մութ գիշերին ի՞նչպէս մենակ պահուէի դէզերի մէջ: Ես առոյգ գիտէի, որ գիշերները ամէն տեսակ խոռթլախներ դուրս էին գալիս տղաներ որսալու համար: Իրենց ձեռքը ընկած տղաներին խստիկ էին անում, չարչարում, ծծում էին երակներից արիւնը, մինչեւ որ տղան մեռնէր: Հապա եթէ ես էլ ընկնէի խոռթլախների ձե՞ռքը...

Եւ յետոյ, այո՛, Մարիան ամէն ինչ էր ինձ համար, բայց ինչպէ՞ս թողնէի հարազատներիս, Շուշանիկին, որին այնքան կապուած էի եւ որը այնպէս սիրում էր ինձ: Նրանք երթային, եւ ես մնայի մենակ եւ այլեւս երբեք, երբեք չտեսնէի նրանց...:

Սարսափելի են գիշերուայ խոհերը, երբ ելք ես փնտռում առջեւդ բացուած վիհից եւ չես կարողանում գտնել...:

Առաւօտ կանուխ ամէնքս արդէն ոտքի վրայ էինք: Վերջին նախաճաշը մեր կալուածքում: Վերջին անգամ վայելելու էինք մեր հաւերի հաւկիթից այնքան համեղ ձուածեղը, մեր մեղուների քաղցրը ու երանաւէտ մեղրը, մեր կովերի անուշ սերը: Ուտում էինք անխօս, անժպիտ, կարծես խռոված իրարից: Աղախիններն ապաստարկում էին արցունքոտ աչքերով:

Ծանր բեռնաւորուած երեք ձիանի ամենամեծ փուրգոնները լծուած պատրաստ էին: Մօտենում էր մեկնումի սարսափելի րոպէն:

— Ամէնդդ նստէք, հրամայեց հայրս: Այդպէս էր օրէնքը. երկար համբորդութեան մեկնելուց առաջ պէտք էր մէկ վայրկեան նստել անխօս, աղօթել լուռ, որ Աստուած բարի ուղեւորութիւն պարգեւէր:

ARAM webaram.com

Նստեցինք։ Ամէն մէկը իր խոհերը ունէր, իր ցաւերը։ Շուշանիկը լալիս էր։ Ես ոգեմարդ էի, արցունք չունէի, բայց սրտով լալիս էի։ Լալիս էին եւ ազախինները, դրան առջեւ խռնուած մշակներն ու նրանց ընտանիքները՝ մեծ ու պզտիկ։ Կարծես յուղարկաւորութիւն լինէր։

— Նու, ա՛րոգոմ, հրամայեց հայրս կառապաններին։

— Ա՛րոգոմ, բարի ճանապարհ, Աստուած ձեզ հետ, հնչեց ամէնքի բերանից։



ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ 1911ԻՆ
Հայրս եւ մայրս՝ զաւակներով ու թոռներով

Արեւը բաւական բարձրացել էր արդէն, երբ մեր կարաւանը շարժուեց։ Պէտք է երկու ժամից աւելի շրջան անէինք դեպի ափով կամուրջը անցնելու համար եւ դեպի միւս ափով հասնէինք Տիմաշովկա, այնտեղից մեծ ճանապարհը բռնելու համար։

Մայրս մեզ հետ չէր։ Կարճ ճամբով գնացել էր Տիմաշովկա։

ARAM webaram.com

Շուշանիկը հետեւել էր նրան: Այնտեղ պիտի մխանային մեզ:

Ա՛խ, եթէ իմանայի, ես էլ կը վազէի նրանց ետեւից: Կը տեսնէի Մարիային: Սիրտս կը բանայի նրա առջեւ: Կը յորդորէի, որ չտխրի: Մի քանի տարուց, երբ մեծանայի, անպատճառ պիտի վերադառնայի մօտը: Ես համոզուած էի, որ Մարիան լալով պիտի փաթաթուէր վզովս եւ պիտի խոստանար.

— Այո՛, կը սպասեմ: Գնա, Աստուած քեզ հետ. ես կը սպասեմ քեզ...

Երբ մօտեցանք Տիմաշովկայի դերեզմանատան, դրան առջեւ մայրս եւ Շուշանիկը արդէն սպասում էին մեզ: Ես երբեք այդպէս չէի տեսել մօրս դէմքը: Լացից կարմրել էին աչքերը: Եւ տխուր էր, եւ կարծես ուրախ: Ի՞նչ էր պատահել: Ի՞նչ էր կատարւում նրա հոգում:

Շուշանիկը վերջը պատմեց, որ առանց Տիմաշովկայում ոեւէ մէկին տեսնելու, ուղիղ եկել էին դերեզմանատուն: Մայրս ծաղիկներ էր դրել ու մոմ վառել պոյղ հողակոյտերի վրայ: Ծունկ էր ծռել: Եւ ծնկաչոք երկար աղօթել ու խօսել էր հողի տակ հանգչող Գայիանուշի եւ Մարտիկի հետ, աղօթել, լացել ու հրաժեշտի քնքոյշ խօսքեր ասել: Ներողութիւն էր խնդրել, որ թողնում էր նրանց մենակ: Որ այլեւս պիտի չայցելէր նրանց: Հետու տեղեր պիտի երթար: Մարիամ Աստուածածինը թող պահապան լինէր նրանց արքայութեան մէջ...:

Մեր փուրգոնները չարժուեցին դանդաղ: Ես յետեւի փուրգոնում էի Շուշանիկի եւ մեծացիս հետ: Ագահութեամբ նայում էի հեռացող Տիմաշովկային: Ահա ճերմակ եկեղեցու թիթեղէ կանաչ տանիքը, բարձր զանգակատնով: Նրա կողքին մեր դպրոցը, ուր այժմ երեւի հայր Իւանը օղի էր խմում այծի մօրուքով հայր Նիկոլայի հետ եւ սաղմոսներ երգում հարբած ձայնով: Ջինջ անդին Հրեհորիյի հօր օղեռունը՝ ազմկոտ յաճախորդներով: Շուրջը՝ գիւղի չուկան: Իսկ այս կողմ, աւելի վեր, Մարիայենց տունը՝ չրջապատուած ակացիաներով ու բարդիներով: Ի՞նչ էր անում այժմ իմ խեղճ Մարիան: Նա չգիտէր որ իր Սեմկան, կոտրած սրտով, հեռանում էր իրենից: Ո՞ւր, ինչո՞ւ համար: Հեռանում էր գուցէ այլեւս բնաւ չվերադառնալու համար...:

Արեւը մօտենում էր զենիթին: Տօ՛թ: Ձիերը պոչերով պաշտպանւում էին աներես ճանճերից: Տիմաշովկայի վերջին տեսարանը ծածկուեց հորիզոնի ետեւը: Ի՞նչ էր սպասում մեզ առջեւը...:

ARAM webaram.com

VII — ՃԱԿԱՏԱԳԻՐ

Վե՞րջը ինչ եղաւ։

Վերջը եղաւ այն, ինչ որ ճակատագիրն էր որոշել։

Տեղաւորուեցինք գիւղում, մեր մեծ տան մէջ։ Հայրս վերադարձաւ Տիմաշովկա կալուածքը հաշուեյարդարի ենթարկելու համար։ Մայրս այլեւս չէր գնում քեռուս մօտ աշխատելու. տան գործն էլ բաւական էր։ Ես չուտով սկսեցի յաճախել հայկական դպրոց. բայց չէի կարողանում մոռանալ Մարիային։

Մարիան էլ չէր ուզում մոռանալ ինձ։ Սրտառուչ նամակներ էր գրում, եւ թղթի վրայ տեսնում էի նրա արցունքի հետքերը։ Աղաչում էր վերադառնալ։ Այնպիսի քնքոյշ խօսքեր էր շարում...

Գրեց, գրեց ու լռեց։ Լռեցի եւ ես։ Իմ ուշքն ու միտքը նոր բաներ զբաւեցին, նոր ընկերներ, հայ վարժարանը, հայերէն երգեր, որ սովորեցնում էր մեզ երեւանցի Արտաշէս վարժապետը։ Մայրս հրճւում էր լսել իմ հայերէն խօսքերը կամ հայերէն երգերը կամ հայերէն կարդալս...։

Այո՛, ճիշտ է. «Դու էլ դնա, նոր սէր արա. էսպէս է կարգն աշխարհի»...

Իսկ Շուշանի՞կը... Իմ դժբախտ քոյրիկը չատ տառապեց։ Անքուն գիշերներ էր անցկացնում։ Լալիս էր աղի արցունքներով։ Չէր կարողանում մոռանալ Ադամ Կորժեւիչին, իր առաջին, աւաղ, նաեւ վերջին սէրը։

Լացեց, լացեց ու — հաշտուեց ճակատագրի հետ։ Մի երեկոյ էլ խնամիները եկան մեր տունը։ Շուշանիկը նրանց թէյ հրամցրեց, եւ վարդի անուշեղէն։ Եւ ամիսը չանցած նշանեցինք Շուշանիկին մեր դպրոցի Յաչիկ վարժապետի հետ։

Ադամ Կորժեւիչի հարստութիւնը չունէր, բայց հիանալի երիտասարդ էր Յաչիկը. բոյով-բոսով, դանդուր մազերով ու գրաւիչ աչքերով։ Ուրախ երգեր դիտէր եւ սիրուած էր հասարակութեան մէջ։ Գիւղի աղջիկները խենթանում էին նրա համար եւ նախանձեցին Շուշանիկին...։

Յաչիկ վարժապետը եղաւ իմ հայերէնի առաջին ուսուցիչը։ Ախտ եւ արդարամիտ էր, վարպետ դաստիարակ։ Կարճ ժամանակամիջոցում ես արդէն վարժ կարդում էի հայերէն ի ցնծութիւն մօրս...։

Շուշանիկի համար սկսուեց նոր կեանք։ Ծնունդի տօներից յետոյ նշանակուած էր հարսանիքը, եւ մեր տունը եռ ու գեռի մէջ էր հարսանեկան պատրաստութիւններով։ Ընկերուհիներով չրջա-

ARAM webaram.com

պատուած, երգ ու խաղով, Շուշանիկը հազուստներ էր կարում, ճէհէզ պատրաստում: Եւ բարկանալ էր ձեւացնում, երբ ես, չուրջը դառնալով, երգում էի,

Դաւուլ-զուռնա չալեցիճէ,
Շուշանիկին պսակեցիճէ,
Վարժապետին հարս գնաց,
Մեր տունը պարապ մնաց...

Այդպէս էլ եղաւ, մեր տունը պարապ մնաց, բայց Շուշանիկը վարժապետին հարս չդնաց:

Մի օր, երբ սաստիկ բուք ու բորանին, ծնողներիս հետ սահնակով վերադառնում էր քաղաքից, ուր գնացել էին գնումներ անելու հարսանիքի համար, Շուշանիկը պաղ առաւ եւ անկողին ընկաւ: Սովորական պաղառութիւն կարծեցին եւ կարեւորութիւն չտուին. ասացին՝ «կ'անցնի»: Բայց չանցաւ: Օր օրի վրայ հալումաշ էր լինում սիրելի քոյրիկս: Եւ մինչեւ որ քաղաքից բժիշկ հասցրին, արդէն բանը բանից անցել էր: «Թոքերի սուր բորբոքում», ասաց բժիշկը չարժելով գլուխը: Մայրս ծնկաչոք աղօթում էր աղջկայ անկողնի մօտ՝ արցունքը աչքերին. «Մայրամ Աստուածածին, դուն ալ մայր ես, զաւակի տէր, փրկէ իմ զաւակը... Մայրամ Աստուածածին, բաշխէ լինծի աղջիկս... Մայրամ Աստուածածին...»:

Մարիամ Աստուածածինը անխօս դիտում էր պատից, եւ Շուշանիկը հալւում էր մոմի պէս... Մայրս սրտամորմոք մղկտում էր եւ յուսահատ կուրծքը ծեծում:

— Վախ, վախ, զաւակս ձեռքէ կ'երթայ... Մարիամ Աստուածածին, դո՛ւն հասիր:

Եւ Շուշանիկը գնաց: Հարսի սպիտակ հագուստով, թագուհու պէս պառկած էր զազաղում՝ այնպէս դեղեցիկ ու այնպէս հանդիստ: Եւ մայրս, ստուեր դարձած, ձեռքերը կոտրատում, աղօթում եւ լալիս էր ծնկաչոք՝ զազաղի կողքին...

Հողի տակ դրինք Շուշանիկին դերեզմաննոցում, գիւղի ծայրին, բլրակի վրայ, Մերկեանի Քերոբի հողակոյտի մօտ: Տէր Աբաչենի սրտակեղեք մեղեդիներով: Ամբողջ գիւղը լալիս էր...:

Իսկ մի ամիս վերջը, Շուշանիկի կողքին, գնաց հանգչելու եւ Խաչիկ վարժապետը: «Խեղճ տղայ, յաւին չդիմացաւ», ասում էին գիւղացիք՝ գլուխները օրօրելով:

ARAM webaram.com

Տէր Աբէնը իր ոլորուն ձայնով երգեց «Ի վերին Երուսաղէմ»ը, եւ ամբողջ դիւղը լալիս էր դառն արցունքով...:

Տարիներ վերջը, արդէն անհասկանալի մղումով, ես այցելեցի Տիմաչովկա դիւղը: Գտայ Մարիային. ամուսնացել էր օղեվաճառի տղայի՝ Հրիհորիյի հետ: Հինգ աղջիկների մայր էր: Հաստամարմին, հաստամիտ, չատակեր, չատախօս կին էր դարձել: Յայտնապէս իշխում էր ամուսնու վրայ: Ուրախ եւ երջանիկ էր երեւում: Ես չնախանձեցի Հրիհորիյին, որ դրկաբաց ընդունեց ինձ...

Ադամ Կորժեւիչը ամուսնացել էր Սեւեանի աղջկայ հետ: Նրանք էլ երջանիկ էին երեւում:

Սեւեանի խանութի ցուցանակը փոխուել էր. այժմ ոսկի խոշոր տառերով գրուած էր՝ կարպ Իւանովիչ Սեւով: Յոնգուրեանը դարձել էր խոնգուրով:

Այլեւս Եկատերինոդարից հայ քահանայ չէր գալիս կազակ դիւղերը հայերին հաղորդութիւն տալու. այդ պարտականութիւնը ուս քահանան էր կատարում:

Մեր կալուածքում բացուել էր աղիւսի գործարան: Չո՛ւր որոնեցի որեւէ հետք անցեալից:

Չուր որոնեցի եւ իմ սիրելի ուսուցչի՝ Իւան սարկաւագ Վոյինովի հետքը: Չգտայ: Ոչ ոք չգիտէր, թէ ինչ է եղել:

Մտամոլոր մանեկայ դերեզմաննոցում. երկու հարազատ հողակոյտերը անհետացել էին: Հայութեան հետք չէր մնացել Տիմաչովկայում:

Չէր մնացել հայութեան որեւէ հետք...:

1954, Մարտ
Բէյրութ

ARAM webaram.com

Ի՞ՆՉՊԷՍ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵՂԱՅ

Երբեմն հասարակ, աննշան մի դէպք, մի պարզ արկած կամ պատահմունք ինչպիսի՛ մեծ հետեւանքներ են ունենում մարդու կեանքում:

Երեւակայեցէք, որ խիստ կարեւոր մի գործի համար աճապարում էք երկաթուղու դնացքին հասնել: Նստած էք կառքում եւ անհամբեր կառավարի մէջքն էք ծեծում, թէ՝ «չո՛ւտ, քշիր, դնացքը չփախցնենք»...

Ու, յանկարծ, անիւի մէջ մի բան է խանգարւում: Կառքը՝ թրա՛խկ՝ կանգ է առնում: Կառապանը հայհոյում է: Դու հայհոյում ես: Ու դնացքը, քթիդ տակից, սուլում – անցնում է...

Ամէն բան փշացաւ: Սրտնեղած տուն ես վերադառնում: Գործդ կորցրիր: Դժբա՛խտ մարդ ես:

Բայց ահա, մի քանի ժամ հազիւ անցած՝ բաց ես անում ռադիոն եւ ի՛նչ. այն դնացքը, որով դու պիտի ճամբորդէիր, ծանր արկածի է հանդիպել. կառաչարը ջախջախուել է, եւ հարիւրաւոր մարդիկ մեռել կամ հաշմանդամ են դարձել: Դու էլ կարող էիր դրանցից մէկը լինել: Փառք ես տալիս Աւրարչին եւ օրհնում կառքի արկածը, որ ազատեց քեզ ծանր փորձանքից: Այժմ երջանիկ ես զգում քեզ:

Այս է կեանքը, յաճախ փոքր բաներից մեծ հետեւանքներ են ծագում: Աննշան մի դէպք հիմնովին յեղաշրջում է մարդու կեանքի ընթացքը: Պատահմո՞ւնք, ճակատագի՞ր, — չգիտեմ:

Ինչո՞ւ, սակայն, այս փիլիսոփայութիւնը: Պարզապէս ասելու համար, որ իմ դաշնակցական դառնալս էլ ոչինչ դէպքի, աննշան մի պատահմունքի հետեւանք եղաւ:

ARAM webaram.com

Մեր երիտասարդ ընկերները երբ պատմում են իրենց դաշնակցական դառնալու մասին, սովորաբար յուզումով են խօսում: Անպատճառ նշանակալից մի դէպք կամ հեղինակաւոր մի անձ մղել է նրանց Դաշնակցութեան աւազանը՝ խորհրդաւոր մկրտութեամբ: Իմ մուտքը Դաշնակցութեան մէջ ոչինչ ունի իր մէջ խորհրդաւոր. աւելի զուեչտական մի արկածի է նմանում:

Ճիշտ է, ես էլ շատերի նման, երբ դեռ պատանի էի, երազում էի Սասունի ու Զէյթունի մասին: Րաֆֆիի Խենթերը, Ալանների ու Սաքոները իմ էլ պաշտելի հերոսներն էին: Նոր Նախիջեւանի Թեմական Դպրոցի առաջին դասարանների աշակերտներս՝ ազգասիրական կրակով բոցավառ՝ սպասում էինք «գերդ բողկ ու գազար» կարդ ու փշուր անել Թուրքերին եւ Հայաստանը ազատել, բայց դեռ յեղափոխութեան եւ յեղափոխական կուսակցութիւնների մասին գաղափար չունէինք:

Մի օր էլ, ընկերներից մէկը, խորհրդաւոր կերպով մի անկիւն քաշելով ինձ՝ փսփսաց ականջիս. «Վաղը երեկոյ իմ սենեակը կուգաս. շատ կարեւոր է. ուրիշին բան չասես»:

Կարծես ամբողջ մի հազարամեակ տեւեց, մինչեւ, որ «վաղը երեկոյ»ն հասաւ: Ճիշտ որոշուած ժամին նշանակուած տեղն էի: Այնտեղ էին եւ ուրիշներ՝ 10—12– հոգի Թեմական դպրոցի եւ Ռոստովի գիմնազիայի աշակերտներից: Փիչ վերջը, եկաւ լայնեզր գլխարկով եւ սեւ մօրուքով ու լուրջ դէմքով մի երիտասարդ եւ անմիջապէս անցաւ գործի:

Կրակոտ եւ ինձ համար դժուար հասկանալի խօսքերով բացատրեց ժողովի նպատակը.— Մենք, Ռուսաստանի հայերս, այստեղ հանդիստ կեանք ենք վայելում, մինչդեռ այնտեղ, Հայաստանում, մեր եղբայրներն ու քոյրերը տառապում են Թուրք բռնակալութեան ձեռքում: Պէտք է միանանք, ուժ կազմենք, դրամ հաւաքենք, զէնք գնենք եւ մեր ձեռքով ազատենք Մայր Հայաստանը: Երիտասարդութիւնը առաջին հերթին պէտք է շարժուի եւ մտնէ Ընկերութեան մէջ: Այդ նպատակով կանչուած էինք մենք:

Շարժուելու համար շատ էլ կրակոտ խօսքերի պէտք չունէինք. Րաֆֆին արդէն շարժել էր մեզ: Բայց Ընկերութեան մէջ մտնելը տարբեր բան էր: Ընկերութեան մասին խորհրդաւոր խօսքեր էին չըլում բերնէ – բերան. «Ընկերութեան գործն է»: Եւ ահա Ընկերութիւնը ինքը եկել է եւ ուզում է, որ մէջը մտնենք: Կարելի՞ էր առիթը ձեռքից փախցնել: Պէտք կա՞ր երկար ճառերի համոզելու համար մեզ: Ամէնքս պատրաստակամութիւն յայտնեցինք արձանագրուելու:

ARAM webaram.com

Երիտասարդի խօսքերից չուտով պարզուեց, որ ինքը Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչն էր, որ Հնչակեան կուսակցութիւնը առաջին յեղափոխական կուսակցութիւնն էր եւ որ մենք պիտի կազմէինք առանձին երիտասարդական մի խումբ: Ծրագրի եւ գործունէութեան մասին յետոյ պէտք է բացատրութիւն տրուէր մեզ, իսկ այժմ պէտք է կազմակերպէինք խումբը:

Այդպէս էլ արինք: Ընտրեցինք մեզ համար խմբապետ, դանձապահ եւ քարտուղար. քարտուղարութեան պատիւը վիճակուեց ինձ: Նշանակուեց յաջորդ ժողովը, եւ երիտասարդը հրահանգեց քարտուղարին, այսինքն՝ ինձ, որ մի քանի օրից երթամ մօտը եւ ստանամ խմբի համար ծրագիր–կանոնագիր, գրականութիւն եւայլն: Եւ խոստացաւ ներկայ լինել խմբի երկրորդ ժողովին...

*
* *

Ուրեմն, այլեւս յեղափոխական էի, գաղտնի Ընկերութեան անդամ: Հրամայուած էր խիստ գաղտնապահութիւն: Յեղափոխութեան եւ գաղտնիքի բեռը մէջս ամբարած, մի քանի օրից փութացի մեր կազմակերպիչի մօտ՝ Ռոստով: Տրուած հասցէով գտայ տունը, անհամարձակ քայլերով բարձրացայ երկրորդ յարկը եւ վարանումի մէջ մի պահ կեցայ. ահա դէմ առ դէմ, երկու իրար նման դռներ — ո՞րն է իմ փնտռածը: Հապա եթէ սխալ դուռ զարնէի՛ ու գաղտնիքը դուրս տայի... Մէկ դրան պղինձէ տախտակի վրայ կարդացի.— «Փաստաբան Ջաւադ բէգ Բալուղեան»: Ա՛յս էր արդեօք, երիտասարդը իր անունը չտուեց: Վարանումով կոխեցի դռնդի կոճակը: Քիչ վերջը, դուռը բացուեց ու դրան մէջ երեւաց դանդուր մազերով եւ համակրելի դէմքով մի երիտասարդ, որ ժպտուն աչքերով նայում էր վրաս:

— Ի՞նչ էք կամենում, համեցէք ներս: Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել ձեզ: Համեցէք, համեցէք:

Շուարած ներս մտայ: Առաջնորդուեցի հիւրասրահ եւ տեղաւորուեցի կակուղ բազկաթոռի վրայ: Այնքա՛ն ջերմ էր մթնոլորտը: Պատիս երեսին նայում էր սքանչելի Մայր Հայաստանը՝ նստած աւերակների մէջ: Համակրելի երիտասարդը քաղցր խօսքերով աշխատում էր փարատել չփոթութիւնս:

Ցայտնեցի թէ Թեմականի աշակերտ եմ, եկել եմ պարոնի հրաւէրով, որ այս տան մէջ է ապրում. կարծեմ, սխալ դուռ եմ ծեծել...

ARAM webaram.com

— Ընկերութեան գործո՞վ էք եկել, եղաւ չեչոտակի հարցումը, որ աւելի եւս սաստկացրեց չփոթութիւնս: Ասե՞լ թէ չասել: Հապա գաղտնապահութի՞ւնը: Բայց այս մարդը գիտէր արդէն Ընկերութեան մասին: Թերե՛ւս, այն առաջինի ընկերն էր:

Երիտասարդը ժպտուն աչքերով դիտում էր իմ ներքին խռովքը եւ, կարծես, հաճոյք էր զգում:

Այո, Ընկերութեան գործով էի եկել: Ու պատմեցի ամէն բան. ես խումբի քարտուղարն էի, եկել էի ծրագիր-կանոնագիր եւ գրականութիւն տանելու:

— Շա՛տ բարի, չա՛տ բարի, ձեռքերը չփելով եւ զուարթ՝ խօսեց երիտասարդը: Հիմա ամէն բան կը կարգադրենք: Լա՛ւ կը լինի:

Ձեմ յիշում յետոյ ինչեր խօսեց: Բաւական ժամանակ պահեց մօտը: Հիւրասիրեց: Քաջալերեց: Ի վերջոյ, տուեց մի կապոց եւ խիստ պատուիրեց.

— Օտար մարդու ցոյց չտաս: Ժողովի օրը փոխուած է: Ձեր յաջորդ ժողովը կ'անէք այսինչ օրը: Ես էլ ներկայ կը լինեմ եւ կը բացատրեմ ամէն բան:

Հմայուած, ուղղակի սիրահարուած հեռացայ այդ համակրելի երիտասարդի մօտից: Շտապեցի ընկերներիս մօտ: Երկիւղածութեամբ բացինք կապոցը եւ մէջից դուրս եկաւ — Ծրագիր՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ժրնեւ: Մի քանի թիւ «Դրօշակ»: Եւ մի քանի օրինակ ժրնեւ հրատարակուած գրքոյկներից, որոնցից յիշում եմ «Կարնոյ յիշատակին», ուր, ի միջի այլոց, խօսւում էր կորկոտեանի քաղաքական գործունէութիւնների մասին:

Մինչեւ ժողովի օրը կարդացինք ու կարդացինք «Դրօշակ»ներն ու գրքոյկները՝ առաջին անգամ հաղորդութիւն առնող մարդու երկիւղածութեամբ: Անհասկանալի էր միայն, թէ ինչո՛ւ առաջին երիտասարդը մեզ խօսեց Հնչակի մասին, իսկ երկրորդը Դրօշակ տուեց մեզ: Ինչո՞ւ այս տարբերութիւնը: Թէ՞ Հնչակն ու Դրօշակը նոյն բաները էին:

Յաջորդ ժողովին այս գաղտնիքն էլ պարզուեց, երբ Ջաւադ բէգ Բալուղեանը բացատրեց մեզ, որ կայ երկու կուսակցութիւն՝ Հնչակեան եւ Դաշնակցական: Գլխաւոր տարբերութիւնը նրանց միջեւ, ասաց նա, այն է, որ Հնչակեանները կենտրոնական են, իսկ Դաշնակցականները՝ ապակենտրոնական: Որ հնչակեանութիւնը մեռնելու դատապարտուած է, եւ իսկական յեղափոխականները Դաշ-

ARAM webaram.com

նակցականներն են: Որ Բաֆֆին էլ դաշնակցական էր, Խրիմեան Հայրիկն էլ:

Կենտրոնական–ապակենտրոնականից բան չհասկացանք, բայց Բաֆֆիի ու Հայրիկի դաշնակցական լինելը այնպիսի զօրաւոր փաստ էր մեզ համար որ հնչակեանութեան մասին մտածելը այլեւս չիմաստութիւն պիտի լինէր: Եւ ամէնքս դարձանք դաշնակցական ու Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի վրայ երդուեցինք մինչեւ մահ հաւատարիմ մնալ Դաշնակցութեան: Մեր խումբը եղաւ երիտասարդական առաջին դաշնակցական խումբը Նոր Նախիջեւանում:

Այն եւս աւելացնեմ, որ այս դէպքը քիչ մնաց միջկուսակցական պատերազմի առիթ ծառայէր Հնչակեան կուսակցութեան եւ Դաշնակցութեան միջեւ: Հնչակեանները իմանալով Ջաւադ բէդ Բալուղեանի խաղացած «օյինները», դիմեցին սպառնալիքի՝ փորձելով նոյնիսկ ծեծել Բալուղեանին. ահագին աղմուկ հանեցին. վերջը, փոխադարձ համաձայնութեամբ, գործը յանձնուեց միջկուսակցական առեանի: Ջեմ յիշում, խնդիրը ինչով վախուեց, բայց մենք մնացինք դաշնակցական:

1947 Նոյեմբեր
Գահիրէ

ARAM webaram.com

ՄԵՐ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Արդէն մէկ տարի կը լինէր՝ ես դաշնակցական էի եւ լարուած հետաքրքրութեամբ ու ջանասիրութեամբ — ինչո՞ւ չասել նաեւ՝ հպարտութեամբ — մասնակցում էի մեր աշակերտական խմբի «յեղափոխական» գործունէութեան:

Մեր խմբի նախագահն էր — աւելի ճիշտ է ասել՝ պատուակալ նախագահ, որովհետեւ, իրրեւ ուսանող, ձմեռը բացակայում էր Նոր Նախիջեւանից — Կարապետ Հաճեանը, նախկին հնչակեան, որ յարել էր Դաշնակցութեան եւ մեր խմբի ղեկավար դարձել: Պետերբուրգի Լեռնային ճեմարանի ուսանող էր եւ մեր ժողովներին ներկայ էր լինում Ծնունդի եւ ամառուայ արձակուրդներին միայն: Քաղաքում, մանաւանդ օրիորդների շրջանում, ընկ. Կարապետը զարգացած եւ լուրջ երիտասարդի համբաւ էր վայելում: Նաեւ՝ նախանձելի փեսացու հարուստ աղջիկների համար, որոնք Դաշնակցութեան մէջ էին փնտռում իրենց բախտը: Մի բան, որ չատ բնական էր այն օրերի համար, որովհետեւ Դաշնակցութիւնը իր մէջ ծծել էր երիտասարդութեան ամենաբնտիր մասը:

Իրրեւ ժողովների նախագահ՝ չափազանց լուրջ էր պահում իրեն ընկ. Կարապետը: Վէճերին քիչ էր մասնակցում, այն էլ կարճ ու խորհրդաւոր նկատողութիւններով, կարծես ուզում էր հասկացնել, թէ մենք դեռ չենք հասել իր մտքի բարձունքներին: Ճամբեան դէպքը, մենք հպարտ էինք մեր նախագահով:

Մեր իրական վարիչը, սակայն, Թեմական Դպրանոցի բարձր դասարանի աշակերտ Գրիգոր Լոզոչնիկեանն էր — կենաւրա՛ի,

ARAM webaram.com

սեւ բուրդի նման մազ ու մօրուքով, ուսման մէջ միջակ, զուարթ ու վառվռուն մի երիտասարդ: Լաւ ընկեր էր Գրիգորը եւ ամէնքին սիրելի: Կատակերգակ դերասանի չնորհքով օժտուած: Մինչեւ այժմ աչքիս առջեւ է նրա պատկերը՝ Աբիսողոմ աղայի դերում: Դաշնակցութեան ծրագրից ու պատմութիւնից չատ բան չգիտէր, բայց «համոզուած» դաշնակցական էր, սրտով ու հոգիով նուիրուած խըմբի աշխատանքներին: Մեր ժողովները, յաճախ, նրա սենեակում էին տեղի ունենում, եւ հաճելի էր նրա ընկերութիւնը:

Մեր խմբումն էր եւ ապագայ երաժշտագէտ Ռոմանոս Մելիքեանը: Բարձրահասակ, խոշոր ու կոշտ դիմագծերով, ձիու երկար դէմքով, անկարգ մազերով, անփոյթ հագուստով, միշտ հաստ գաւազանը ձեռքին — այսպէս էր այն ժամանակուայ մոդան — վիթխարի գամփռի ընկերակցութեամբ, ազգկոտ՝ Ռոմանոսը ուր որ երեւար՝ ամէնքի ուշադրութիւնը իր վրայ էր հրաւիրում: Միշտ աղջիկների յետեւից էր, որոնք նրան ձեռք էին առնում: Ցաճախ թեւի տակ ունենում էր մի հաստ գիրք, օրիորդներին զարմացնելու համար, որ չեմ կարծում, թէ կարդացած լինէր: Կամ երաժշտական մի տետրակ — նոյնպէս հաստ — իբր թէ իր յօրինած երգերով: Անպայման երաժշտական չնորհք ունէր, եւ մեր ուսուցիչ Գէորգ սարկ. Զէօրէքեանը նրան երես էր տալիս: Ուսման մէջ Ռոմանոսը նոյնքան յաջող էր, որքան եւ երգեցողութեան մէջ...

Ցիշում եմ մի ժողովում, Ռոմանոսի առաջարկով, մեր խումբը որոշեց յեղափոխական մի երգ պատրաստել: Բառերը պիտի յօրինէի ես, իսկ եղանակը՝ ինքը Ռոմանոսը: Ցաջորդ թէ երկրորդ ժողովին ես ներկայացրի իմ ստեղծագործութիւնը՝ արդիւնք բազմաչարչար աքնութեան, մի երկար եւ ճոռոմաբան քերթուած Սասունի քաջերի մասին, որ սկսւում էր այսպէս.

Սասունի բաջեր լեռներ բարձրացան՝
Անվեհեր բռնած սուր ու հրացան.
Հէ՛յ, ջան փեդայի, զա՛րկ, զա՛րկ ու միշտ զա՛րկ,
Ջարդիր-ջախջախիր թշնամուն անարգ...

Երբ ես, քրտինքի մէջ կորած, վերջացրի ընթերցումը, յանկարծ, սենեակը լեցուեց Ռոմանոսի որոտընդոստ ծիծաղով, որից իմ մարմինը փուշ-փուշ եղաւ:

— Էդ ի՛նչ յիմար բան ես թխել, ասաց նա չարունակելով քրքջալ: Ես այդպիսի ախմախ բանի եղանակ չեմ յօրինի...

ARAM webaram.com

Իսկ ես կարծում էի, թէ բանաստեղծական գլուխ-գործոց էր իմ ստեղծագործութիւնը: Ռոմանոսը մերժեց եղանակ յօրինել, եւ դրանով էլ վերջացաւ խնդիրը: Ինձ թուաց, սակայն, որ միայն իմ մուսան չէր մեղաւոր, Ռոմանոսի մուսան էլ բաժին ունէր գործում. մեր երաժշտապէտը վստահ չէր, թէ պիտի կարողանար ստանձնած պարտականութեան տակից դուրս գալ պատուով: Եւ մենակ ես չէի այդպէս մտածում...



Հ. Ց. Դ. ՆԱԼԲԱՆԴԻ ՇՐՋԱՆԻ 1903 ԹՈՒԻՆ (ԱՇՆԱՆԸ)
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՄՈՎՍԷՍ ԽՈՒՄԲԸ

Աջից ձախ, նստած.— Ա. Առաքելեան, Գալուստ Գալուստեան, Սահակ Մեսրոպեան, Ալեքսան Մեսրոպեան, Ներսէս Աւագեան:

Ռոմանոսը բաժանորդ էր «Մշակ» թերթի, որ աշակերտներին արգելուած էր կարդալ: Համարեա միշտ վերարկուի դրսի գրպանները նա ունենում էր «Մշակ»ի համարներ՝ «պատահաբար» գըրուած այնպէս, որ թերթի անունը երեւար: Աղջիկների վրայ այդ էլ տպաւորութիւն էր գործում... Մենք ամէնքս սիրում էինք Ռոմա-

ARAM webaram.com

նոսին, թէեւ համարում էինք պարծենկոտ ու «փչող»: Ժողովներում ամէն հարցի մասին նա ունէր պատրաստ կարծիք, որ արտայայտում էր ողխմպոսեան հեղինակութեամբ եւ չէր նեղանում, երբ իր կարծիքին կարեւորութիւն տուող չէր լինում: Լաւ, անկեղծ ընկեր էր, թէեւ ոչ յարատեւ: Մտերմութեան անխզելի կապերով կապուած էր միայն իր համաքաղաքացի (դզլարցի) Դաւիթ Սողոմոնեանի հետ, ապագայ չնորհալի ջութակահար եւ Երեւանի երաժշտանոցի դասատու: Դաւիթը մեր խմբի անդամ չէր, բայց Ռոմանոսի ասելով, չերմ համակիր էր: Արդէն Ռոմանոսի կարծիքով ամէնքը համակիր էին մեզ:

Մեր խմբի անդամ չէր իմ դասարանակից Ալեքսան Մեսոնիկեանը, հետագային նշանաւոր բոլշեւիկ, որի հետ մի ժամանակ շատ մտերիմ էր Ռոմանոսը, թերեւս այն պատճառով, որ կարծում էր, թէ սիրահարուած է նրա քրոջ վրայ, թէեւ միեւնոյն ժամանակ «հետաքրքրուած» էր եւ ուրիշ օրիորդներով: Առհասարակ, Ռոմանոսի սիրտը, քարվանսարայի դրան պէս, միշտ բաց էր եւ շատ եկումուտ անողներ կային: Մոնողը երկար չէր մնում այնտեղ: Հանգստանում ու շարունակում էր ճանապարհը:

Ալեքսան Մեսոնիկեանի եղբայրը՝ Սահակը վերջը մտաւ մեր խմբի մէջ եւ մինչեւ մահ մնաց հաւատարիմ դաշնակցական: Ալեքսանն էլ, ի վերջոյ, դարձաւ դաշնակցական: Մի ժամանակ, Համբարձում Տէրտէրեանի հետ, բուռն գործունէութիւն ցոյց տուեց Ռոստով–Նախիջեւանում, բայց վերջը, եթէ չեմ սխալւում, Սարգիս Սրապիոնեանի (Լուկաչինի) ազդեցութեան տակ, միացաւ սոցիալ–դեմոկրատներին:

Մեր խմբի միւս անդամներից պէտք է յիշել Մեծ Սալա դիւղից Սերոբ Տիրացուեանին, որ Թեմական Դպրոցի թոյլ աշակերտներից էր, 18–19 տարեկան, բայց անկեղծ եւ անձնուէր ընկեր էր: Մեր խմբի գրեթէ ամբողջ «սեւ» աշխատանքը նրա ուսերին էր ծանրացած: Նա էր եւ մեր անփոփոխ դանձապահը: Վերջը դարձաւ դիւղի եռանդուն գործիչներից: Խմբի մնացած անդամները առանձին հետք չթողին եւ անհետացան կեանքի փոչիների մէջ:

Խմբի բոլոր անդամներս մտերմօրէն կապուած էինք իրարու հետ եւ պահում էինք մեզ շատ խորհրդաւոր դրսի եւ դասընկերների առջեւ, կարծես ուզում էինք հասկացնել· «Տեսէ՛ք, մենք գիտենք այնպիսի բաներ, որ դուք չգիտէք» : Մեզ պատուիրած էր խիստ գաղտնապահութիւն, եւ ամէն ժողովում մենք ուխտում էինք լինել գաղտնապահ: Հակառակ դրան, ամէնքին, բայց մանաւանդ Ռոմանո–

ARAM webaram.com

սի բարեկամուհիներին, յայտնի դարձաւ, թէ այս կամ այն «հէրկէ-լէ»ն «Ընկերութեան անդամ է»: «Հէրկելէ» (տխմար)՝ աւելի վա-ղաքչական, քան արհամարհական իմաստով: Մեր վարկը խիստ բար-ձրը էր մանաւանդ «Ափալա» կոչուած զբօսարանի օրիորդների չրջանում:

«Ափալա»ը նոր Նախիջեւանի Բուլվար Սէն Միշէլն էր: Երի-տասարդութիւնը այնտեղ էր հաւաքւում ամէն երեկոյ եւ մինչեւ ուշ գիշեր յետ ու առաջ չափչփում ապֆալտապատ մայթերը կամ թփե-րով ծածկուած նստարանների վրայ վիճում կամ սիրաբանութիւն անում: Օրուայ բոլոր կարեւոր հարցերը այնտեղ էին քննւում եւ լուծում ստանում: Ռոմանոսը, իր հաստ զաւազանով, «Ափալա»ի մնայուն յաճախորդն էր՝ չրջապատուած միշտ օրիորդների երամով:

Ինչո՞վ էր զբաղուած մեր խումբը:

Ամէն չաբաթ, որոշ օր, մենք ժողով էինք ունենում: Երբեմն մեզ այցելում էր «չրջիկ»ը եւ խօսում զանազան նիւթերի, մեծ մա-սամբ Դաչնակցութեան ծրագրի եւ գործունէութեան մասին: Մի ժո-ղովում, օրինակ, բանաստեղծ Զաւադ բէգ Բալուչեանը պատմեց մեզ կուկունեան խմբի արշաւանքի մասին՝ այնպէս յուզուած, որ ամէն-քը արտասուեցին: Զաւադ բէգը մեր նախասիրած դասախօսներից էր:

Մի ուրիշ անգամ եկաւ մի անծանօթ երիտասարդ՝ հաստ, սեւ բեխերով, վրան եափունջի, որի տակից երեւում էր գաշոյնի ծայրը: Խօսելու մէջ լորի էր, բայց, ասում էին, երկիր էր եղել եւ իր ձեռ-քերով սպանել էր բազմաթիւ թուրքեր ու քիւրդեր: Այդքանը բաւա-կան էր, որ մենք նրան հերոսացնէինք, իսկ «Ափալա»ում բոլոր աղ-ջիկների պաշտամունքի առարկան դառնար: Ցետոյ՝ ես նրան հանդի-պեցի էջմիածնի ճեմարանում՝ դիչերուայ պահակի հասարակ պաշ-տօնով: Ես համոզուած էի, թէ յեղափոխական նպատակով, իր ինք-նութիւնը ծածկելու համար, գարձել էր դիչերապահ. անչուշտ, պատրաստւում էր նորից երկիր մտնելու: Մի քանի ամիս ծառայեց ճեմարանում եւ մի օր էլ անհետացաւ... վաղարչապատցի մի աղջը-կայ հետ:

Սովորաբար, մենք մեզի էինք անում ժողովները. աչխատում էինք զարգանալ եւ յեղափոխական գործունէութեան համար պատ-րաստուել: Ամէն նիստի արձանագրութիւնը ես էի կազմում, իբրեւ քարտուղար, եւ պատճէնը տանում էի սկիզբը Զաւադ բէգին, ապա՝ մի երիտասարդի, որի յեղափոխական անունն է միայն մնացել մըտ-քումս՝ Շանթորտ: Արդէն իսկական անունը այն ժամանակ էլ կար-

ARAM webaram.com

ծեմ չդիտէինք: Շաբթօրօտը «դրսեցի» էր եւ մեծ արժանապատուութեամբ էր պահում իրեն: Թռուցիկ հայեացք էր նետում ձեռագրիս վրայ, որ ինձանից ա՛յնքան աչխատանք էր խլում, յետոյ՝ «ապրի՛ս, լաւ է» խօսքերով ճանապարհ դնում ինձ:

Ջաւադ բէկը, ընդհակառակը, վերին աստիճանի ուշադիր էր ու սիրալիր: Համարեա միշտ նստեցնում էր իր փառաւոր դրասենեակում, թէյ կամ պտուղ էր հրամցնում, ուշադրութեամբ կարդում էր իմ կազմած արձանագրութիւնը, սխալները ուղղում եւ զանազան թելադրութիւններ անում: Հետաքրքրւում էր մեր խմբի պարապմունքներով: Գրքեր էր տալիս կարդալու: Նրանից առացայ Բոկլի «Քաղաքակրթութեան պատմութիւնը». երեւի խաբուելով իմ երկար հասակից եւ մտածելով, որ խելքս էլ երկար է, նուիրեց որ կարդամ: Խոստովանում եմ, որ դեռ Բոկլը հասկանալու կարողութիւնից զուրկ էի: Մի ժամանակ Ռոմանոսը իր թեւի տակ պարզորէն այդ պատկառելի հատորը, ի զարմանս «Աւֆալա»ի օրիորդների:

Ամենահետաքրքրական մասը խմբի ժողովների՝ մեր չարաղրութիւններն էին եւ նրանց առթիւ տեղի ունեցած վիճաբանութիւնները: Հերթով չարադրութիւն էինք գրում եւ կարդում ժողովներում: Նիւթ վերցնում էինք, սովորաբար, Դաշնակցական պատմութիւնից, ծրագրից, կամ ազգային անցեալից. երբեմն՝ գրական-պատմական հարցեր կամ նոյն իսկ բանաստեղծութիւններ: Մեր մէջ բանաստեղծներ էլ կային: Աւա՛ղ, բոլորի մուսան էլ, վերջ ի վերջոյ, դաւաճանեց...

Մի ժողովում մեր նախագահ կարապետը չարադրութիւն կարդաց: Նիւթն էր «կենտրոնացո՞ւմ, թէ ապակենտրոնացում», որ այն օրերին հրատապ հարց էր: Այնքան խրթին էր եւ օտար բառերով համեմուած մեր նախագահի «ռեֆերատ»ը, որ երբ ընթերցումը վերջացաւ եւ հեղինակը վերից հայեացք նետելով մեր վրայ՝ հարցրեց «ո՞վ ինչ ունի ասելիք», ոչ ոք չհամարձակուեց պատասխանելու: Պապանձո՛ւմն Զաքարեայի: Նոյնիսկ Ռոմանոսը խօսք չառաւ: Մե՞նք այնքան տհաս էինք, թէ՞ չարադրութեան հեղինակը, յամենայն դէպս, վիճաբանութիւն տեղի չունեցաւ:

— Ցաւում եմ, ասաց ընկ. կարապետը, որ այսպիսի բարդ նիւթ ընտրեցի. դուք դեռ չէք հասունացել այսպիսի խրթին հարցեր հասկանալու համար:

Անչուշտ, մենք դեռ իսկ էինք ընդունելու համար ընկ. կարապետի խրթին մտքերը:

Մի ուրիշ անգամ հերթը իմն էր: Շարադրութեանս նիւթն էր՝

ARAM webaram.com

«Ի՞նչպէս ազատել Հայաստանը»: Երկա՛ր աշխատել էի եւ համոզուած էի, թէ վատաւոր բան էի պատրաստել: Գրածս կարդացի վերամբարձ տրամադրութեամբ: Ես չէի, Բաֆֆին էր խօսում իմ բերանով, որի «կայծեր»ից բարեխղճութեամբ ընդօրինակումներ էի արել եւ մի քանի ճոճուն նախադասութիւններ էլ իմ կողմից աւելացրել, ի հարկէ, անհերքելի փաստերով ապացուցանելով Հայաստանի ազատութեան հնարաւորութիւնը: Ցիշողութեանս մէջ մնացել է մի քառեակ, որ բանաստեղծական ներշնչումով յօրինել էի վարդանանց պատերազմի յիշատակութեան առթիւ.

Տղմուտ գետի ձախ ափին կանգնած էին հայերը,
Իսկ աջ ափին պարսկական պատերազմի փղերը,
Զարկէ՛ք, գոչեց Բաջ Վարդան, զարկէ՛ք հզօր, անսասան.
Մա՛հ պարսիկին պիղծ ու նենգ, կեցցէ՛ ազատ Հայաստան:

Ես կարծում էի այն ժամանակ, որ առնուազն Հոմերոսի վայել դլուխ-գործոց էր իմ քերթուածը: Սրտատրոփ սպասում էի դղրդապին ծափերի, բայց ոչ մի ձեռք չշարժուեց:

Նոյնքան խրոխտ ու յուզական էր եւ չարադրութեանս վերջաբանը. «Բերդե՛ր չինենք, բանակնե՛ր կազմենք, երթանք կռուի դաշտ, յարդենք թշնամուն անհաչա»...

Կռուի դաշտ գնացող չեղաւ, դժբախտաբար, բայց այնուհետեւ ընկերները ինձ հանդիպելիս հարցնում էին.

— Հը՛, բերդը չինուե՞ց: Ի՞նչ դրութեան մէջ են բանակները:

Կամ, բարեւի փոխարէն, ասում էին.

— Բարե՛ւ, բանակ, ի՞նչ կայ բերդում:

Եւ եթէ միայն ընկերնե՛րը լինէին... Իմ բերդերն ու բանակները ամբողջ «Աֆթալա»ի բերանն էլ ընկան չնորհիւ Ռոմանոսի: Բերդն էլ, բանակներն էլ գետինը անցնէին...

Բայց ամենէն աքանչելին Ռոմանոսի չարադրութիւնը դուրս եկաւ:

Մայիս ամիսն էր, և մենք մեր ժողովը արինք քաղաքից դուրս՝ Բալաբանեան պուրակում: Խորերը, խիտ թփերի մէջ, տարածուեցինք կանաչ արօտի վրայ, եւ նախագահը խօսքը տուեց Ռոմանոսին: Սա, չեմ ու չումից յետոյ, դրպանից հանեց սեւ կողքով հաստ ծոցագրքերը, թերթեց մի քանի էջ եւ անհանդարտ մարերը յետ ձգելով՝ սկսեց.

ARAM webaram.com

— Ես չարագրութիւն պիտի չկարդամ, այսպէս ասած: Այս-պիսի սովորական բան ամէն մարդ էլ կարող է անել: (Ես քրտնեցի՝ յիշելով իմ բանակները. ակնարկը ինձ չէ՞ր արդեօք): Ես, այսպէս ասած, գրական կտոր եմ կարդալու, որ մի քանի օր առաջ գրեցի: Գիշերը քունս չէր տանում, ելայ եւ, այսպէս ասած, մէկ շունչով գրեցի: Ի հարկէ, մեծ բան չէ, բայց, այսպէս ասած, գնահատութիւնը ձեզ եմ թողնում:

Ու հայեացքը ուղղելով մերթ երկնքին՝ դէպի վառ արեւը, մերթ մեզ, հազաց, կոկորդը մաքրեց ու սկսեց կարդալ ոգեւորութեամբ՝ ցուցամատը օդի մէջ շարժելով:

Շարագրութեան նիւթը Թուրքիայից փախչող գաղթականների մասին էր — մի յուզիչ, սրտամօրմոք պատմուածք: Եւ ինչքան ընթերցումը շարունակւում էր, այնքան իմ հոգեկան խռովքը սաստկանում էր: Տէ՛ր Աստուած, այս պատմութիւնը ես մի տեղ կարդացել էի, բայց ո՞ւր, չէի կարողանում վերյիշել: Պարզ էր, որ Ռոմանոսը մի տեղից թոպրել էր, բայց ո՞րտեղից: Չէի համարձակւում ընդմիջել եւ կասկածս յայտնել. հապա եթէ սխա՛լ դուրս գայի...

Ռոմանոսը, յուզուած, վերջացրեց ընթերցումը: Ամէնքի աչքերում արցունքի կաթիլներ էին պսպղում: Ծափահարութիւն՝ մե՛ղմ, որպէսզի, յանկարծ, մէկը չլսէր: Ջերմ շնորհաւորութիւններ: Ռոմանոսը ինքն էլ դժածուած էր ու հպարտ: Եւ իրաւունք էլ ունէր. իմ բերդն ու բանակները ո՛ւր, այս պատմուածքը՝ ուր: Շարագրութիւնը ահա այսպէ՛ս կը լինի...

Տուն վերադառնալիս, ես կրկին ու կրկին չարչարում էի ուղեղս — ո՞վ էր հեղինակը Ռոմանոսի կարդացած պատմուածքի: Ինձ համար տարակոյս չէր մնացել, որ եղածը բանագողութիւն էր: Երբ երեկոյեան քրքրում էի իմ փոքրիկ մատենադարանը՝ լուծելու համար գաղտնիքը, յանկարծ, միտքս լուսաւորեցին ծանօթ բառերը՝ Ֆալագ Վուրդունի: Աւ. Ահարոնեանի պատմուածքն էր, որ Ռոմանոսը, սկզբից մինչեւ վերջ, ամենայն բարեխղճութեամբ արտագրել էր...

Յաջորդ առաւօտ, դպրոցում մեր խմբի անդամները արդէն գիտէին, իսկ երեկոյեան ամբողջ «Ասֆալտ»ը խօսում էր Ռոմանոսի «հերոսութեան» մասին: Իր բարեկամ աղջիկները բարեւում էին նրան:

— Բարե՛ւ, Ֆալագ Վուրդունի:

Նոյն օրը մեր յարաբերութիւնները Ռոմանոսի հետ մի քիչ աւրուեցին: Եթէ չեմ սխալւում, նաեւ այդ միջադէպը եղաւ պատ-

ARAM webaram.com

ճառ, որ Ռոմանոսը հեռագիրէ պաղեց խմբից եւ սկսեց ժողովներից բացակայել: Եւ, իմ Նոր Նախիջեւանից հեռանալուց յետոյ, չգիտեմ ո՛ր թուականին, խապտռ քաշուեց Դաշնակցութիւնից: Թէեւ մնաց իբրեւ պաշտօնէ անկուսակցական, բայց, անձնական յարաբերութիւններով աւելի մօտ էր սոցիալ-դեմոկրատներին: Իրապէս նրա հոգուն խորթ էին քաղաքական-կուսակցական հարցերը: Նա իր տարերքով արուեստագէտ էր եւ, որպէս այդպիսին, փայլուն ապագայ ունեցաւ ու կարեւոր տեղ գրաւեց հայ երաժշտութեան պատմութեան մէջ: Հակառակ պատահած փոքրիկ անախորժութիւնների՝ մեր յարաբերութիւնները միշտ մնացին ընկերական:

Մեր խմբի անդամներից Լոզոչնիկեանը, աւարտելուց յետոյ, նուիրուեց ուսուցչական ասպարէզին Նոր Նախիջեւանում եւ դարձաւ Դաշնակցութեան աչքի վարնող տեղական գործիչներից մէկը: Տարիներով եղաւ կենտր. կոմիտէի անդամ: Մեռաւ խորհրդայնացումից յետոյ, չգիտեմ բնակա՞ն, թէ բռնի մահով:

Աւելի հետաքրքրական դէմքեր էին վերեւ յիշուած Սահակ եւ Ալեքսան Մեսրոպեան եղբայրները: Ալեքսանը, ինչպէս ասացի, ինձանից վերջն էր մտել Դաշնակցութեան շարքերը: Որը էին եւ երկուսն էլ դիլետանտիկ Թեմական Դպրանոցում, ինձ հետ միեւնոյն դասարանում: Ալեքսանը նուրբ կազմով ու ժպտուն դէմքով, կոկիկ հագնուող, լուրջ պարապող, աշակերտների հետ դժուարութեամբ մտերմացող, խելօքիկ տղայ էր: Սահակը, դիրուկ, կարմրաթուշ, որկրամոլ, ծոյլ, չարաճճի, նախիջեւանցիների բառով՝ տըղայանկ՝ իր կրտսեր եղբօր հակապատկերն էր: Սիրուած էր ընկերներից եւ ուսուցիչներից: Միեւնոյն նստարանի վրայ նստելով, մենք մտերիմ ընկերներ էինք դարձել:

Սահակն էլ, Ալեքսանն էլ լաւ ձայն ունէին: Երգում էին Զէօրէքչեան սարկաւագի երգչախմբում: Ցաճախ էլ, Շարաթ կէս օրից յետոյ, գալիս էր Ս. Խաչ վանքի կտրքը նրանց ընտանիքով վանք տանելու, ուր նրանք մասնակցում էին եկեղեցական արարողութեան, իսկ մայրը օգնում էր վանահօր տնտեսութեան:

Ալեքսանը, մի քանի տարի մնալով Դաշնակցութեան մէջ, Թեմականը չաւարտած փոխադրուեց Մոսկուա եւ Լազարեան ճեմարանն ու Մոսկուայի համալսարանը աւարտելով՝ նուիրուեց փաստաբանութեան՝ միաժամանակ զբաղուելով եւ գրական ու հասարակական գործունէութեամբ, իբրեւ սոցիալ-դեմոկրատ: Սահակը հազիւ կարողացաւ աւարտել Թեմականը եւ դարձաւ ուսուցիչ: Օժտուած էր գրական շնորհքով: Նախիջեւանի բարբառով երգիծական սիրուն

ARAM webaram.com

կտորներ էր տալիս տեղական հայ թերթերին: Մեռաւ խորհրդային իշխանութեան օրով:

Մեր խումբը ունէր սեփական փոքրիկ դրադարան, որի գրքերից օգտւում էին եւ դրսի վաստահելի աշակերտ-աշակերտուհիները: Ունէինք խմորատիպ դործիք եւ գանազան առիթներով թռուցիկներ էինք բաց թողնում: Կարդում եւ տարածում էինք «Դրօշակ»ը եւ «Դրօշակ»ի հրատարակութիւնները: Ունէինք երկու ատրճանակ, մէկը՝ բուլդոգ, միւսը ամէն-վեռն: Երբեմն գնում էինք Սպանդանոցների եռեւի ձորը դինավարժութեան: Այդ մարդում անդերազանցելի էր Ռոմանոսը, որ սեփական որսորդական հրացան ունէր եւ, չունը առջեւը ձգած, որս էր անում: Ագռաւները հանդիստ չունէին նրա ձեռքից: Եւ ի՛նչ գարմանահրաշ պատմութիւններ էր հիւսում իր որսորդական արկածներից:

Ունէինք եւ մեր «կասա»ն, որից վճարում էինք մեր կուսակցական տուրքը, ծախսում էինք խմորատիպի եւ գրքերի վրայ եւ, առհասարակ, հոգում էինք խմբի նիւթական կարիքները: Սերոբ Տիրացուեանը մեր անփոխարինելի դանձապահն էր:

Իսկ որ դէխաւորն է, երիտասարդ էինք, կենսուրախ եւ հաւատաւոր: Կեանքը մեզ համար ա՛յնքան հրապուրիչ էր, խորհրդաւոր ու քաղցր: Դաշնակցութիւնը ի՞նչ էր՝ լաւ չգիտէինք, բայց Դաշնակցութիւնը մեր մէջ էր՝ մեր մտքի, մեր հոգու, մեր մարմնի, մեր ողջ էութեան մէջ: Եւ ամէն ինչ թւում էր ա՛յնքան դիւրին ու հնարաւոր...

1951 Ապրիլ
Պոսթըն

ARAM webaram.com

ՍԱՍՈՒՆԻ ԱՋԱՏՈՒԹԻՒՆԸ

ՄՈՎՍԷՍ ԲՈՍՏԱՆՋԵԱՆԻ ՍԻՐԵԼԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Երբ դուրսը անձրեւ է մաղւում պաղ, եւ պատուհանի տակ ոռնում է քամին ազիզորմ, աչնան անհրապոյր դիշերին, կեանքի տաժանքից յոգնած մխոցդ թռչում է դէպի անցեալը հեռաւոր, դէպի անմեղ օրերը պատանութեան: Հոգիդ կարօտ սիրոյ ու նազանքի, որոնում է հարազատ դէմքեր, որոնք, աւա՛ղ, այլեւս չկան եւ ապրում են լոկ յիշողութեան մէջ:

Տեսողութեանս առջեւ կանգնում է ահա իմ վաղ պատանութեան ընկեր Մովսէս Բոստանջեանի լուսաւոր պատկերը:

Մովսէ՛ս Բոստանջեան... Ես աշակերտ էի Նոր Նախիջեւանի թեմական դպրոցում: Մովսէս Մեծ Սալա դիւղի հարուստ ընտանիքի զաւակ էր: Մեզ ծանօթացնողը եղաւ մեր դիւղացի Սահակ Լուսիկեանը — ամէնքի բերանի ծամօն Սահակ աղան:

Զարմանալի մարդ էր այս Սահակ աղան: Գիւղի ամենահարուստ մարդը լինելու բոլոր տուեալները ունէր, բայց Քրիստոսի բարեկամ Ղազարոսից էլ աւելի աղքատ էր: Տուն ունէր, արտ ունէր, կին ու զաւակներ ունէր, բայց իր աչքն ու մխոքը դուրսն էին: Գիրք ու լրագիր էր կարդում: Օրն ի բուն «հաւատարակի» գործերով էր զբաղուած: Գիւղում սպառողական խանութ եւ գիւղատնտեսական ընկերութիւն էր հիմնել: Անհանգիստ եւ որոնող հոգի ունէր: «Անդիէն եկած» ինչ որ խորհրդաւոր մարդոց հետ էր տեսնւում: Երբեմն օրերով կորչում էր: Ասում էին, թէ ընկերութեան մարդոց հետ «չափալամիշ կ'ըլլայ»: Միակ մարդն էր կարծեմ Մեծ Սալայում, որ

ARAM webaram.com

«փչթով» ունէր, եւ հպարտ էր իր ատրճանակով:

Մէկ խօսքով՝ Սահակ ազան արտասովոր մարդ էր: Հակառակ իր յիսունի հասնող տարիքին, միշտ ջահէլ–ջուհուլի հետ էր ժամանակ անցընում: Ինձ էլ խաս բարեկամ էր: Եւ ինքը առիթ ստեղծեց, որ ծանօթանամ Մովսէսի հետ:

Լեռների մարալի պէս սիրուն տղայ էր Մովսէսը: Մատաղ բարդիի պէս սլացիկ, նուրբ կազմուածքով, առաձգական ու ճկուն մարմնով, ծովի գոյն խոշոր ու թափանցող աչքերով, սեղ քայլուածքով աննման մի պատկեր: Ջուարթ, դուարճախօս, թրվռուն եւ, չուտով պիտի համոզուէի, նաեւ անզուգական ընկեր:

Եւ մենք մտերմացանք: Անբաժան էինք դրեթէ արձակուրդի օրերին. ես իր մօտ էի յաճախ, ինքն էլ էր գալիս քաղաք: Ես արդէն «դաշնակցական» էի. նա էլ «ընկերութեան մարդ» էր, թէեւ որեւէ խմբի անդամ չէր: Սահակ ազան դարձրել էր նրան «ընկերութեան մարդ»: Մեծ ուսում չունէր. նոյն իսկ դիւղի դպրոցը չէր աւարտել: Ես իր աչքին ուսեալ դիտնականի պէս մի բան էի:

Ես այն օրերին յափշտակուած էի պատմական վէպերով: Ինձ ի խուռն լափում էի ինչ դիրք որ ձեռքս ընկնէր — Շերենց, Սենկեվիչ, Զախոսկին, Շիլլէր, Գոգոլ, Աբովեանի «Վէրք Հայաստանի», Պռոչեանցի «Սօս եւ Վարդիթեր», բայց ամենից աւելի, ի հարկէ, Րաֆֆիի գործերը, «Խենթ»ը, «Ջալալէդդինը», «Կայծեր»ը, կարելի է ասել, գոց գիտէի: Րաֆֆիի հերոսները իմ ընկերներն էին: Նրանց հետ էի անցընում օր ու գիշեր: Սարհատ, Սաքօ, Կարօ, Ալան, խորհրդաւոր Որսորդ Աւոն՝ ամէնքը կենդանի էակներ էին ինձ համար՝ հարազատ ու մտերիմ: Մովսէսն էլ իմ միջոցով ծանօթացաւ նրանց, ապրում ու ոգեւորւում էր նրանց հերոսական գործերով: Եւ մինչ ես երազում էի միայն, նա ծրագիրներ էր որոճում եւ նրանց գործադրութեան մասին մտածում:

Մէկ վիշտ ունէր միայն Մովսէսը — մե՛ծ վիշտ: Հօր միակ զաւակն էր, եւ հայրը դիւղի անուանի ազաներից էր: Ինքնակալ ու կամակոր: Հարուստ եւ աւելի մեծ հարստութեան ձգտող: Ուզում էր, որ իր տղան էլ իրեն պէս լինէր: Պիտի սպաներ, եթէ իմանար, որ նա «դուբսեցի տանդղալախներու հետ չափալամիշ կ'ըլլայ»:

Մի օր — այսօրուայ պէս յիշում եմ — Մովսէսը հեւիհեւ եկաւ մօտս, եւ յուզուած՝ վճռական կերպով յայտարարեց.

— Ա՛լ կարող չեմ, հոգիս բերանս եկաւ. ամէն բան լմնցած է: Մամայիս միայն կը մեղքնամ... Ու սկսաւ դառն արցունքներով լալ:

ARAM webaram.com

Այնքա՛ն տարօրինակ էր եւ այնքա՛ն Մովսէսին նման չէր, որ ես զլուխս կորցրի: Չէի իմանում, ինչ անեմ: Ինձ համար ամօթ էր դռնում սպասելու:

— Ա՛լ վերջացած է, վրայ բերեց Մովսէսը, եա՛ ինձի պիտ սպանիմ, եա պիտ Զիպիր փախչիմ...

Եւ քիչ հանդստանալուց յետոյ՝ պատմեց: Հայրը իմացել էր, որ տղան Սահակ աղայի հետ տեսնւում է չուտ-չուտ: Ականջին ուրիշ բաներ էլ էին հասել: Բռնել էր եւ մի լաւ ափսոց տուել Մովսէսին:

— Շունի՛ լակոտ, սպառնացել էր հայրը, մէմալ ասպէս բաներ լսիմ նէ, կտոր-կտոր կ'անիմ, բոդայի (ճնճղուկ) պէս միտ չուներուն կը ձգիմ: Մէմըն ալ չլսիմ-չիմանամ, որ այդ տանդալախ հէրկէլէններուն հետ չափալամիշ կ'ըլլաս...

Եւ Մովսէսը պիտի ձգել եկել էր մօտս՝ իր անելիքը որոշելու համար: Եւ արդէն որոշել էլ էր — հեռանալ դիւղից, բայց ո՞ւր... Ցետոյ՝ ինչպէ՞ս ձգէր մօրը — քնքուշ, սիրելի, իր տղայի համար հոդի տուող մամային...

Երկար մնացինք միասին: Հաղար տեսակ ծրագիրներ կազմեցինք: Ո՛չ մէկն էլ խելքի մօտ բան չէր: Ես էլ ինձ համար թաքուն ծրագիր ունէի, որ չէի վստահում ոեւէ մէկին յայտնելու, նոյն իսկ Մովսէսին: Ծերենցի «Երկունք»ը եւ Րաֆֆիի «Կայծեր»ը կարդալուց յետոյ, ես հաստատ որոշել էի Սասուն երթալ: Միայն առիթի էի սպասում: Հիմա արդեօք յարմար առիթը չէ՞ր՝ Մովսէսի հետ միասին երթալու: Վարանումով ասացի նրան.

— Գիտե՞ս, Մովսէս, ես նպատակ ունիմ Սասուն երթալու. ուզո՞ւմ ես միասին երթանք:

Ընդոստ թռաւ տեղից: Փաթաթուեց վզիս.

— Կ'ուզիմ, կ'ուզիմ, էրթանք:

Ելքը գտնուած էր: Որոշեցինք պատրաստութիւն տեսնել եւ առանց մէկին բան ասելու՝ մեկնել ուղիղ Սասուն: Սասուն հասնելուց յետոյ, այլեւս անելիքներս յայտնի էր — թուրք ու քիւրդ սպանել. «Ջարդ ու փչուր անել գերդ բողկ ու գազար»: Գամառ Քաթիպան գծել էր մեր գործելակերպը:

Մովսէսը պիտի վերադառնար տուն, հօրը հետ շատ սիրալիր պիտի վարուէր, որպէսզի կասկածի առիթ չտար. իր պատրաստութիւնը պիտի տեսնէր, ես էլ իմ հերթին պիտի պատրաստուէի: Եւ մի գիշեր էլ՝ հո՛պ, աննկատելի կերպով պիտի մեկնէինք չիփչիտակ Սասուն...

ARAM webaram.com

*
* *

Ամառուայ արձակուրդները սկսուել էին: Մովսէսը, յաճախ, դալիս էր քաղաք: Այլեւս հանդարտ էր երեւում: Ամէն բանի մասին խօսում էինք, բայց Սասունի խօսք չէր անում: Մտածեցի, թէ փոխել է միտքը: Շատ էլ չէի զարմանում. Մովսէսը ո՛ւր, Սասունը՝ ուր: Իմ բանը ուրիշ էր: Ես ուսումնական էի. Սասունը ճիշտ իմ տեղն էր: Բայց մի եւնոյն ժամանակ եւ ուրիշ մտքեր էլ էին զբաղեցնում ինձ: Ընկերներս մտածում էին բարձրագոյն ուսման մասին. ես նրանցից ինչո՞վ էի պակաս: Ու սկսեցի մտածել դիմնազիայի մասին: Կ'ուզարտեմ դիմնազիան, յետոյ կ'երթամ համալսարան, վերջը կարելի է Սասուն էլ երթալ: Սասունը նապաստակ չէր, — չէր փախչի...

Մի օր էլ, Թեմական դպրոցի տեսչի օգնական պրն. Վահան Քիրլեանը ինձ կանչեց մօտը.

— Ի՛նչ գործի վրայ ես, հարցրեց՝ ժպիտով:

— Դիմնազիայի համար եմ պատրաստուում:

— Ի՛նչ, դիմնազիայի՞: Մէկ էլ չլսեմ այդ սարսաղ խօսքը: Դու ճեմարան պէտք է երթաս, էջմիածին...

— Դիմնազիա պիտի երթամ, ասացի:

— Դիմնազիա–միմնազիա մտքիդ հանիր՝ դու ճեմարան պիտի երթաս, հասկացա՞ր, ցանցառ: Այդ որոշուած բան է: Գնա՛ մտածիր, վաղը կը դաս, կը կարդադրենք, ցանցա՛ռ, փո՛ւչ կենդանի...

Գլուխս կախ դուրս եկայ: Պրն. Քիրլեանին շատ էի սիրում, բայց դիմնազիան էլ էի սիրում...

Ծնողներիս բան չասացի: Յաջորդ օրը ներկայացայ Քիրլեանին:

— Հը՞, ի՞նչ մտածեցիր, հարցրեց կէս–հեգնական, կէս–քաջալերական ժպիտով:

— Ճեմարան կ'երթամ, ասացի:

— Դէ՛, ապրիս, ցանցառ. է՛կ համբուրեմ:

Եւ այդ արտաքինով խիստ, միշտ պաշտօնական մարդը ջերմ կերպով համբուրեց ճակատս:

— Հիմա կ'երթաս Զէօրէքչեան սարկաւագի մօտ, նրանից դասեր կ'առնես: Նա քեզ կը պատրաստէ ճեմարանի համար:

Եւ ապագայ կաթողիկոսը սկսեց հետս պարապել հայկական առարկաներից — լեզու, պատմութիւն, կրօն: Ցոյս ունէր, թէ վարդապետ պիտի դառնամ...

ARAM webaram.com

*
* *

Աստուածածնի ծնունդը Մեծ Սալայի ուխտի օրն է: Այդ օրը հազարաւոր բազմութիւն թափւում է Մեծ Սալայի ժամի դուռը՝ շրջակայ գիւղերից եւ Նոր Նախիջեւան քաղաքից: Բնական էր, որ ես էլ այստեղ պիտի լինէի: Եւ բնական էր նոյնպէս, որ Մովսէսի հետ միասին ժամանակ պիտի անցընէի:

Տօնից մի քանի օր առաջ ես արդէն գիւղում էի: Եւ առաջին այցելութիւնս, ինչպէս միշտ, եղաւ Սահակ աղային:

— Մովսէսին տեսա՞ր, հարցրեց նա խորհրդաւոր նայուածքով:

— Չէ՛, դեռ չեմ տեսել:

— Ան քու ճամբադ կը նայի: Սապախտաճ հարցուց՝ Սիմաւոնը եկա՞ծ է: Չէ՛, ասի, տեսած չիմ: Շուտ քովը գնա՛:

Շտապեցի Մովսէսենց տունը: Հայրը չկար: Մայրը, ինչպէս միշտ, քաղցրութեամբ դիմաւորեց.

— Մովսէսը առանն է (ախոռը), հո՛ն գնա:

Իսկապէս որ անհամբերութեամբ էր սպասում: Իսկոյն թամբեց երկու ձի, հեծանք եւ — եալլա՛ գիւղից դուրս, դէպի հեռաւոր բլուրները: Այնտեղ, ցածլիկ բլուրի գագաթին, տարածուեցինք խոտերի վրայ: Մի քանի վայրկեան սովորական խօսքերից յետոյ, Մովսէսը ցատկեց տեղից, ձիու թամբի յետեւից քաշեց այնտեղ դեռեղուած մի կապոց, նստեց մօտս ու խորհրդաւոր ժպիտով սկսեց բանալ: Մի-ջից ելաւ երկու «փշտով»:

— Ա՛ռ, աս՝ քեզի, աս՝ ինձի:

Հիանալի դէնք էր: Այդպիսի ատրճանակ ես չէի տեսել: Բեբանս բաց մնաց:

— Մաւիզէր է, ասաց. մէկ սրայէն տասը փաթռոն կը պարպէ:

Ես չուարումի մէջ էի:

— Ես ի՞նչ պիտ անիմ ատ «փշտով»ը:

— Ինչե՛ր կ'ասիս: Առանց «փշտով»ի Սասուն կ'երթացուի՞ս: Ա՛ռ քեզի, աս՝ ինձի: Հայտա՛ նայինք՝ նչան գարնինք...

Ու սկսեցինք փա՛հ-փահ նչան գարնել: Ինչքան թռչուն կար շուրջը, փախան-կորան: Արդիւնքը եղաւ այն, որ ձիերն էլ վախից փախան, յետոյ մեծ դժուարութեամբ բռնեցինք:

Մովսէսը հրճուանքի մէջ էր: Այլեւս դլխաւոր պատրաստութիւնը տեսնուած էր. Սահակ աղան օգնել էր ատրճանակները գնելու: Մնացեալը դիւրին էր: Հիմա կարող էինք Սասուն երթալ: Բայց

ARAM webaram.com

ես ի՞նչպէս ասէի, թէ էջմիածին պիտի երթամ։ Ի՞նչպէս կոտրէի Մովսէսի սիրտը։

— Գիտե՞ս ինչ, ասացի, պրն. Քիրլեանը սոխոտում է ինձ, որ էջմիածնի ճեմարանը երթամ։ Այդ չատ լաւ է։ Արդէն էջմիածինը Սասունի ճամբուն վրայ է։ Ես կ'երթամ, դու էլ վերջը կը գաս եւ այնտեղից միասին կ'անցնինք Սասուն։

Սպասում էի, թէ Մովսէսը պիտի ափսէր, բարկանար վրաս։ Ճիչս հակառակը դուրս եկաւ։ Փաթաթուեցաւ վզովս.

— Ի՛նչ աղէկ էդաւ, ի՛նչ աղէկ էդաւ... պապաս ալ ռահաթ կ'ըլլայ, կասկած չ'ունենար... Ամէն անգամ աչքս կը խոթէ՝ «իսա Սիմաւոնն է քեզի խելքէ հանողը, ես անոր ոտքը պիտ կոտռիմ...»։ Շինւոխ եվ դուն էջմիածին էրթաս, ան միտքէն կը հանէ վախը։ Ես ալ թոփ կլամ հայտա՛ կու գամ քովդ...

Ինչպէ՛ս հանդիսա կարդադրուեցաւ այնքան կնճռոտ թուացող խնդիրը։

Բայց ժամանակից ի վեր Սահիան Զօհրաբեանն էլ, մեր ընկերներից մէկը, բաներ մը կը փսփսար ականջիս։ Նա էլ ուզում էր Սասուն երթալ եւ Մովսէսի եաեւից էր։ Ես չատ չէի վստահում Սահիանին. իր հաշիւը պիտցող ազայ էր և սիրում էր հարուստ ազաներ հետ բարեկամանալ՝ նրանցից օգտուելու նպատակով։ Միւս կողմից, սակայն, Սասուն երթալու մեծ յարմարութիւն ունէր. բարձրահասակ, պինուրականի քայլուածքով, ամուր բազուկներով, մեծխօսիկ, իսկական հերոս — ինչքա՛ն թուրքի ու քիւրդի դլուխ պիտի ուտէր...

Ասացի Մովսէսին.

— Գիտե՞ս, Սահիանն ալ կ'ուզէ Սասուն երթալ։ Առնե՞նք մեզի հետ։ Ի՞նչ կ'ասես։

Մովսէսի ուրախութեան սահման չկար։

— Ի հարկէ, առնինք։ Այդ չատ աղէկ կ'ըլլայ։ Ժեքս (երեքս) մէկտեղ կ'երթանք։ Անոր համար ալ «փշտով» կը դնիմ...

Ուրեմն, հարցը լուծուած էր։ Այլեւս կասկած չէր մնում, որ Սասուն պիտի երթայինք։ Մովսէսը երազում էր.—

Ես էջմիածինն եմ։ Ինքը եւ Սահիանը պիտի դան մօտս. «Սիմաւոն, շտէ էկանք, հայտա՛. ձգէ աղ գիրքերը. էրթանք Սասուն»։ Պիտի համբուրենք Խրիմեան Հայրիկի սուրբ աջը։ Էջմիածնի տաճարին մէջ մոմ պիտի վառենք, ծունկի եկած պիտի աղօթենք, որ Լուսաւորիչ պապան մեզի ուժ տայ։ Պիտի անցնինք Սասուն։ Հոն ինչքան թուրք ու քիւրդ կայ, ալայը (բոլորը) պիտի սատկեցնենք,

ARAM webaram.com

Հայաստանը պիտի ազատենք։ Վերջը յաղթական տուն պիտի վերադառնանք։ Ամբողջ գիւղը մեզ դիմաւորելու պիտի ելնէ։ Ժողովուրդը պիտի խռնուի փողոցներում։ Աղջիկները ծաղիկ պիտի ցանեն մեր երիվարների ոտների տակ. «Կեցցե՛ն, կեցցե՛ն մեր հերոսները» աղաղակներ պիտի լսուին։ Ցեռոյ, մեզ ժամ պիտի տանին։ Ժամը ճառագայթած պիտի լինի մոմերի լոյսով։ Շուրջին տէր Օվակիմը քարոզ պիտի խօսի. «Ապրի՛ք, ազաքս, դուք մեր երեսը ճերմկցուցիք, մեր ազգի փառքն ու պարծանքն էք, մեր հերոսները»։ Մովսէսի հայրն էլ խնդումերես պիտի դայ, ճակատը համբուրէ. «Մեծ լաս, օշխիս (որդիս), պապադ հպարտ է քեզմով»... Ու մէկ չաթաթ գիւղի ամբողջ հասարակը, գիշեր ու ցերեկ, էֆֆ պիտի անէ, տառլզուռնայով ռախի պիտի խմէ հերոսներու կենացը...

Այսպէս զառանցելով վերադարձանք գիւղ։ Առաւածածնի ուխտի օրը միասին — Ստեփանն էլ մեզ հետ — չարունակեցինք օդային ամրոցներ կառուցանել...

*
* *

Ես արդէն ձեմարանի աշակերտ էի։ Մովսէսից կարճ նամակներ էի առնում։ Նա գրելու վարժութիւն չունէր։ Ստեփանը օրը օրին, երկար նամակներով, տեղեակ էր պահում, թէ ի՛նչ վիճակում էր Սասունի գործը։ Մէկ գրում էր, թէ Մովսէսը հեռաղիտակ է պնել, մէկ հաղորդում էր, թէ Սասունում ի՞նչ տեսակ դաշոյն է գործածւում, ի՞նչ հագուստ պէտք է առնել, ի՞նչ ձեւի կօշիկ կամ գլխարկ։ Ի՞նչ բաներ պէտք է տանէինք մեզ հետ։

Այդ բոլոր բաներին ես էլ ծանօթ, քանի որ ձեմարանում էի, եւ Սասունն էլ՝ էջմիածնի մօտ։ Ես երկար-բարակ պատասխանում էի բոլոր հարցումներին։

Ամբողջ ձմեռ անընդհատ մեր նամակները չարունակուեցին։ Պայմանաւորուեցանք, որ Զաւակին Մովսէսն ու Ստեփանը պիտի հասնէին էջմիածին եւ ոտներից օգտուելով՝ աննկատելի կերպով պիտի հեռանայինք էջմիածնից։ Ուղեգիծը որոշ էր. իմ ձեռքով գծած քարտէսն էլ ուղարկել էի նրանց. գիշերով պիտի անցնէինք Արաքսի կամուրջը, Իգտիրի վրայով պիտի բարձրանայինք Բարթողեան լեռնաշղթան. այնտեղից երկու քայլ էր մինչեւ Սասուն։

Մի օր էլ հասաւ նամակ եկաւ Ստեփանից։ Դասերից յետոյ, վազեցի Ներսիսեան անտառը, խորը, թուփերի մէջ, քաշուեցի աննկատելի տեղ եւ բացի։ Ահաւոր լուր էր Ստեփանի հաղորդածը։ Սար-

ARAM webaram.com

սափելի աղէտ էր պատահել: Մովսէսի հայրը, յայտնի չէ թէ ինչ-պէս, խմանում է տղու ծրագիրների մասին: Մի քանի բաներ էլ ըմբռնում է մօտը — հետադիտակ, դաշոյն: Կանչում է Մովսէսին մօտը եւ կատաղած հարցնում.

— Ա՛ խ՞նչ է:

Մովսէսը գլուխը կախ՝ չի պատասխանում:

— Ա՛ քո՞ւկդ է, չարունակում է բորբոքած հայրը:

Մովսէս լռում է:

— Քեզի՛ կը հարցունիմ, չունի զաւակ· քեզի վո՞վ իրաւունք տուիլ սա բաները առնելու: Ռազպոյնի՞ֆ (աւազակ) պիտի լաս... Բոստաճիին տղան ռազպոյնի՛ֆ պիտի ըլլայ, հէ՞... Ես քեզի կը ցուցունիմ...

Ու մէկ ապտակով Մովսէսին ձգում է գետին: Յետոյ՝ սկսում է կօշիկներով անխնայ հարուածել, հայհոյել ու հարուածել...

Մովսէսը մի ոտիւնով դուրս է նետւում: Ու մի քանի վայրկեան վերջը, ախոռից, լսւում է սարճանակի պայթիւն...

Վրայ են հասնում: Մովսէսը արիւնլուայ ընկած էր ախոռում: Գնդակը փչրել էր գանկը եւ ուղեղը ցրիւ տուել: Մօտը ընկած էր սարճանակը, այն սարճանակը, որով պիտի ազատէր Սասունը...

Տեփանը գնացել էր Մովսէսի յուղարկաւորութեան: Ամբողջ գիւղը ներկայ է եղել, բացի Մովսէսի հօրից...

Կարզացի եւ մտամոլոր դուրս եկայ անտառից: Առջեւս կեցած էր Արարատը՝ վերջալոյսի շողերով ողողուն: Մօտը, երկա՛ր՝ Բարթողեան լեռնաշղթան: Նրա յետեւը, մի քանի քայլի վրայ՝ մեր եւ բազնեցի աշխարհը՝ Սասունն: Էլ պիտի չերթայինք Սասուն: Սասունը պիտի չազատուէր. Մովսէսը չկար...

Ուզում էի լալ, բայց արցունք չէր գալիս աչքերիցս: Լացից աւելի զօրաւոր մի վիշտ էր համակել հոգիս...

Տեփանը չարունակեց նամակներ գրել, համոզել, որ միասին երթանք Սասուն, բայց որոշ էր՝ ինքն էլ չէր հաւատում գրածին: Ես էլ այլեւս Սասուն գնացողը չէի:

Մի օր էլ նամակ առի Տեփանից.—

Մովսէսի պապան մեռել էր սրտի ցաւից...

ARAM webaram.com

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏ

I.— ԳԱՑԻԱՆԷԻ ԵՐԳԱԽՈՒՄԲԸ

Արդէն էջմիածնի Գէորգեան ճեմարանի աշակերտ էի։ Ընդունուել էի չորրորդ դասարանը։ Դասերը դեռ չէին սկսուած։ Ամէն օր տեղի էին ունենում մանկավարժական ժողովներ տարեկզբի կարգադրութիւնների համար, իսկ մենք՝ աշակերտներս առաւօտից մինչեւ երեկոյ անգործ պտտում էինք ճեմարանի պարտիզում, Ներսիսեան անտառում կամ լճի չուրջը։

Մեզ՝ նորեկներիս համար ամէն բան հետաքրքրական էր եւ հրապուրիչ — եւ՛ ճեմարանի գեղեցիկ շէնքը հանդիսաւորանի բարձրահասյեաց գմբէթով, եւ՛ պարտէզի «մարդերը» հայրենակցականների միջեւ բաժանուած ծաղկոց-ածուներով, եւ՛ Մասիսի վեհափառ տեսքը ուղիղ մեր առջեւ, եւ՛ միաբանական նոր հանրակացարանի առջեւ, արեւի տակ, ծոյլ-ծոյլ յօրանջող վեղարաւորները եւ, մասնաւորապէս, մեր ուսուցիչները, որոնք առանձին-առանձին կամ խմբով անցնում էին ճեմարանի բակից։ Հին աշակերտները ծանօթացնում էին նրանց։

Ահա բարձրահասակ, պատկառելի տեսքով կարապետ վարդ. Տէր-Մկրտչեանը, Գերմանիայում ուսում առած եւ արդէն պիտանականի համբաւի տիրացած մեր տեսուչը։ Անցնում է հանդիսաւոր քայլերով, չորրալով, վեղարի ծալքերը հովին տուած։

Նրա կողքին, կարճահասակ ու վտիտ, մանր աչքերով ու մանր քայլուածքով Գարեգին վարդ. Ծովսէփեանը — «Պօղոս Առաքեալը»

ARAM webaram.com

— Կիլիկիոյ ապագայ Կաթողիկոսը: Զգային չարժումներով ինչ որ բան է պատմում:

Ահա Մանուկ Աբեղեանը — գիւղացու ծանրախոհ դէմքով, գլուխը միշտ կախ, հաստ գաւազանը ձեռքին — իրեն նման մէկ ուրիշի ընկերակցութեամբ — Ստեփան Կանայեանը, պատմութեան եւ գերմաներէնի դասատու: Սա էր, որ քննութեան ժամանակ ինձ հարցրեց. «Աստ տեսնենք, ապո՛ւշ, այն ո՞ր թագաւորն էր, որ Պարսկաստան տարուելով ասաց. «Ես, Արշակ թագաւորս»... «Արշա՛կը», պատասխանեցի ես արագ:

«Ապրիս, շատ լաւ», հաւանութիւն տուեց Կանայեանը: Ընթերակաները ծիծաղում էին:

Ահա՛ բարդիի պէս սլացիկ, գլուխը բարձր, գերապանցօրէն լուրջ դէմքով, մաքուր հագնուած, ամուր կոճկուած — Յակոբ Մանանդեանը, յունարէնի ուսուցիչը: «Գիպնոնոտոյ» անունը ստացաւ մեղանից:

Սա էլ ահա բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանը՝ առուծի ալեհեր բաշով եւ անփոյթ չարժումներով, խօսում է ուսերէն, աստրական մօրուքով, անժպիտ, գլուխը դէպի աջ թեքած մի երիտասարդի հետ — Սիրական Տիգրանեանը՝ Պետական Դումայի անդամ ապագային, Հայաստանի Յանրապետութեան փոխ-նախագահ եւ Հայաստանի համալսարանի ուսուցչապետ:


Սա էլ... կարծես իրեն հալածող լինէր. վանքի դարբասից արագ-արագ ձեմարանի բակը մտաւ, վեղարը մինչեւ աչքերը քաշած երիտասարդ մի վարդապետ: Միջահասակ: Նուրբ կազմուածքով եւ կարճ մօրուքով: Փոքր եւ կայծկլտող աչքերով: Աչ ու ձախ դիտելով, սրան-նրան խօսք նետելով մօտեցաւ հանդիսարանի տակ կանգնած ուսուցիչների խմբին: Ինչ որ բաներ ասաց, ու մէկ էլ — տես մի տոպրակ արծաթ դրամ թափուեց քարէ սալայատակի վրայ — պոռթկաց վարակիչ ծիծաղով՝ իրեն հետ քաշելով եւ միւսներին:

Սա էլ Կոմիտաս վարդապետը:

Տարօրինակ եղաւ իմ ծանօթութիւնը Կոմիտաս վարդապետի հետ: Ձեմարանի նախապատրաստական բոլոր աշխատանքները արդէն լրացած էին, եւ ահա առաջին դասը:

Մեր դասարանում սովորութիւն էր եղել տարեսկզբին ընտրել այդ տարուայ դասարանի ամենէն ուժեղ աշակերտին: Նախորդ տարուայ ամենէն ուժեղը զգուինցի Լեւոն Բարխուդարեանն էր — չէկ մազերով, բարձրահասակ, հաստամարմին մի տղայ, որի հետ ես տեղ

ARAM webaram.com



ԿՈՄԻՏԱՍ

գրաւեցի մեւնոյն նստարանի վրայ, դասարանի վերջին շարքում։ Այնպէս եղաւ, որ մրցումի առաջին փորձը ինձ վիճակուեց։

Փորձը շատ պարզ էր։ Առաջին դասից առաջ, երբ դեռ զանգը չէր հնչած, ես պէտք է երկու ձեռքով բարձրացնէի դասարանի ամենափոքր աշակերտին՝ կարսեցի Նիկողայոս Սուլթանեանին եւ դասարանի յետեւի մասից տանէի առջեւ, մինչեւ դրատախտակը։ Եթէ յաջողէի, առանց դետին ձգելու, տեղ հասցնել — մրցանակը ե՛ս չհաճ պիտի լինէի։

ARAM webaram.com

Ծուլթանեանը կարճ, դունո-կլոր տղայ էր։ Բայց անիրաւը կարծես արճիճով էր լեցուած։ Հապիւ բարձրացրել էի իմ բեռը եւ բոլորի «Հրաշափառ» չարականի հանդիսաւոր երգեցողութեամբ մի քանի քայլ էի արել, յանկարծ, դասարանում տիրեց քար լռութիւն։ Բնազդօրէն բեռը ձգեցի գետին եւ գամուեցի տեղս անշարժ ու չփոթուած։ Նայեցի դէպի բացուած դուռը — չեմքին կեցած էր... կոմիտաս վարդապետը։

Կոմիտասը կանգնած էր հանդիսատ, եւ չարժուն աչքերում կայծեր էին խաղում։ Բարկացա՞ծ էր։ Պիտի ծիծաղէ՞ր։ Մի վայրկեան լուռ դիտեց եւ արագ քայլերով ուղղուեց դէպի ուսուցչական սեղանը։

— Նստեցէք... Բայց աչքերում չարունակում էին կայծեր խաղալ։

Նստանք։ կարծես ոչինչ չէր պատահել։ Բացեց ձեռքի մատեանը։ Ինչ որ գրեց մէջը։ Եւ առանց նախաբանի, միչտ լուրջ, անցաւ գործի։

Մանկավարժական ժողովի կողմից ինքը նշանակուել էր մեր դասարանի դասախօսակ։ Երաժչտութեան դաս պիտի տար մեզ։ Այժմ պիտի փորձէր նորեկների ձայները երգչախումբի մէջ առնելու համար։

— Դո՛ւ, անցիր նայենք առաջ, խօսքը ուղղեց ինձ։ Բարեգուշակ նչան չէր։ Ինչո՞ւ անպատճառ առաջինը ինձ պիտի կանչէր։ Անշուշտ, քիչ առաջուայ տեսարանի պատճառով։ Քրտինք եկաւ վրաս։

Մօտեցայ սեղանին։ Կոմիտասը հանդարտ դիտում էր ինձ՝ վերից վար, բայց աչքերի մէջ կայծերը չէին մարում։ Դասարանում ասեղ ձգէիր՝ ձայնը կը լսուէր։ Ամէնքը լարուած, հետաքրքրութեամբ սպասում էին, թէ ի՞նչով պիտի վերջանայ մուկ ու կատուի այս խաղը։

— Երգել գիտե՞ս, հարցրեց Կոմիտասը չատ լո՛ւրջ։

Ցաւոտ տեղիս դարկեց։ Ես երգ սիրում էի, բայց երգե՛լ... Ինքս ինձ համար, այո՛, երգում էի։ Նոյն իսկ կարծում էի, թէ լաւ էի երգում։ Սակայն, «երգել գիտե՞ս»... Տրորուելով պատասխանեցի.

— Այո՛, գիտեմ։

— Ի՞նչ գիտես, երգիր տեսնենք։

Մի քիչ էլ տրորուեցի ու սկսեցի.

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն...

Մէկ չնչով լրացրի առաջին տունը։ Կոմիտասը քաջալերանքով


ARAM webaram.com

չարժում էր գլուխը, «չաւո լաւ, չաւո լաւ»: Մատներով խաղում էր կարճ մօրուքի հետ: Եւ աչքերից չարունակ կայծեր էին թափւում:

— Շաւո լաւ, չաւո լաւ: Շարունակիր:

Վրաս ոյժ եկաւ: Ուրեմն, այնքան էլ յուսահատական չէր կացութիւնս. ուզում է որ չարունակեմ: Ճիշտ է, ձայնիս մասին եւս ինքս էլ բարձր համարում չունէի, բայց երեւի, չաւո էլ վատ չէր...

Երգեցի երկրորդ տունն էլ, այս անգամ աւելի համարձակ:



ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

Կոմիտասը միշտ մխիթարիչ ձեւով չարունակում էր քաջալերել — «չաւո լաւ, չաւո լաւ, հիանալի է»...

Երկրորդ տունն եւս անսայթաք աւարտեցի եւ կեցայ: Վերջին դասատանին ներկայացող մեղաւորի յուզումով եւ, ինչո՞ւ չխոստովանուեմ, նաեւ յուսով սպասում էի դատաւճռին:

Կոմիտասի աչքերում կայծերը կարծես չաւոցան: Մի պահ լռեց: Ծոմարի մէջ ինչ որ նշանակեց եւ —

— Քեզ կ'արձանագրեմ Գայիանէի երգչախմբում...

Մի զարհուրելի հռհռոց բարձրացաւ դասարանում: Բարձր ծիծաղ: Ծիծաղում էր եւ ինքը Կոմիտասը:

ARAM webaram.com

Ես, սակայն, երջանիկ էի: Այո՛, երեւի, ձայնս այնքան էլ վատ չէր, որ երդչախմբի մէջ ընդունուեցի: Պատերազմը շահող զօրավարի յաղթական քայլերով վերադարձայ տեղս: Բայց ի՞նչ էր նշանակում այս անղուսպ ծիծաղը: Ինդալու ի՞նչ կար:

— Ինչո՞ւ էք ծիծաղում, հարցրի մօտս նստած Լեւոն Բարխուդարեանին:

— Չե՞ս իմանում, պատասխանեց նա, առանց ծիծաղը զսպել կարողանալու. Գայիանէի վանքում ձեմարանի կովերն են պահում...

Ահա՛ թէ ի՛նչ... վրաս պաղ ջուր լեցուեց. ահա՛ թէ ինչ, ինձ կովերի երդչախմբին արժանի դատեւ այս տարօրինակ վարդապետը, բոլորովին խորտակելով իմ երաժշտական ապագան, որ, աւա՛ղ, մինչեւ այսօր էլ Գայիանէի երդչախմբի մակարդակից չի բարձրացել:

Հիասթափութիւնս անսահման էր: Էջմիածնում երկրորդ ահաւոր հարուածն էր ստանում իմ ինքնասիրութիւնը. Հայրիկը ծաղրել էր «մեծ ղլուխս». սա էլ ծաղրում էր ձայնս: Անարդա՛ր, տմարդի՛ վերաբերում...

Էլ չիմացայ, ինչպէս վերջացաւ Կոմիտասի դասը, ինչպէս վերջացան այդ օրուայ բոլոր դասերը: Անարդուած էի, հոգեպէս խորտակուած: Ի՞նչ գործ ունէի ես այս անկիրթ մարդոց մէջ: Պրն. Քիրլեանը ինչո՞ւ ուղարկեց ինձ այստեղ...

Դուրսը արդէն տարածուել էր Գայիանէի երդչախումբի պատմութիւնը: Եւ թւում էր, թէ ամէնքը հեգնանքով ինձ էին նայում եւ իրար փսփսում. «Տե՛ս, տե՛ս, Գայիանէի երդչախումբի անդամը»...

Լեւոն Բարխուդարեանը, տեսնելով իմ հոգեկան տագնապը, ամէն կերպ աշխատում էր համոզել ինձ, որ կարեւորութիւն չտամ, որ Կոմիտաս հայր սուրբը բարի մարդ է, որ արածը կատակ էր սոսկ, բայց իմ վիշտը շատ խորն էր: Եւ իսկապէս, ինչո՞ւ էի այդքան վրդովուել: Ձայնս մի բան չէր, այդ վաղուց յայտնի էր ինձ եւ ամէնքին: Կոմիտասի արածն էլ, անշուշտ, կատակ էր, բայց — փորձեցէք մի տղեղ աղջկայ ասել. «Օրիորդ, դուք շատ տղեղ էք» եւ յետոյ պահանջեցէք, որ նա չվիրաւորուի:

Ցիշում եմ, որ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովներից մէկում ես բուռն ընդհարում ունեցայ մեր անուանի խմբապետներից մէկի հետ՝ Սեպուհի: Նրան խիստ քննադատում էին իր պինուորական գործողութիւնների համար, եւ նա բարի ժպիտով ոչ մէկ փորձ

ARAM webaram.com

չէր անում հակաճառելու։ Ընկերվարութեան մասին նրա խօսած մի ճառից յետոյ, ես ասացի, թէ «դու բան չես հասկանում ընկերվարութիւնից», եւ տեսնէք, թէ ինչ փոթորիկ բարձրացրեց. բռունցքը վար չարժելով ինչպէ՛ս յարձակուեց վրաս եւ քիչ մնաց ծեծէր, եթէ չմիջամտէր Ռոստոմը։ Ես նրա ցաւոտ վէրքի վրայ էի դրել մատս։

Չէ, սիրելի Լեւոն Բարխուդարեան, դուր ես մխիթարում ինձ. ես Գայիանէի կովերի երջախտմբին էի արժանացել, կարելի՞ բան է...

Երեկոյեան դէմ, երբ ընկերներս ամէնքը խաղում էին բակում, ես տխուր նստած էի մեր մարզում, ծառի տակ։ Լեւոնն էլ մօտս։

Զարմանալի տղայ էր այս Լեւոնը։ Կոչտ արտաքինի տակ քնքոյշ սիրտ ունէր եւ ընկերական աննման ոգի։ Հետապային, դասարանում, մենք մրցորդ զարձանք իրարու հետ։ Ընդունակ, խելացի, շատ կարդացող, առաջին աշակերտն էր, բայց առանց ցաւի ու նախանձի ինձ դիջեց իր տեղը, եւ երեք տարի նստեցինք կողք-կողքի ու սիրտ սրտի, օրինակելի մաերմութեամբ։ Վեցերորդ դասարանից նա մեկնեց Գերմանիա ուսանելու եւ չերմ նամակներ էր գրում այնտեղից։

Մի օր էլ հօրեղբօրից լուր առի, թէ Լեւոնը մեռել էր իր նուխբական նպաստակներին չհասած...։

Նստած էինք Լեւոնի հետ ծառի տակ։ Մէկ էլ, յետեւից, երկու ուժեղ ձեռքեր դոցեցին աչքերս։ Աչխատեցի ազատուել — անօգուտ։ Կարծես երկաթէ աքցանի մէջ էր առնուած գլուխս։

— Բա՛ց թող, ո՞վ է։

Պատասխան չկայ։ Միայն զսպուած խնդուք։

— Բա՛ց թող, ասում եմ։ Ցիմար կատակ, թէ չէ...

Բաց թողեց. Կոմիտասն էր...

Ես չփոթուած՝ ցատկեցի տեղիցս։ Չէի իմանում, ինչ անել։ Իսկ նա քահ-քահ՝ բարձրաձայն քրքջում էր։ Աչքերը վառվռում էին հրճուանքից։ Ծիծաղում էր եւ Լեւոնը։

Նստեց։ Մեզ էլ տեղաւորեց մօտը։

— Հը, ասա նայենք՝ ի՞նչ ես քիթդ կախել, ինչո՞ւ չես խաղում։

Ես խօսք չէի գտնում պատասխանելու։

— Գայիանէի երջախտմբը, ասաց Լեւոնը։

Կարծես ամպերը պայթեցին երկնքում, մի այնպիսի ծիծաղ փրթաւ։

ARAM webaram.com

Ով չի լսել այն օրից Կոմիտասի ծիծաղը, նա զգալիար չունի ծիծաղի մասին — այնքա՛ն բուռն, այնքա՛ն զուարթ եւ այնքա՛ն անկեղծ: Այնքա՛ն մանկական:

— Վա՛յ, մաթռաբաղ, վա՛յ... ուրեմն այդպէս, հա՞ — Գայիանէի երդչախո՞ւմբը: Հապա ուզում էիր, որ քեզ Բերլինի օփերա՞ն ուղարկէի:

Ու սկսեց հարց ու փորձ անել. ո՞վ եմ, ո՞րտեղացի, ինչո՞ւ եմ եկել Ճեմարան.ի՞նչ եմ սիրում: Եւ բազմաթիւ նման ուրիչ հարցեր: Եւ այնպիսի պարզ ու մտերիմ խօսքերով, որ կատարեալ զինաթափ արաւ ինձ:

Ի միջի այլոց, պատասխանեցի, որ Զէօրէքչեան սարկաւագն է ուղարկել ինձ Ճեմարան, որ նպատակ ունիմ, ուսումս աւարտելուց յետոյ, վարդապետ դառնալ:

Կոմիտասը սկզբում լսում էր ուշադիր: Ապա սկսեց կատակել:

Զէօրէքչեանի անունը լսելիս ասաց ծիծաղով.

— Բարեկամիդ օրինակին չհետեւիս, հա՛:

Ակնարկը հասկանալի էր. Զէօրէքչեանը թէեւ կուսակրօն էր, բայց ապրում էր հետը բերած մի գերմանուհու հետ, որքան գիտեմ, քաղաքացիական ամուսնութեամբ:

Կոմիտասը խստակրօն մարդ էր բարոյական հարցերում:

Ժամից աւելի նստեց մեզ հետ եւ երբ հեռացաւ, իմ սիրտը արդէն նուաճուած էր. Գայիանէի երդչախմբից ոչ մի հետք չէր մնացել մէջս:

Զարմանալի մարդ էր Կոմիտաս հայր սուրբը:

II.— ՈՐՊԷՍ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿ

Կոմիտասը մէկ տարի էր որ վերադարձել էր Գերմանիայից: 1899 թ. Յունիսին նա աւարտել էր Բերլինի Երաժշտանոցը, ինչպէս նաեւ Բերլինի Համալսարանի երաժշտութեան եւ փիլիսոփայութեան դասընթացքը: Նոյն տարուայ Սեպտեմբերից սկսած, երաժշտութեան դասատու էր Ճեմարանում եւ արդէն հիմք էր դրել Ճեմարանական նշանաւոր երդչախմբին: Սիրուած էր բոլոր աշակերտների կողմից: Կոմիտասը որպէս ուսուցիչ անզերազանցելի էր: Դասարանում նա իրեն պահում էր լուրջ, երբեմն նոյն իսկ խիստ, թէեւ, յաճախ, կատակներով զուարթ տրամադրութիւն էր առեղծում: Դասը համեմում էր տրախօսութիւններով, բայց երբեք թոյլ չէր տալիս, որ աշակերտ-

ARAM webaram.com

նները ձեռքից դուրս գան: Երբեմն չէր քաշւում եւ քանոնը խաղացնել սրա եւ նրա դլխին: Դասը անցնում էր պարզ, յստակ եւ հրապուրիչ: Հաճոյք էր նրան լսելը: Մանաւանդ, երբ խօսում էր հայկական երաժշտութեան, շարականների եւ ղեղչկական երգերի ու խաղերի մասին:

Մինչեւ վեցերորդ դասարան, երեք տարի, մեզ դասաւանդեց հայկական եւ եւրոպական երաժշտութիւն: Նմանապէս եւ միւս դասարաններում: Եւրոպական երաժշտութեան տարերքն էր միայն տալիս — պարզ սկզբունքներ, ձայնանիշների դիտութիւն եւ ձայնադրութիւն: Աւելի ոյժ էր տալիս հայկական ձայնադրութեան — փօ, է, վէ, քէ, խօ, նէ, պա, փօ: Ճաճախ, ինքը երգում էր որեւէ շարական կամ ժողովրդական երգ եւ մեզ հերթով, դրատախտակի վրայ, ձայնագրել էր տալիս: Ինքն էլ, սկզբի շրջանում մանաւանդ, առաւելապէս հայկական ձայնանիշներով էր ձայնադրում իր հաւաքած ժողովրդական երգերը: Զարմանալի էր տեսնել, թէ ինչպէս այդ պարզ ձայնանիշները, իրենց կիսաձայներով ու քառորդ կամ ութներորդ ձայներով, արտայայտում էին ամենանուրբ հնչիւնները:

Երբեմն համեմատութեան կամ կատակի համար, դործ էր ածում հնդկական ձայնանիշներ — սա, րի, կա, մա, պա, տա, նի, սա: Կոմիտասը յարակցութիւն էր դտնում հայկական եւ հնդիկ երաժշտութեան մէջեւ: Ընդհակառակը, վրդովումով էր խօսում այն երաժշտապէտների մասին, որոնք հայկական երգեցողութիւնը աղաւաղում էին թրքական մեղեդիներով: Պէտք էր տեսնել նրա ծաղրը — երբեմն եւ զայրոյթը — երբ չափազանցուած կլկլոցներով օրինակներ էր բերում թրքահայ շարականներից, մանաւորապէս, պոլսեցիների երգելու ձեւերից: Նա ահագին աշխատանք թափեց մաքրելու համար հայ եկեղեցական երգեցողութիւնը օտարամուտ տարրերից, յատկապէս թրքական ազդեցութիւնից:

Բացի դասարանական պաշտօնական ժամերից, Կոմիտասը դուրսն էլ պարապում էր ձայնեղ եւ երաժշտութեան մէջ ընդունակութիւն ցոյց տուող աշակերտների հետ: Ունէր իր սիրելիները, որոնց համար ժամանակ եւ աշխատանք չէր խնայում: Դրանցից էին, օրինակ՝ Սպիրիդոն Մելիքեանը, արարանցի, որից հետագային շնորհալի երաժշտագէտ եւ ուսուցիչ դուրս եկաւ: Վահան Տէր — Առաքելեանը, Հայոց Զորի Մալիչկա դիւղից, որ շատ ուժեղ ձայն ունէր, բայց բուէի ականջներ: Մեծ յոյսեր էր կապում Կոմիտասը Վահանի հետ, տարիներով մարզեց նրա ձայնը: Վահանը մինչեւ Պետերբուրգ գնաց նշանաւոր երգիչ դառնալու յոյսով, բայց վերջը

ARAM webaram.com

դարձաւ քաջ դինուորական: Եւ Կոմիտասի յոյսերը յօդս ցնդեցին:

Կոմիտասի սիրելիներից էին եւ Մելքոն Քրիչեանը, դոկ: Լաւ ձայն ունէր եւ երաժշտական շնորհք, բայց սա էլ կեանքում անյաջողակ դուրս եկաւ: Գնաց Գերմանիա ուսանելու եւ փոչիացաւ: Գրիգոր Քէպապճեան, եողղատցի, որ սուր ականջ ունէր եւ զարմանալի արագ ձայնագրող էր: Սրանից էլ բան դուրս չեկաւ: Յոսեփ Փախչանեան, վանեցի, երաժշտական բացառիկ ընդունակութեան տէր պատանի: Մեռաւ, կարծեմ, թոքախտից, Վանում: Արշաւիր Տէր-Մկրտիչեան, երեւանցի, դեղեցիկ ձայնի եւ երաժշտական շնորհքի տէր, fէֆ ու խնճոյք սիրող մի աւարա: Նոյնպէս փուչ դուրս եկաւ կեանքում:

Տարօրինակ է, Կոմիտասի էջմիածնական աշակերտներից, Սպիրիդոն Մելիքեանի բացառութեամբ, ոչ մէկը նշանաւոր չդարձաւ կեանքում: Այդ տեսակէտից հետաքրքիրն էլ բախտաւոր չեզաւ Կոմիտասը. եթէ չհաշուենք Բարսեղ Կանաչեանին եւ մասամբ Վարդան Սարգսեանին, նրա անուան արժանի մէկը կարելի չէ ցոյց տալ իր աշակերտների շարքում:

Եւ, հետեւաբար, pro domo sua խօսելով՝ ես էլ կարող եմ արդար իրաւունքով հպարտանալ, թէ Կոմիտասի աշակերտ եմ եղել, թէեւ իմ պարապած տարբեր էր: Երբ դասի մէջտեղին պէտք էր լինում մէկի երգածը ծաղրել, Կոմիտասը ինձ էր օրինակ բերում: Փոքր աչքերը մեղմ սեղմած, հասիւ ծիծաղը զսպելով՝ նա ինձ էր ցոյց տալիս, թէ՝ սրա պէս ես երգում: Այսինքն, այնպէս անշնորհք, որից վատը կարելի չէր երեւակայել...

Բայց վերաբերումը բոլորովին փոխւում էր, երբ խնդիրը դալիս էր ձայնագրութեան: Սա էլ բնութեան տարօրինակ հեգնանքներից մէկն էր. ես որքան անտաղանդ երգիչ էի, նոյնքան էլ յաջող էի ձայնագրութեան մէջ: Այնքա՜ն, որ յաճախ, Կոմիտասը ինձ էր հանում դրասահարակի մօտ սրբագրելու լաւագոյն ձայնագրողների սխալները: Բայց, աւա՜ղ, ես Բեթհովէնն չդարձայ կեանքում...:

Մի դէպքում էլ իմ «երաժշտական» տաղանդը երեւան եկաւ իր բովանդակ փայլով: Ձեմարանի երգչախումբը կազմուած էր բացառապէս աշակերտներից, եւ որոշ ձայներ թոյլ էին: Կոմիտասը նեղւում էր առանձնապէս բամբ ձայների տկարութիւնից: Այդ թերին սրբագրելու համար նա Գերմանիայից բերել տուեց չորս սաfunֆոն — մէկական իւրաքանչիւր չորս ձայների համար:

ARAM webaram.com

Երբ պապղուն գործիքները հասել էին ձեմարան, մի օր, կոմիտասը կանչեց ինձ, թէ՝

— Այս սաֆոփոնը դու պէտք է նուագես:

Զարմանալի էր, ես որ միայն Գայիանէի երգչախումբին էի արժանացել, հիմա պէտք է կոմիտասի երգչախմբում սաֆոփոն նուագէի: Որքան զարմանալի, այնքան եւ չոյիչ էր իմ ինքնասիրութեան համար:

Գաղտնիքը, սակայն, չուտով պարզուեց և ոչ այնքան նպաստաւոր իմ երաժշտական արժանապատուութեան համար: Պարզուեց, որ բուռ սաֆոփոնը այնքան ծանր էր, որ կոմիտասը ինձանից զատ ուրիշ յարմար մէկը չէր գտել այդ բեռը վերցնելու: Եւ այդ պատճառով ես էի շալակում այդ վիթխարի գործիքը, որից ելած ձայները երբեմն ջղայնացնում էին կոմիտասին եւ անվերջ կատակի նիւթ ծառայում ընկերներիս համար: Մինչեւ այսօր էլ ականջիս հնչում է սաֆոփոնի խրոխտ բոմբիւնը սէգ Սիփանի քաջերի ցնծագին աղաղակներին միախառնուած...:

Մի ուրիշ դէպքում էլ կոմիտասը ինձ արժանացրեց իր երգչախմբի անդամութեան պատուին:

Պաշվեքացի ոսոնը էջմիածնում առանձին հանդիսութեամբ էր կատարւում: Նախատօնակը տեղի էր ունենում վանքի գաւիթում. Մայր Տաճարի կողքին, կաթողիկոսի, բոլոր միաբանների եւ ուխտաւորների խառն բազմութեան ներկայութեամբ: Երգչախումբն էր երգում այդ օր, եւ կոմիտասը պատուիրեց ինձ, որ ես եւս չապիկ հագնեմ խմբի մէջ: Տարօրինակ էր, որովհետեւ եկեղեցական ծիսակատարութեանց միջոցին սաֆոփոնը չէր գործածւում: Ի՞նչ պիտի անէի ես երգչախմբում:

Կացութիւնը չուտով պարզուեց: Այդ օրը, ծիսակատարութեան ամբողջ տեւողութեան ընթացքին, դպիրներից մէկը պէտք էր բարձր բռնէր 16 դրուանքանոց արծաթէ մի խաչ: Կոմիտասը գտել էր, որ ես եմ արժանի այդ պատուին: Ուրիշ խօսքով՝ իմ երաժշտական դերը վատաօրէն սահմանափակւում էր բեռնակրութեամբ: Գրեթէ Գայիանէի երգչախմբի անդամութեան հաւասար մի պաշտօն:

Բարեբախտաբար, միայն ես չէի, որ կոմիտասի օյիններին էի արժանանում: Յաճախ նա նման խաղեր էր անում եւ Լեւոն Բարխուդարեանի դլխին, որ նոյնպէս ըտղաճան էր, թէեւ ոչ ինձ չափ: Բայց ամենից շատ կոմիտասի կատակների առարկայ էր դառնում մեր ընկերներից Զանձրոյէի Մարտիրոսը, մեծապանդուխտ մի ոգայ, որ բոլորովին զուրկ էր լսողութիւնից, բայց յամառ կեցուածք չու-

ARAM webaram.com

թակի դաս էր առնում, առանց մէկ հատիկ եղանակ ուղիղ նուագել կարողանալու:

Ճեմարանը օրինակելի ուսուցչական կազմ ունէր: Ոմանց մենք առանձնապէս յարգում էինք, ինչպէս, օրինակ, Կարապետ վարդ. Տէր-Մկրտիչեանը իր բարձր զարգացման եւ աշակերտներին ներշնչած բարոյական հմայքի պատճառով: Կամ Սիրական Տիգրանեանն ու Յակոբ Մանանդեանը, որոնք երկուսն էլ — մտերիմ ընկերներ — լրջութեան մարմնացում էին: Ոմանց էլ սիրում էինք, ինչպէս Մանուկ Աբեղեանը, որի խոժոռ մարմնի մէջ զարմանալի քնքոյշ սիրտ էր բաբախում: Կամ Յովհաննէս Յովհաննիսեանը, որի մեր չսիրած ռուսերէնի դասերը բանաստեղծական ներշնչումների պահեր էին: Կոմիտասին մենք ե՛ւ յարգում էինք, ե՛ւ սիրում: Եւ մի քիչ էլ աւելի: Նրա դասերին սպասում էինք անհամբեր: Բայց դասարանից դուրս էլ, իրրեւ դաստիարակ, նա մտերիմ կապերով կապուած էր մեզ հետ: Ուսուցչից աւելի աւագ ընկեր էր մեզ համար: Մեր դասարանը համերաշխ մի ընտանիք էր, եւ Կոմիտասը ընտանիքի ղեկավարը: Նա ուշադրութեամբ հետեւում էր մեր աշխատանքներին, մեր վարք ու բարքին: Եւ ամէն անգամ, որ մէկը նեղութեան էր մատնւում, վրայ էր հասնում, իրրեւ փրկարար հրեշտակ:

Այսպէս, հինգերորդ դասարանում պատահեց մի անմեղ դէպք, որ եթէ Կոմիտասը չլինէր, մեզանից մի քանիսի համար պիտի վերջանար ողբերգութեամբ:

Ինչ որ ոճի առթիւ մի խումբ աշակերտներ գնացել էինք Երեւան, քաղաքը տեսնելու համար ախալքալաքցի վահրամ վարդապետեանը, դանճակեցի Սեթ Ասուածատուրեանը, երեւանցի Արշաւիր Տէր-Մկրտիչեանը, ես եւ մէկ-երկու ուրիշներ, որոնց անունը մոռացել եմ:

Սարդարի պալատում էինք, երբ մէջ տեղ բուսաւ Արշակ Ջամալեանը — այն ժամանակ Իսահակեան — որ մեզանից երկու դասարան բարձր էր: «Բա՛հ, դուք այստե՛ղ», բացագանչեց նա եւ առաջարկեց դիշերը միասին մի լաւ էֆփ անել: Արշաւիր Տէր-Մկրտիչեանը, որ էֆփերի սիրահար էր եւ Երեւանի ամէն ծակ ու ծուկին ծանօթ, խնդրեց յանձն առաւ կազմակերպել էֆփը:

Գիշերը, Ղանթարի տակը, Թուրքի քարվանսարայի վերին յարկի մի սենեակում փառաւոր խրախճանք ունեցանք: Խորոված, դինի, չոր միրգ, երգ ու պար եւ անվերջ ճառեր Արշակի առաջնորդութեամբ: Արշակը դոց արտասանութիւններ էր անում Հոմերոսից ու Շեքսպիրից: Սեթը դինով փորձում էր ճառել, բայց նրան թոյլ

ARAM webaram.com

չէին տալիս։ Վահրամը անվերջ կրկնում էր Համլէթի օրինակով.

Լինե՞լ, թէ չլինել — Սեթի պէս անշնորհիճ ճառախօս չլինել։ Իսկ Արշաւիրը, մեղրոտ աչքերով, թուրքերէն բայաթիներ էր հնչեցնում։

Անմեղ պատանեկան ժամանց։ Ճաշորդ երեկոյ, երբ վերադարձանք ճեմարան, ամէնքը տարօրինակ աչքերով էին նայում մեզ։ Շուտով վրայ հասաւ մեր Արդոսը — աւագ վերակացու Գէորգ Ղազարեանը. «Ո՞ւր էիք, ի՞նչ էիք անում, չէ՞ք ամաչում. ճեմարանի անունը խայտառակեցիք»...

Պարզուեց, որ մեզանից առաջ մեր էէֆի լուրը հասել էր ճեմարան այլանդակուած ձեւերով։ Իբր թէ մենք անվայել բաներ էինք արել. մեր էէֆին մասնակցել էին եւ օրիորդներ. ոստիկանութեան ականջին էին հասել մեր խայտառակութիւնները...

Տեսուչ կարապետ Կոստանեանը, որին մենք Մեծ իվկուիզիտոր անունն էինք տուել, զայրացած՝ կարգադրել էր խուզարկել մեր դպրոցները եւ արգելուած բաներ գտնել։ Արշակի դպրոցից գտնուել էր նրա խմբագրած «Նաւակ» աշակերտական թերթը։ Իմ դպրոցից տարել էին մեր դասարանի «Աշակերտական Սիրտ» պաշտօնաթերթը, որի խմբագիրն էի ես։ Երկու թերթերում էլ Կոստանեանի հասցէին ոչ հաճելի բաներ էին գտնուել։ Նշանակուած էր յատուկ քննութիւն եւ մանկավարժական ժողով՝ մեզ դատելու համար։

Նախ քան ժողովը, սակայն, պարտաւոր էինք հաշիւ տալ մեր դաստիարակին։ Կոմիտասը սեւ ամպի պէս մռայլ էր։ Երբեք նրան այդպէս լուրջ չէինք տեսել։ Պատմեցինք ամէն ինչ ամենայն անկեղծութեամբ։

— Ախ, խո՞սք, հարցրեց նա։

— Այո, Հայր սուրբ, ախ, խօսք։ Անմեղ էէֆ էր. սուտ են տարածուած լուրերը։

— Շատ բարի, հապա թերթը՞։

Թերթի մասին ի՞նչ կարելի էր ասել. թերթը թերթ էր։ Ես իմ վրայ առի ամբողջ պատասխանատուութիւնը։

Կոմիտասը կարծես գոհ մնաց մեր պատասխաններից, բայց հարցաքննութիւնը չարունակուեց մի քանի օր։ Կոստանեանը չէր հաւատում մեր խօսքերին եւ թւում էր, թէ ուզում էր անպատճառ պատժել մեզ։

Մանկավարժական ժողովը տեւեց մի քանի ժամ։ Մենք սրտատրոփ սպասում էինք ժողովի որոշման, որ կարող էր մահաւճիռ լինել մեզանից ոմանց համար։

ARAM webaram.com

Ի՞նչ էր պատահել ժողովում։ Շաբաթներ վերջը միայն իմացանք, որ բուռն վէճ էր տեղի ունեցել։ Կոստանեանը պահանջել էր որ երեք հոգի — Արշակ Ջամալեան, Աբշաւիր Տէր-Մկրտիչեան եւ ես — արձակուեն ճեմարանից։ Աբեղեանը, Մանանդեանը, բայց մանաւանդ Կոմիտասը բուռն կերպով ընդդիմացել էին։ Կոմիտասը նոյն իսկ սպառնացել էր հրաժարուել ուսուցչութիւնից, եթէ մեզ հեռացնէին ճեմարանից։ Կոստանեանը դիջել էր։

Յաջորդ օր, առանձին-առանձին ներկայացանք մանկավարժական ժողովին, լսելու մեր դատավճիռը — խիստ յանդիմանութիւն եւ նախազգուշացում, որ կրկնութեան պարագային մեզ պիտի վտարէին ճեմարանից։ Արշակը եւ ես երկու անգամ կանչուեցինք ժողովին — մէկ երեւանի էֆի համար, մէկ էլ որպէս խմբապիր արգելուած թերթերի։ Կոմիտասին էինք պարտական մեր փրկութիւնը։

Բայց միշտ այդպէս բարի ու ներողամիտ չէր Կոմիտասը եւ պատժել էլ դիտէր ցաւումով։ Վերը յիշուած Վահրամ Վարդապետեանը եւ մեր դասարանցիներից մէկ ուրիշը՝ Համբարձում Տէր-Մինասեանը, կրօնական մի վէճի ժամանակ, չտպաւորուելիք անպատշաճ խօսքեր էին ասել Յիսուսի մասին, որ նա Աստուած չէր, այլ մեզ նման մի մարդ։ Լուրը հասել էր Կոմիտասի ականջին, որ, իրրեւ դաստիարակ, սրտին չատ մօտ ընդունել այդ միջադէպը։ Քննութիւն նշանակուեց, ու նաեւ Կոմիտասի պահանջով երկուսն էլ արտաքսուեցին ճեմարանից։ Խիստ էր պատիժը. Վահրամն ու Համբարձումը լաւ ընկերներ էին, մեզ մեծ ցաւ պատճառեց նրանց վտարումը, բայց Կոմիտասը մինչեւ վերջ մնաց աններող։ Էջմիածնի միաբաններից այդ երեւութապէս ամենէն աչխարհիկը մոլեռանդ կրօնասէր էր, անհանդուրժող լինելու աստիճան։

Որպէս մարդ, Կոմիտասը չեշտուած անհատականութիւն էր ուժեղ նկարագրով եւ խորունկ, հաստատուն համոզումներով։ Ընդունակ արագ եւ կարուկ որոշումների։ Հոգիով բանաստեղծ. երբեմն ոտանաւորներ էլ էր գրում եւ ինքը ծիծաղում իր գրածի վրայ։ Երաժշտական մասնագիտութիւնից դուրս, նա մտաւոր չատ լայն պաշար չունէր, բայց լաւ ծանօթ էր հայ մատենագրութեան եւ բանահիւսութեան։ Հայ մարդ էր մինչեւ ուղն ու ծուծը։ Աստղապաշտ։ Խստակրօն։ Եւ արտասովոր կերպով խստակեաց։

Ամիսը մի քանի անգամ մենք հրաւիրում էինք Կոմիտասի մօտ մի բաժակ թէյի։ Եւ առ հասարակ, նրա դուռը, ինչպէս եւ սիրտը, բաց էր մեր առջեւ։

ARAM webaram.com

Ապրում էր Կոմիտասը վանքի նեղսի բակում, միաբաններին նոր հանրակացարանի կողքին, մի հին խցում, որի առջևը կար մի փոքրիկ պարտէզ: Բնակարանը՝ երկու սենեակներով եւ մի փոքրիկ խոհանոցով՝ անհրապոյր երեւալու աստիճան պարզ էր: Մի սենեակում, որ եւ ընդունարանն էր, մի մեծ սեղան էր դրուած, հաստաբակ աթոռներ, գրադարան եւ հին ձեւի մի փիլհարմոնիա, ով գիտէ ումից ժառանգութիւն մնացած: Մինչեւ վերջին տարիները զաշնամուր չունէր եւ տառապում էր դրանից: Օգտւում էր Ճեմարանի զաշնամուրից:

Ննջասենեակը — միայն Կոմիտասը կարող էր քնել նման սենեակում: Պարզ փայտից մի հաստաբակ թախտ, իրրեւ անկողին. վրան փռուած էր մի սաւան: Մի կոչտ բարձ եւ վերմակի տեղ բարակ բրդէ մի ծածկոց: Վառարան չունէր: Ամառ–ձմեռ այս էր Կոմիտասի մահիճը:

Տաք եղանակին թէյը, սովորաբար, խմում էինք պարտիզում: Ինչքան զուրգուրանք ու հոգածութիւն էր դնում նա այդ մի քանի թիզ հողի վրայ մի քանի ծառերով ու ծաղիկներով: Ինքն էր մշակում հողը եւ հպարտութեամբ հիւրասիրում իր պարտէզի պտուղներով ու ծաղիկներով: Թէյն էլ իր ձեռքով էր պատրաստում: Սիրում էր համեղ թէյը մուրաբայով եւ երջանիկ ծիծաղում էր, երբ հիւրերը գովում էին նրա պատրաստած թէյը կամ քաղցրաւենին:

Երբեմն նստում էր փիլհարմոնիայի առջեւ, հայեացքը ուղղում նուագարանի վերեւ, պատին կախուած խունացած «ծաղկեփնջին» եւ սկսում նուագել ու երգել: Ճաճախ էին պատահում այդպիսի պահեր: Նա բոլորովին վերանում, կարծես կտրւում էր հողից եւ սաւառնում մթնոլորտի մէջ: Հիանալի, յստակ ու ոլորուն ձայն ունէր եւ մոգական թովչութեամբ տիրապետում էր ձայնին: Հոգեւոր եղանակների մէջ անմրցելի էր: Կարելի էր ժամերով լսել նրան ու չյագենալ:

Ամենաոգեւորուած վայրկեանին, մէկ էլ, յանկարծ, կտրում էր եւ... սկսում էր զուարթ ժողովրդական մի երգ: Ու վերջն էլ — քահ–քահ — վերջացնում էր ծիծաղով: Թռչում տեղից ու

— Քերթեմէլէ, մօտեցնում էր բռունցքը մեզանից մէկին ու մէկի քթին:

Մանկական մի դիմ կար նրա բնաւորութեան մէջ: Խորագէտ էր, բայց եւ միամիտ ու դիւրահաւատ:

Ճիշտ եմ, իմ առաջին տարին, էջմիածին այցելեց պարսից

ARAM webaram.com

Մուզաֆէր էդդին շահը։ Վանքը փառաւոր ընդունելութիւն սարքեց նրան։

Կոմիտասը շահին նուիրուած յատուկ երգ էր յօրինել, որի պարակերէն խօսքերը, կարծեմ, Աճառեանն էր դրել. դէթ այդպէս էին խօսում։ Կոմիտասը համոզուած էր, թէ պիտի արժանանայ շահի ուշադրութեան եւ նոյնիսկ յոյս ունէր Առիծի եւ Արեւի չքանչան առանալ։

Շահը, ամպհովանիի տակ, հանդիսաւոր կերպով անցաւ ճեմարանի բակից դէպի վանք։ Աշակերտները եւ խոնուած բազմութիւնը «կեցցէ» էին կանչում անվերջ։ Ճեմարանի առջեւ երգչախումբը, Կոմիտասի առաջնորդութեամբ, սկսեց երգել շահին ձօնուած երգը, որի ամէն տուն վերջանում էր «Հէյ, Շահ» բացագանչութեամբ։ Մուզաֆէր էդդինը կեցաւ մինչեւ երգի վերջանալը, ուշադրութեամբ լսեց, ժպտաց եւ անցաւ։ Առիծն ու Արեւն էլ անցան-գնացին նրա հետ։ Կոմիտասը երկար սպասեց։ Վերջապէս, Թիֆլիսի պարսից հիւպատոսից ստացուեց պարզ չնորհակալութեան մի գիր... Կոմիտասը անկեղծօրէն վրդովուած էր.

— Վա՛յ, մաքդամազ, վայ, էս էլ քեզ շահ...

Մի ուրիշ անգամ, Թուսաստանից մեծահարուստ մէկը եկել էր էջմիածին. հիացած քառաձայն պատարագից՝ նա այցելեց Կոմիտասին։ Մեր դասարանցիներից մի քանի հոգի ներկայ էինք այդ տեսակցութեան։

Ազամանդէ մատանիներ մատներին, ժամացոյցի ոսկի հաստ շղթայ պատկառելի փորի վրայ՝ պարոնը իր հիացումը յայտնեց Կոմիտասին նրա բազմաձայն պատարագի համար։ Կոմիտասը չոյուած էր զգում իրեն։

Այցելուն հետաքրքրուած դիտեց սենեակը եւ մէկ էլ, հայեացքը ուղղելով Փիլհարմոնիային, հարցրեց.

— Հապա ո՞ւր է ձեր դաշնամուրը։

Ցայտնի եղաւ, որ Կոմիտասը դաշնամուր չունի։ Պէտք էր տեսնել պարոնի զարմանքը։

— Դուք դաշնամուր չունէ՞ք։ Կարելի՞ բան է։ Այս օրուանից հաչուեցէք, թէ դուք ունէք դաշնամուր։ Ես խօսք եմ տալիս մի լաւ դաշնամուր ուղարկել ձեզ։

Կոմիտասի դէմքը ճառագայթում էր։ «Չէ, ի՞նչ պէտք կայ, չնորհակալ եմ», բայց ժպտուն աչքերը հակառակն էին ասում։

Այնուհետեւ պարոնը հարցրեց, թէ ի՞նչ տեսակ դաշնամուր կը նախընտրէր Կոմիտասը — ռուսակա՞ն, թէ գերմանական։ Ի հար-

ARAM webaram.com

կէ, գերմանականը նախընտրելի էր: Պարզուեց, որ պարոնը դաշնամուրի տեսակներից էլ հասկացողութիւն ունէր: Եւ մի անգամ էլ հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ չուտով վարդապետը կ'ունենայ սեփական դաշնամուր: Պարոնը նոյն իսկ որոշեց, թէ սենեակի որ մասում լաւ կը լինէր դնել դաշնամուրը:

Մի քանի ժամ կոմիտասը հիւրասիրեց այցելուին: Երգեց նրա համար: Նուագեց փիլհարմոնիա: Մուրաթայով թէյ հրամցրեց:

Վեհանձն պարոնը ջերմ խօսքերով հրաժեշտ տուեց: Գնաց, եւ իրար հետից անցան ամիսներ ու ամիսներ, բայց դաշնամուրը չբատացուեց: Ու երբէք էլ չեկաւ:

Այնուհետեւ, նման ուրիշ դէպքեր էլ պատահեցին, բայց կոմիտասը այլեւս հաւատ չէր ընծայում: Տարիներ վերջը միայն կոմիտասը մի թանկագին դաշնամուր ստացաւ նուէր՝ Մանթաշեանից: Մինչ այդ, նա գոհացաւ միայն իր նահապետական փիլհարմոնիայով: Եւ գրեթէ ամէն կէսօրից յետոյ, փակւում էր ձեմարանի հանդիսարանում, ուր մի քանի ժամ, դաշնամուրի առջեւ, նուագում ու երգում էր: Դաշնամուրը զրուած էր այնպէս, որ առջեւի մեծ պատուհանից երեւում էր Մասիսը...

Հայ լերան այդ փառաւոր տեսարանը կարծես աւելի էր բորբոքում կոմիտասի երեւակայութիւնը, եւ երկար հնչում էին նրա հոգեզմայլ եղանակները:

Վերջը իջնում էր ձեմարանի բակը եւ մանկական խանդավառութեամբ նետւում խաղերի մէջ, աշակերտների հետ:

Կոմիտասը շատ էր սիրում խաղ եւ զբօսանք: Շաբաթ չէր անցնում, որ նա, իբրեւ մեր դասարանի դասախարակը, պտոյտի չտանէր մեզ, վանքից դուրս այգիները, կամ նշանաւոր վայրերը, երբեմն էլ աննպատակ դէպի դաշտ այս կամ այն ուղղութեամբ, կամ Ներսիսեան անտառը: Զբօսանքը միեւնոյն ժամանակ եւ դաս էր մեզ համար: Միշտ առիթ էինք գտնում նրանից օրեւէ բան սովորելու: կամ կատակներով ու ծիծաղով անհոգ ժամանակ անցնելու:

Մտքիս մէջ մնացել են մասնաւորապէս մի քանի պտոյտներ կոմիտասի հետ:

Այսպէս, Խաչիկ վարդ. Գատեանը նոր էր ձեռնարկել Զուարթնոցի պեղումների աշխատանքներին: Մի օր էլ լուր տարածուեց, թէ Խաչիկ վարդապետը Զուարթնոցի մի սեան տակից երեւան է բերել... Գրիգոր Լուսաւորչի մասունքը: Վանքում ահագին իրարանցում սկսուեց այդ առթիւ. հին միաբանները երկիւղածութեամբ պատրաստւում էին գոհաբանական մաղթանք կատարել Զուարթնո-

ARAM webaram.com

ցում: Գերմանական ուսում առած վարդապետները վրդովուած էին Խաչիկ վարդապետի սրբապիղծ արարքի համար: Ուխտաւորներ էին հաւաքւում նորագիւտ նշխարներին երկրպագելու:

Ու մի օր կոմիտասը մեզ էլ տարաւ Զուարթնոց: Նա էլ կամաճամիտներից էր, հեգնում էր հաւատացողների միամտութիւնը. լաւ խօսք չունէր և՛ Խաչիկ վարդապետի հասցէին: Եւ իսկապէս, Խաչիկ վարդապետի արածը չարաչահութիւն էր. նա ոչ մի մասունք չէր գտել, ի հարկէ, բայց մասունքը չահարեր աղբիւր էր նրա համար: Ճիշտ այն սեան մօտ, որի տակից, իբր թէ, գտնուել էին նշխարները, նա դրել էր մի աւետարան եւ մի դուրանի: Գիւղերից եկող հայ եւ մահմեդական ուխտաւորները երկիւղածութեամբ դիտում էին մեռաքսէ թաշկինակի մէջ փաթաթուած «նշխարները», քան դաւանանքի համբուրում էին աւետարանը կամ դուրանը եւ դրամ տալիս Խաչիկ վարդապետին: Այս վերջինը, որ նախկին ոստիկանապետ էր եւ գիտէր բռնել ժողովրդի թոյլ դամարը, հայերի համար հայերէն, իսկ մահմեդականների համար թուրքերէն պատմութիւններ էր անում նշխարների հրաշագործման մասին: Պէտք է ասել, որ Հայրիկն էլ գնաց նշխարները տեսնելու, եւ այդ այցելութիւնից յետոյ, Խաչիկ վարդապետը այլ եւս չհամարձակուեց իր դիւրը չահագործելու:

Հետաքրքրական մարդ էր այդ դարաբաղցի վարդապետը: Նա սեփական չանքերով երեւան հանեց Զուարթնոցի հողով ծածկուած աւերակները եւ հնարաւորութիւն տուեց Թորամանեանին վերականգնելու հայ ճարտարապետութեան այդ գոհարի իսկական պատկերը: Զուարթնոցը դարձաւ նաեւ Խաչիկ վարդապետի համար հասոյթի աղբիւր: Նրա չուրջը տնկեց ծառեր եւ աւերակները վերածեց մի տեսակ անձնական պարտէզի, ուր պարում էին ինքը եւ պզտիկանները: Վանքի սեփականութիւն դարձրեց նաեւ չրջակայ հողերը եւ հարեւան գիւղացիներից տուրք էր պահանջում նրանց տաւարը արածացնելու համար. խոշոր անասուններից 20 կոպէկ ամսական, ոչխարներից 5 կոպեկ, իսկ էշերը՝ ձրի:

— Հայր տուրը, էշի համար ինչու փող չես վերցնում, հարցնում էինք մենք:

— Ինչ մատաղ, ես իմ հայրենակիցների՞ց էլ փող առնեմ, պատասխանում էր նա խնդալով:

Կոմիտասի հետ մանրակրկիտ դիտեցինք Զուարթնոցի աւերակները: Դեռ այդ ժամանակ յայտնի չէր, թէ ինչ հրաշալիք է եղել Ներսէս Կաթողիկոսի այդ ձեռակերտը, բայց քարերը իրենց նուրբ քանդակներով հիացում էին պատճառում: Մանաւանդ, դեղեցիկ էին

ARAM webaram.com

այժմ այլեւս ամէնքի ծանօթ արձիւը, խաղողի ողկոյզները; նուռերը — հայ ճարտարապետութեան աննման գանձերը:

Հողի տակից հանուել էր մարմարեայ մի տախտակ, որի վրայ յունարէն գրուած էր Ներսէս Շինեց: Խաչիկ վարդապետը թարգմանում էր.— Ներսէսը շինեց, խաչիկը վերաշինեց: Կոմիտասը քահանայի ծիծաղում էր:

Կոմիտասը շատ չէր սիրում Խաչիկ վարդ.ի «օյինբազութիւնները», բայց դնահատում էր նրա գործը եւ հաճոյքով խօսում էր այդ լեզուանի վարդապետի հետ:

Խաչիկ վարդ.ի խնդրանօք մի քանի երգ էլ երգեցինք եւ գուարթ տրամադրութեամբ վերադարձանք Ճեմարան:

Մի ուրիշ անգամ, կիրակի առաւօտ կանուխ, Կոմիտասը մեզ տարաւ Օշական՝ ուխտի Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին: Բաւական տաբածութիւն տաքով անցանք Արարատեան քարքարոտ դաշտով:

Հիանալի է Արարատեան դաշտը, մանաւանդ, վաղ առաւօտեան, երբ արեւը նոր է սկսում ծագել: Նօսր մշուշի միջից մի կողմ կանգնած է վիթխարի Մասիսը, իր կողքին փոքր ընկերը: Զարմանալի է Հայոց Աշխարհի այդ սրբազան սարը, որի նմանը եւ ոչ մի տեղ չեմ տեսել: Խարիսխն ու բարձունքը այնքան համաչափ ու նրբադաշնակ: Վեհ կեցուածք, ձիւնապատ գագաթ, յաճախ ամպերի շուրջառով պարուրուած: Գերբնական խորհրդաւորութիւն կայ այդ փառաւոր պատկերի մէջ: Մէկ անգամ տեսնելուց յետոյ, երբեք կարելի չէ մոռանալ Հայոց Աշխարհի Նահապետը:

Միւս կողմը քառապատիր ու մշտազուարթ Արագածը: Հայ գիւղացուն հաց ու երջանկութիւն պարգեւող ջրառատ ու ծաղկազարդ լեռը: Զուր չէ, որ նրա գագաթին է կախուած Լուսաւորչի կանթեղը, որի հովանու ներքեւ դարեր ու դարեր ապրել է Հայոց Աշխարհը:

Անդին Արայի լեռը: Միւս կողմը ազատատ Կողբի սարը: Արարատեան դաշտը երեք կողմերից պատնէշուած է հայոց լեռներով եւ մի կողմից, դէպի արեւելք, նեղ անցքով, հորիզոնը մխաառնում է Շարուրի դաշտի հետ: Այդ կողմ էր ուղղում իմ հայեացքը ամէն անգամ, երբ վիթխարի լեռները սկսում էին ճնշել Ամրմատեան դաշտերին վարժ իմ հոգին...:

Թեթեւ քայլերով կարեցինք դաշտի ճամբան, անցանք փրփրուն Քասախի հնամեայ կամուրջը, այդիների միջով մագլցեցինք վեր եւ ծնրադրեցինք Սուրբ Մեսրոպի գերեզմանի առջեւ: Կոմիտասը վերացած լաւ ոգեւորում էր ծունկի եկած: Այն ժամանակ մենք դեռ չէինք

ARAM webaram.com

հասկանում, որ մի Սուրբ Մեսրոպ էլ ինքը պիտի լինէր նոր ժամանակների համար:

Ապա խմբով մասնակցեցինք պատարագի արարողութեան եւ գիւղի քահանայի ճաշը վայելելուց յետոյ, նոյն աշխոյժով, երգով ու խաղով վերադարձանք էջմիածին:

Առիթից օգտուելով, կոմիտասի խնդրանօք, քահանան հաւաքեց գիւղի նշանաւոր երգասացներին եւ կոմիտասը իր «փօ, է, վէ»-ով ձայնագրեց մի շարք ժողովրդական երգեր:

Սա նրա թոյլ կողմն էր, ինչպէս ասում էր Մանուկ Աբեղեանը: Անկարելի էր, որ նա մի տեղ գնար եւ ժողովրդական երգեր չհաւաքէր: Ապա այդ երգերը մշակում էր, անվերջ սրբագրում, փոփոխում, տասը անգամ երգում էր սրան ու նրան, մինչեւ որ կատարելութեան էր հասցնում:

Մանուկ Աբեղեանը օգնում էր նրան քառեակները հայացնելու: Նրանք միասին հաւաքել էին հազարաւոր քառեակներ, որոնցից մէկ թէ երկու պրակ հրատարակեցին միասին, «Հազար ու մի Խազ» անունով: Կոմիտասը մաքրում էր քառեակները տգեղ կամ օտար բառերից եւ նոր ձեւ էր տալիս:

Այսպէս, ժողովուրդը երգում էր.

Ինծիվէր եարը, դարդիմաճ եարը

Կոմիտաս զարմրեց.

Իմ չինար եարը, գովակաճ եարը

Ժողովուրդը երգում էր.

Մնացիր, մնացիր, սալդատ գնացիր

Ըստ Կոմիտասի.

Մնացիր, մնացիր, գինուոր գնացիր:

կամ՝

Սօնա դիլբար, Սօնա եար

Ըստ Կոմիտասի.

Սօնա սիրուն, Սօնա եար,

Ժողովուրդը երգում էր.

Էս եաւը պոպոֆ, էն եաւը պոպոֆ,

Իմ եարը եկաւ հագին էր սապոգ

Պոպոֆ նշանակում է ընկոյզ Արարատեան բարբառով:

Սապոգ՝ կօշիկ ռուսերէն: Կոմիտասը շատ աշխատեց պոպոֆին նոյնայանգ բառ գտնել հայերէն եւ չգտաւ:

Կոմիտասը արտասովոր երաժշտական հոտառութեան տէր մարդ էր, բայց ստեղծագործող չէր: Փորձում էր ինքնուրոյն ստեղ-

ARAM webaram.com

ծագրծութիւն էլ տալ եւ սակայն միշտ էլ անյաջող։ Ճիշտ եմ՝ նա երկար աշխատեց Թումանեանի «Անուշ»ի վրայ։ Դեռ Արմէն Տիգրանեանից չատ առաջ ուզում էր օպերայի վերածել։ Նոյն իսկ մի քանի տեսարաններ յօրինել էր, որոնք մեր ձեմարանի հանդէսներում ներկայացուեցին, բայց յաջողութիւն չգտան։

Մեծ յաջողութիւն չունեցան եւ Ց. Պարոնեանի երկերից յօրինած զուտ երաժշտական երաժշտախաղերը։ Այսպէս, Կոմիտասը երկար աշխատեց պատրաստելու «Քաղաքավարութեան վնասները»ից մի օպերէտ։ Ամիսներով փորձեր տեղի ունեցան։ Ներկայացման օրը ճեմարանի սրահը լեցուած էր բերնէ-բերան։ Հիւրեր էին եկել նոյն իսկ Երեւանից։ Խաղը, ինչպէս ասում են, անցաւ աչխոյժ, բայց ոչ մէկ տպաւորութիւն չգործեց հասարակութեան վրայ։ Ամբողջ խաղից մի փոքրիկ եղանակ միայն մնացել է իմ յիշողութեան մէջ — պոնժուր ըսէ տիկինին...

Աշակերտները ցատկրտում եւ երգում էին.

— Պոնժուր ըսէ տիկինին...

Ի վերջոյ, կարծեմ Կոմիտասը ինքն էլ համոզուեց, որ երաժըշտական ստեղծագործութիւնը իր ասպարէզը չէ։ Միւս կողմից, այն էլ պէտք է ասել, որ Կոմիտասը սովորական իմաստով մշակող, դաշնաւորող կամ բանահիւսող էլ չէր։ Նրա վերամշակած եղանակներից չատերը իրենց մէջ պարունակում են եւ ստեղծագործական տարր, ինչպէս ժողովրդական երգերը կամ եկեղեցական եղանակները. «Սուրբ Սուրբ»ը, օրինակ, կամ «Հաւիկ»ը, «Տիրամայրը» կամ «Հորովել»ը, «Անտունի»ն, «Մոկաց Միրզէ»ն, «Սիփանայ ֆաջեր»ը, վերջինը Մանուկ Աբեղեանի բանաստեղծութեամբ։

Կոմիտասի գլխաւոր գործը, անշուշտ, եղաւ հայ երաժշտութեան վերածնունդը։ Զինուած ժամանակակից գիտութեան լաւագոյն զէնքերով, ինքն եւս հոգիով ու մտքով արտակարգ արուեստագէտ, Կոմիտասը յայտնագործեց դարերի ընթացքին կորստեան մատնուած կամ խաթարուած հայկական երաժշտութիւնը, մաքրեց օտարամուտ տարրերից, իր հանճարով վերականգնեց նրա իսկական դէմքը, ժողովրդականացրեց հայութեան մէջ եւ օտարների աչքին եւ ստեղծեց զուտ հայկական ազգային երաժշտական մշակոյթ։ Ինչ որ Սուրբ Մեսրոպը եւ իր աշակերտները կատարեցին հինգերորդ դարում ընդհանրապէս հայկական մշակոյթի վերաբերմամբ, քսաներորդ դարում Կոմիտասը մենակ կատարեց հայ երաժշտութեան համար։ Եւ այդ պատճառով, չափազանցութիւն չի լինի, եթէ Կոմիտասին էլ դասենք հայ ժողովրդի մեծ լուսաւորիչների չարքին։ Ժամանակակիցները

ARAM webaram.com

նրան չհասկացան, բաւարար չափով չդնահատեցին նրա գործի մեծութիւնը: Հանճարներից չաւելի ճակատագիրն է այդ, ասա՛ղ: Կոմիտասն էլ ցմրուր խմեց այդ ճակատագրի դառնութեան բաժակից...:

III.— ՏԱՏԱՍԿՈՏ ՃԱՄԲԱՆ

Այո՛, դառնութեան բաժակը: Կոմիտասը երջանիկ չեղաւ էջմիածնում: Այդ կենսուրախ, զուարթ, կատակող ու խնդացող մարդը, տարիների ընթացքում հետզհետէ լրջացաւ ու ինքնամփոփուեց, եւ երբ ես ձեմարանից հեռացայ 1906ին, այլ եւս բոլորովին տարբեր մարդ էր նա, քան իմ տեսած առաջին տարիների Կոմիտասը: Վանքը, այդ մեծադոյն բամբասարանը եւ խարդաւանանքների բոյնը, Կոմիտասին էլ ընկճեց յուսահատութեան մատնելու աստիճան: Տատասկոտ ճամբայ անցաւ ու զարհուրելի վախճան ունեցաւ նա:

Ես հաւատացեալ ընտանիքի զաւակ էի: Առաւօտ ու երեկոյ աղօթել, կիրակի ու տօն օրերին եկեղեցի երթալ, պատ պահել սովորական բաներ էին մեզ համար: Այդ դպացումներով էլ գնացել էի ձեմարան, բայց մի քանի ամսուայ կեանքը էջմիածնում բաւական եղաւ, որպէսզի կրօն ու հաւատ հիմքից խախտուէին մէջս: Վանքում եւ տեսայ ժխտումը բոլոր այն սրբութիւնների, որոնցմով համակուած էր իմ պատանեկան հոգին: Էջմիածնի մխաբանների մեծ մասը չատ հեռու էր այն մտաւորականերից, որ ես կազմել էի հեռուից:

Սկզբի շրջանում, ի հարկէ, արտաքին երեւոյթներն էին միայն ազդում իմ մտքի վրայ, հասարակ ու սովորական բաներ կեանքում: Օրինակ, վանքի լուսարարապետ Ղեւոնդ Եպիսկոպոսը իր հետ եկեղեցի էր բերում նաեւ իր.... կատուն: Ծալապատիկ նստած խորհում, մօրուքը չոյելով, նա վայելում էր իր չորքոտանի սիրելուն: Է՛, ի՞նչ կայ որ, կատու է, էլի էշ չէ, բայց այդ մի փոքրիկ փաստը իմ վրայ ցնցող տպաւորութիւն գործեց. կատո՛ւ Մայր Տաճարում, ժամասացութեան մէջտեղին...:

Ծերութիւնից երկտակ եղած Եղիա վարդապետը, ամէն անգամ որ մենք՝ աշակերտներս խմբով եկեղեցի էինք գնում, առելութեամբ նայում էր մեզ եւ մեր յետեւից նզովքի խօսքեր հառնում. «անհաւատներ», «աստանայի զաւակներ»... բայց Ղեւոնդ Եպիսկոպոսի կատուն եկեղեցում չէր տեսնում:

... Մխաբանները դրսից սուրբ էին ձեւանում, բայց իրենց խցե-

ARAM webaram.com

բում, իմ հասկացողութեամբ, խայտառակ բաներ էին անում — սրան չէին պահում, սրա ու նրա միան էին ծամում, իրար հետ կռւում էին, վաղարշապատից կասկածելի հիւրեր էին ընդունում...

Մեծ տօներին միաբաններն ու ճեմարանցիները միասին էին ճաշում վանքի սեղանատունը: Եւ մենք տեսնում էինք, թէ վարդապետներից ոմանք ինչպիսի որկրամոլութիւն էին ցոյց տալիս, ոմանք էլ հարբում էին եւ սկսում ճոռոմաբանել.....

Ներսիսեան լճի եզերքը տեսակցութեան վայր էր երիտասարդ միաբանների եւ վաղարշապատի օրիորդների եւ տիկինների համար ի դայթակղութիւն ճեմարանի աշակերտների:

Միաբանների նոր հանրակացարանի ճակատը, տպարանի դիմաց, վարդապետների եւ եպիսկոպոսների հաւաքավայրն էր: Ժամերով այդ տեղից ծիծաղ ու հռհռոց էր լսւում: Այդ վայրի անունը ճեմարանցիները դրել էին «ապպային բամբասարան»...:

Սրբութեան ոչ մէկ հետք իմ սուրբ կարծած էջմիածնում: Այս ամէնը, սակայն, ոչինչ բաներ էին, չուառով իմ աչքերի առջեւ բացուեց ներքին փառութիւնը — առեւտութիւնն ու թշնամանքը միաբանների միջեւ, որոնք բաժնուած էին երկու մասի՝ ապատամիաններ եւ պահպանողականներ կամ մշակականներ եւ նոր-դարականներ:

Իրօք, դաղափարական մեծ տարբերութիւններ չկային այդ երկու խմբակցութեանց պատկանողների եւ սրանց հետեւորդների միջեւ: Աւելի շուտ իշխանութեան եւ նախանձի հարց էր: Մանաւանդ, հները չէին հանդուրժում եւրոպական կրթութիւն ստացած նորերին, որոնց ազդեցութիւնը կոտրելու համար ներելի էր նկատւում ամէն միջոց:

Տարօրինակ էր այս երեւոյթի հանդէպ Կաթողիկոսի՝ Հայրիկի վերաբերումը: Նա քաշուած էր իր պատեանի մէջ եւ կարծես բընաւ չէր հետաքրքրւում միաբանների ներքին կեանքով: Գոնէ մենք դրսից չէինք նկատում նրա միջամտութիւնը: Իսկ նրա պատահական ակնարկներից այն տպաւորութիւնն էր ստացւում, որ նա շատ էլ քաջալերանքով չէր վերաբերւում դէպի արտասահմանում ուսած երիտասարդ միաբանները: Կարապետ վարդապետի հանդէպ, օրինակ, նա չէր ծածկում իր վերապահ դիրքը: Առանձին ջերմութիւն ցոյց չէր տալիս եւ՛ Կոմիտասի վերաբերմամբ: Մինչեւ վերջ էլ, օրինակ, նա պատսպարեց Կոմիտասին մի դաշնամուր ապահովելու, թէեւ այդ մասին նրան մէկից աւելի դիմումներ էին եղել: Կոմիտասի քառաձայն երգեցողութիւնն էլ կարծես նրա սրտովը չէր:

Մանօթ է Թարգմանչաց տօնի առթիւ ճեմարանի հանդիսում

ARAM webaram.com

Հայրիկի ցոյց տուած վերաբերումը, որ անսահման վիշտ պատճառեց Կոմիտասին:

Մի ուրիշ անգամ, երբ Կոմիտասը իր երգչախումբով պատրաստւում էր մեկնելու Թիֆլիս համերգներ տալու, վերջին պահին, Հայրիկը արգելք դրեց, թէեւ առաջուց համաձայնութիւն էր տուել: Պէտք էր տեսնել Կոմիտասի յուսահատութիւնը. արցունք էր գալիս նրա աչքերից: Թիֆլիսից հասած խնդրանքի վրայ, Հայրիկը, ի վերջոյ, վերացրեց արգելքը, բայց նրա այդ քայլը անջնջելի հետք թողեց Կոմիտասի սրտում:

Հայրիկի չրջապատը, առհասարակ, չէր համակրում Կոմիտասին, եւ վերջինս դիտէր այդ: Լուսարարապետ Ղեւոնդ Եպիսկոպոսը, օրինակ, որ Կոմիտասից առաջ դպրապետ էր եղել, տանել չէր կարողանում Կոմիտասի ներկայութիւնը տաճարում, որբապղծութիւն էր համարում քառաձայն երգեցողութիւնը եւ չէր քաչւում Կոմիտասի հասցէին անարդական խօսքեր ուղղելուց: Կոմիտասն էլ փոխադարձում էր — չալղըճի:

Մանաւորապէս վերջին տարիները, Կոմիտասը իրեն օտար էր զգում էջմիածնի միաբանութեան մէջ: Երեւութապէս դրեթէ բոլորի հետ էլ խօսում–խնդում էր, բայց իրեն հարազատ էր զգում միայն ձեմարանի մթնոլորտում, աշակերտութեան չրջանում եւ իրեն մտերիմ մի քանի վարդապետների հետ: Վանքում նրա դէմքը աւելի եւ աւելի մռայլ տեսք էր ընդունում:

Եւ, յիրաւի, վանքը այլեւս բանտ էր դարձել նրա համար: Նրա արուեստագէտի թեւերը ճախրել էին ուզում ազատ օդում. վանքի խեղդիչ մթնոլորտը կապանք էր դնում նրա թեւերի վրայ: Քանի զարգանում էր նրա միտքը, որքան հարստանում էր դիտական պաչարը, այնքան ուժեղանում էր նրա մէջ արտայայտուելու պահանջը: Եւ վանքը զլանում էր նրան այդ հնարաւորութիւնը:

Խռովքն ու ներքին անհանգստութիւնը Կոմիտասի մէջ առանձնապէս աստկացան, երբ նա Թիֆլիսի համերգներից յետոյ, յաղթական վերադարձաւ էջմիածին: Այդ համերգները աննկարագրելի խանդավառութիւն էին առաջ բերել հասարակութեան մէջ, մանաւանդ, հայ գեղջկական երգերը, որոնք նոր աչխարհ էին բացել: Թիֆլիսի հայութեան ցոյց տուած դուրդուրանքը ջերմացրել էր նրա սիրատենչ հոգին եւ միաժամանակ աւելի չեչտուած ձեւով ցոյց տուել այն վիհը, որ կար վանքի եւ դրսի աչխարհի միջեւ:

Վանքը այլեւս կորցրել էր իր հրապոյրը նրա աչքում:

Ճիչտ է, Կոմիտասը արուեստագէտ լինելուց առաջ իրեն զգում

ARAM webaram.com

էր Հայաստանեայց Եկեղեցու սպասաւոր: Նա հասատացեալ մարդ էր, եւ վեղարը նրա աչքում անարժէք բան չէր: Բայց բնութիւնն էլ դեր ունի մարդկային կեանքում: Թիֆլիսը զարթեցրեց նրա մէջ մարդը, արուեստագէտ մարդը: Հին աստուածները սկսեցին շարժուել նրա հոգում եւ իրենց պահանջը դնել:

Մենք, նրա աշակերտներս, չուտով նկատեցինք Թիֆլիսի առաջ բերած հոգեփոխութիւնը կոմիտասի մէջ: Նա այլեւս քիչ էր հետաքրքրւում վանական կեանքով: Աւելի ժամանակ էր տալիս երաժշտական նիւթերի մշակման: Այդ շրջանում էր, որ ես ամիսներով աշխատեցի նրա մօտ նիւթեր արտագրելով հին գրչագիրներից: Նա յատկապէս դլուխ էր յոդնեցնում երաժշտական հին խազերի առեղծուածի վրայ, որոնց բանալին մինչեւ վերջ էլ չկարողացաւ դտնել:

Միեւնոյն ժամանակ սկսեց ե՛ւ ինքնուրոյն կտորներ յօրինել: Այդ շրջանում էր, որ ձեմարանում բեմադրուեց Պարոնեանի «Քաղաքավարութեան վնասները»ից նրա կազմած օպերէտը: Խօսում էր ե՛ւ «Սասմայ Ծռերը» օպերայի վերածելու մասին: Ստ. Կանայեանը նոյն իսկ ձեռնարկել էր լիբրետոյի պատրաստութեան, որ, սակայն, ծրագրից անդին չանցաւ: Լրջօրէն ձեռնարկել էր «Անուշ» օպերայի հեղինակութեան, որ նոյնպէս մի քանի նախափորձերից այն կողմ չանցաւ:

Մենք այլեւս լսարանական ուսանողներ էինք, եւ կոմիտասի դասախրակի պաշտօնը վերջացել էր, բայց մեր մտերիմ յարաբերութիւնները չարունակւում էին: Նա մեր վրայ արդէն նայում էր իբրեւ մեծերի: Մենք էլ մեզ մեծ էինք դդում:

Հայ եկեղեցական կալուածների դրաւման դէպքերը յեղաշրջել էին ե՛ւ ձեմարանի կեանքը: Աշակերտութիւնը հետ ի հետ հետեւում էր դրսի անցքերին: Բարձր դասարանների եւ լսարանների աշակերտութիւնը կազմակերպուած էր Դաշնակցութեան դրօշի տակ եւ դաղտնի ժողովներ էր դումարում: Ես նախագահն էի ձեմարանի դաշնակցական աշակերտական միութեան:

Կոմիտասը այդ դիտէր: Մենք էլ դիտէինք, որ նա հակառակ էր մեր շարժման: Բայց ոչ մէկ անդամ նա դդալ չտուեց, որ ինքը ծանօթ էր կամ հակառակ էր մեր դործունէութեան: Մի անդամ, սակայն, չդիմացաւ:

Երեկոյ էր: Հագիւ էր մութը կոխել. մենք հաւաքուած էինք լսարանականների ննջարանի պատշգամբում, որ նայում էր Վաղարշապատի դլխաւոր պողոտայի վրայ: Մէկ էլ լսուեց սարճանակների պայթիւն: Ապա՝ իրարանցում ու խուճապ դուրսը: Այդ վայրկեանին

ARAM webaram.com

կոմիտասը բարձրացաւ պատշգամբ, մեզ մօտ։ Եւ նոյն ժամանակ լուր հասաւ, թէ սպանել էին «պատճան Փոթիէանին», որ ռուս իշխանութեան օգնել էր վանքի պոյքերի գրաւման միջոցին։ Կասկած չկար, որ Դաշնակցութեան ահաբեկումն էր։

Կոմիտասը սարսափով լսեց լուրը, դունատուեց ու պոռթկաց։ Զեմ յիշում խօսքերը, բայց ասածի իմաստը այն էր, որ աննեղելի է սպանութիւնը, պէնքի դիմողը ինքն էլ պէնքի-պոհ կ'երթայ։ Մանաւանդ, աննեղելի է հայասպանութիւնը հայի ձեռքով։ Եւ խօսում էր այնպէս, որ կարծես մենք լինէինք Փոթիէանին սպանողը։ Մեղանից ոչ մէկը չառարկեց, ձայն-ծպտուն չհանեց։ Ինքը մեր գլխին թափեց դայրոյթը եւ հեռացաւ։

Մի քանի օր նա խուսափեց մեղանից, բայց վերջը վերահաստատեցին մեր «դիւանագիտական յարաբերութիւնները», ինչպէս ինքն էր պատմում։

Բայց նախկին ամերմութիւնը կաքծես չմնաց։ Նա պղում էր, որ մենք պաղանիքներ ունենք իրենից։ Մենք էլ գիտէինք, որ նա համակիր չէր յեղափոխութեան։ Ինչ որ պարապութիւն էր առաջ եկել մեր եւ նրա միջեւ, որ երթալով լայնանում էր։ Պղում չեղաւ, բայց առաջուայ ջերմութիւնն էլ չմնաց։

Մի դէպք առանձնապէս սուր կերպով մեխուել է իմ յիշողութեան մէջ։ 1905—6 ձուի խռովայոյզ օրերն էին։ Ռուսաստանը բռնուած էր յեղափոխական հրդեհով։ Ամէն կողմ ցոյցեր ու գործադուլներ էին տեղի ունենում։ Հանգիստ չէին եւ ձեմարանի աշակերտութեան մտքերը։ Մենք էլ դոհ չէինք ձեմարանի «հին ռեժիմ»ից, որ գլխաւորուած էր տեսուչ Գաբեգին-վարդապետով — յետոյ Կիլիկիոյ Կաթողիկոսը։ Ամէն կողմից մեր համբերի անդամները պահանջում էին ժողովներ դումարել եւ «պետիցիա» ներկայացնել տեսչութեան։ Ամբողջ Ռուսաստանը պրպտուած էր «պետիցիա» (պահանջներ) կազմելով։ «Պետիցիա» էին ներկայացնում եւ Ռուսաստանի աշակերտներն ու ուսանողները։ Մե՞նք ինչու պիտի յետ մնայինք։ Կոմիտասը հոտը առել էր եւ մի օր ինձ կանչեց մօտը։

— Գնացի՛ր իր խուցը։ Իմ հասած բանէին նրա մօտից դուրս եկաւ մեր տեսուչը՝ Գաբեգին Հայր սուրբը։ Կասկածելի նշան էր։

— Մաքուռաքազ, եկա՞ր, իր սովորական բացատրութեամբ դիմաւորեց Կոմիտասը։ Եւ մի քանի ներածական խօսքերից յետոյ, կարուկ կերպով յայտնեց միտքը։

Նա իմացել էր, որ ձեմարանի աշակերտութիւնը մտածում է պահանջներ ներկայացնել եւ միերժումի դէպքում գասադուլ անել։

ARAM webaram.com

Այդ բանը պէտք չէ տեղի ունենայ: Եւ ես պէտք է խօսք տայի, որ տեղի չի ունենայ:

Ճշմարիտն ասելով՝ ես էլ համամիտ չէի գործադուլի: Վաղեմում էի որ կառավարութիւնը, պատրուակ բռնելով աշակերտութեան խռովութիւնները, կը փակի Ճեմարանը: «Հին ռեժիմ»ից դեռ չէի, ի հարկէ, բայց դասադուլն էլ համարում էի վաղաժամ: Մենք պէտք չունէինք առաջ անցնելու. Թող կացութիւնը պարզուի Ռուսաստանում, դրա համեմատ կը վարուենք նաեւ մենք:

Այս բանները չասացի, անշուշտ, Կոմիտասին եւ պատասխանեցի, թէ ես անկարող եմ իր պահանջը կատարել: Աշակերտների ընդհանուր ժողովից է կախուած որոշումը:

— Ընդհանուր ժողով պէտք չէ դումարուի, չեշտեց նա:

— Բայց ինչպէ՞ս չդումարել, երբ ամէնքը պահանջում են:

— Պէտք չէ դումարել, աւելի ուժեղ չեշտով առարկեց Կոմիտասը: Եւ ցոյց տուեց նաեւ միջոցը, որ ես պէտք է գործադրէի, իբրեւ Ճեմարանական Միութեան նախագահ:

Միջոցը շատ պարզ էր: Կիրակի օր մեր լսարանցիները իրեն հետ կ'երթան Օշական: Այնտեղից կ'անցնենք Աշտարակ: Ապա՝ Փարպի, Բիւրական: Գարեգին հայր սուրբը արտօնութիւն կը տայ: Երբ վերադառնանք, աշակերտների տրամադրութիւնը փոխուած կը լինի:

Այո՛, միջոցը պարզ էր, բայց մի քիչ էլ փախուստի տպաւորութիւն էր թողնում: Այդպէս կարող էին բացատրել ընկերները մեր ընթացքը: Ցամենայն դէպս, Կոմիտասի պնդումի վրայ, ես խոստացայ խորհրդակցել մեր լսարանցիների հետ: Եթէ նրանք համաձայնուեն, ես էլ համաձայն եմ ու համաձայն:

Ի զարմանս իմ, ընկերներս ուրախութեամբ համաձայնուեցին: Նրանք ինձանից աւելի հակառակ էին դասադուլի: Մի քանի ամիս էր մնացել մեր աւարտելուն: Ճեմարանի փակուելը կարող էր մեր ամբողջ ապագան խորտակել:

Տեսուչ Գարեգին հայր սուրբին համոզելու պէտք չեղաւ. նա անմիջապէս թոյլ տուեց, որ մի չարաթով արձակուրդ առնենք: Վերջին պահին, սակայն, Կոմիտասը մեզ խաղի բերեց. չեկաւ մեզ հետ, չեմ յիշում, ինչ որ «շատ լուրջ» պատճառ բերելով: Այնուամենայնիւ, մենք մեկնեցինք եւ ամբողջ մի ամիս մնացինք Աշտարակի շրջանում, հիւրասիրուելով մեր դասընկեր Անուշաւան Տէր Միքայէլեանի ծնողների կողմից: Այդտեղ էր, որ մենք հաւաքաբար յօրինեցինք մի երգ, որի մէջ դուշակւում էր մեզանից իւրաքանչիւրի ա-

ARAM webaram.com

պագան: Եւ զարմանալի կերպով, չաւերի վերաբերմամբ մեր դուշակութիւնը ճիշտ դուրս եկաւ:

Այսպէս՝ երդում ասուած էր, որ ձեմարանը աւարտելուց յետոյ, Անուշաւանը վարժապետ պիտի դառնայ, պիտի ամուսնանայ պառաւ աղջկայ հետ եւ մէկ երկվեցեակ աղջիկ պիտի ունենայ: Գրեթէ այդպէս էլ պատահեց. միայն աղջիկների թիւը 12ի չհասաւ կարծեմ:

Արշաւիր Շաւարշեանը պիտի երթար Գերմանիա, մանկավարժութիւն պիտի ուսանէր եւ հայ ազգի զաւակներին պիտի լուսաւորէր: Այդպէս էլ եղաւ: Նա զարճաւ մեր լաւագոյն մանկավարժներից մէկը:

Արշաւիր Տէր-Մկրտիչեանին վերապահւում էր աննախանձելի ապագայ. նա պիտի դառնար փողոցային մի սառահակ, էֆի եւ անառակութեան հերոս: Թերեւս ոչ այնքան խիստ, բայց մարդաբէութիւնը ըստ էութեան իրականացաւ:

Իմ մասին երդում ասուած էր.—

Պետական Դուման վերջապէս բացուեց,
Եւ Գրուզինեանը վեր կացաւ խօսեց.
Նա մէկ-մէկ բուեց հայ ազգի պահանջ,
Բայց, աւաղ, ոչ ոք չդրեց ականջ...

կարծեմ, որոշ չափով, այս դուշակութիւնն էլ ճիշտ դուրս եկաւ...

Երդում էինք «Մօտ է դարուն», չուռով կը բացուի»ի եղանակով: Եւ այդ մարտական երդով էլ վերադարձանք ճեմարան, ուր, իրօք, տրամադրութիւնները արդէն փոխուել էին:

Ռուսաստանը բռնուած էր դործադուլներով: Ցեղափոխութիւնը խորացել էր: Ժամանակ էր, ուրեմն, որ մենք էլ դուրս դայինք «հին ռեժիմ»ի դէմ: Եւ ահա, դասերը լքած, բարձր դասարանների աշակերտներն ու լսարանցինները, ամսից աւելի, անընդհատ ժողովներ դումարեցին մշակելու համար պահանջները ճեմարանի վարչութիւնից:

Գրգռուած հոդեվիճակ էր տիրում: Ուսուցիչները չէին համարձակւում նկատողութիւն անելու: Տեսուչը մի անդամ փորձեց ժողովին ներկայանալ ու դպաստութեան յորդոր կարդալ, բայց լալով դուրս եկաւ: Կոմիտասը չէր մօտենում մեզ, բայց յայտնապէս ատատպում էր:

Վերջապէս, «պետիցիա»ն պատրաստ էր: Ախտոս, այդ պատ-

ARAM webaram.com

մական փաստաթուղթը մէջտեղ չկայ — ինչե՛ր-ինչե՛ր պիտի տես-նէինք մէջը: Ճիշտ թիւը չեմ յիշում, բայց կարծեմ մօտ վեց տասնեակ կէտեր էր պարունակում մեր պահանջագիրը: Մենք պահանջում էինք, որ Ճեմարանի ծրագրից ջնջուեն բոլոր աստուածաբանական առարկաները եւ տեղը դրուեն ընկերաբանութիւն, քաղաքատնտեսութիւն, քաղաքական դիտութիւններ: Պահանջում էինք, որ մեր հոգեւորականի հագուստը փոխարինուի աշխարհականի զգեստով, որ պասը վերացուի: Որ եկեղեցի երթալու պարտականութիւնը ջնջուի: Որ Ճեմարանից ազատ ելեւմուտք ունենանք: Որ ամէն տեսակ լրագիր կարդալու իրաւունք տրուի: Եւ էլ չեմ յիշում ինչեր:

«Պետիցիա»ն կազմելուց յետոյ, հերթը եկաւ որոշելու, թէ ո՞վ պիտի կախէ զանգակը: Եւ երկար վէճերից յետոյ, որոշուեց, որ պահանջագիրը տեսչին պէտք է ներկայացնէ ժողովների նախագահը, այսինքն՝ ես, երկրորդ լսարանի ուսանողներ Սահակ Թորոսեանի եւ Վահան Տէր-Գէորգեանի — Խորէնիի — հետ միասին:

Ամենից նշանաւորը, սակայն, այս գաւեշտա-ողբերգութեան վերջաբանը եղաւ:

Ժամադրութիւն խնդրեցինք տեսչից, եւ Սահակը, Վահանն ու ես, սերտարանի սենեակից, ուր տեղի էին ունենում մեր ժողովները, բարձրացանք վերի յարկը: Աստիճանների վրայ հանդիպեցինք կոմիտասին, որ առանց մեր երեսին նայելու, մռայլ, իջաւ վար: Գաբրիէլին հայր սուրբը իր սենեակում նստած էր բազմոցի վրայ: Բարեւեցինք ու կեցանք:

— Հը՛, ասացէք տեսնեմ, ի՞նչ էք ասում, կէս-հեգնական ու տխուր, յոգնած ձայնով արտասանեց տեսուչը:

Ես սիրտ առի եւ յայտնեցի, թէ Ճեմարանի աշակերտութեան պահանջներն ենք բերել: Ու սկսեցի կարդալ:

Հազիւ կէսը կարդացել էի, մէկ էլ «ա՛խ, վա՛խ», մեր Գաբրիէլին հայր սուրբը նուաղելով՝ տարածուեց բազմոցի վրայ: Պետիցիա-մետիցիա մէկ կողմ նետեցինք. չուարած մէկս աշխատում էր բարձրացնել հայր-սուրբին, միւսը ջուր էր բերում: Շուտով դրսից վրայ հասան վերակացուները: Մեծ դժուարութեամբ ուշքի բերինք մեր տեսչին եւ դլխիկոր իջանք վար...

Իսկական նուաղո՞ւմ էր, թէ, ինչպէս չար լեզուները պնդում էին, դիւանագիտական խաղ: Փաստն այն է, որ մեր «պետիցիա»յից բան դուրս չեկաւ: Գաբրիէլին հայր-սուրբը մի առժամանակ հիւանդ մնաց. ապա վրայ հասան քննութիւնները եւ աւարտական օրերը: «Պետիցիա»ն մոռացուեց:

ARAM webaram.com

Աւարտեցինք ու ցրուեցինք մեր տները Կոմիտասի հետ դրեթէ խռով: Նա չներեց մեր ըմբոստութիւնը:

Շուտով, 1906ին, Կոմիտասը ինքն էլ հեռացաւ արտասահման: Էջմիածնի մթնոլորտը այլեւս անտանելի էր դարձել նրա համար: Արտասահմանի կեանքը, անշուշտ, աւելի եւս զգալի դարձրեց վանական հեղձուցիչ օդի ծանրութիւնը: Եւ այդ պատճառով, Եւրոպայից վերադառնալուց յետոյ, նա այլեւս չկարողացաւ երկար դիմանալ վանքում: Մի պահ Իզմիրլեանի կաթողիկոսացումը նրան որոշ յոյսեր ներշնչեց, թէ պայմանները կարող են փոխուել Էջմիածնում, բայց չուտով համոզուեց, որ սխալուած է: Ազատ մթնոլորտի պահանջը այնքան զօրացաւ նրա մէջ, որ ի վերջոյ որոշեց ընդմիշտ հեռանալ Էջմիածնից: 1909 թ. Սեպտեմբեր 3ին, նա հեռեւեալ դիմումը ուղղեց Իզմիրլեան կաթողիկոսին.

«Քանի տարի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան եմ, մտել եմ այս հաստատութեանը ծառայելու նպատակով: Քանի տարուայ ընթացքում չըջապատեն ինձ թոյլ չի տուել ա՛յն անելու, ինչ կարող էի, որովհետեւ տեսայ միայն որոգայթ եւ ոչ արդարութիւն: Նեարդներս թուլացել են, այլեւս տոկալու ճար ու հնար չունեմ: Որոնում եմ հանգիստ, չեմ գտնում. ծարաւի եմ ազնիւ աշխատանքի, խանգտւում եմ, փափաքում եմ հեռու մնալ, խցել ականջներս չլսելու համար, գոցել աչքերս չտեսնելու համար, կապել ոտքերս չդայթակղելու համար, սանձել զգացումներս չվրդովուելու համար, բայց, ղի մարդ եմ, չեմ կարողանում: Ինձ մեռնում է, եռանդս պաղում է, կեանքս մաշւում է, եւ միայն վարանումն է բոյն դնում իմ ոգում եւ սրտիս խորքում:

«Եթէ հաճոյ է Վեհին ինձ չկորցնել, այլ եւ գտնել, արտասուելով աղերսում եմ արձակեցէք ինձ Ս. Էջմիածնի միաբանութեան ուխտից եւ նշանակեցէք Սեւանայ մենաստանի մենակեաց: Քանի տարին կորցրի, գուցէ մնացած տարիներս չահեցնեմ եւ անդորրութեամբ գրի առնեմ ուսումնասիրութիւններիս պտուղները, իրրեւ առաւել կարեւոր ծառայութիւն հայ տառապեալ սուրբ եկեղեցւոյ եւ դիտութեան:

«Վեհափառութեանդ ծառայ եւ որդի

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Միաբան Ս. Էջմիածնի»:

«Սեւանայ մենաստանի մենակեաց»ը, ի հարկէ, խօսք էր: Հապա թէ Կոմիտասը ինքն էլ լուրջ կերպով հաւատում էր իր ասածին:

ARAM webaram.com

Ներան, անկասկած, ուրիշ ապրումներ էին յուզում եւ ուրիշ ճգտումներ:

Սեւանի մենաստանում պարտկուող մարդը չէր նա, ոչ էլ մենակեցութեան ընդունակ: Կասկածից դուրս է, որ ներան հրապուրում էին ազատ աշխարհը եւ ազատ արուեստի ասպարէզը, «Հին Աստուածները»: Այդտեղ նա կարող էր աւելի մեծ յաջողութեամբ չահեցընել իր «ուսումնասիրութիւնների պտուղները», ի փառս հայ ազգի եւ «տառապեալ սուրբ եկեղեցւոյ»:



ԿՈՄԻՏԱՍԸ ՆԱԻԻ ՎՐԱՑ, ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՌՋԵԻ

Ինչպէս եւ բնական էր սպասել, Իզմիրլեանը մերժեց Կոմիտասի խնդրանքը: Ցաջորդ տարի, 1910ի աշնան, Կոմիտասը թողեց էջմիածինը իր ծննդավայրը այցելելու պատրուակով: Այնտեղից անցաւ Պոլիս, ուր ընկաւ իր վիճակած տարերքի մէջ: Իր «Գուսանի» համբաւաւոր երգչախումբով դերեց պոլսահայութեան սրտերը: Համերգներ տուեց նաեւ Իզմիրում եւ Եգիպտոսում, նոյնպէս արտասովոր փայլով:

ARAM webaram.com

Կոմիտասը Պոլսում էլ ունեցաւ հակառակորդներ։ Ի միջի այլոց, նրա համերգների դէմ ելաւ այն օրերի պատրիարքական փոխանորդ սիրահոչակ Ղեւոնդ Եպ. Դուրեանը, բայց ժողովրդական խանդավառ ոգեւորութեան մէջ խեղդուեցին այդ թշուառականների ոռնձգութիւնները. Կոմիտասը իր փառքի գագաթնակէտին էր։

Եթէ չեմ սխալւում, նա մի անգամ էլ վերադարձաւ Էջմիածին՝ չեմ իմանում ինչ ակնկալութիւններով, բայց այս անգամ էլ այնտեղ չգտաւ իր որոնածը։ Եւ այնուհետեւ, թօթափելով իր ոտքերի փոշին, ընդ միշտ հեռացաւ Էջմիածնից։

1914 թ. Յունիսին, Ամերիկայից դէպի Կարին անցնելիս, ես Կոմիտասին հանդիպեցի Փարիզում։ Բուլվար Սէն Միշէլով բարձրանում էի վեր։ Մէկ էլ, Բուլվար Մոնփառնասի մօտերը նա դիմացս ելաւ. աչխարհականի սեւ հագուստով, յարդէ գլխարկը գլխին, սիրուն գաւազանը ձեռքին։ Այնքան անակնկալ էր մեր հանդիպումը, որ մի պահ երկուսս էլ չուարած ու լուռ մնացինք։ Ապա՝ բուռն թափով ողջագուրուեցինք։

— Վայ, մաթռաբազ, դու Փարիզո՞ւմ, ի՞նչ ես անում այստեղ։

Եւ թեւից բռնած՝ քաշեց դէպի մօտակայ սրճարանը — Ֆլորի դէ Լիլա — Սէն Միշէլի եւ Մոնփառնասի անկիւնում, ուր մի քանի ժամ անցկացրինք միասին։ Ես պատմեցի իմ մասին։ Շատ գոհ չմնաց իմ պատմութիւնից։ Նա ինձ ուրիշ ասպարէզ էր ցանկանում. դաշնակցական գործիչ դառնալու համար, նրա կարծիքով, պէտք չկար ձեմարան աւարտելու եւ համալսարանական կրթութիւն ստանալու...։

Ինքը եկել էր Փարիզ երաժշտական ինչ որ համագումարի մասնակցելու։ Իր զեկուցումները մեծ հետաքրքրութիւն էին առաջ բերել համագումարում։ Ուրախ էր անչափ։ Կեանքով եւ աշխոյժով այս մա՞րդն էր, որ ուզում էր Սեւանի մենակեաց դառնալ...։

Ես յաջորդ օր պիտի մեկնէի Փարիզից եւ ուրիշ հանդիպում չէի կարող ունենալ հետը։ Բաժանուեցինք Պոլսում տեսնուելու խոստումով։ Եւ — էլ չտեսնուեցինք։

Բայց ոչ, ես մի անգամ էլ տեսայ Կոմիտասին, իսկ նա ինձ տեսա՞ւ — չեմ կարող ասել։ Մի օր այցելեցի նրան Վիլ Ժուիֆի հոգեբուժական հաստատութեան մէջ, բայց երանի թէ այցելած չլինէի, այնքան ճնշիչ եղաւ իմ տպաւորութիւնը։ Եւ մինչեւ այսօր էլ, ամէն անգամ, երբ յիշում եմ նրան, ձեմարանի չէնչող ու լուսախինդ Կոմիտասի կողքին, առջեւս է գալիս Վիլ Ժուիֆի նրա քայքայուած

ARAM webaram.com

ու կմախքացած առուները, եւ սարսուռ է զալիս վրաս։

Հոգեբուժարանի պաշտօնեան դժկամակութեամբ յանձն առաւ առաջնորդելու ինձ Կոմիտասի մօտ. նա, ասում էր, չի ուզում տեսնուել մարդկանց հետ. հանդիսատ ձգեցէք նրան։ Բայց ես պնդեցի եւ հետեւեցի պաշտօնեային։ Ընդարձակ բակի մի ծայրում, ծառի տակ, կծկուած էր մի ուրուական՝ անշարժ, անորոշ հայեացքը յառած տարածութեան մէջ։ Ծերացած, նիհար, մազերը քունքերի վրայ ճերմըկած, միայն աչքերը Կոմիտասի վառվռուն աչքերն էին յիշեցնում։

Ցուզումով մօտեցայ ու կանգնեցի առջեւը։ Ոչ մէկ չարժում, ուշադրութեան ոչ մէկ նշոյլ։

— Ատուած օգնական, հայր սուրբ, ասացի յուզուած։

Ոչ մէկ չարժում եւ ոչ մէկ պատասխան։

— Հայր սուրբ, մաքոռաքազի է։ Ես եմ, հայր սուրբ։

Կարծես մի կայծ ցոլաց աչքում, կարծես չրթունքները չարժուեցին, ժպտաց կարծես։ Կամ, թերեւս, ինձ այդպէս թուաց։

Եւ զարձեալ անտարբերութիւն։ Լուռ նստած էր հայեացքը անհունութեան մէջ։

Մի տարօրինակ զոզ անցաւ մարմնովս։ Հոգեկան անբացատրելի խոռ֊վք արդեօք, թէ սարսուռ ու վախ սիրելի անձի տարաւփելի ճակատագրի առջեւ։

Մէկ էլ, առանց ինձ հաշիւ տալու, ուզեցի բռնել ձեռքը եւ համբուրել, այն քնքուշ մատները, որոնք երբեմն այնպիսի ճարտարութեամբ թռչկոտում էին դաշնամուրի ստեղնաշարի վրայով։

Բայց հապիւ էի չարժուել, Կոմիտասը ընդոստ վեր թռաւ տեղից՝ աչքերը կատաղութեամբ լեցուն, բռունցքը ճօճելով օդի մէջ։

— Հեռացիր, պռոց նա երեսիս սպառնական, կորիր աչքիցս։ Ի՞նչ էք ուզում... Ես չկամ, չկամ, հասկանո՞ւմ էք։ Թուհ, թշուառականներ...

Եւ վազելով փախաւ — հեռացաւ։

Ես կեանքումս մղձաւանջային չատ ծանր վայրկեաններ եմ ապրել, չատ տագնապներ եմ անցկացրել, մահուան աչքերին եմ նայել, բայց ինչ որ տեսայ Վիլ Ժուիֆում, Կոմիտասի մօտ, ինչ որ ղգացի այդ սարսափելի վայրկեանին — անպատմելի է...։

Ամբողջ այդ տեսարանին լուռ հանդիսատես Ֆրանսացի պաշտօնեան կարեկցութեամբ բռնեց թեւս եւ առաջնորդեց դէպի հաստատութեան ելքը։

— Ես ձեզ նախազգուշացրի, — ասաց նա ղրան մօտ։ Ուրիշների հետ աւելի վատ է վարուում։ Հանդիսատ ձգեցէք նրան։

ARAM webaram.com

Հանդիսատ ձգեցէք... Այդ օտարականը չգիտէր, չէր կարող ըմբռնել թէ ինչ էր Կոմիտասը մեզ համար: Հայ ժողովրդի եւ հայ մշակոյթի համար...

1935 թ. ձմեռնամուտի մի անձրեւոտ օր էր: Փարիզի եկեղեցում, Ժան Գուժոն փողոցի վրայ, տեղ չկար: Փողոցն էլ բերնէ բերան բռնուած էր ամէն տեսի, հասակի եւ դասակարգի հայերի բազմութեամբ. Կոմիտասի յուղարկաւորութիւնն էր:


Վերջապէս նրա տանջուած մարմինը հանդիսատ էր դռեւ: Հոգեւոր մեղեդիներ էին երգում նրա վրայ: Ա՛հ, եթէ, յանկարծ, կարողանար գլուխը վերցնել դագաղից, լսել ինչ են երգում, ինչպէ՞ս են երգում: Այդպէ՞ս կ'երգէր ինքը: Ով լսել էր նրա «Ի վերին ներաւաղէմ»ը, չէր կարող սարսուռ չզգալ Փարիզի հայոց եկեղեցում, Կոմիտասի դագաղի մօտ:

Մի բանում, սակայն, Կոմիտասը բախտաւոր եղաւ: Նրա տառապած մարմինը չյանձնուեց օտար հողին: Նա այսօր հանդիսատ ննջում է հայրենի հողի ծոցում, Մասիսի հովանու ներքեւ, զրնգուն Զանգուի եզերքին:

Դարեր կը գան ու գարեր կ'անցնեն, եւ քանի կանգուն է հայոց Մասիսը, քանի ապրում է հայութիւնը իր աննման հանճարով եւ պողպատէ կամքով, Կոմիտասի լուսապայծառ յիշատակը կը մնայ անթառամ Հայկի զաւակների բարախուն սրտերում:

1936
Սաո Փաոլօ, Բրազիլ

ARAM webaram.com



ԿՈՄԻՏԱՍԻ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ARAM webaram.com

ԱՐԱԳԱԾԻ ԼԱՆՋԻՆ

Բնութեան մէջ գեղեցկութիւններ չատ կան։ Նիագարայի ջրվէժը օրինակ, ի՞նչպէս չկանգնել երկիւղած հիացումով արարչագործութեան այդ աքանչելիքի առջեւ։ Եոսեմիտի ծառաստանը եղակի՝ Սիէռա Նեւադայի լեռներում՝ իր դարաւոր հսկաներով։ Ռիօ Դէ Ժանէյռոյի զմայլելի ծովածոցն իր հեքիաթային տեսարանով, արեւածագը Բոմբէյի եզերքին կամ արեւամուտը Նեւայի ափին։ Վերջալոյսը Վանի լճի վրայ կամ կարնոյ դաշտում...

Բնութեան մէջ գեղեցկութիւններ չատ կան, բայց եթէ դուք չէք տեսել Արարատեան դաշտը Արագածի լանջից՝ Մասիսի նախադահութեամբ, եթէ չէք թափառել Համբերդի վիթխարի ձորում, իրրեւ որսորդ, հրացանը ձեռքիդ կամ որպէս պարզ լեռնագնաց, եթէ չէք խմել Արագածի պաղ աղբիւրների ջուրը անմահական, չէք մագլցել Արագածի կատարը եւ չէք նետել քար, չէք վրդովել չորս դադաթների գրկում նիրհող լճակի հայելին, նշանակում է բնութեան գեղեցկութիւն չէք ճանաչում լիովին։

Իմ ճեմարանական կեանքի առաջին ամառը ես անցրի Բիւրականի գիւղում, Արագածի լանջին։ Բիւրական կաթողիկոսանիստ ամառանոց էր։ Գիւղի ծայրին, պարտիզում, կառուցուած էր քարէ մի մեծ եւ անճաշակ չէնք, կարծես դիտմամբ ծրագրուած վերին աստիճանի անյարմար սենեակներով։ Շէնքի մի մասը յատկացուած էր Վեհափառին, որ, սակայն, չաճախ չէր ապրում ամառանոցում։ Միւս մասը բռնել էինք մենք, մօտ երեսուն ճեմարանականներ, զանազան դասարաններից, առաջնորդութեամբ լսարանական եղբայր Մկրտիչ Մելքոնեանի, վանեցի, հետագային կարդաթող վարդա-

ARAM webaram.com

պետ, ուսուցիչ եւ դաշնակցական գործիչ Գարմէն անունով, նահատակուած Տարօնում Մեծ Եղեռնին:

Շէնքի չորս կողմը ծիրանի, կեռասի, սալորի, խնձորի, դեղձի, խաղողի եւ պէսպէս ուրիշ պտուղների ընդարձակ պարտէզ: Եւ պատշգամբից՝ աննկարագրելի տեսարան դէպի նօսր մշուշի ալիքներով ծփացող Արարատեան դաշտը, որի եզերքին, ամպերի միջից, երկնքին էր նայում սպիտակափառ գագաթը Մասիսի:

Եղբայր Մելքոնեանը ուրիշ եղբայրների հետ էր անցկացնում իր ժամանակը: Ի՞նչ էին անում նրանք, այդ մեզ շատ էլ չէր հետաքրքրում: Գլխաւորապէս ուտելու ժամանակ միասին էինք լինում կամ երեկոները, երբ դուրսը, խաղալու համար, արդէն ուշ էր, իսկ ներսը պառկել-քնելու համար դեռ շուտ էր: Ուստի, հաւաքւում էինք մի տեղ, եւ եղբայրներից մէկը բոլորիս համար կարդում էր որեւէ մի գիրք, կամ խմբական երգեր էինք երգում:

Մենք՝ դասարանական բաժնի աշակերտներս առաւօտից մինչեւ երեկոյ խաղում էինք պարտիզում: Կամ Բաֆֆու, Սենկեւիչի մէկ հատորը առած՝ քաշւում էինք մի անկիւն: Եւ կամ, մեծ մասամբ, թափառում էինք այգիներում կամ Համբերդի ձորում եւ կամ այս ու այն կողմ՝ Արագածի փէչերին:

Համբերդի պատմական յուշարձանները դեռ շատ բան չէին խօսում մեր սրտին: Նշանաւոր բերդի քարերը մեզ աւելի հետաքրքրում էին, իբրեւ զբօսավայր՝ մագլցելու հսկայ քարակոյտերի վրայ, ընկնելու մողէսների յետեւից, խաղալու պաղ, բայց բարի լորդունների հետ, թաւալուելու կանաչ խոտերի վրայ, խոխոջուն ջրերի կողքին...

Համբերդի ձորը գրաւիչ էր իր հարուստ որսով, մանաւանդ գէր ու համեղ կաքաւով: Այստեղ, յաճախ, մենք տեսնում էինք մեր ուսուցիչ բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանին, երկիսող հրացանը ուսին, շուներ առջեւ ձգած: Նա հապիւ նշմարում էր մեզ, թռուցիկ ժպիտով բարեւում եւ առիւծի քաշը թափ տալով՝ չտապում էր չան յետեւից:

Այստեղ երբեմն մենք հանդիպում էինք հրացանաւոր երիտասարդների, որոնք գալիս էին Երեւանից կամ շրջակայ գիւղերից, Համբերդի վերերը, հրացանաձգութեան փորձեր անելու: Դաշնակցական ազերբն էին, որոնք պատրաստւում էին երկիր մեկնելու՝ «Ազունքի Հովիտը», ազգի համար զոհուելու:

Համբերդի զուլալ ջրերում հիանալի կարմրախայտ կարելի էր որսալ թոռերով, որ համեղ էր, մանաւանդ, երբ խաչում էին հենց

ARAM webaram.com

ձորում, ջրի եղերքին: Մի բուռը ազ ջրի մէջ, խարոյկի վրայ, մի-երկու գլուխ սոխ եւ ձկիր կաթսայի մէջ գետից նոր հանած, թպրտացող ձկները: Ջուրը կամաց-կամաց տաքանում է, ձկները խայտալով դեռ խաղ են անում կաթսայում: Ջուրը սկսում է եռալ եւ ձկները խաչւում են խաղալով, առանց մահը զգալու: Գիտէ՞ք, ինչքան համով է Համբերդի ձորում խաչուած կարմրախայտը...

Երբեմն, ամբողջ օրուայ համար լաւաշ հաց ու պանիր առնելով, բարձրանում էինք սարն ի վեր, ճոխ արօտավայրերի միջից, մինչեւ օթաւները, դաշտի գիւղացիների ամառանոցները իրենց հօտերով: Այստեղ գիւղացի կանայք ու աղջիկները գոյնզգոյն հագուստներով եւ ադմկոտ, մեզ հիւրասիրում էին բուրումնաւէտ կաթով եւ մածունով: Եւ իրր թէ իրենց, բայց իրօք մեզ համար երգում էին գուարթ լէլէներ...

Մի քիչ բարձր, մօտենում էինք դանդաղ հալող ձիւնադաշտերին, որոնց տակից կլկլալով հոսում էին առնորակ առուակներ: Այս կողմերում կարելի էր հաւաքել հոտաւէտ անմոռուկներ, դիներբուբներ, ձնծաղիկներ, փնջեր կազմել ու յետոյ... մի կողմ նետել: Ո՞ւմ է հարկաւոր այստեղ մեր ծաղկեփունջը, երբ ամբողջ լեռը զարմառ ծաղիկների փունջ է:

Արագածի կատարին ցուրտ է. քամի է փչում: Նոյնիսկ լճակի համայիշ գրաւչութիւնը երկար չի պահում քեզ: Բո՛ւռ... Դողում ես, առամ առամի խփելով: Շո՛ւտ դէպի յետ, արեւից վար, տաքանալու համար: Բայց չես կարող արագ չարժուել: Իջնում ու կենում ես, իջնում ու կենում՝ միշտ առջեւդ Մասիսի կախարդական պատկերը: Օդը այնքան յստակ է ու ջինջ, Մասիսը կարծես դիմացդ լինի, մի քանի քայլի վրայ: Պարզիր ձեռքդ եւ կարող ես հասնել: կանգնած է հպարտ, գլուխը երկնքում, իբրեւ մի հզօր Աստուած, անդորր ու խաղաղ, խորհրդաւոր խոհեր ճակատին ու մեն-մենակ, ինչպէս հայ ժողովուրդը ինքն է մենակ՝ դարաւոր մտորումների մէջ... Մասիս եւ Արագած — ի՞նչ պիտի լինէր հայութիւնը առանց նրանց: Մէկը արթուն պահակ ոտքների դէմ, միւսը՝ աննդաստու մայր գորովագութ...

... Եւ ահա մի ուրիշ Մասիս մեր առջեւ:

Կէսօրուայ տօթը մեղմացել էր: Մենք ցրուած էինք պարտիզում ցոհոլների յետեւից՝ աշխատելով խուսափել պարտիզպանի սուր աչքերից: Մէկ էլ՝ ցնցող լուր. «Հայրիկն է գալիս»...

Հեւիհեւ վազում-հաւաքւում ենք չէնքի առջեւը: Մի քանի վայրկեան, եւ ահա, այգիների պատերի յետեւից, ծառերի միջով,

ARAM webaram.com

հանդարտ քայլերով, երեւում է մեզ ծանօթ ամբակագմ, խոհուն աչքերով սեւ երիվարը, որի թամբի վրայ, ճամբու յոգնութիւնից կռացած Հայրիկը՝ պարզ սքեմով, հասարակ փակեղը գլխին, յետեւից՝ անբաժան շաթիրը, ձիու վրայ:



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Մօտեցան: Եղբայր Մկրտիչի նշանի վրայ՝ առաջ ենք նետուում. մէկը բռնում է ձիու սանձը, միւսը՝ սապանդակը: Եղբայր Մկրտիչը ուզում է օգնել, բայց Հայրիկը յետ է մղում նրա ձեռքը, երիտասարդի պէս շարունակ թամբի վրայ եւ մէկ ակնթարթից իջնում է վար: Կանգնում, թափ է տալիս վրայի փոշին, նայում է

ARAM webaram.com

չուրջը, նայում է մեղ ու ժպտում լայն ժպիտով: Կարծես, աւելի է պայծառանում բնութիւնը եւ աւելի դուարթանում...

— Ա՛խ, ինչո՞ւ լռած էք. ըսէք՝ «կեցցէ՛ Խայրիկ», ասում է խնդալով:

— Կեցցէ՛ Հայրիկ, անբռնաղբօսիկ դուրս է թռչում մեր կրծքերից, կեցցէ՛ Հայրիկ...

Ու եղբայր Մկրտիչի ազդանշանի վրայ սկսում ենք երգել.

Հայրի՛կ, Հայրի՛կ, ֆո հայրենիք,
Վասպուրական մեր աշխարհ...

Հայրիկը գոհունակութեամբ ունկնդրում է՝ արծուի հայեացքը յառած Մասիսին: Նորէն ժպտում է մեղ, բարձրանում չէնքը եւ մինչեւ երեկոյ այլեւս չի երեւում:

Իմ աչքերի առջեւ այսօրուայ պէս կենդանի է Հայրիկի պատկառելի տեսքը, Արագածի լանջին, Մասիսի վեհափառ պատկերի դիմաց, ինքն էլ մի Մասիս...

Մասիսը մօտից տեսնես, ոչինչ ունի գրաւիչ, խոչ ու խոռոչներ, ցորչ ու քարքարոտ, չոր ձորեր ու ժայռեր՝ եւ ամէն տեսակ գեռուններէ ու սողուններէ բնակավայրը: Բաւական է, սակայն, հեռանաս որոշ տարածութեան վրայ, ամէն տգեղութիւն կը ծածկուի, եւ քո աչքեւ կը տեսնես արամազդակերպ լեռը եզակի վեհութեամբ ու գեղեցկութեամբ:

Հայրիկն էլ — մի Արամազդ — դուրկ չէր խոչ ու խոռոչներից, բայց հեռանալու պէտք չկար տեսնելու եւ վայելելու համար նրա գեղեցկութիւնը: Եւ, ի հարկէ, որքան ժամանակը անցնում է, այնքան մեծանում ու գեղեցկանում է նրա դէմքը սերունդների աչքերում:

Երեկոյեան, ընթրիքից առաջ, երբ արեւը դեռ մարը չէր մտել, Հայրիկը դուրս եկաւ իր յարկաբաժնից: Վրան՝ նոյն պարզ վերարկուն, գլուխը՝ բաց: Փառահեղ մօրուքի եւ բեխերի մազերը, չորթունքների չուրջ, գեղնած «չղարայից»: Մարդու հոգու խորը թափանցող, զարմանալի աչքերը հանգիստ նայում էին մեղ: Մենք հաւաքուել էինք պատշգամբի չուրջը: Կարելի չէր չհիանալ այդ պատկառելի ու այնպէս մտերիմ հսկայի տեսքով: Իմ մէջ վազուց չքացած էր առաջին տեսութեան դառն տպաւորութիւնը: Ես գիտէի, որ Հայրիկը իսկական հայր էր հայ ժողովրդի՝ բարի ու գորովագութ, թէեւ ցաւացնել էլ գիտէր չատ խիստ:

ARAM webaram.com

Նստաւ չաթիրի բերած բազկաթոռի վրայ, վարը, չինարի լայնճիւղ ծառի ներքեւ: Մենք չարուեցինք շուրջը, իր հրամանով, ծալապատիկ, թարմ արօտի վրայ: Արեւը վերջին ճառագայթները չոայլելով՝ դնում էր ննջելու լերան միւս կողմը: Ա՛հ, եթէ հանճարեղ մի վրձին այդ եզական պահը հարազատօրէն փոխադրէր կտաւի վրայ...

Պապիկի եւ թոռնիկի հանդիպումը լինէր կարծես: Հայրիկը զուարթ հարցումներ էր տալիս կամ սրամիտ դիտողութիւններ անում, ծիծաղում եւ ծիծաղեցնում էր: Պատասխանում էին դլխաւոր պալէս վանեցիները՝ Մկրտիչ Մելքոնեան, Համազասպ Բաղէշցեան եւ ուրիշներ, որոնց հետ աւելի մտերիմ էր զգում իրեն Հայրիկը: Նիւթը գրեթէ միշտ նոյնն էր — ի՞նչ պէտք է անենք ձեմարանը աւարտելուց յետոյ — եւ իր խրատն էլ անփոփոխ նոյնն էր — գնացէք ժողովրդի մէջ, ուսուցիչ, քահանայ եղէք· ամուսնացէք, տուն եւ ընտանիք կազմեցէք:

— Մեր ազգ աղքատ է, հոգի պէտք ունի, լոյսի պէտք ունի: Ձեմարան պէտք է կատարէ վարպետ վանուց գործ· լոյս տարէք գիւղ...

Ամէն առիթով ճեմարանականների դլխին Հայրիկը միեւնոյն քարոզն էր կարդում — դաղափարական նուիրում հասարակ ժողովրդի դասին: Նա ճեմարանի լսարաններն էլ չոայլութիւն էր համարում. վեց դասարանով միջնակարգ կրթութիւնը բաւական էր դիւղական քահանայ կամ ուսուցիչ դառնալու համար:

Այն ժամանակ տաբօրինակ էր թւում ինձ Հայրիկի այս քարոզը:

Մենք ամէնքս ճգտում էինք բարձրագոյն ուսման: Գերմանիայում ուսած կարապետ ու Գարեգին վարդապետներն էին մեզ համար ուղեցոյց օրինակ եւ ոչ անուս Աբչէն Երէցները, որոնք նախապատիւ էին Հայրիկի աչքին: Այսօր, երբ կեանքը այնքա՛ն խաղեր խաղաց մեր դլխին, ես հասկանում եմ Հայրիկի մտահոգութիւնները եւ հաղար անդամ իրաւունք եմ տալիս նրան: Հասարակ, կէս-ուսեալ վարժապետներն ու քահանաներն են այսօր էլ մեր ժողովրդի աղը, հայապահպանութեան — օ՛հ, ինչ անճոռնի բառ — հայը հայ պահելու դլխաւոր գործօնը: Եւ ի՞նչ կայ ներկայումս աւելի այժմէական ու հրատապ պահանջ, քան հայը հայ պահել, ինչպէս եւ Խրիմեան Հայրիկի օրով:

Երեք օր մնաց Բիւրականում Հայրիկը: Ի՞նչ էր անում ցերեկը, չեմ կարող ասել: Առաւօտեան, հագիւ նախաճաշը աւարտած,

ARAM webaram.com

նատում էր ձին եւ չաթիրը եռեւը ձգած՝ ելնում էր պատյտի չրջակայ դիւղերը: Վերադառնում էր ճաշից յետոյ, երեկոյեան ուտում էր իր սիրած թանապուրը, ապա սկսում էր ասուլիսը մեզ հետ: Երբեմն մեզ չուտ էր արձակում քնելու եւ ինքը դեռ նստում էր զրուցելու մեծերի հետ: Պատմութիւններ էր անում երկրի ժողովրդի կեանքից, անցնող դէպքերի եւ դէմքերի մասին: Համապատասխ Բաղէշցեանը հետագային հաւատացնում էր, թէ Հայրիկը իրենց «յեղափոխութիւն էր քարոզում»: Չեմ գտմանում: Թիւրիմացութիւն էր Հայրիկի կաթոդիկոսութիւնը, ինչպէս թիւրիմացութիւն էր և՛ նրա պատրիարքութիւնը. նա ստեղծուած էր յեղափոխութեան համար՝ բառիս ամենալայն եւ ազնուական իմաստով:

Յաջորդ անգամ, երբ մի քանի չարաթ վերջը, Հայրիկը նորից այցի եկաւ Բիւրական, պատահական դուգադիպութեամբ դիւղում էր գտնւում Աչուղ Ֆարհադը, որ եկել էր մեզ համար յեղափոխական համերգ տալու: Ես առաջին անգամ էի տեսնում նրան, թէեւ անունը լսել էի վաղուց: Եւ ո՞վ չէր լսել այն օրերին հռչակաւոր ժողովրդական աչուղի անունը:

Աչուղ Ֆարհադը չիրակեցի էր, երկու աչքից կոյր: Ծաղկատար դէմքով, սեւ ակնոցներով, լաւ ձեւուած եւ ամուր կարուած մի տղամարդ էր: Սազը ձեռքին, գալ գարնող մի երիտասարդի ընկերակցութեամբ, նա չրջում էր դիւղից դիւղ եւ, օդաններում կամ բաց երկնքի տակ, երգում կամ ոգեւորիչ պատմութիւններ անում, յեղափոխութիւն քարոզում ժողովրդին: Լեղուանի, ինչպէս ամէն չիրակեցի, սուր, բայց տանելի ձայնով, արտակարգ յիշողութեան տէր, Չէյթունն ու Սասունը, Գլազատոնն ու Զաւարովը իրար խառնելով, սազը անկանկացնելով՝ նա ժամերով յեղափոխական վէպեր էր պատմում ու երգում՝ փառաբանելով Դաշնակցութեան գաղափարներն ու գործերը: Դաշնակցութիւնը քիչ ժողովրդական քարոզիչ է ունեցել Ֆարհադին հաւասար:

Հայրիկը ուրախութեամբ ընդունեց աչուղ Ֆարհադին եւ հրաւիրեց նրան իր սեղանին թանապուր ուտելու: Ընթրիքից յետոյ, երեկոյեան, տեղի ունեցաւ աչուղ Ֆարհադի համերգը՝ Հայրիկի նախագահութեամբ՝ ձեմարանի աշակերտներիս եւ դիւղացիների համար:

Կէս գար է անցել այդ երաշ օրից, բայց աչուղ Ֆարհադի երգի ու սազի հնչիւնները դեռ ականջներումս են, եւ աչքիս առջեւն են չինարի տակ բազմած Հայրիկը, հասո փաթաթուած «չղարա»ն ձեռքին, յուզումից բոցավառ աչքերով իմ ընկերները, ծեր ու երիտա-

ARAM webaram.com

սարդ դիւղացիների երկիւղած ունկնդրութիւնը եւ աստղազարդ երկինքը Բիւրականի վերեւ...

Հանդիսականներին առանձնապէս յուզեց զէյթունցի քաջ Տիրանի հերոսա-եղերական պատմութիւնը, սազի լարերի լալագին թրթռոցով: Իմ մտքում դեռ հնչում են Ֆարհադի խրոխտ խօսքերը.

Քեզի մեռնիմ Տիրան, Տիրան,
Քաջ Զէյթունի սիրական,
Երանի թէ ամէն հայ կին
Մարդ ունենար քեզ նման...

Նոյնքան յուզիչ էր եւ Սասունցի քաջ Շաքէի վէպը, որ Ֆարհադը ինքն էր յօրինել եւ պատմում էր ու երգում առանձին ոգեւորութեամբ: Եւ մինչ սասունցիները կուում էին անարդ թշնամու դէմ, ճարտար դիւանագէտ Սիմոն Զաւարովը ոտքի էր հանում ամբողջ Եւրոպան, փրկելու համար ապստամբ Սասունը: Եւ Բիւրոն, որ նստուկ էր ի փընեւ, անմահ Քրիստափորի առաջնորդութեամբ, կորովի բազուկով վարում էր հայ յեղափոխութիւնը...

Զարմանալի յիշողութիւն ունէր Աչուղ Ֆարհադը: Ձմեռուայ երկար գիշերներ, կովերի եւ եղների կողքին, դիւղական տաք օդաններում, նա բառ առ բառ պատմում էր Բաֆֆու մեծ վէպերը ունկընդիրներին, որոնք, կախուած նրա շրթունքներից, ականջ էին դնում ագահութեամբ:

Համերգը սկսուեց ու փակուեց երգերով ի պատիւ Հայրիկի, որ գոհունակութեամբ հետեւում էր աչուղի անպաճոյճ պատմութիւններին ու երգերին:

Նման այցելութիւնները, սակայն, պատահական միջադէպեր էին Բիւրականի կեանքում: Մեր ժամանակը անցնում էր, դլխաւորապէս, խաղերով, ընթերցանութեամբ եւ «բնագիտական ու հնագիտական արշաւներով» Արագածի լանջին, առաջուց: Ի հարկէ, «գիտական» նիւթ շատ չէինք ճարում, բայց, յաճախ, վերադառնում էինք բեռնաւորուած «հազուագիւտ» բոյսերով, թիթեռների եւ միջատների հաւաքածոներով, ապառուած օճերով ու մողէսներով, իբր թէ, մեր կազմակերպելիք թանգարանի համար, որոնք, սակայն, տեղ հասնելուց յետոյ նեաւում էին մի կողմ: Արագածի փէշերը հարուստ են այլազան բոյսերով եւ լեռնային ծաղիկներով, բազմապիսի թիթեռներով ու միջատներով, թռչուններով եւ մանր գազաններով: Բայց մենք ոչ գիտական հմտութիւն ունէինք, ոչ էլ փորձառու

ARAM webaram.com

պեկավար։ Այդ պատճառով՝ մեր թանգարանի ծրագիրը երբեք ծրագրի սահմաններից դուրս չեկաւ։

Աւելի արդիւնաւոր էր մեր գիտական–բանասիրական գործունէութիւնը։ Գիւղացիներից եւ հայլանների կանանցից գրի էինք առնում ժողովրդական երգեր, դանազան պատմութիւններ՝ հեքիաթ, առասպել, առակ, աւանդութիւն եւայլն։ Ապա՝ երեկոները միասին «մշակում» էինք, վերջը օգտագործելու համար դասերի ընթացքին։ Երգերը հաւաքում էինք կոմիտաս Հայր սուրբի մատնաւոր պատուէրով։

Բնականաբար, զբաղւում էինք եւ ինքնուրոյն «ստեղծագործական» աշխատանքով։ Արդէն ամէն ճեմարանական կա՛մ բանաստեղծ ու վիպասան էր. կա՛մ պատմագէտ ու բանասէր։ Ճեմարանցու զրոյցները լեցուն էին ամէն տեսակ «ստեղծագործութիւններով»։

Բիւրականում էր, որ ես հիմը դրի մեր դասարանի նշանաւոր պարբերաթերթի՝ «Աշակերտական Սիրտ» բաւական տափակ անունով, որ յետոյ փորձանք դարձաւ իմ գլխին։

«Աշակերտական Սիրտ»ը ձեռագիր գրական–դեղարուեստական – բանասիրական – պատմական – գիտական – հասարակական – տնտեսական եւ էլ չեմ յիշում ուրիշ ինչական պարբերական էր։ Աշխատակիցները, գլխաւորապէս, մեր դասարանցիներն էին, բայց միւս դասարանցիների ստեղծագործութիւններն էլ հիւրընկալում էինք։ Հրատարակութեան, այսպէս ասած, խմբագրական տեխնիկական մասը ես էի վարում, հիմնադիր եւ պատասխանատու խմբագիր։ Աշխատակիցները իրենք էին արտագրում իրենց գրուածքները՝ երբեմն նաեւ պատկերազարդելով իրենց երկերը։ Որքան յիշում եմ, բաւական հետաքրքրական նիւթեր կային մէջը։ Ցամենայն դէպս, «Աշակերտական Սիրտ»ի երեւումը կարեւոր դէպք էր Արտագծի լանջի մեր կեանքում։

Խրախուսուած «Աշակերտական Սիրտ»ի դասճ յաջողութիւնից՝ Բիւրականում հիմը դրուեց եւ մի ուրիշ ձեռագիր պարբերականի՝ «Ոտանաւորատուփ» անունով, այս անգամ, հաւաքական խմբագրութեամբ։ Խմբագրական մարմնի առաջին անդամների անունները մոռացել եմ, բայց հետագային, արդէն ճեմարանում, մարմնի անդամներն էին, ինձանից զատ, Արամ Դադեանը եւ Մարտիրոս Սաֆրաստեանը — երեքս էլ մեծ յաւակնութիւններով անտաղանդ բանաստեղծներ, մանաւանդ Մարտիրոս Սաֆրաստեանը, որ մեր մէջ յայտնի էր Զանգրոյթ Մարտիրոս անունով եւ որի ստեղծագործութիւնների հեղեղից ազատուելու համար, ի վերջոյ, դադարեցրինք թերթը։

ARAM webaram.com

«Ոտանաւորատուփ»ը դուռ բանաստեղծական պարբերաթերթ էր: Առաջին համարի ճակատին, ծանուցման մէջ, ասուած էր.

Ոտանաւորատուփը մեր
Լոյս է տեսնում տօն օրեր,
Ով ուզում է մասնակցել՝
Շտապէ նիւթեր մեզ հասցնել:

Շտապողներ չատ եղան: Առաջին համարից մի քանի հատուածներ մնացել են մաքիս անկիւնում: Այսպէս, մի բանաստեղծ գրում էր.

Արագածի սէգ լանջին
Դու նման ես հէգ ճանճին,
Միշտ բզզում ես ու դզզում,
Աա, ի՞նչ ես դու ուզում...

Հեղինակի անունը այնուհետեւ մնաց Դզզան Ճանճ:

Մի ուրիշը երգում էր.

Համբերդի խոր, մութ ձորում
Մեղր ու կարագ է ծորում...

Ծանդերով հարուստ, բայց մաքերով աղքատ այսպիսի տափակութիւններով լեցուն էր «Ոտանաւորատուփ»ը:

Կարծեմ, հենց առաջին համարի վերջում զետեղել էինք անողոք դրախօսականներ, բանաստեղծական երկու դրքոյկների մասին: Մէկը ալէքսանդրապոլցի բանաստեղծ Պետրոս Մոճոռեանի ոտանաւորների վոխա տեարակն էր: Ծաղրել էինք բանաստեղծի, ի միջի այլոց, հետեւեալ երկտողը.

Ճշմարտութեան լոյսի տակ
Կը խաղցնեմ իմ գդակ...

Քննադատը հեղնում էր «ինչո՞ւ գդակդ ես խաղցնում եւ ոչ թէ խելքդ»...

Երկրորդը՝ ճեմարանի ուսուցիչ, հետագային ակադեմական Մանուկ Աբեղեանի ոտանաւորների նոյնպէս չատ նիհար դրքոյկը, որի «Սիփանայ Քաջեր» ռազմաչունչ բանաստեղծութիւնը գովելուց

ARAM webaram.com

յետոյ, դրադաւոը ծաղրում էր, ի միջի այլոց, էջմիածնին նուիրուած տաւիակ ոտանաւորը.

Երթանիք պագնենիք էջմիածինը,
Երթանիք պագնենիք Սուրբ Մեռոնը...

Մանուկ Աբեղեանը յետոյ ջանաց հաւաքել ու ոչնչացնել իր Մուսայի անդրանիկ երախայրիքը, բայց մենք, նրա աշակերտներս, յաճախ յիշեցնում էինք, մանաւանդ, երբ նա, դասի ժամանակ, քննադատում էր սրա կամ նրա անհանճար դործը: Աւելի անհամ բան կարելի՞ էր երեւակայել, քան «երթանք պագնենք էջմիածինը»...

Այն էլ ասեմ, որ Աբեղեանի «Միփանայ քաջերն» էին, որ կոմիտասը անմահացրեց իր քառաձայն սքանչելի եղանակով: Հենց միայն այդ ոտանաւորի պատճառով կարելի էր աչք դոցել Աբեղեանի միւս ոտանաւոր-չարաղրութիւնների վրայ:

Այսպիսով, Բիւրականը, Արագածի լանջին, դրական ստեղծագործութիւնների մի նոր դարաշրջան բացեց հայ դրականութեան պատմութեան էջերում. մեղքը մերը չէ, որ անաչառ պատմութիւնը անտեսել է այդ մեծ դէպքը...

Այդ յիշատակելի ամառը, Արագածի լանջին, յատկապէս ինձ համար, եղաւ անմոռանալի: Առաջին անգամն էր, կարելի է ասել, որ ես մօտից չփւում էի Հայաստանի բնութեան եւ բնիկ ժողովուրդի հետ: Ինչ որ իմ ընկերների համար սովորական էր, ընտանի եւ առօրեայ, իմ աչքին ամէն բան երեւում էր նոր, յաճախ եւ տարօրինակ: Ժողովրդի նիստ ու կացը, բարքերը, ապրելակերպը, լեզուն, ամէն ինչ տարբեր էր կամ, նոյն իսկ, ներհակ ինչի որ սովոր էի ես մեր չրջանում: Եւ այդ իսկ պատճառով՝ ամէն բան հետաքրքրում ու դրաւում էր իմ ուշադրութիւնը: Այս չփումը մայր-երկրի ու հարազատ ժողովրդի հետ վերջնականապէս բիւրեղացրեց իմ մտքի ու հոգու մէջ այն յեղաչրջումը, որ սկսուել էր Բաֆֆու ու Պռոշեանի երկերի ընթերցումով: Իմ հայացումը այլեւս լրիւ էր, վերջնական եւ անդարձ:

ARAM webaram.com

ՇՐՋԻԿԻ ՅՈՒՇԵՐԻՑ

I.— ԻՄ ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Մարդիկ կարծում են, թէ իրենք ամենազօր արարածներ են. իրենք են չարժում աշխարհն ու կեանքը: Մինչդեռ աշխարհն ու կեանքն են չարժում մարդկանց:

Իբր թէ ինքդ ես որոշում կեանքիդ ընթացքն ու նպատակը եւ չես էլ տեսնում, որ ինչ որ անխմանալի մի բազուկ մերթ մէկ կողմ է չարտում քեզ, մերթ ուրիշ կողմ, խաղում է հետդ ինչպէս երեխան խրճիկի հետ: կարծում ես, թէ գնում ես դէպի արեւելք, մէկ էլ արեւմուտքն ես տեսնում առջեւդ:

Ի՞նչ է այդ խորհրդաւոր բազուկը: «Աստուած», պատասխանում են ոմանք եւ հանգստանում. «առանց Աստուծոյ կամքի մարդու գլխից մի մազ անգամ չի ընկնիլ»:

«Ճակատագիր», բացատրում են ուրիշներ. մարդու ճակատին այդպէս է գրուած: Ինչո՞ւ է այդպէս գրուած, ո՞վ է իրաւունք տուել այդ տարօրինակ ճակատագրին քմահաճօրէն խաղալու մարդկանց հետ:

«Բախտ» — այս էլ ճակատագրի պէս մի բան. «Մարդը բախտաւոր աստղի տակ է ծնուած». «Բախտի բան է», «կարեւորը խելքը չէ, մարդ բախտ պէտք է ունենայ»...

Աստուա՞ծ, ճակատագի՞ր թէ բախտ, կամ ուրիշ մի բան — ես չգիտեմ: Գիտեմ, սակայն, համոզուած եմ, որ դու ինքդ չես քո տէրը. դու ննջեցեղ ես, այո՛, բայց, վերջին հաշուով, կարգադրողը ուրիշն է. մարդի՞կ, հանգամանքնե՞րը, ինչ որ անծանօթ մի ո՞յժ — ո՞վ կարող է ասել:

ARAM webaram.com

Իմ կեանքում, պատանեկան օրերից սկսած, ես զգացել եմ այդ «անծանօթ ուժի» ներկայութիւնը: Դեռ աշակերտ, իրրեւ հաւատացեալ ընտանիքի զաւակ, ես որոշել էի ապագայ իմ ցանկացած ձեւով. «անծանօթ ոյժը» բռնեց օձիքիցս եւ նետեց անկրօնութեան կենտրոնը՝ էջմիածին. Դէորգեան ճեմարանը մտայ հաւատացեալ եւ աւարտեցի անհաւատ:

Աւարտելուց յետոյ էլ, հաստատ որոշել էի անմիջապէս անցնել համալսարան. ուզում էի դառնալ փաստաբան եւ ազատ ժամանակս յատկացնել գրականութեան: Բայց «անծանօթ ոյժը» կարգադրեց դառնալ... դաշնակցական չրջիկ: Եւ այնուհետեւ՝ երկար կեանք անվերջ հակասութիւններով եւ պայքարով «այսպէս եմ ուզում»ի եւ «անծանօթ ուժի» քմահաճոյքների միջեւ:

Եղունգդ որ տուիր, ամբողջ ձեռքդ էլ կ'երթայ: Շրջիկութիւնը առաջին քայլն էր եւ այնուհետեւ... ինչպէս պինովը, առաջին գաւաթը պարպելուց յետոյ, այլեւս չի կարողանում կենալ...

Ճիշտ եմ Ազբալեանի խօսքերը: Քննական քերականութեան հատորը առջեւը դրած... կամաւորական պնդերի հաչիւներն էր նայում եւ դառնութեամբ զանգատւում:

— Գլխի ե՞ս, Սիմոն, մեր կեանքն էլ էսպէս պիտի անցնի. ինչ էինք երազում եւ ինչ դուրս եկաւ...

Այո՛, չատ բան էինք երազում — եւ ի՛նչ վատ երազներ.— բայց վերջը «չրջիկ» դարձանք:

Շրջիկ — այդպէս էին կոչւում մի ժամանակ դաշնակցական գործիչները, անշուշտ, չրջել բառից:

կենտրոնական կոմիտէները պահում էին ազատ ընկերներ, որոնց պարտականութիւնն էր դաշնակցական քարոզչութիւն անել եւ զբաղուել կազմակերպչական հարցերով: Այդ գործի համար, սովորաբար, ընտրւում էին մտաւոր զարգացում եւ հասարակական ջիղ ունեցող, լեզուանի ընկերներ:

1906ին, ճեմարանը աւարտած՝ ես նոր էի եկել Նոր Նախիջեւան, աշնանը Պետերբուրգ մեկնելու ծրագրով: 1905ի յեղափոխութեան առաջ բերած ալեկոծութիւնը դեռ չէր հանդարտել եւ Նոր Նախիջեւանի համբաւաւոր Ասֆալտն էլ եռ ու գեռ մէջ էր: Այստեղ էին հաւաքւում նաեւ մտաւորականութիւնը, յեղափոխականներ եւ, ընդհանրապէս, անգործ մարդիկ, երիտասարդներ եւ օրիորդներ, երեկոյեան զովով չափելու համար երկար պրօսպարանը կամ վէճ ու աղմուկի համար ծառերի ու թփերի ներքեւ:

Մի երեկոյ ընկերներից մէկը՝ Սահրանդը ականջիս չչնջաց.

ARAM webaram.com

«Վարդը երեկոյ կենտրոնական կոմիտէի ժողով կայ, հրաւիրուած ես, պէտք է գաս»:

Բնականաբար, չոյուած զգացի: Նոր դուրս եկած դպրոցից եւ կենտրոնական կոմիտէի ժողովի հրաւէր — պատիւ էր:

«Պատիւ» եղաւ նաեւ, յաջորդ երեկոյ, կենտրոնական կոմիտէի առաջարկը մէկ տարիով մնալու Նալբանդի չրջանի գործիչ: Սկզբում մերժեցի առաջարկը· բոլորովին հակառակ էր իմ ծրագիրներին:



ՆԱԼԲԱՆԴԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ, 1916 ՄԱՅԻՍ, ՌՈՍՏՈՎ
Ձախից աջ, վերը· ՍԱՀԱԿ ՄԵԱՍՆԻԿԵԱՆ, ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼԵԱՆ, ՍԻՄ· ԳՐՈՒԶԻՆԵԱՆ (Ս· ՎՐԱՑԵԱՆ), ԳՐ· ՋՈՒՊԱՐԵԱՆ, ՍԵՐՈՎԲԷ ՏԻՐԱՑՈՒԵԱՆ: Վարը՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՏԷՐՏԷՐԵԱՆ:

Բայց առաջարկողը կենտրոնական կոմիտէի նախագահն էր, թեմական դպրոցի ուսուցիչ Յովհաննէս Տէրտէրեանը, որին ես յարգում էի անձնապէս եւ որի յամառութեանը ծանօթ էի: Իմ կողմից երկար չեմ ու չումից յետոյ, ի վերջոյ, համոզեց եւ ես զարձայ գաչնակցական չրջիկ՝ առ այժմ յետաձգելով համալսարանի հարցը:

Նալբանդի կենտրոնական կոմիտէութիւնը տարածութեամբ մի կայսրութիւն էր Դոն ու Դոնեց գետերի վարի աւազաններից սկսած մինչեւ Կուբան ու Տերեկ գետերը Ռոստով, Եկատերինոդար, Արմա-

ARAM webaram.com

ւիր ու Ստաւրոպոլ մեծ քաղաքներով եւ մի շարք ուրիշ հայաբնակ կենտրոններով: Իմ պարտականութիւնը պէտք է լինէր այցելել այդ վայրերը, զբաղուել Դաշնակցութեան տեղական մարմինների գործերով, ընկերական եւ հրապարակային ժողովներ գումարել, դասախօսութիւններ կարդալ, կոմիտէների գործերն ու հաշիւները քննել, մի խօսքով — շրջիկ:

Բայց մինչ այդ՝ հերթական գործ կար կատարելիք, որով պէտք է զբաղուէի նախ եւ առաջ: Հրապարակուած էր Ղրիմեան Հայրիկի կաթողիկոսական կոնդակը էջմիածնում կենտրոնական ժողով գումարելու համար: Արդէն սկսուել էին պատգամաւորների ընտրութիւնները: Բուռն պայքար էր մղւում եկեղեցիներում եւ դուրսը երեք ճակատով. մի կողմից պահպանողականները, որոնք կարեւոր ոյժ չէին ներկայացնում, թէեւ իրենց գործը տեսնում էին ձեռքի տակից, անաղմուկ: Ապա՝ սոցիալ-դեմոկրատները — մի խումբ երիտասարդներ նախկին դաշնակցական Մեսրոպեանի գլխաւորութեամբ — որոնք մեծ թիւ չէին կազմում, բայց մեծ աղմուկ էին հանում: Ընտրողների գլխաւոր զանգուածը կազմում էին դաշնակցականները եւ համակիրները:

Առաջին երկու հատուածները գործում էին առանձին-առանձին, յօդուտ իրենց թեկնածուների եւ միասին՝ Դաշնակցութեան դէմ: Դաշնակցութիւնը, սակայն, անվիճելի գերակշիռ ոյժ էր: Մենք էլ — դաշնակցական երիտասարդներս — կենտրոնական կոմիտէի ղեկավարութեամբ, կատարի պայքար էինք մղում մեր թեկնածուների ընտրութիւնը յաջողացնելու համար: Ընտրութիւնները երկաստիճան էին. ուղղակի քուէարկութեամբ ընտրւում էին ընտրողները եւ սրանք, իրենց հերթին, պէտք է ընտրէին էջմիածնի ժողովի պատգամաւորներին:

Եկեղեցիների մեծ մասում յաջողութիւնը մեր կողմն էր. դաշնակցական եւ համակիր ընտրողները մեծամասնութիւն էին կազմում: Սրանք կենտրոնական կոմիտէի հետ միասին պէտք է որոշէին էջմիածին ուղարկելիք պատգամաւորների թեկնածուները:

Հետզհետէ Նախիջեւան-Բեսարաբիոյ թեմի հայաբնակ մեւս վայրերից էլ հասան պատգամաւորներ ընտրական լիագումար ժողովի համար: Ղրիմից եկել էր սոցիալ-դեմոկրատ մենշեւիկ Ց. Սուրխանեանը, որ Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ դարձաւ բոլշեւիկ Թիֆլիսում ու Հայաստանում եւ որ ծանօթ է, որպէս գրական-քննադատ: Օդեսայից եկաւ մեր շատ եռանդուն ընկեր տրապիզոնցի Գրիգոր Յովսէփեանը — անզուգական աղմկարար ժողովնե-

ARAM webaram.com

րում: Մոսկուայի պատգամաւորն էր նորաւարտ փաստաբան, նախկին սարկաւագ եւ այժմ դաշնակցական Պօղոս Զուբարը, Թուխտի գիւղացի:

Այս վերջինի գալը տակն ու վրայ արաւ մեր բոլոր հաշիւները:

Կենտրոնական կոմիտէի եւ դաշնակցական պատգամաւորների խորհրդակցական ժողովում նշանակուել էին մեր թեկնածուները, որոնց կարգին նաեւ նուաստս:

Իմ թեկնածութիւնը անտեղի էր եւ անիմաստ, ես նոր եւ քիչ ծանօթ մարդ էի այդ շրջանում: Բայց կենտրոնական կոմիտէի նախագահի՝ Ցովհ. Տէրտէրեանի պնդումով իմ անունն էլ գրուեց ցանկի վրայ:

Մերոնք մի ուրիշ սխալ էլ թոյլ տուին: Հանրածանօթ փաստաբան եւ հասարակական գործիչ Գրիգոր Զալխուշեանը շատ էր ուզում մեր ցուցակով պատգամաւոր ընտրուել, բայց մասնաւորապէս Ցովհ. Տէրտէրեանի պնդումով, մերժուեց եւ նա անցաւ հակառակորդների կողմը:

Այնու ամենայնիւ, մեր դիրքը համարւում էր ամուր եւ յաղթանակը թւում էր ապահով, երբ հասաւ Պօղոս Զուբարը — փառասէր, չողչողուն ու ճարպիկ մի խուժանավար: Միեւնոյն գիւղից ինչ որ Ցովհ. Տէրտէրեանը: Երբ դեռ սարկաւագ էր, Նոր Նախիջեւանում ձեռ էր կերել ինչ որ սիրային մի արկածի հետեւանքով: Մոսկուայում, ուսանողութեան շրջանին, մտել էր Դաշնակցութեան շարքերը:

Նախիջեւան հասնելով՝ Զուբարը վերջնագիր ներկայացրեց կենտրոնական կոմիտէին — կամ իր անունն էլ պէտք է գրուէր դաշնակցական թեկնածուների ցանկի վրայ, կամ ինքը առանձին ցուցակով դուրս պիտի գար: Բանակցութիւններ, վէճ, ղալմաղալ, անվերջ ժողովներ — Զուբարի առաջարկը մերժուեց:

Ի՞նչ տեղի ունեցաւ այնուհետեւ, ինչ խաղեր խաղաց Զուբարը — մերոնք բոլորովին վստահ էին, թէ մեր թեկնածուները պիտի ընտրուեն: Ինձ ու Համբարձում Տէրտէրեանին, որ նոյնպէս թեկնածու էր, խորհուրդ էին տալիս պատրաստուել մեկնելու էջմիածին, մնում էր միայն պայուսակը կապել:

Ընտրական ժողովը, թեմական դպրոցի ընդարձակ դահլիճում, մեղուի փեթակ էր յիշեցնում. լեփ-լեցուն բազմութիւն, աղմուկ, ժխոր, տաք ճառեր, քուէարկութիւնից առաջ ընտրողների եւ թեկնածուների վերջին խորհրդակցութիւն:

ARAM webaram.com

Ելևէջականացած մթնոլորտում տեղի ունեցան քուէարկութիւնները: Մերոնք հրճուանքի մէջ էին. մեր ընտրութիւնը կասկած չէր վերցնում:

Երբ քուէատուփը բացին եւ քուէները համրեցին, ձայների մեծամասնութիւնը ստացել էին... Պօղոս Զուբարը, Յար. Սուքիասեանը եւ պահպանողական Գէորգ սարկ. Զէօրէքչեանը: Դաշնակցութեան ցանկը չախչախիչ պարտութիւն էր կրել: Իմ առաջին պարտութիւնն էր այդ...

II.— ՋԷՆՔԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Դրամական հաշուեյարդարի գործընթաց կատարւում էր եւ զէնքի հաշուեյարդար Նալբանդի շրջանում:

Հայ-թաթարական կռիւների ընթացքին ռուսով — նախկինեւանն էլ, շրջակայ քաղաքներով, զէնքի հայթայթման աղբիւր էր: Զանազան միջոցներով ձեռք էին բերում զինապահեստներից կամ զօրանոցներից գողացուած հրացաններ, աւտճանակներ կամ փամփուշտ եւ հաւաքում որոշ վայրերում: Այնտեղից զանազան ճանապարհներով եւ զաղտնի միջոցներով փոխադրում էին Կովկաս:

Նալբանդում դեռ մնացել էին զէնքի պահեստներ: Ես նոր էի մտել շրջիկի պարտականութիւնների մէջ, երբ Ռոստոմի կենտրոնական կոմիտէից նամակ եկաւ, թէ պէտք է ընկերուհի Սիրանոյշ Շահղալեանը ապրանքների փոխադրութեան համար, աջակցեցէք նրան: կենտ. կոմիտէն որոշեց, որ ես պրպտեմ այդ գործով:

Ընկերուհի Սիրանոյշը, առաջին հայեացքից, շատ լուրջ աղջկայ տպաւորութիւն թողեց վրաս: Գրաւիչ արտաքինով, դլխին մազերի ճոխ դէզով, համակրելի դիմագծերով, հարուստ կուրծքով, խօսուն աչքերով, բայց դոց բերանով մէկն էր: Աւում էին ուսանողուհի էր, բայց աւելի վարժուհու էր նման: Երբ աւելի ծանօթացանք, երեւաց, որ բաւական կարդացած էր, դլխաւորապէս, ռուսական վէպերը: Երգել էլ դիտէր ինքն իրեն համար: Ինչո՞ւ էր յեղափոխական գործի մէջ...

Գաղտնիքը ինձ համար մասամբ պարզուեց տարիներ վերջը, ուսանողութեան շրջանում, երբ ծանօթացայ ուսանող ընկեր Հայկ Թորոսեանի հետ, որ մասնակից էր եղել Բաքուի մարտական խմբերին: Սիրանոյշը սիրահարուած էր Հայկի վրայ — այստեղից չէ՞ր արդեօք նրա ռազմա-յեղափոխական ասպարէզը...

ARAM webaram.com

Բայց, անկախ դրանից, Սիրանոյշը քաջ աղջիկ էր՝ պաղարիւն, հնարամիտ, անվախ: Պարզուեց, որ արդէն մի քանի անգամ եղել էր Նախիջեւանում եւ գէնքերով բեռնաւորուած վերադարձել Բագու: Ծանօթ էր շրջանի քաղաքներին եւ բաւական փորձառութիւն ունէր գէնքերի փոխադրութեան եւ գաղտնի դործերի մէջ: Աւա՛ղ, ես նրա հակապատկերն էի՝ բոլորովին խակ եւ անփորձ:

Մի քանի օր անցած Բագուից երկու աղջիկներ էլ եկան Ոսկանապատի կենտրոնական կոմիտէի յանձնարարականով, և մենք չորսս միասին գնացինք Նովոչերկասկ, Դոնի նահանգի մայրաքաղաքը, Նոր Նախիջեւանից երկաթուղով մի քանի ժամ անդին: Այստեղ մասուզէր տասնոցներ կային պատրաստ փոխադրութեան: Սիրանոյշը գիտէր տեղը:

Կայարանից կառքը կէս ժամից մեզ հասցրեց քաղաքի ծայրը եւ կեցաւ մի քնքուշ տնակի առջեւ: Սիրանոյշը արագ թռաւ ներս եւ մի քանի վայրկեանից դուրս եկաւ մի ռուս կնոջ հետ — չորս ձեռքերին չորս կաշիէ պայուսակներ: Կառապանը կատակելով առաւորեց «ապրանքը» եւ կէս ժամից մենք նորից կայարանում էինք, առաջին կարգի ճաշարանում, սեղանի շուրջ: Սպասաւոր թաթարը յարգանքով ընդունեց պատուէրը, եւ մենք անցանք ճաշի՝ սպասելով գնացքին վերադառնալու համար մեր տեղը:

Ինձ զարմացրեց Սիրանոյշի եւ միւս աղջիկների պաղարիւնութիւնը: Իրենց պահում էին այնպէս, կարծես հաճոյքի ուղեւորութիւն էին կատարում, եւ իրենց պայուսակներում անմեղ առարկաներ էին դրուած: Կատակում եւ սրախօսում էին կառապանի ու սպասաւորի հետ: Ըստ ժամանակի եւ պահանջի բարձր ծիծաղում էին կամ չշնջալով խօսում: Երբեմն խօսք էին նետում կամ աչքով անում անցնող երիտասարդներին: Մի խօսքով, անհոգ եւ անմեղ ճամբորդներ էին, ուրիշ ոչինչ...

Երբ բեռնակիրը տեղաւորեց գնացքում մեր պայուսակները ու լաւ վարձատրուած պատկառանքով հեռացաւ եւ վայրաչարժը ֆըշշալով առաջացաւ, երեւի, լարուած ջղերը տեղի տուին, եւ դրեթէ մինչեւ Ռոստով օրիորդները մնացին լուռ:

Ռոստովում նորից ժիր աշխուժութիւն, կատակ ու սրամտութիւն, զուարճասէր անհոգութիւն: Երկու աղջիկները պէտք է գնացքը փոխէին, Սիրանոյշն ու ես էլ ճանապարհ էինք գնում. մեր բաբեկամուհիները գնում էին Կովկասի հանքային ջրերը պայուսակները լեցուն անհրաժեշտ իրերով...

Երբ Ռոստովի կայարանից վերադառնում էինք Նախիջեւան,

ARAM webaram.com

ես ուզեցի իմանալ որոշ մանրամասնութիւններ, թէ ինչո՞ւ կառապանը այնպէս քաղաքավարի էր ու սիրալիր, ո՞վ էր այն համեստ տնակի կինը, ի՞նչպէս էր պատրաստուած պայուսակը եւայլն: Սիրանոյշը հեգնական ժպիտով նայեց երեսիս ու.— Շատ բան որ իմանաք, չուտ կը ծերանաք: Ու մինչեւ իր բնակած տունը, Նոր Նախիջեւանի Սուրբ Աստուածածին թաղում, լուռ մնաց:

Մի քանի նման ճամբորդութիւններ էլ ունեցանք դէպի Սլաւեանակ, դէպի Իւզովկա, Բրեանակ եւ այլն: Ամէն տեղից պայուսակներով զէնք ու փամփուշտ էր հոսում դէպի կովկաս: Առաջին կայանը Բագու էր, այնտեղից ցրւում էր զանազան ուղղութեամբ, ի վերջոյ, Վասպուրական, Տարօն կամ Բարձր Հայք հասնելու համար:

Ընդհանուր առմամբ մեզ յանձնուած գործը մենք գլուխ բերինք յաջողութեամբ: Զանազան դէպքեր եւ արկածներ, ի հարկէ, պատահում էին, բայց ոչ մէկ անգամ լուրջ վտանգի չենթարկուեցինք: Մի դէպք, սակայն, արժանի է յիշատակութեան:

Կարծեմ Լուգանսկում էր, պահուած մնացել էին մաուզէր ատրճանակի փամփուշտներ: Ոսկանապատից պահանջել էին չտապով փոխադրել մեր միջոցներով, Բագուից յատուկ մարդ չէին ուղարկել: Սիրանոյշի հետ պէտք է մեկնէինք երեկոյեան, գիշերը անցնէինք Լուգանսկում, առաւօտուայ գնացքով վերադառնայինք Ռոստով: Եւ սա պիտի լինէր մեր վերջին գործը, այնուհետեւ Սիրանոյշը պիտի վերադառնար Բագու:

Ճամբորդութիւնը անցաւ սահուն: Առաւօտեան մի անուշադաճառ հայի խանութից ստացանք պատրաստ ապրանքը — երկու մեծ եւ մէկ փոքր ձեռքի պայուսակ — ու կառքով մեկնեցինք կայարան, ուր նոյնպէս ամէն ինչ անցաւ սահուն. երկու մեծ պայուսակները յանձնեցինք բեռնակրին ի պահ, ձեռքի պայուսակը առի մօտս եւ թէյից յետոյ դուրս եկանք զբօսնելու: Գնացքը ուշացել էր. պէտք էր մի կերպ ժամանակը սպանել:

Զբուցելով յետ ու առաջ էինք չափչփում երկար մայթը, կայարանի առջեւ, մէկ էլ Սիրանոյշը չչնջաց.

— Զոյշ, հրեշտակապետը մեզ է նայում:

Կայարանի մուտքի դրան առջեւ, զանգի տակ, հսկայ հասակով կանգնած էր երկաթուղային ժանդարմը եւ աչքերով հետեւում էր մեզ. Սիրանոյշը սկսեց ինչ որ զուարթ պատմութիւն անել եւ բարձր-բարձր ծիծաղել, ես էլ ծիծաղով պատասխանում էի նրան: Ինչ կար որ. երիտասարդ մի զոյգ գնացքի էր սպասում...

ARAM webaram.com

Նզովեալ ձեռքիս պայուսակը ծանր էր, բայց որպէսզի կասկածի ոչ մէկ տեղ չմնար, ես խաղում էի հետը, վեր ու վար շարժում, իբր թէ փետուրի չափ թեթեւ լինէր. թող հրեշտակապետը տեսնի, թէ կասկածելի բաներ չկան մեզ մօտ...

Ու, յանկարծ, երբ անցնում էինք ժանդարմի առջեւից, անըզդոյշ մի շարժումիս հետեւանքով, պայուսակը ձեռքիցս ընկաւ, բերանը բացուեց եւ մայթի վրայ թափուեցին տասնոցի փամփուշտները...

Ահաւոր, անորակելի բան պատահեց: Սիրանոյշը սարսափահար՝ փայտացաւ տեղը: Ես, առանց ինձ հաշիւ տալու, մեքենայօրէն կռացայ ու սկսեցի հաւաքել փամփուշտները: Հրեշտակապետը, որսի հոտը առած չան պէս, յուշիկ քայլերով մօտեցաւ, հուժկու ձեռքով բռնեց իմ վզիցս ու բարձրացրեց:

— Էտօ շտօ, գոլուբչիկ (էս ի՞նչ է, սիրելիս), ասաց մեղմ ձայնով՝ հեղնական հայեացք ուղղելով ինձ:

Առանց մտածելու, թէ ինչ եմ անում, ես մեքենայօրէն նորից կռացայ եւ բաց պայուսակի մէջ դրի առաջուց պատրաստած տասը ռուբլիանոց կարմիր մի թղթադրամ: Ժանդարմը արագ նայեց չուրջը, մարդ չկար. կայարանի առջեւ ամայութիւն էր տիրում: Դրամը ճմռթկեց ձեռքի մէջ ու չոկուելով — մալօ (քիչ է) ասաց ժպտերես:

— Աւելի կ'ունենաս, պատասխանեցի ես չփոթուած ու հաւաքելով լեցրի պայուսակի մէջ թափուած փամփուշտները: Ժանդարմն էլ ոտքերով օգնում էր ի'նձ աչքերը պտըտցնելով չորս կողմ:

Սիրանոյշը կանգնած էր անշարժ, անհաղորդ, կարծես ներկայ չէր: Հրեշտակապետը առաւ ձեռքիցս պայուսակը եւ գնաց իր տեղը. գանգի տակ:

— Տուր, տեսնենք, ասաց նա քմծիծաղով:

Դժուար էր տարբերել՝ ծաղրո՞ւմ էր արդեօք, թէ սպառնում: Մկան վիճակում էի, որ կատուի ճանկն էր ընկել:

Ես մի կարմիր տասնոց էլ պարզեցի': Արագ շարժումով խլեց ձեռքիցս ու նորից.

— Մալօ...

Մի կապոյտ հնգանոց էլ աւելացրի: Գոհունակութեամբ խընդաց:

Ոտքով պատի մօտ հրեց պայուսակը եւ ասաց անհոգ.

— Իսկ հիմա գնացէք պրօանեցէք, մինչեւ որ գնացքը գայ:

Սիրանոյշը դեռ կանգնած էր իր տեղը: Մօտեցայ, վիճակը վիճակ չէր: Հապա մի քանի խօսք էինք փոխանակել, երբ հեռուից

ARAM webaram.com

լսուեց վայրաչարժի սուլոցը: Շտապեցի դռնել բեռնակրին, որ չուառով երեւաց մեր պայուսակների հետ:

Գնացքը հասաւ եւ հեւալով կեցաւ կայարանի առջեւ: Սկսուեց ճամբորդների իրարանցումը: Մեր բարեկամ ժանդարմը փոքրիկ պայուսակս ձեռքին հետեւեց մեզ, Սիրանոյշի թեւից բռնած օգնեց բարձրանալու աստիճաններով եւ պայուսակը յանձնելով՝ ասաց բարձրաձայն.

— Սբոգոմ: Սչաստլիվոգօ պուտի (Ատուած ձեզ հետ: Երջանիկ ճանապարհ): Կարծես ուզում էր հասկացնել չէջապատին, թէ մենք իր բարեկամներն էինք...

Երբ արդէն տեղաւորուած էինք եւ գնացքը չարժուեց, Սիրանոյշը ձեռքերով ծածկեց դէմքը եւ ջղային ցնցումներով լինչ որ բացատչութիւններ էր անում: Լալի՞ս էր թէ ծիծաղում: Ե՛ւ լալիս էր, եւ ծիծաղում: Ազատութեան լաց էր ու ծիծաղ...

Մեր վերջին ճամբորդութիւնն էր եւ վերջին հանդիպումը: Սիրանոյշ Շահդելդեանը, եթէ չեմ սխալւում, վերջը դոհ գնաց Բադուի Ջարդին թուրքերի ձեռքով...

III — ԿՈՒԲԱՆԻ ԵԶԵՐԻՆ

Այն ամառ ես մէկ-երկու ամիս անցկացրի չերքէսահայ Արմաւիր հայաւանում, Կուբանի ափին: Հիւր էի հօրաքրոջս որդու՝ Ղունկիանոս Յարախաչեանի մօտ:

Գաղափարական վառվռուն երիտասարդ էր Ղունկիանոսը, որ մեծ սէր ունէր դէպի ուսումն ու դրականութիւնը: Ամէն միջոցի դիմեց ուսեալ մարդ դառնալու համար, մինչեւ էջմիածին գնաց ճեմարան ընդունուելու փափաքով, բայց չյաջողեց: Վերջը ամուսնացաւ ու գործի մարդ դարձաւ: Եւ այժմ կառավարիչ էր Ունանով-Անպէտքով ձկթի մեծ գործարանի, եւ ես հիւր էի նրա մօտ:

Աւանք հիւր էի միայն գրսի մարդկանց աչքին. իրապէս Արմաւիր էի եկել դաշնակցական չրջիկի պարտականութիւններս կատարելու: Ղունկիանոսը դիակը իմ լինչ ծառի պատուղ լինելը եւ գործերիս չէր խառնւում: Եւ ինքն ու կինը շատ էին ծիծաղում, երբ, սեղանի վրայ, ես զաւեչտական պատմութիւններ էի անում չրջիկի իմ դործունէութիւնից:

Ղունկիանոսը, բնականաբար, պիտի տանէր ինձ ցոյց տալու իր գործարանը — ընդարձակ տարածութեան վրայ, ամեհի ծխնե-

ARAM webaram.com

լոյդով մի չարք չէնքեր, ուր աշխատում էին հազարից աւելի բանուորներ, գլխաւորապէս ներքին նահանգներից եկած խեղճ ռուս մուժիկներ: Զէթ էին հանում արեւածագկի կուտից: Աշխատանքի պայմանները չատ ծանր էին, վարձատրութիւնը անբաւարար: Բանուորները արանջում էին՝ դժգոհ իրենց վիճակից:

Այնուհետեւ, գրեթէ ամէն օր, զանազան պատրուակներով, ես այցելում էի գործարանը: Ղունկիանոսը չատ կարեւորութիւն չէր տալիս իմ թափառումներին գործարանի զանազան մասերում, նոյն իսկ ծաղրում էր իմ գրոյցները ապէտ գործաւորների հետ...

Ու մի առաւօտ, երբ ես դեռ անկողնում էի, անսովոր ձեւով հնչեց գործարանի դիլ սուլոցը, ապա բակը լեցուեց աղմուկով... Բանուորները գործադուլ էին արել եւ «պետիցիա» ներկայացրել գործարանի վարչութեան՝ պահանջելով աշխատանքի ժամերի կրճատում, ռոճիկի յաւելում, աշխատանքի պայմանների բարելաւում եւ մինչեւ դրական պատասխան ստանալը՝ դադարեցրել էին աշխատանքները...

— Ա՛յ ինչ խայտառակ բան է, վրդովւում էր Ղունկիանոսը, աա ապէտ հայվանները ինչե՛ր կ'ուզին: Ըլլալի՛ք բան է...

Ես համաձայն էի նրա հետ. ի հարկէ, ըլլալիք բան չէր. «ապէտ հայվան»ները ի՛նչ իրաւունք ունէին ութը ժամուայ աշխատանքի օր պահանջելու, երբ կարելի է տասը, տասներկու, նոյն իսկ 15 ժամ աշխատացնել միեւնոյն վարձատրութեամբ: Ի՛նչ իրաւունք ունէին... Բայց, ի վերջոյ, գործարանի վարչութիւնը տախտակած եղաւ բաւարարութիւն տալ «պետիցիա»յի մեծ մասին: Եւ պէտք էր տեսնել Ղունկիանոսի դէմքը, երբ վերջը իմացաւ, որ այդ «պետիցիա»յի — ու նաեւ գործադուլի — հեղինակը իր մօրեղբօր որդին էր, որ հիւր էր մօտը... Ղունկիանոսը հակառակ չէր իմ զաղափարներին կամ ընկերվարական գործունէութեան՝ պայմանով, ի հարկէ, որ քիթս իր վարած գործարանի մէջ չխոթէի...

Ամառւոր զանազան միջոցներ հրահանգ ստացուեց կենտրոնական Կոմիտէից, որ անմիջապէս մեկնեմ Ստաւրոպոլ, ուր ինձ դիմաւորելց հայոց ծխական զպրոցի ուսուցիչը, որ յայտնեց, թէ այնտեղ պարապող հոգ կար արհեստակցական միութիւններ կազմելու, եւ եթէ մենք չկամենայինք, հայ բանուորները ուրիշ կուսակցութիւնների դիրկը պիտի ընկնէին:

Բնականաբար, անմիջապէս գործի անցանք: Առաջին ժողովը ունեցանք կօշկակարի աշկերտների հետ՝ հիմք դնելով «Ստաւրոպոլի կօշկակար աշկերտների արհեստակցական միութեան»: Այնու-

ARAM webaram.com

հետեւ ձեռնարկեցինք դործակատարների միութեան կազմութեան: Դեռ այս աշխատանքը չլրացած՝ եկան ինձ հրաւիրելու մի կարեւոր ժողովի: Կառքերով եւ ձիերով խճողուած մի ընդարձակ բակի անկիւնում, երկոյեան կիսախաւարում, ինձ դիմաւորեցին մի քանի տասնեակ տարօրինակ երեւոյթով մարդիկ: Իմ հարցումին, թէ ի՞նչ են ուզում, պատասխանեցին, որ իրենք աշխատաւոր մարդիկ են, բոլորը սալմաստնցի հայեր եւ ասորիներ, ուզում են կազմակերպուել արհեստակցական միութեան մէջ, Դաշնակցութեան դրօշի տակ: Հարց ու փորձից պարզուեց, որ իսկապէս խաչագողներ էին, որոնք կրօնաւորի այլ եւ այլ տարազներով չրջում էին Ռուսաստանի դանապան մասերում, պէս-պէս հնարքներով դրամ կորզում միամիտ մուժիկներից, իսկ ամառուայ որոշ ամիսներին հաւաքւում էին մի տեղ. Ստաւրոպոլը նրանց կենտրոնավայրերից մէկն էր: Ինձանից խրնդրում էին, ուրեմն, խաչագողների արհեստակցական միութիւն կազմակերպել: Եւ երբ ես մերժեցի, սաստիկ զարմացան եւ զայրացան. ինչո՞ւ կօչկակարներից կարելի էր արհեստակցական միութիւն կազմել, իսկ իրենցից՝ ոչ: Իրենք աշխատաւորներ չէի՞ն միթէ...

Ես դեռ Ստաւրոպոլից չէի հեռացել, երբ կօչկակարի աշկերտները «պետիցիա» ներկայացրին գործատէրերին: Սրանք էլ զայրացած փակեցին արհեստանոցները եւ աշկերտներին չպրտեցին փողոց...

Արդէն Արմաւիրում իմացայ, որ գործադուլը ողբալի վախճան էր ունեցել. կօչկակարի աշկերտները մեղայագիր էին ներկայացրել գործատէրերին եւ աւելի աննպաստ պայմաններով համաձայնուել էին աշխատել՝ լուծելով նաեւ արհեստակցական միութիւնը: Կօչկակարներից յետոյ, աստիճանաբար, հաշուեյարդարի էին ենթարկուել եւ իմ կազմած միւս միութիւնները...

Արմաւիրում մի տարօրինակ անակնկալ էր սպասում ինձ: Ղունկիանոսը յայտնեց քմծիծաղով, թէ մի քանի օր է ինձ հարցնում էին երկու հնչակեան պարոններ... Ես ի՞նչ գործ պիտի ունենայի հնչակեանների հետ...

Եւ իսկապէս, չուտով նորից երեւացին երկու հնչակեան պարոնները: Արմաւիրում բաւական թուով հնչակեաններ կային, որոնք վերջերս նորից պատակտուած՝ բաժանուել էին երկու հակամարտ խումբերի. իմ այցելուները յայտնեցին, թէ իրենք, մօտ հարիւր հոգի, որոշել են միանալ Դաշնակցութեան: Եւ ներկայացրին համախօսական մի գրութիւն բազմաթիւ ստորագրութիւններով, որով խնդրում էին ընդունել իրենց Դաշնակցութեան շարքերը:

ARAM webaram.com

Ես խոստացայ մի քանի օրից պատասխանել, եւ խնդիրը տարի Արմաւիրի կոմիտէի ժողովին: Կոմիտէն որոշեց ընդունել:

Երբ ես իմացրի կոմիտէի որոշումը, երկու բանագնացները մեծ ուրախութիւն յայտնեցին: Իմ առաջարկով որոշուեց երդման արարողութիւնը կատարել մասնաւոր հանդիսաւորութեամբ, քաղաքից դուրս, անտառում, Կուբանի ափին:

Մայիսեան կիրակի առաւօտ էր: Արմաւիրի դանագան թաղերից, աննկատելի խումբերով մարդիկ հաւաքւում էին նշանակուած վայրում: Մայիսեան հաւաքական անտառահանդէսները սովորական էին Արմաւիրում, այդ պատճառով մեծ վախ չունէինք ոստիկանական հակողութիւնից:

Երբ ես, կոմիտէի անդամների հետ, հասայ տեղ, Կուբանի եզերքին, խիտ անտառում արդէն հաւաքուած էին մի քանի հարիւր հոգի: Կոմիտէի անդամների հետ ճանապարհին մշակել էինք ընդունելութեան արարողութեան ծրագիրը:

Հանդէսը բացուեց իմ ճառով: Ես ողջունեցի հնչակեան ընկերների որոշումը եւ յայտարարեցի յանուն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, որ ես լիազօրուած եմ նրանց ընդունելու մեր կուսակցութեան մէջ: Եւ հակիրճ խօսքերով բացատրեցի Դաշնակցութեան ծրագիրն ու կանոնադիրը, մասնաւորապէս ընդգծելով մեր կազմակերպութեան ապակենտրոնացման դրութիւնը: Աչքաւում էի յեղափոխական թունդ բառեր գործածել, որպէսզի տպաւորութիւնը ուժեղ լինէր նորեկների վրայ:

Հնչակեանները, մօտ եօթանասուն հոգի, չարուած էին չարքով եւ դէմքերը լուրջ՝ ուշադրութեամբ հետեւում էին իմ ճառին: Երբ ես վերջացրի, առաջ անցաւ ինձ այցելող երկու անձերից մէկը, որ յուզուած խօսքերով չնորհակալութիւն յայտնեց ինձ եւ Արմաւիրի մեր կոմիտէին, որ չէինք մերժել իրենց դիմումը: Ցայտնեց, որ իրենք այսքան տարիներ մոլորուած են եղել, խաւարը ընդունելով լոյսի տեղ, աղտոտութիւնը չփոթելով ճիւնաթոյր մաքրութեան հետ: Վերջապէս, հիմա գտել են ճշմարտութիւնը եւ ճշմարտութեան հասնելու ուղիղ ճանապարհը...

Քանի որ աղտոտութիւնը չփոթել էին մաքրութեան հետ, ես չտապեցի այդ խօսքից օգտուել մեր ծրագիրը իրականացնելու համար:

— Ընկերներ, պոռացի ես, հաննեցէք ձեր հագուստները, ամէնքս մաննենք գետը՝ Կուբանի ջրով նոր մկրտութիւն առնելու համար:

ARAM webaram.com

Երկար ապասելու պէտք չեղաւ: Մի քանի վայրկեանից արդէն ամէնքը ջրի մէջ էին, Ադամի ղեկաւով, ոմանք մինչեւ մէջքը, ոմանք մինչեւ կոկորդը: Կոմիտէի նախագահը, մօրուսաւոր, յաղթանդամ մի ազամարդ, մի ձեռքում բռնել էր Դաշնակցութեան դինանշանը, միւս ձեռքում մի մեծ դաշոյն, որ աւելի մսագործի դանակի էր նման:

Դարձեալ մի քանի տաք խօսքեր իմ կողմից: Թող Կուբանի այս ջրերը արմատից մաքրեն այն աղտոտութիւնը, որից ցանկանում էք ազատուել դուք: Ամէնքդ վեր բարձրացրէք ալ բազուկը եւ կրկնեցէք իմ յետեւից· «Երդւում եմ պատուիս, այս սուրբ դինանշանի եւ դաշոյնի վրայ, որ...», հնչակեաններըը հանդիսաւոր չեչոով կրկնում էին իմ խօսքերը: Արարողութիւնը վերջացաւ ձեռքի սեղմումներով եւ համբոյրներով: Եօթանասուն նոր ընկերներ միացան մեր կազմին:

Երդման արարողութեան հետեւեց, այսպէս ասած, խրախճանքը: Բացուեցին բերուած ծրարներն ու դամբիւղները: Շարուեցին դինու եւ օղիի չիշերը: Կանաչ խոտի վրայ ծալապատիկ, ամէն բաբիքով հարուստ սփռոցների չուրջ, սկսուեց կեր ու խումը, երգն ու պարը, կենացներն ու ուրախութիւնը: Եւ, ի հարկէ, յեղափոխական ճառեր: Դուք դիտէք, անշուշտ, ինչ ասել է կենաց ու յեղափոխական ճառ դաշնակցական խնջոյքներում, երբ մարդկանց կառարները տաքացել են եւ լեզուները բացուել...

Երբ ես մեկնում էի դաշտահանդէսի վայրից, չրջապատուած կոմիտէի անդամներով, անտառի խորքից կանացի մի զիլ ձայն սկսեց երգել·

Կուբանի եզերքին կը տնկեմ իմ այգին,
Այդ այգում սոխակները կ'երգեն...

Սոխակները, աւա՛ղ, չերգեցին իմ այգում, որ չատ չուտով չորացաւ:

Ես հազիւ հասել էի Նոր Նախիջեւան, կենտրոնական կոմիտէն տեղեկութիւն ստացաւ Ամմաւիրի կոմիտէից, թէ հնչակեան պատակառուած հատուածները հաշտուել էին, եւ մեր միլռեալները վերադարձել մայր-կուսակցութեան ծոցը...

1953
Շթորա, Լիբանան

ARAM webaram.com

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Ընկեր Գասպարը չտապով ներս մտաւ սենեակս, բաթումի «Բելվիւ» պանդոկում:

— Անմիջապէս պատրաստուիր նաւահանգիստ երթալու, նաւը մեկնում է չուտով:

Մի քանի օր էր ես անհամբեր սպասում էի ընկ. Գասպարի այդ բարի լուրին, բայց այդպիսի աճապարանք բնաւ հաճելի չէր: Իսկոյն հաւաքեցի ինչ որ ունէի զրքերով լեցուն նիհար պայուսակիս մէջ եւ հետեւեցի Գասպարին:

1910 *թուականի ամառն էր: Որսկան շներից հալածուած նապաստակի պէս, ես, քաղաքից-քաղաք փախչելով ցարական ժանդարմների ձեռքից, ելք էի փնտռում արտասահման անցնելու:*

Պետերբուրգից, հապճեպ ուսանողական չրջանս լրացած, անցել էի Մոսկուա հրատարակելու «Պատկ» ժողովածուն(*), նուիրուած Եղիշէ Թոփչեանի յիշատակին:

(*) Եղիշէ Թոփչեանի մահուան տարեդարձի առթիւ, Պետերբուրգի դաշնակցական ուսանողութիւնը որոշեց հրատարակել «ՊՍԱԿ» անունով ժողովածու: Նիւթական միջոցների հայթայթումը յանձնուեց մի յանձնախմբի, իսկ խմբագրութիւնն ու հրատարակութիւնը՝ ինձ եւ ուսանող Միշա Արզումանեանին: Ժողովածուն՝ աւելի քան 300 էջնոց մի հատոր, տպեցինք Մոսկուայում, Բարխուդարեանի տպարանում: Աշխատակիցներն էին՝ Ա. Ահարոնեանը, Ռ. Զարդարեանը, Սիամանթօն եւ ուրիշ անուանի գրողներ, բանաստեղծներ ու հրապարակագիրներ, ինչպէս եւ ուսանողներ: Հատորը դեռ լոյս չտեսած ես ստիպուած եղայ հեռանալ Մոսկուայից: Տպագրութիւնը աւարտելուց յետոյ, գրաճնիչի հրամանով գիրքը ամբողջութեամբ գրաւել եւ 3000 օրինակն էլ հրկիզել էին ժանդարմական վարչութեան բակում: Մէկ օրինակ միայն հասել էր ձեռս, Ամերիկա: Երբ ես 1914ին գողի Բոստոնը, ուրիշ իրերի հետ այդ հատորն էլ իւրացուել էր, երեւի, մի «գրասէր»ի կողմից: Հետագային որոնումներս ի զուր անցան:

ARAM webaram.com

Մոսկուայից Նոր Նախիջեւան՝ ծնողներիս եւ ընկերներիս հետ վերջին անգամ տեսնուելու ցանկութեամբ: Այս անխոհեմ քայլը քիչ մնաց, որ ողբերգական վախճան ունենար ինձ համար: Հազիւ կարողացայ ինձ նեռել Ղրիմ: Ղրիմում — Սիմֆերոպոլ, Եւպատորիա, Եալտա — մեծ դժուարութեամբ կարելի եղաւ մի թրքահպատակի անցագիր ճարել արտասահման դուրս գալու համար:

Ղրիմից՝ Փոթի, ուր բանտարկուած էր իմ հայրենակից եւ ճեմարանական ընկեր, Նոր Նախիջեւանի Սուրբ Թորոս ծխական դպրոցի աւագ ուսուցիչ եւ Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ Յակոբ Ղայբխեանը: Անխոհեմ եւ վտանգաւոր քայլ մըն էր, բայց ես անպատճառ պէտք է տեսնէի Յակոբին:

Փոթիում ինձ որ տեսաւ տեղական կոմիտէի նախագահ աստամնաբոյժ Ապրիլեանը սարսափած բացագանչեց.

— Տնաքանդ, ի՞նչ գործ ունես այստեղ, չուտով հեռացիր: Եւ երբ իմացաւ այցելութեանս նպատակը, աւելի եւս զայրացաւ: Բայց, վերջ ի վերջոյ, մեղմացաւ եւ նոյնիսկ բանտ առաջնորդեց ինձ իր բարեկամ բանտապետի համաձայնութեամբ: Աստմնաբոյժ Ապրիլեանի չնորհիւ էր, որ ես գոյ ընկեր Գասպարին հաթխումում:

Գասպարը զարմանալի մարդ էր: Ի պաշտօնէ բեռնակիր՝ բնաւ բեռնակրութեամբ չէր զբաղւում: Արհեստով դաշնակցական էր: Օրն ի բուն նստում էր սրճարաններում՝ կուսակցական գործերով կլանուած: Դաշնակցութեան աչքն ու ականջն էր հաթխումում եւ գործակատարը միաժամանակ:

Անցագիրս որ տեսաւ՝ Գասպարը քահ-քահ ծիծաղեց:

— Տնաքանդ, այս թղթով ո՞ւր ես ուզում դնալ:

— Պոլիս, պատասխանեցի ես:

— Չի՛ լինի, աղաւնեակս, անկարելի է: Մի տես՝ ի՞նչ է գրուած այս զահրումար թղթի մէջ:

Ես էլ դիտէի, որ, այդ «զահրումար թղթում» լաւ բաներ գրուած չէին, բայց ի՞նչ անէի, երբ աւելի յարմար անցագիր կարելի չեղաւ գտնել:

— Պոլիս պէտք է երթամ, պնդեցի ես:

— Պոլի՛ս... Սիրիր կ'երթաս այդ անցագրով... Համբերիր, տեսնենք ի՞նչ կարող ենք անել: Վաղը կը տեսնենք:

Եւ ձգելով ինձ «Բելվիւ», ընկեր Գասպարը անհետացաւ:

Յաջորդ կէսօրին նեղս մտաւ սենեակս քիթը կախ:

— Չէ՛, սիրական, անկարելի է: Առնուազն երեք շաբաթ պէտք է սպասես նոր անցագիր հանելու համար:

ARAM webaram.com

Բայց ես չէի կարող ասասել։ Նախ՝ վտանգաւոր էր, կարող էի ձերբակալուել. պէտք է օր առաջ ծլկէի։ Երկրորդ՝ դրամս էլ կը վերջանար։ Նաեւ չատ անհամբեր էի դարձել. պէտք է օր առաջ հեռանայի։

— Ինչ էլ լինի, ես պէտք է անմիջապէս մեկնեմ, պնդեցի ես։ Պոլիս թէ Սիբիր՝ միեւնոյն է. պէտք է մեկնեմ։

— Մեկնել՝ կարող ես մեկնել, բայց թէ ուր կը հասնես, չգիտեմ, փիլիսոփայեց ընկ. Գասպարը։ Եւ հեռացաւ նոր խոստումով «մի քան անելու»։

Երկու օր վերջը եկաւ, թէ՝

— Թուղթդ պատրաստ է, կարող ես մեկնել. եթէ Սիբիր չուզարկեն, կարող ես Պոլիս հասնել։

Իմ անցագրի վրայ վիզա էր առել։ Եւ մէկ ժանդարմի հետ պայմանաւորուել էր, որ նաւի վրայ թղթերը սուուգելիս, աչք դոցեն իմ անցագրի վրայ։ Նաւի տոմսս էլ ապահովել էր։ Եւ ահա եկել էր աճապարանքով ինձ նաւ առաջնորդելու։

Ճանապարհին խրատ տուեց.

— Հասկանո՞ւմ ես, աստիճաններով նաւ բարձրացիր, կարծես քեռուդ տունն ես մտնում — համարձակ։ Կամրջակի գլխին կանգնած ժանդարմներին նայիր ոնց որ քո հին բարեկամները լինէին — խընդա՛ երեսներին։ Չվախենաս։ Համարձակ եղիր։ Արագ չարժուիր եւ անվախ պատասխանիր։ Եթէ պայուսակդ ուզեն բանալ, «համեցէք, ասա, բացէք, մէջը քամի կը գանէք»։ Ամենագլխաւորը՝ համարձակութիւն...

Բայց «ամենագլխաւոր»ի պէտքը չեղաւ։ Ժանդարմները թեթեւ աչք նետեցին անցագրիս վրայ, ո՛չ մէկ խօսք չարին եւ քաղաքավարութեամբ թողին, որ ներս մտնեմ նաւը։ Նաւում էլ, մինչեւ մեկնումը, ուշադրութիւն չդարձրին վրաս։

Երեկոյեան դէմ նաւը հեռացաւ Բաթումից ուղիղ դէպի Սինոպ, ուր, քոլերայի պատճառով, պէտք է մնար մի քանի օր առանձնացած, վերջը Տրապիզոն վերադառնալու եւ այնտեղից ճամբորդութիւնը շարունակելու համար դէպի Պոլիս։

*
* *

«Համարձակ եղիր», միշտ հնչում էր ականջներումս ընկ. Գասպարի խրատը։

Ես աչխատում էի նաւի վրայ էլ «համարձակ լինել» եւ չուտով

ARAM webaram.com

ծանօթացայ փոքրիկ նաւի դրեթէ բոլոր ճամբորդներուն հետ։

Երբ նաւը խարսխեց Սինոպի ծոցի խորքում, խակոյն ցամաքից մօտեցան մեծ նաւակներ ճամբորդներուն մի մասը ծովափ փոխադրելու համար։ Հետաքրքրութեան համար ես էլ խառնուեցի նրանց հետ։ Պարզուեց, որ երբորդ կարգի ճամբորդներ էին միայն, որ ափ էին տարուում բաղնիքում լողացնելու, ախտահանելու եւ մի քանի օր մեկուսացած պահելու համար։ Ես երկրորդ կարգի տոմսակ ունէի եւ նման դործողութեան ենթակայ չէի, բայց ինչքան աշխատեցի, անկարելի եղաւ համոզել թուրք պաշտօնեաներին, որ ինձ ազատ ձդէին։ Ինձ էլ միացրին երբորդ կարգի ճամբորդներին, մերկացրին ու հրեցին տաք բաղնիք՝ հագուստս նետելով չոգեմեքենայի մէջ...

Երբ դուրս եկայ քաւարանից, հագուստս անճանաչելի էր դարձել։ Տաքուստ բզիկ-բզիկ էր եղել, վերից վար ճեղքուել, բաճկոնս ճմռթկուել էր։ Անձրեւի տակ թրջուած հնդկահաւի կերպարանքով՝ արտօնութիւն ստացայ վերադառնալու նաւ...

Ընթրիքի վրայ, Զինաստանից վերադարձող մեռաքսի վաճառական պոլսեցի մի հայ, լսելով իմ ոդիսականը, պատմեց նապաստակի եւ ուղտի առակը.

— Մի օր, Պարսկաստանից, մի նապաստակ խելակորոյս փախչում է դէպի Ռուսաստան։ Սահմանի վրայ նրան հանդիպում է մի ուրիշ նապաստակ։

— Ինչո՞ւ, բարեկամ, էդ ո՞ւր ես վազում այդպէս արագ։

— Բա՛, դու չե՞ս լսել, որ շահը հրաման է արձակել բոլոր ուղտերին պայտել։

— Բայց քե՞զ ինչ. դու հօ ուղտ չես։

— Ուղտ չես... դնա ու ապացուցիր, որ ուղտ չես։ Մինչեւ, որ ապացուցանես, քեզ կը պայտեն...

Ինձ էլ ապացուցանելու ժամանակ չտուին. պայտեցին ու ճամբու դրին...

Երբ Բարանտինեան լրացնելուց յետոյ նաւը հասաւ Տրապիզոն, եւ ճամբորդները սկսեցին ափ իջնել, ուղտի եւ նապաստակի պատմութիւնը մտքումս էր։ Սինոպի դէպքը այստեղ էլ չէ՞ր կրկնուի արդեօք։

Բայց կրկնուի թէ չկրկնուի, ես պարտաւորուած էի դուրս գալու դոնէ մի ձեռք հագուստ գնելու համար. խաղք ու խայտառակ էի եղել նաւի վրայ...

Տրապիզոնում այդ օրերին մերոնք ի պատուի էին։ Նաւահանգստում թուրք պաշտօնեաները, լսելով մեր ընկեր Աւոյի անունը,

ARAM webaram.com

«քույրուն»ով ընդունեցին ու վերջը «քույրուն»ով էլ ճանապարհ դրին դէպի նաւը: Սահմանադրութիւնը տակաւին մեղրամիսի չրջանում էր, եւ հայերի ու Դաշնակցութեան վարկը բարձր էր Թուրքերի աչքին...

Երբ Տրապիզոնից Սամսոն հասանք, նաւ նստան երկու երիտասարդներ, որոնց հետ չուտով ծանօթացայ: Մէկը ուսուցիչ էր՝ Յարութիւն Եայլեան, գնում էր Պոլիս ամառուայ արձակուրդի եւ պաշտօն որոնելու համար: Միւսը՝ Բէյրութի համալսարանի բժշկական ուսանող Երուանդ Ֆաթհանեսեանը: Երկուսն էլ գաղափարական դաշնակցական երիտասարդներ՝ Յարութիւնը տակաւախօս ու մտամփոփ, Երուանդը՝ վառվռուն, յարաչարժ ու դիւրահաղորդ, համակ եռանդ: Մեր ծանօթութիւնը չուտով փոխուեց ընկերութեան, իսկ երբ նաւը հասաւ Պոլիս, արդէն մտերիմներ էինք:

Ուիլիըմ Սարոյեանը հաւատացած է, որ հայը հային, ուր էլ լինի, մտերիմ է ու հարազատ: Որքան ճիշտ է այս վարկածը, ուրիշները թող դատեն: Ես կարող եմ վկայել, թէ դաշնակցականը դաշնակցականին, ուր էլ որ լինի, մտերիմ է ու հարազատ: Այդպէս եղել է, այդպէս էլ պէտք է լինի: Այդպէ՞ս է այսօր, այդ էլ թող ուրիշները ասեն:

*
* *

Պոլսի նաւահանգստում, Երուանդը մտերմօրէն ընկերացաւ ինձ, մաքսատան եւ անցագրերս քննութեան միջոցին: Մաքսատան մէջ անելիք բան չկար. պայուսակս լեցուն էր գրքերով եւ մի քանի կտոր սպիտակեղէն-մպիտակեղէնով: Անցագրերս առուզման ժամանակ խոփս դնեցաւ քարին: Մի բան, որ վատուց սպասում էի:

Արդէն Բաթումից սկսած մինչեւ Պոլիս անարգել հասնելս ես պարտական էի «ճակատագրին»: Իմ ունեցած անցագրով, եթէ իշխանութիւնները բարեացակամ կամ անփոյթ չլինէին, ոչ Ռուսաստանից կարելի էր դուրս գալ, ոչ էլ անցագրի դրութիւն կերտող որեւէ երկիր մտնել:

Թուրք պաշտօնեան անցագիրս առաւ, ուշի-ուշով նայեց, այս կողմ, այն կողմ թերթեց եւ զարմացած հայեացքը ուղղեց դէմքիս.

— Իսմի՞ն...

Այդքան թուրքերէն հասկանում էի. անունս էր ուզում իմանալ: Իսկոյն պատասխանեցի զոց սովորած դասի պէս.

— Քէօսէլլու Սարգիս:

ARAM webaram.com

Ճաշորդ հարցումը արդէն իմ թրքախուխեան սահմաններից վեր էր: Եւ այստեղ ասպարէզ մտաւ Երուանդ Ալթանասեանը թարգմանի դերում. երկրորդ հարցումով պաշտօնեան հետաքրքրուած էր իմանալու, թէ ես ո՞րտեղացի եմ:

— Տրապիզոնցի, պատասխանեցի համարձակ:

Մարդը յօնքերը կիտեց զարմացած.

— Տրապիզոնցի՞... եւ Թուրքերէն չգիտէ՞ք:

Մտածեցանք նզովեալ անցագրիս ամենավիրաւոր կողմերին: Հնա՞ր էր անխոցելի բացատրութիւն տալ:

Պատասխանեցի, թէ վաղուց եմ հեռացել Տրապիզոնից:

Մարդը աւելի եւս քիթը խոթեց անցագրիս մէջ:

— Բայց այստեղ գրուած է, թէ դու ութ ամիս առաջ ես մեկնել Տրապիզոնից...

— Ճիշտ է, ես կարճ ժամանակով Պրիմից եկել էի Տրապիզոն եւ ութ ամիս առաջ նորից մեկնել Պրիմ...

Մարդը պարզապէս անվստահութեամբ՝ չարունակեց քննել անցագիրս ու, յանկարծ, հեգնական թէ բարկացած ծիծաղով՝ սկսեց կարդալ՝ մէկ ինձ նայելով, մէկ անցագրին.

— Սարգիս Գէօսօղլու, տրապիզոնցի, դասապ, կարճահասակ, մազերը՝ շէկ, աչքերը՝ կապոյտ...

Նզովեալ Թուրք. գոնէ մէկ կէտում նմանութիւն լինէր: Ջուր չէր ընկեր Գասպարի արհամարհանքը: Եւ արդէն Պրիմում էլ ինձ տուել էին պայմանական կերպով — միայն Թուսաստանում գործածելու համար. ռուս ոստիկանները կամ ժանդարմները Թուրքերէն չէին կարող կարդալ, իսկ Ֆրանսերէն մասը համառօտ էր: Բաթումում ես պէտք է նոր անցագիր ճարէի Թուսաստանից դուրս գալու համար...

— Ինձ լսիր, դարձաւ պաշտօնեան՝ զարմացա՞ծ, թէ զայրացած, այս անցագիրը ո՞ւրտեղ ես գնել, քանի՞ ղուրուչ ես տուել...

Ամբաստանութիւնը վիրաւորուած մարդու պէս՝ ես վրդովուած պնդեցի.

— Անցագիրը իմս է:

— Հայտէ, հայտէ, մեզ չիմարի տե՞ղ ես դնում... Այս անցագիրը քոնը չէ...

Երուանդը իր բովանդակ պերճախօսութեամբ՝ աշխատում էր համոզել Թուրք պաշտօնեային, թէ «Թիւրիմացութիւն կայ մէջտեղը», ձգէ, որ անցնինք, բայց մարդը չէր համոզւում:

Շուրջը ճամբորդները խռնուած՝ զանազան դիտողութիւններ

ARAM webaram.com

էին անում եւ խորհուրդներ տալիս, բարձր հոհոում էին ծիծաղելի կէտերում:

Երուանդի պերճախօսութիւնն էլ չօգնեց: Պաշտօնեան պնդում էր իր ասածի վրայ. անցագիրս կեղծ էր, եւ ապօրինի կերպով էի ուզում Թուրքիա մտնել, հետեւաբար եւ բնականաբար, ինձ պէտք էր հսկողութեան տակ առնել, մինչեւ որ հարցը պարզուէր... Բայց մեր պնդումի վրայ պաշտօնեան մեղմացաւ ու հարցրեց, կարծես, նահանջի դուռ փնտռելով:

— Պոլսում ծանօթ ունէ՞ք:

Անշուշտ, ունէի. Օսմանեան Ժորհրդարանի երեսփոխաններ վարդգէս Էֆենդի, Փաստրմաճեան Էֆենդի, «Ազատամարտ»ի խմբագրութիւն...

Մարդը թերահաւատութեամբ նայում էր դէմքիս. այս կեղծ անցագրի տէրը ինչե՛ր է դուրս տալիս:

Բայց այստեղ Երուանդի պերճախօսութիւնը վճռական յաջողութիւն արձանագրեց: Էֆենդիի ասածը ճիշտ է: Կարող էք ստուգել: Հեռախօսեցէք «Ազատամարտ»ի խմբագրատուն...

Մարդը սկսեց տատանուել. ինչո՞ւ առողջ գլուխը դուրսի տակ դնէր: Ժամանակները այնպէս էին, որ ամէն բան հնարաւոր էր: Աչալրջութիւնը խմաստութիւն էր...

— Ո՞ւր պիտի իջնէք Պոլսում, հարցրեց նա յայտնապէս նոր դիրքաւորումով:

— Պանդոկ, — պատասխանեցի ես:

— Ձեզ կը տանեն պանդոկ, անցագիրը կը մնայ մեզ մօտ, կը ստուգենք. վաղը կը ներկայանաք ոստիկանատուն...

Մի ոստիկան առաջնորդեց «Ռոզոսմօ» պանդոկը, Ղալաթայի գլխին, որտեղից կարելի էր լսել լաթերնայի ոլորուն եղանակներ՝ կատկածելի կանանց սուր ճիչերին խառնուած:

Յաջորդ առաւօտ ոստիկանատան մէջ ինձ ընդունեցին բարեկամական ժպիտով:

— Սարգիս Քէօսոլու, դասա՞պ, խնդաց ոստիկանապետը: Վրացեան էֆենդի, դուք այլեւս անցագրի պէտք չունիք: Մեր երկիրը ազատ է, գնացէք ուր որ կ'ուզէք, ասաց նա քաղաքավարութեամբ:

Ես գնացի ուղիղ «Ազատամարտ»ի խմբագրատուն, Համալ Բէյ, թիւ 76:

1942, Փրեզիօ

ARAM webaram.com

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Միւս ընկերները ցրուեցին ով ուր ուզում էր. ես դնացի Սահրանդի մօտ:

1914ի ամառուայ սկիզբն էր, Տրապիզոնում: Խմբով գնում էինք կարին, Հ. Ց. Դաշնակցութեան Ութերորդ Ընդհ. ժողովին: Մեզ հետ էին Լ. Ակնունի, Ռ. Զարդարեան, Արտ. Հանըմեան, Խմբապետ Համազասպ, Վահան Մինախորեան, Տիգրան Խաչիկեան, Աւետիս Ինճէճիքեան: Պոլսից դուրս էինք եկել տարբեր նաւերով՝ երկու խմբի բաժանուած եւ Տրապիզոնում միացանք: Մեզ հետ պէտք է գային եւ Արմէն Գարոն ու Միքայէլ Վարանդեանը, բայց Գարոն մարզպանների խնդրով ուշացաւ, իսկ Միքայէլը ժրնեւից յայտնել էր, թէ առողջական պատճառներով ի վիճակի չէ մինչեւ կարին ճամբորդելու:

Տրապիզոնում, ինչպէս եւ Սամսոնում, Կիրասոնում, մեր ընկերները խանդավառ ընդունելութիւն ցոյց տուին, բայց բոլորի դէմքերի վրայ մտահոգութիւն էր նշմարւում: Թուրքերը խէթ աչքով էին նայում մեզ. հայը այլեւս ի պատուի չէր նրանց համար: Ո՛ւր Սահմանադրութեան առաջին տարիները, ուր այժմ: Բարենորոգումների հարցը աւելի եւս խորացրել էր այն վիհը, որ բացուել էր Ադանայից յետոյ եւ առանձնապէս խորացել էր Թուրք–բալկանեան պատերազմից յետոյ:

Որոշել էինք ճաշել ամէնքս վանեցի Հաճիի ճաշարանում, քաղաքային պարտէզի մէջ, եւ ապա ճանապարհուել: Երիտասարդ ընկերները ուզում էին ուղեկցել մեզ մինչեւ ձեւիլլիկ: Ես մնացի ճաշելու Սահրանդի մօտ:

ARAM webaram.com

Սահրանդը — Հրանդ Սարաֆեան — Ռոստով-Նախիջեւանի իմ մտերիմ ընկերներից էր: Երբ եւս ձեմարանից ելայ, նա Նալբանդի կենտրոնական կոմիտէի անդամ էր: Ընտանիքը — տրապիզոնցի — ապրում էր Նոր Նախիջեւանում: Հայրը կօշկակարի արհեստանոց ունէր: Ջոյրը մեր օրիորդաց խմբի անդամուհիներից էր: Ինքը՝ Հրանդը, իբր թէ, աշխատում էր հօր հետ արհեստանոցում, բայց ժամանակի մեծ մասը տալիս էր կուսակցական գործերի: Աչքաց, գուարթ, եռանդուն, լեզուանի երիտասարդ էր: Մեծ զարգացում չունէր. իր գիտցածը ձեռք էր բերել ինքնաշխատութեամբ՝ կարդա-



Ձախ՝ ՍԱՀՐԱՆԴ, աջ՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

լով կամ ժողովներում: Սիրում էր գրականութիւն, արուեստ, թատրոն: Ամէն բանի մասին կարող էր — եւ սիրում էր — խօսել ու վիճաբանել: Լաւ սիրտ ունէր, եւ ամէնքը սիրում էին նրան:

Առաջին իսկ հանդիպումից մենք մտերմացել էինք Սահրանդի հետ: Նրա կուսակցական անունն էլ եւս տուի՝ անուն-ազգանունի սկզբնատառերից — Սարաֆեան Հրանդ — Սահրանդ:

Մի քանի ամիս ապրեցինք միասին. նրա հայրը բարկացել էր վրան եւ դուրս արել տնից պահանջելով, որ վերջ տայ կամ գէթ չափաւորէ կուսակցական աշխատանքը եւ արհեստին նուիրուի, բայց Հրանդը չէր համակերպուել: Միասին ապրելով՝ մենք աւելի եւս

ARAM webaram.com

մօտեցանք իրար: Հրանդը պատմեց իր սրտի ցաւը: Նա սիրահարուած էր իրեն մօտիկ աղգականի, կարծեմ, մօրաքրոջ աղջկայ վրայ: Սէրը փոխադարձ էր, բայց թէ՛ իր եւ թէ աղջկայ ծնողները լսել անգամ չէին ուզում նրանց ամուսնութեան մասին:

Երկար պայքարից յետոյ, Հրանդը իր սրտի հատորի հետ միասին եկել էր Տրապիզոն եւ մի քանի ամիս առաջ ամուսնացել այստեղ: Գործ չունէր դեռ, բայց մտածում էր բանալ կօշիկի արհեստանոց «մարմնի համար», իսկ հոգին չարունակում էր սաւառնել եթերում եւ կուսակցական ժողովներում: Կինը, զուարթ ու համակրելի աղջիկ, սիրում էր ամուսնուն եւ նուիրուած էր նրա անձին ու գործին: Երկուսն էլ անկեղծ ուրախութեամբ հանդիպեցին ինձ:

Ճաշի վրայ ես զգացի, որ Հրանդի մէջ մի բան կոտրուել էր. կարծես՝ նախկին աշխուժութիւնն ու լաւատեսութիւնը չէին մնացել մէջը: Խոշոր ու չարժուն աչքերը, յաճախ, կանգ էին առնում՝ յառած անորոշութեան մէջ:

— Ի՞նչ է պատահել քեզ, տղայ, հարցրի ես զգուշութեամբ, կարծես լաւ չես զգում քեզ: Չլինի՞ հայրենաբաղձութիւնից ես տառապում:

— Սրանից անդին հայրենիք չկայ, պատասխանեց նա տրտում, ինչո՞ւ պիտի տառապեմ: Բան չի պատահել:

— Բայց եւ այնպէս տառապում ես, վրայ բերեց կինը. տե՛ս, մեր հիւրն էլ է նկատել:

— Վերջին օրերը Հրանդը չատ է փոխուել, զանգատի ձեւով դարձաւ ինձ կինը: Մի բան կայ մէջը, բայց չի խոստովանում: Ասում եմ՝ հիւանդ հօ չե՞ս: Ասում է՝ չէ: Բայց մի բան կատարուում է մէջը:

Հրանդը, յանկարծ, ձեռքի պատառաքաղը նետեց սեղանի վրայ ու չակուեց:

— Հիւանդը ես չեմ, ամբողջ աշխարհն է հիւանդ, չէ՞ք տեսնում, դրեթէ պոռալով, ջղայնացած խօսեց նա: Ես չեմ փոխուել, աշխարհն է փոխուել, մի՞թէ չէք տեսնում... Այո՛, ամէն ինչ փոխուելու վրայ է... Եւ էլ այս թաւարդից ելք չկայ...

Նրա վրայ սաստիկ ազդել էր Սարայեւոյի դէպքը, որ չարագուշակ նշան էր համարում:

— Մի՞թէ դու դեռ չես տեսնում, պոռաց նա իմ երեսին, որ մեր վրայ արդէն կախուած է պատերազմի մղձաւանջը...

Արդար լինելու համար պէտք է խոստովանեմ, որ ես դեռ պատերազմի մղձաւանջ չէի տեսնում: Եւ մեր չրջապատում ոչ ոք

ARAM webaram.com



ԷՐԶՐՈՒՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻԻՆ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ

(Քարտը ղրկուած է Ամերիկա՝ Ս. վրացեանին)

ARAM webaram.com

չէր տեսնում: Հրանդը վեցերորդ դպրոցականքով զբում էր այն ինչ որ նախապատրաստւում էր տարերային ուժով մթութեան մէջ:

— Տղա՛յ, ի՞նչ յիմար բաներ ես ասում, ի՛նչ պատերազմ, ի՛նչ բան... Խելքդ գլուխդ հաւաքիր:

— Գիտե՞ս ինչ, խօսեց նա հանդարտած, ես դիշերները չեմ քնում, միշտ պատերազմ է երեւում աչքերիս եւ թնդանօթների որոտը ականջներումս... կատաղած թուրք խուժանն է աչքերիս առջեւ ... Ինձ թւում է, թէ հիմա կը յարձակուեն մեր վրայ, բզիկ-բզիկ կ'անեն մեզ...

— Իսկապէս, որ հիւանդ ես, տղա՛յ. ի՞նչ է պապահել քեզ:

— Ինձ ոչինչ չի պատահել, բայց տեսնո՞ւմ ես, դուրսը ինչե՛ր են տեղի ունենում: Ձնկատեցի՞ր թուրքերի սադայէլական նայուածքը նաւահանգիստում... Պոլսում մերոնք մարզպան են խաղում, իսկ տուգանքը մենք պիտի քաչենք գաւառներում... Պիտի տեսնես, 95ի տարափները պիտի կրկնուեն աւելի մեծ չափով, եթէ պատերազմ լինի...

Հիմա ինձ հասկանալի էր Սահրանդի հոգեկան տագնապը: Նա դեռ չատ առաջ, նամակներում, բողոքում էր բարենորոգումների ծրագրի եւ Պօղոս Նուպարի առաքելութեան դէմ, անողոք քննադատութեան էր ենթարկում մերոնց Պոլսի գործունէութիւնը, ծաղրում էր Վռամեանի յօդուածները «մարզպանների» մասին: Նրա կարծիքով վերջ պէտք էր տալ մեր եւրոպական դիմումների եւ աչխատել լեզու գտնել թուրքերի հետ՝ ներքին պետական միջոցներով ապահովելու համար բարենորոգումները: Այլապէս անխուսափելի էին նոր Ադանաներ...

Այո՛, հիմա ինձ համար հասկանալի էր Սահրանդի հոգեկան վիճակը, նրա տարտափը պատերազմից: Հակառակ արտաքին անփութութեան — ինչպէս ասում էր ինքը Նախիջեւանի բարբառով, հակառակ դրդռլանկութեան — մտացի եւ խղճով տղայ էր Հրանդը: Ցոյց չէր տալիս, բայց ըստ երեւոյթին հոգեպէս տանջւում էր նաեւ սիրած կնոջ համար, որին թերել էր «այս վայրենիների մէջ»: Ի՞նչ կը լինէր նրա վիճակը, եթէ իրեն մի բան պատահէր...

Ճաչի վերջաւորութեան եկաւ դերձակ Արշակը, մեր Տրապիզոնի հաւատաւոր եւ գործունեայ ընկերներից մէկը: Միասին պիտի երթայինք «Փալաս» պանդոկի առջեւ, որտեղից կառք պէտք է առնէինք: Արշակի եւ Սահրանդի հետ միասին դուրս եկանք անից: Փողոցում թուրքերը թշնամական աչքերով հետեւում էին մեզ: Թէ՞ մեզ այդպէս էր թւում:

ARAM webaram.com

— Ա՛ս չունները պիտի ուտեն մեզ, նկատեց Արշակը, որ բաժանում էր Սահրանդի վախերը:

Պոլսի ընկերներից ես տարբեր տպաւորութիւն էի ստացել. նրանք դո՛հ էին բարենորոգումների հարցի ընթացքից՝ ոմանք բարձրաղաղակ, ուրիշները՝ դուսպ: Պոլսում ես էլ վարակուեցի լաւատես տրամադրութեամբ, թէեւ Ամերիկայում մենք դո՛հ չէինք բարենորոգչական քաղաքականութիւնը բոլորովին հակառակ պատճառներով: Սահրանդը հիմա դոյլերով պաղ ջուր էր լեցնում գլխիս:

Երբ Ճեւիլլիկում հրաժեշտ տուինք Տրապիզոնի ընկերներին, որոնք կառքերով կամ հեծանիւներով եկել էին ճամբու դնելու մեզ, և մեր դոյդ կառքերը սկսեցին բարձրանալ Զղանայի վերելքով, հետս նստած Ակնունիին եւ, եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում, Զարդարեանին եւ Մինախորեանին պատմեցի Սահրանդի ասածները: Ակնունին եւ Զարդարեանը դատապարտեցին Սահրանդին յոռետեսութիւնը: Ակնունիի վերաբերումը բնական էր. նա ի ծնէ լաւատես մարդ էր: Այժմ տարօրինակ է թւում ինձ Զարդարեանի վերաբերումը, որ ի ծնէ յոռետես եւ կասկածամիտ մարդ էր. ինչպէ՞ս է, որ նա չէր տեսել եւ չէր զգացել այն՝ ինչ որ Սահրանդն ու Արշակը բնազդօրէն զգացել էին:

Բայց ես նկատեցի, որ Ակնունին ու Զարդարեանն էլ, ինչպէս եւ ամէնքը, ատամիկ աղղուեցին Թուրքերի ակնյայտնի թշնամական կեցուածքից Բաբերդում, ուր մենք հասանք երեկոյեան, երբ արդէն մութը կոխած էր:

Մեր կառքերը առաջանում էին խաւար փողոցներով դէպի Դաշնակցութեան ակումբը: Խանութների առջեւ խոնուած Թուրք ամբոխը բառնգք էր ճօճում մեր ուղղութեամբ: Նոյն իսկ քար նետող եղաւ:

Դաշնակցութեան ակումբում ընկերները դիմաւորեցին մեզ զուսպ ու մտախոհ: Համեստ ընթրիքից յետոյ, նրանց լեզուները բացուեցին եւ իրար յետեւից առաջ էին բերում մռայլ փաստեր, որոնք ցոյց էին տալիս, թէ ինչքա՛ն թշնամութիւն կար Թուրքերի մէջ դէպի հայերը: Այդ փաստերը բարեգուշակ չէին, եւ տխուր տրամադրութեամբ մտանք ընկերների պատրաստած անկողինները ակումբում՝ վաղ առաւօտեան ուղեւորուելու համար:

Յաջորդ օր ամէնքիս դէմքը տրտում էր, բայց առանձնապէս կոտրուած էր երեւում Զարդարեանը: Նա նոյն իսկ չէր յարդարել իր խնամուած բեխերը, որոնք, սարեակի թրջուած թեւերի պէս, կախ էին ընկել: Չէին զուարթացնում նոյն իսկ Տիգրան Խաչիկեանի կա-

ARAM webaram.com

տակներն ու սրախօսութիւնները, ոչ էլ Համազասպի բամբ ձայնով պատմուած մանրավէպերը:

Տիգրանն ու Համազասպը մեր խմբի ամենազուարթ անդամներն էին: Առաջինը իր յարաշարժ բնաւորութեամբ, սրամտութիւններով ու սրախօսութիւններով, կատակներով ու վէճերով Համազասպի հետ միշտ արթուն եւ ուրախ էր պահում խումբը: Համազասպը, բացի այդ, նաեւ հնարամիտ «տանտիկին» էր. նա էր հոգում ուտելիքը եւ երբեք անօթի չթողեց մեզ: Նրան աջակցում էին Ակնունին ու Զարդարեանը... տեսական խորհուրդներով:

Բաբերդի թողած պաղ տպաւորութիւնը, ի վերջոյ, հալեց Ակնունիի տաք լաւատեսութեան ազդեցութեան տակ, մանաւանդ որ Համազասպը Բաբերդից առաւ եւ հաճելի ուտելիքներ ու խմելիքներ էր ապահովել՝ նոյն իսկ Արտաւազդ Հանըմեանի դժուարահաճ ճաշակին գոհացում տալու աստիճան:

Իլիճայում մեզ սպասում էր հաճելի անակնկալ. ընդառաջ էր եկել Ռոստոմը մի խումբ ընկերներով եւ բարեկամ-բարեկամուհիներով: Հանդիպումը եղաւ շատ ջերմ եւ ուրախ: Երբեք ես Ռոստոմին չէի տեսել այդպիսի լաւ տրամադրութեան մէջ:

Ճաշի ժամանակ ես պատմեցի Սահրանդի եւ Բաբերդի ընկերների տրամադրութիւնների մասին: Կարծես խօսքերիս ականջ դնող չեղաւ: Ռոստոմը, Ակնունին — ամէնքը բարձր տրամադրութեան մէջ էին: Եւ ինչպէ՞ս չլինէին. Հ. Ց. Դաշնակցութեան Ընդհանուր ժողովն էր դումարուում Աւետեաց երկրում...

Ամէնքը ուրախ էին, բացի Փիլոսից, որ թիկնած ծառի բունին, կարծես անհաղորդ էր ընդհանուր ժխորին՝ իր մարալի մեծ աչքերը յառած անորոշութեան մէջ: Նա չկացնում էր ձեռքի համբիչը եւ անվերջ ծխում, առանց մի պատառ ուտելիք դնելու բերանը:

Երբ ճաշից յետոյ, Փիլոսի հետ ուղղուեցինք դէպի ջերմուկները, նա բաց արաւ իր սիրտը:

Սահրանդի պէս, Փիլոսն էլ նոր էր ամուսնացել, եւ գրեթէ մեեւնոյն պայմաններում, իր մի ազգականուհու՝ վարսենիկի հետ, մասնագիտութեամբ մանկաբարձուհի, Կովկասից: Բերել էր տուել կարին նաեւ իր մօրը եւ տաքուկ ընտանեկան յարկ կազմել: Մե՛նթի պէս սիրում էր կնոջ եւ զոհում նրա վրայ: Ռոստոմի ձեռքի տակ կուսակցական գործերով էր զբաղուած եւ միաժամանակ դաշտի հայ գիւղերի ընդհանուր դպրոցական տեսուչ էր: Նաեւ «Ցառաջ» թերթի խմբագրութեան մէջ: Ինձանից գաղտնիք չունէր:

— Երանի՛ քեզ, խօսեց նա տխուր, երբ արդէն բաւական հե-

ARAM webaram.com



ՌՈՍՏՈՄԸ, ՄԱՅՐԸ ԵՒ ՔՈՅՐԸ՝
ՀԱՄԱՍ, 1914ԻՆ ԿԱՐԻՆՈՒՄ

ոացել էինք բազմութիւնից, երանի՛ քեզ, որ հեռու ես այս դժոխքից։

— Ի՛նչ յիմար բաներ ես խօսում, կարեցի ես, ի՛նչ դժոխք։ երանի՛ քեզ, որ դանուում ես երկրում, ժողովրդի մէջ, ուր գործի եւ ոգեւորութեան ասպարէզ կայ...

— Ոգեւորութե՞ան, ընդմիջեց նա հեգնանքով, գործի ասպարէ՛զ... Աւի՛, փոխենք մեր ասպարէզները...

ARAM webaram.com

— Սիրով, ես պատրաստ եմ:

— Այո՛, դու պատրաստ ես, բայց ե՞ս...

Ժօսքը չվերջացրեց: Փիլոսը դիտէր, որ ես կամքիս հակառակ թողել էի Կարինը՝ Ակնունիի պահանջով եւ Ռոստոմի որոշումով: Տեղեակ էր նաեւ, որ Ամերիկայից մի քանի անգամ խնդրել էի Ռոստոմին, որ արտօնէր վերադառնալ Կարին: Ռոստոմը, սակայն, չէր համաձայնուել, որովհետեւ չէր համաձայնում Ամերիկայի կենտրոնական կոմիտէն: Ես մի քանի անգամ Փիլոսին էլ առաջարկել էի՝ փոխենք մեր տեղերը...

— Դու պատրաստ ես, դիտեմ, բայց եթէ այստեղ լինէիր, կասկածում եմ, որ այդպէս յօժարութեամբ համաձայնուէիր ձգել Ամերիկան...

— Ես Ամերիկայից կշտացել եմ եւ կարօտով եմ յիշում Կարինի կեանքը, բայց ասա, խնդրեմ, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես այդպէս խօսում, ճիշտ Սահրանդի նման: Նա էլ էր երանի տալիս ինձ...

— Այս չները պիտի ուտեն մեզ, բառացի կրկնեց նա ղերճակ Արշակի խօսքը: Դու չես պատկերացնում, ի՞նչ է կատարւում այստեղ, ինչքա՛ն փոխուել են թուրքերը:

— Բայց ինչո՞ւ, չհասկանալ ձեւացրի ես:

— Ինչո՞ւ — պօղոս փաշային հարցրու: Մերոնք էլ պոլսում չեն հասկանում՝ ինչեր են անում: Բարենորոգում են խաղում, որից չարանորոգումի հոտ է գալիս... Աստուած մի՛ արասցէ, եթէ պատերազմ լինի, մեզ հում-հում կ'ուտեն...

Փիլոսի նամակներից էլ դիտէի, որ նա հակառակ էր բարենորոգումների հարցի չուրջ յարուցուած ազմուկին եւ Պոլսի ընկերների լաւատեսութեան: Եւ որովհետեւ ոչ մէկ հատատ չունէր մեծ պետութեանց խոստումներին, համոզուած էր, որ փոխանակ արտաքին միջամտութիւն փնտռելու, պէտք է հնարաւոր դիմումներով հասկացողութեան գեմին գտնէին թուրքերի հետ:

— Ի՞նչ է մտածում Ռոստոմը, հարցրի ես:

— Ռոստոմի մխքը ծուլ է, որ վերջերս թուում է փոթորկուած: Զտեսա՞ր՝ ճակատը աւելի է կնճռոտել: Ի հարկէ, մտահոգուած է: Զափազանցութիւն է համարում Պոլսի ընկերների լաւատեսութիւնը, բայց աշխատում է հաւատարակչութիւն պահել... Ինչո՞ւ Ռոստոմին ես հարցնում. հարցրու Աստուրեանի կարծիքը, ահա այստեղ է: Կամ հարցրու Արտունիի կարծիքը, որ ամէնօրեայ չիման մէջ է թուրք երեւելիների հետ: Հարցրու չուկայի մարդկանց կարծիքը...

ARAM webaram.com

Կարծես մեզ լսած լինէր, քիչ վերջը մօտեցաւ Աստուբեանը: Մեր հին ու վաստակաւոր ընկեր Յովհաննէս Աստուբեանը, որ մասնակցել էր Կարնոյ առաջին յեղափոխական կազմակերպութեան, դործակցել էր Արամ Արամեանին, ապա Թոստոմին, 1895ին: Լրջախոհ, համեստ, անձնուէր գաղափարական մարդ էր՝ յարգանք վայելող հասարակութեան մէջ:

—Ի՞նչ խօսք ու խորաբայի մէջ էք, հարցրեց նա ժպիտով,



ՓԻԼՈՍԸ ԵՒ ԻՐ ՎԱՐՍԵՆԻԿԸ

թէեւ տրամութիւն էր նշմարւում աչքերում: Ես այդ վերագրեցի այն բանին, որ իր Գեղամ որդին կարինից դժդոհ, ձգել-հեռացել էր Մուշ, բնական է, վիշտ պատճառելով հօրը (*):

— Փիլոսը տարօրինակ բաներ է պատմում, ասացի ես, խընդրեմ մի բացատրիր, ընկեր Աստուբեան, ճի՞շտ է իր ասածը:

— Անշուշտ, ճիշտ է. Փիլոսը անճիշտ բաներ չի խօսիր, կատակեց Աստուբեանը: Եւ լսելով, թէ բանը ինչումն է, աւելացրեց.

(*) Գեղամ Աստուբեանը ուսուցիչ-գործիչ էր դարձել Տարօնում. խելացի, յանդուգն, անձնազոհ երիտասարդ էր: Առաջին զոհերից մէկը եղաւ պատերազմի ընթացքին. թուրքերը նրան բանտարկեցին եւ մահացրին խախտանոց:

ARAM webaram.com

— Այո՛, ցաւօք սրտի ճիշտ է։ Այս չուները կատղեր են, պիտի ուտեն մեզ, եթէ մենք չկարողանանք պաշտպանուել։

— Այսինքն, ի՞նչպէս պաշտպանուել. ի՞նչ աննենք...

— Եթէ չես կրնար ընել ինչ որ կ'ուզես, ուզէ ինչ որ կրնաս...

— Այսի՞նքն։

— Եղիր խորագէտ օձի պէս եւ ձեւացիր միամիտ աղաւնիի նման։

— Այսի՞նքն։

— Այսինքն, այսինքն — ի՞նչ այսինքն։ Միթէ պարզ չէ՞ ըսածս...

Ինձ համար դեռ բոլորովին պարզ չէր, բայց վրայ հասան ուրիշներ, եւ խօսակցութեան նիւթը փոխուեց։

Ճաշի միջոցին ես նստած էի Ռոստոմի դիմաց, Ակնունիի կողքին։ Ներանք կարօտով կատակում էին միմեանց հետ։ Ուրախ էին։ Բայց իսկապէս Ռոստոմի ճակատը ծածկուած էր խիտ ու խորունկ կնճիռներով։ Ինձ ծանօթ էին Ռոստոմի կնճիռները՝ հետեւանք կա՛մ արտակարգ ցաւումի, կա՛մ արտակարգ վշտի...

Ի՞նչ էր կատարուում այդ զարմանալի մարդու հոգում — բուռն փոթորի՞կ, թէ՞ անյատակ արտմութիւն։ Նա խօսում էր զուարթ, սիրով նայում էր բոլոր ընկերների վրայ, բայց անկարելի էր, որ սիրտը հանգիստ լինէր։

Իլիճայից կարին, ճանապարհին, Ռոստոմի կողքին էի մնեւնոյն կառքում։ Հարցրի՝ ի՞նչ էր պատահել Փիլոսին, ինչո՞ւ էր նա այդպէս գաղտած։

— Բան չունի՛ս, խօսքս կտուրը նետեց Ռոստոմը. նոր փեսայ է, վախենում է, որ Վարսենիկին ձեռքից կը խլեն... Վերջը կը հասկանաս։

Պարզ էր, որ չէր ուզում խօսել այդ նիւթի մասին։ Արտայայտուելու ձեւից որոշ էր նաեւ, որ իր սրտին ցաւ պատճառող հարցն էի չօշափել։

կարինում ես ուզեցի չօշափել եւ՛ Ատրունիի կարծիքը։


Ատամ Ատրունին կենտրոնական Կոմիտէի անդամ էր եւ յարաբերութիւն էր պահում կուսակցութեան եւ Իթթիհատի ու կառավարութեան միջեւ։ Ազնիւ նկարագրի տէր, լրջամիտ, սակաւախօս ու զաղտնապահ, թուրքերին լաւ ճանաչող ու թուրքերէնի հմուտ, զաղափարական երիտասարդ էր։ Բացարձակ վստահութիւն էր վայելում կուսակցութեան աչքին եւ մասնաւորապէս Ռոստոմի։ Ծարկըուած էր նաեւ ապպային չրջանակներում եւ թուրքերի մէջ։ Նա էլ

ARAM webaram.com

Սահրանդի ու Փիլոսի պէս անսահման սիրում էր իր կնոջ՝ Ծիածանին եւ դողում էր նրա եւ աղջկայ՝ Անահիտի վրայ:

Առաջին իսկ հանդիպման ես ուզեցի իմանալ նրա կարծիքը հայերի կացութեան, մանաւորապէս հայ-թրքական յարաբերութիւնների մասին:

— Լաւ չէ, պատասխանեց նա մի վայրկեան մտածելուց յետոյ: Թորթերը վատէն դէպի դէշ կ'երթան: Թուրքերը առաջուայ



ԱՐԱՄ ԱՏՐՈՒՆԻ

թուրքերը չեն. փոխուած են չատ... Մեզի այլեւս հաւատ չեն ընծայեր...

— Ձի՞չա է, որ կոտորածի սպառնալիքներ կ'ընեն: Փիլոսը այդպէս կ'ըսէր:

— Ես նման բան չեմ լսած: Կոտորածի սպառնալիք — չափազանցութիւն է, բայց ջղայնացած ու զրգռուած են: Կ'ըսեն՝ թոյլ

ARAM webaram.com

չենք տար, որ եւրոպացի քննիչները կարին մտնեն։

— Կը խորհի՞ս, թէ թոյլ չեն տար։

— Չեմ խորհիր։ Սակայն, եթէ կառավարութիւնը ուզէ, թոյլ չեն տար։ Առանց կառավարութեան հրամանի թուրքը տեղէն չի շարժիր, թուրքը կոյր ծառայ է կառավարութեան։

«Բայց Փիլոսը իրաւունք ունի. եթէ, Աստուած մի՛ արասցէ, պատերազմ տեղի ունենայ, մեզի համար չափէն աւելի ծանր կացութիւն մը կրնայ առեղծուիլ... Զափազանց ծանր, եթէ մենք չկըրնանք մեզ պաշտպանել։

— Ի՞նչպէս պաշտպանել։

— Այդ դո՛ւք պէտք է ըսէք մեզի։ Աստր համար է Ընդհանուր ժողով կը դումարուի։

— Չէ՛, դո՞ւն ինչ կը կարծես։

— Իմ կարծիքով ես կը կարծեմ — սա մարզպաններու խնդիրը կարգադրելու է։ Ա՛լ համը փախաւ։ Շա՛տ եղաւ ազմուկը... Թուրքը չի կրնար մարսել։

Աստուներն, սակայն, Սահրանդի կամ Փիլոսի չափ յոռետես չէր։ Կը հաւատար, թէ ելք մը պիտի գտնուէր։ Ընդհանուր ժողովի վրայ մեծ յոյս եւ վստահութիւն ունէր։

Ես տեղաւորուեցի Փիլոսի բնակարանում։ Ռոստոմն էլ այնտեղ էր ապրում։ Ցարմար առիթով մի անգամ էլ փորձեցի իմանալ նրա կարծիքը, որքան կարողացայ չափել, օրուայ հրատապ հարցի մասին։

— Ընդհանուր ժողովի պատգամաւորը դո՛ւ ես, Ամերիկայից ես գալիս, դո՛ւ պէտք է կարծիք յայտնես. մեզ նման գաւառացիների կարծիքը ի՞նչ արժէք ունի, նորից կատակի առիթ նա։

Առաջին օրերը, նախ քան Ընդհանուր ժողովի բացումը, Սահրանդի եւ Փիլոսի յոռետես մտքերը ինձ չատ զբաղեցրին, բայց հարցուփորձերն որեւէ արդիւնքի չյանգեցին։ Տպաւորութիւնս եղաւ այն, որ երկրի արտակից ընկերներիս ինձ խօսածները աւելի անձնական-ենթակայական տրամադրութեան արդիւնք էին։ Ճիշտ է, կարինի հայութիւնը որոշ չափով ազդուած էր թուրքերի վերաբերումի փոփոխութիւնից, բայց լուրջ վախ չէր զգում։ Ընդհակառակը, տիրական էր հաւատը, որ չուտով մարզպանները կը հասնեն նշանակուած վայրերը, եւ բարենորոգումները կը դառնան իրականութիւն։ Կոտրածի կամ նման բաների վախ չէր զգացւում։

Կարին հասնելուս յաջորդ օրը դնացի այցելութեան առաջնորդարան։ Առաջնորդ Սմբատ Եպս. Սաաակեթեանը բարեկամս էր, շատ

ARAM webaram.com

ջերմ ընդունելութիւն ցոյց տուեց: Մօտն էր եւ Սեդրաք էֆ. Փաստրմաճեանը, որի հետ նոյնպէս լաւ բարեկամներ էինք: Սեդրաք էֆ. քաղաքում յարգուած անձնաւորութիւն էր: Պարթեւ հասակով, բարեհասիլ, զարգացած, դիւրահաղորդ, համարձակախօս, զօրաւոր անհատականութիւն էր: Տիպար հայ եւ նախանձախնդիր հայութեան իրաւունքների ու պատուի:

Առաջնորդ Սմբատ Սրբազանը, իր բնաւորութեան հաւատարիմ, խոհեմ ու զուսպ մարդ էր: Դժուար էր հասկանալ նրա խական միտքը օրուայ հրատապ խնդիրների մասին. մի կողմից նայելով ամէն ինչ լաւ, միւս կողմից՝ այնքան էլ լաւ չէ. Ատուած պահէ մեր ազգը:

Ճիշտ հակառակ խառնուածքի տէր՝ Սեդրաք էֆենդին համարձակ, յախուռն խօսքերով դատապարտում էր Թուրքերին, բայց վախ չունէր: Իր մտերիմ ազգական Արմէն Գարոյի հաղորդած լատահաս տեղեկութիւնները Պոլսից նրան վստահութիւն էին ներշնչում, որ այս անգամ բարենորոգումները անպատճառ պիտի իրականանան եւ հայի մղձաւանջային վիճակը Թուրքերի տիրապետութեան տակ պիտի բարեփոխուի: Ռուսը չի թողնի, որ հայի քիթը արիւնի այս անգամ: Ե՞ս ինչ լաւ լուրեր եմ բերել Ամերիկայից ու Պոլսից: Պատմեցի ինչ որ պիտէի:

Մի ուրիշ առիթով էլ, երբ Յաչիկ Փաստրմաճեանի դեղարանոցի Փիլոսի հետ, ներս մտաւ Սեդրաք էֆենդին չափազանց զրգռուած: Դուրսը Թուրքերի հետ վէճի էր բռնուել, հայհոյում էր եւ չէր կարողանում հանգստանալ:

— Կատորուեն այս չուները... Մարդ ըլլալիք չունեն... Իժի ծնունդներ:

Եւ երբ Փիլոսը զգուշացրեց, որ այդպէս չխօսի Թուրքերի առջեւ, բարկացած պատասխանեց.

— Ա՛լ այս անհատանները համը փախցուցին, կարելի չէ լռել:

Եւ չլռեց: Նա համարձակ՝ երեսուն էր տալիս Թուրքերի անբարութիւնները: Եւ առաջին նահատակը եղաւ դեռ ռուս-Թրքական պատերազմից առաջ:

Ի՞նչ էին մտածում սովորական ժողովուրդը կամ մեր շարքային ընկերները: Հետաքրքիր էի իմանալ նրանց կարծիքը:

Ժամագործ Պետրոսը, օրինակ, լատահաս էր: Հաւատում էր, թէ բարենորոգումները վերջ պիտի տան հայերի տառապանքներին: Ընդհակառակը, դերձակ Անդրանիկը յոռետես էր. «Գէշ է մեր վիճակը. չունները կատղած են»... Երիտասարդական Միութեան

ARAM webaram.com

չրջանակը ընդհանուր առմամբ ոգեւորուած էր բարենորոգումների հեռանկարով եւ անհամբեր սպասում էին մարզպանների տեղ հասնելուն: Զիթողցի Սեդրաք վարժապետը սարսափով էր խօսում թուրքերի մասին, կոտորածի վախ էր յայտնում: Ծոռետես էին է՛ւ Զնդին, է՛ւ Արտաշէս Գաւաֆեանը եւ նոյն իսկ օրիորդ Ադնիւը, որ անից առն զգայացունց լուրեր էր տարածում:

Համազգային բնոյթ առացած, բիւրեղացած ընդհանուր կարծիք գոյութիւն չունէր կարինում օրուայ հրատապ հարցերի մասին: Ինչքան մարդ, այնքան եւ համոզում...

Նոյնը պէտք է ասեմ է՛ւ Ընդհանուր ժողովի պատգամաւորների մասին:

Գաւառներից, բուն Հայաստանից եկողները մտախոհ էին ու մտահոգ: Առանձնապէս յոռետես էին Սլաքը՝ Բիթլիսից եւ Մճոն՝ Մուշից: Որքան Հայաստանից հեռու վայրերից էին պատգամաւորները, այնքան լաւատես էին ու տրամադրութիւնը բարձր: Պոլսից եկողները կարծես հարսանիքի էին գալիս, Ակնունիի կարմիր թուշերը փայլում էին ուրախութիւնից. Զարդարեանի բեխերը կարծես աւելի էին սրուել: Ցից կանգնած էին է՛ւ Հանըմեանի բեխերը, Եգիպտոսից, եւ Դադէսեանի՝ Բալկանից: Ես արտայայտում էի Ամերիկայի ընկերների մտայնութիւնը. անողոք քննադատութիւն իթթիհատական վարչաձեւի, դատապարտութիւն խաբուսիկ բարենորոգումների եւ Պոլսի ընկերների վարած քաղաքականութեան, ժողովրդի կազմակերպութիւն ու պինում ինքնապաշտպանութեան եւ աւելի վրձռական գործունէութեան համար: Շատ դիւրին էր Ամերիկայում նստած՝ յեղափոխութեան քարոզ կարդալ...

Երեք դէպք, կարինից, ամուր մեխուած են յիշողութեանս մէջ:

Մէկ՝ իմ դասախօսութիւնը Սանասարեան վարժարանի բակում: Մութ գիշեր էր: Ահագին բազմութիւն էր խռնուած, ոտքի վրայ: Մի հատ աղօտ լապտերի լուսով՝ խորհրդաւոր տեսք ունէր անաղմուկ բազմութիւնը, որ կարծես անձկանօք հրաշքի էր սպասում: Զեմ յիշում, ինչ ասացի: Կարծեմ Թունդ ռազմաշունչ ճառ էր խօսածս: Բազմութիւնը բուռն ծափերով ընդմիջում էր խօսքս: Երբ տուն էինք գնում, Ռոստոմը ասաց.

— Լեզուդ բացուել է, մեր տղայ, բայց կարծես մխաքդ նոյն չափով բաց չէ...

Անողոք, սպանիչ էր Ռոստոմի դատաւճիռը: Գիտէի, որ նա անկեղծօրէն սիրում էր ինձ, այդ պատճառով աւելի ևս ծանր ազդեց

ARAM webaram.com



Ռ. ՋԱՐԴԱՐԵԱՆ, ՌՈՍՏՈՄ, Է. ԱԿՆՈՒՆԻ

ARAM webaram.com

վրաս նրա խօսքը: Ի՞նչ անխելք բաներ խօսած պիտի լինէի այդպիսի դնահատութեան արժանանալու համար. վերջը հասկացայ, որ Թոստոմը իրաւունք ունէր. դիւրին էր յեղափոխութիւն քարոզել Ամերիկայից...

Երկրորդ՝ այն վայրկեանը, երբ հեռագիրը ստացուեց համերաշխական պատերազմի մասին:

Ընդհանուր ժողովի նիստն էր: Նախագահում էր Ակնունին, որ, յանկարծ, ընդմիջելով վիճաբանութիւնները՝ ասաց.

— Ընկերներ, Պոլսից հեռագիր է ստացուել, լսեցէք:

Եւ կարդաց Արմէն Գարոյի ստորագրած հեռագիրը, որով հաղորդում էր, որ աւստրեւհունգարական կառավարութիւնը վերջնագիր է տուել Սերբիային, պատերազմը անխուսափելի է:

— Գարոն դիւանագէտ է դարձել, պատերազմ է զուշակում, հեգնեց Ակնունին:

Հազիւ Ակնունին վերջացրել էր խօսքը, դրսի՛ց բերին մի նոր հեռագիր: Արմէն Գարոն հեռագրում էր:

— Պատերազմը սկսուած է:

Իմ ուշադրութիւնս գրաւեցին կողք-կողքի նստած Զարդարեանն ու Հանըմեանը. մէկէն նրանց բարձր բեխերը թուլացան ու կախուեցին: Նրանց սարսափահար դէմքը անճանաչելի դարձաւ...

Երրորդ՝ արեւի խաւարումը կարինում:

Սանասարեան վարժարանի բակից դուրս գալով՝ ժամի փողոցով խմբով գնում էինք դէպի Զայդարս, ճաշի փրոֆ. Սոդիկեանի տունը: Երկինքը պայծառ էր, մէկ էլ օդը սկսեց մթնել: Արեւը կամաց-կամաց ծածկուեց լուսնի ստուերով: Խաւարումը լիակատար էր: Աքաղաղները սկսեցին կանչել: Տանիքների վրայ մարդիկ, զինուած սեւ ապակիներով, նայում էին արեւին: Սարսափահար լալիս էին երեխաները: Թրքական թաղերից լսում էր աղմուկ, թմբկի թխկոց, ատրճանակի ձայներ, վախեցնում էին չար ոգիներին, որպէսզի հանգիստ ձգէին արեգակը...

Լուռ քայլում էինք՝ մտախոհ: Մէկ էլ հարեւան ցած տանիքի վրայ լսուեց երեխայի սուր ճիչ եւ երիտասարդ մօր հանգստացնող խօսքերը: Բայց երեխան չէր հանգստանում, վախից դողում էր եւ փաթաթւում մօրը ոտքերին:

Թոստոմը մօտեցաւ ու.

— Քորի՛կ, մի վախենայ, բան չկայ... Խաւարում է, չուտով արեւը նորից կը բացուի...

Կինը չտկուեց, ցաւումով լի աչքերը վերից յառեց Թոստոմին

ARAM webaram.com

ու պոռաց կառապի.

— Ը՛հ, անիծեալ ըլլաք դուք... Ա՛ս ամէնը ձեր երեսէն կ՛ըլլայ, ձեր մեղքի պատճառով է, անհաւատներ... Կոտորուիք դուք... Անիծեալներ... Ձեր պատճառով փորձանք պիտի գայ մեր գլխուն...

Ռոստոմը սաստիկ ազդուեց: Առանց մէկ խօսք արտասանելու, գլուխը կախ, քայլեց եւ ամբողջ օրը ճնշուած տրամադրութեան մէջ էր:

Արեւի խաւարումը չարագուշակ նշան էր: Ժողովուրդը հաւատում էր, թէ դժբախտ օրեր էին յաջորդելու: Մռայլ ամպեր էին կուտակւում եւ ահաւոր փոթորիկ էր պատրաստւում Հայութեան գլխին: Սեւ օրերի նախօրեակն էր...

Այժմ արդէն անցեալ են այդ սեւ օրերը, հեռաւոր անցեալ, բայց միշտ մօտ, միշտ ներկայ, ցաւատանջ: Ուզում ես չյիշել, մոռանալ — չեն մոռացւում: Ուզում ես հասկանալ — չես հասկանում: Ուզում ես դարմանել — չի դարմանւում: Վէրքը ապիացել է դրսից — ներսից մնում է չբուժուած: Ու մութ գիշերներին, երբ քունը փախչում է աչքերիցդ, կծկւում է սիրտդ, փոթորկւում հոգիդ: Մխքդ ըմբոստանում է. «Ինչո՞ւ այսպէս եղաւ, ինչո՞ւ»...

Եւ ծանօթ, սիրելի դէմքեր, անխօս ու երազուն աչքերով, չարքով անցնում են յուշերիդ մէջից — Սահրանդ, Փիլոս, Ատրունի, Սրբազան Սմբատ, Սեդրաք էֆենդի, չաուեր, չաուեր... Անցնում են լուռ կչտամբող հայեացքով: Կարծես ուզում են ասել...

— Դուք դեռ ապրո՞ւմ էք, ի՞նչ իրաւունքով: Ո՞վ իրաւունք տուեց ձեզ ապրելու, երբ մենք չենք ապրում, չկանք...

1935, Փլեսի – Ռոբեսպիեռ
Ֆրանսա

ARAM webaram.com

ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՄԻՋԵԻ

I.— ԲՈՒՑՈՒՐՈՒՆ

Թէեւ պաշտօնական ամառը դեռ չէր վերջացել, բայց օդից արդէն աշնան հոտ էր գալիս: Դեւէ-Բոյնուից փչում էին պաղ հովեր: Ցանցառ ծառերի տերեւները սկսել էին դեղնել ու թափուել: Ծաչափայտի լեռները, կանաչութիւնը կորցրած, խորհրդաւոր տեսք էին առել: Եւ կարնոյ Դաշտը, գորշ-դեղնաւուն, հանդարտ նիրհում էր փոշու ու թոնիրներից բարձրացող ծխի նօսր մշուշի մէջ: Օդառատը ժօռեննում էր վախճանին, եւ բնութիւնը այնպէ՛ս հրապուրիչ էր ու խաղաղ:

Երևկոյեան դէմ, Փիլոսի հետ, դուրս եկանք թապիաները — կարինը չրջապատող պինուորական ամրութիւնները — խրամատներ ու պատնէշներ, որոնց ստորոտը տարածուած էին կարնեցիների համբաւաւոր բոստանները: Դուք կերե՞լ էք երբեւիցէ կարնոյ չողպամը, չաքարի պէս քաղցր ու համով ատեպղինը, հռչակաւոր կաղամբը, որ քեսրիկցիների նախանձը կարող է չարժել: Հապա՛ նուբր կեղեւով վարունգը, որ կարնեցի կոնձաբանների սիրած մէզէն էր, էֆֆերի ժամանակ: Այս բոստանները զբօսանքի եւ ուրախութեան վայրեր էին, այն երջանիկ օրերին, երբ դեռ կարինը չէն էր, եւ մարդը զազանացած չէր այսքան:

Փիլոսի հետ բարձրացանք թապիաները: Մէկ էլ մեր առջեւ ցցուեց ասկեարի սուինը:

— Եասա՛կ:

Այնքա՛ն անզամներ եղել էինք այստեղ, ազատ ու համարձակ

ARAM webaram.com

պատեալ, նաեւ դիտելու վերջալոյսի գեղեցկութիւնները եւ ոչ մի պինուար չէինք տեսել ու ո՛չ մի արգելք: Հիմա.

— Եասա՛կ:

Ուրիշ կողմ՝ նոյնպէս պինուարներ: Թապիանները դարձել էին արդիլուած գօտի: Ուրեմն, ճիշտ է, որ Եւրոպայում մղուող պատերազմի արձագանգները այստեղ էլ էին հասել:

Եւ բնական է, որ պիտի հասնէին: Ընդհանուր զօրակոչը — Սէֆէր – պէյլիկ — արդէն յայտարարուած էր: Թուրքերը տենդագին պատերազմական պատրաստութիւններ էին տեսնում: Երիտասարդութիւնը պինուրապրում էր: Փիլոսն էլ բանակի մէջ էր արդէն՝ պինուրական հագուստով: Ցերեկները դնում էր ծառայութեան պինուրական հիւանդանոց եւ պիշերները գալիս էր տուն: Մեր բոլոր երիտասարդ ընկերներն էլ բանակում էին: Դրանց մէջ էր եւ Միհրան Թէրլէմէզեանը, Վանի պատգամաւորը Հ. Ց. Դ. 8րդ Ընդհանուր ժողովի: Նա կարող էր վերադառնալ Վան. Ամէնից հեռաւոր էլ էր առացուել այդ իմաստով: Բայց չդնաց: Պարտականութեան դիտակցութիւնը նրան պահեց կարնում: Չէր ուզում որեւէ կասկածի առիթ տալ իշխանութեանց, թէ «դասալիք» է լինում, թէեւ դասալքութեան խնդիր էլ չկար. կարող էր Վանում էլ շարունակել պինուրական ծառայութիւնը: Կարին մնալու գլխաւոր պատճառը այն էր, որ իր կարծիքով այստեղ ինքը կուսակցութեան համար կարող էր աւելի օգտակար լինել. Վանում դործիչ ուժեր շատ կային, մինչդեռ Կարնում դեկավար մարդոց սուր պահանջ էր դգացուում:

Ընդհանուր մտայնութիւնը դեռ այն էր, որ պատերազմի արհաւիրքը կարող էր մեր գլխից անցնել, եթէ դդոյշ եւ աչալուրջ քաղաքականութեան հետեւէինք: Ընդհանուր տեղահանութեան կամ կոտորածի կասկած չկար: Շատ-շատ, մտածում էին ամէնքը, դեկավարներից ոմանք կարող են զոհուել, բայց ժողովուրդը կը փրկըւի: Եւ Միհրանի պէս, շատերը փութացին արձանագրուել պինուր, որպէսզի օրինապահ դիրքով հասատատեն, թէ հայերը դիտակցում են իրենց հայրենասիրական պարտականութիւնը եւ պատրաստ են ամէն զոհողութեան հայրենիքի պաշտպանութեան համար:

Նոյն նկատումով պինուր էր արձանագրուել եւ՛ Փիլոսը, թէեւ իրրեւ շրջանի ականաւոր դաշնակցական գործիչ եւ կրթական պաշտօնեայ, կարող էր ազատ մնալ զօրակոչից: Բայց Փիլոսը Միհրանի լատատեսութիւնը չունէր. բնազդօրէն զդում էր գալիք արհաւիրքները եւ սարսափում էր:

ARAM webaram.com

Ցիշում եմ մեր վերջին զրոյցը: Նստած էինք կողք-կողքի բոստաններում եւ դիտում վերջալոյսը:

Դուք տեսե՞լ էք կարնոյ վերջալոյսը: Ո՛չ, չէք տեսել: Աչխարհիս երեսին ուրիշ այդպիսի վերջալոյս ես չեմ տեսել, բացառութեամբ Վանի: Մէկ էլ՝ Ռիօ դէ Ժանէյրոյի, բնութեան զոհարը կազմող այս զմայլելի քաղաքի:

Արեւը դանդաղ սահում էր դէպի արեւմուտք: Կարնոյ երկինքը, չրջակայ լեռները, լայնատարած Եփրատայոյտը խաղում էին հազար ու մէկ լոյսերով, որոնց գոյները ամէն վայրկեան փոխւում էր անակնկալ խաղերով — կարմիր, կապոյտ, նարնջագոյն, կանաչ, դեղին, գորշ-լապուր: Մերթ կայծկլտում, մերթ հրդեհի պէս բոցավառւում: Մերթ երկինքն ու երկիրը խառնւում էին իրար աննկարագրելի դեղեցկութեամբ: Դժուար էր զանազանել՝ ո՞րն էր երկինքը, ո՞րը՝ երկիրը:

Լոյսերի եւ գոյների փոխակերպումը տեւում էր երկար, մինչեւ որ արեւի կարմիր գունդը ծածկւում էր լեռների յետեւը: Եւ արեւամուտից յետոյ էլ դեռ լոյսերի խաղը չարունակւում էր. դաչտը արդէն խաւարի մէջ էր, բայց լեռների կատարները պէծին էին տալիս բիւրաւոր ճառագայթներով՝ հետզհետէ աղօտանալով ու մթնելով: Վերջին շողը անհետանում էր Էրէյլիի կատարից, եւ դաչտը թաղւում էր մութ խաւարի մէջ:

Փիլոսը, իր մարալի խոշոր աչքերը լայնօրէն բացած, հիացումով դիտում էր բնութեան հրաչալի պատկերները:

— Եւ այս բոլոր դեղեցկութիւնները պիտի վայելեն այդ չնեբը, ասաց նա սրտնեղած՝ ձեռքը պարզելով դէպի հեռւում պահակ կանգնած գինուորը:

— Ինչո՞ւ միայն չնեբը, մենք էլ կը վայելենք, առարկեցի ես:

— Մենք է՛լ... Ո՞վ ենք մենք: Եթէ այսօր ինձ հետ լինէիր զօրանոցում, կը տեսնէիր, թէ ով ենք մենք եւ ինչպէս ենք վայելում...

Նա միշտ դժգոհ էր գինուորութիւնից եւ անվերջ դանգատւում թուրքերի կոպիտ վերաբերմունքից:

— Չէ՛, սիրելիս, չուտով այս գազանները ցոյց կը տան իրենց իսկական բնութիւնը, եւ այն ժամանակ՝ մնաս բարով է՛ւ վերջալոյս, է՛ւ գրականութիւն ու արուեստ եւ ամէն ինչ:

Փիլոսը գրականութեան սիրահար էր: Երբեմն արձակ բանաստեղծութիւններ էլ էր գրում: Կարդում էր անվերջ եւ գրքերի մէջ սփոփանք որոնում: Դաչնակցութիւնը, հանրային գործունէութիւնը

ARAM webaram.com

տարերքն էին նրա համար, ա՛յն օդը, առանց որի չէր կարող ապրել, բայց իր քնքուշ բանաստեղծական հոգու համար նոյնպիսի պահանջ էին եւ արուեստն ու գրականութիւնը:

Մէկ էլ իր երիտասարդ կինը՝ Վարսենիկը, որին սիրում էր անհուն սիրով եւ տարտափում էր, թէ ի՞նչ պիտի լինի նրա վիճակը, եթէ իրեն մի բան պատահի: Վարսենիկի սէրն էլ փոխադարձ էր:

(Փակագծի մէջ ասեմ, որ Փիլոսի ապանութիւնից յետոյ, Վարսենիկն էլ տեղահանուեց եւ կարնեցիների կարաւանի հետ կրեց տարագրութեան սեւ դառնութիւնները: Ապա՝ հրաչքով ազատուեց: Պատերազմից յետոյ, ես նրան հանդիպեցի Փոթիում, ծնողների մօտ: Ընկճուած էր տառապից, չէր կարողանում մոռանալ Փիլոսին: Ցետոյ լսեցի, որ... ամուսնացել է):

Փիլոսի յոռետես տրամադրութիւնը փոխանցուեց եւ ինձ: Իմ միտքն էլ համակուեց անորոշ կասկածներով ու մռայլ նախազգացումներով: Ի՞նչ պիտի պատահի: Ի՞նչ պէտք է անենք մենք...

Ընդհանուր ժողովից յետոյ, որոշուել էր, որ Ռուստոմը անմիջապէս մեկնի Եւրոպա. եւ պիտի փոխարինէի նրան կարինում, մինչեւ Արմէն Գարոյի Պոլսից հասնելը: Այդ եւ պիտի վերադառնայի Ամերիկա Ընդհ. ժողովի մասին զեկուցում տալու: Ցաջորդ տարեդլխին պիտի անցնէի Տարօն, բանելու համար Ռուբէնի տեղը, որ ուղում էր հեռանալ Կովկաս: Իմ երիտասարդ ու անփորձ ուսերի վրայ ահաւոր պարտականութիւն էր դրւում — ինչպէ՞ս պիտի դուրս գայի տակից:

Խորասուզուած էի այս մտքերի մէջ: Փիլոսն էլ իր խոհերը ունէր: Անխօս վերադարձանք տուն:

Արդէն մութը ընկել էր եւ կարինի փողոցները գրեթէ ամայի էին, երբ հասանք Փիլոսենց բնակարանը: Այստեղ հաւաքուել էին Ռուստոմին հրաժեշտ տալու եկած ընկերներն ու բարեկամները — Արմէն Գարոյի եղբայրը՝ դեղագործ Խաչիկը իր կնոջ՝ Հայկանուշի հետ, Դոկտ. Տէր-Մկրտիչեանը եւ իր կինը, Զնդին եւ իր կինը՝ Հեղինէն. կարծեմ եւ ուրիշներ: Ռուստոմը չկար. դնացել էր «մնաս բարով»ի այցելութեան բարեկամներին եւ չուտով պիտի վերադառնար: Մի քանի պիտի ընթրէինք, վերջին թելադրութիւնները պիտի անէր ինձ ու Փիլոսին եւ առաւօտ կանուխ կառքով պիտի մեկնէր դէպի Տրապիզոն:

Նստած էինք խօսք ու ծիծաղով: Փիլոսի մայրն ու Վարսենիկը ընթրիքի պատրաստութիւն էին տեսնում: Մէկ էլ դուռը ծեծեցին:

ARAM webaram.com

Ներս մտան երկու ոստիկաններ՝ մէկը զինուոր, միւսը՝ սովորական։ Վերջինը հարցրեց.

— Վրացեան Էֆենդին այստե՞ղ է։

— Ես եմ, ասացի, Վրացեան Էֆենդին։

— Փիլոս Էֆենդի՞, հարցրեց զինուորականը։

Փիլոսը առաջ անցաւ, թէ՝ «ես եմ»։

Մարդիկ եկել էին մեզ ոստիկանապետի մօտ հրաւիրելու — չատ կարեւոր գործի համար։ Մէ՛կ վայրկեանով միայն — «պիր թազիգա»։

Ասացինք, թէ հիւրեր ունինք, վերջը կը գանք։

— Չէ՛, չէ՛, մէկ վայրկեանի համար միայն։ Սէր քոմիսէրը ձեզ երկար չի պահի։ Շատ կարեւոր է եւ չատ չոտպոդական։ Կէս ժամից տուն կը վերադառնաք ձեր հիւրերի մօտ։

Ճար չկար՝ պէտք էր երթալ։ Ինչպէս որ կայինք, սենեակի թեթեւ հագուստով, այնպէս էլ դուրս եկանք՝ առանց որեւէ բան առնելու մեզ հետ։

Դուրսը ցուրտ էր։ Սարերից պաղ քամի էր փչում։ Երկինքը ծածկուած էր մռայլ ամպերով, եւ փողոցները՝ մութ։ Մարդ–մարդասանք չէր երեւում։ Մէկ ոստիկանը առջեւից, միւսը յետեւից՝ անխօս գնում էինք։ Մէկ էլ Փիլոսը, յանկարծ, կանգ առաւ.

— Ո՞ւր էք տանում մեզ, ոստիկանապետի տեղը այն կողմն է։

— Չէ՛, չէ, սէր քոմիսէրը այս կողմն է, պատասխանեց զինուորականը, գնա՛նք։

Ինչ վերջը կարինի նշանաւոր բանտի առջեւն էինք։ Ցանկարծ, մեզ շրջապատուած տեսանք բանտապահներով։ Մեր բողոքն ու դիմադրութիւնը լսող չեղաւ։ Փիլոսն առին ու մի կողմ տարին, ինձ էլ ուրիշ կողմ քաշեցին։ «Սիմո՛ն, մնաս բարով», դեռ այսօր էլ հնչում է ականջիս Փիլոսի աղեկտուր ձիչը։ Ու այլեւս չտեսայ նրան...

Իմ առջեւը բացին մի մռայլ դուռ եւ — «բո՛ւյուրուն»՝ ներս հրեցին ու դուռը յետեւիցս ամուր փակեցին։ Մութ գնդան էր. աչքդ որ մատ կոխէին՝ չէիր տեսնի։ Ձայն հանեցի — պատասխան չեկաւ։ Նշանակում է, որ մենակ էի։ Շօշափելով շարժուեցի — ամայութի՛ւն. ոչ աթոռ, ոչ սեղան, ոչ թախտ։

Մէկ էլ դուռը բացուեց եւ ներս մտաւ անկերպարան մի մարդուկ՝ մէկ ձեռքին ազօտ լոյսով լապտեր, միւսին՝ ինչ որ մի փալաս։ Լապտերի լոյսը պարզեց գնդանի տեսարանը — ընդարձակ, առանց լուսամուտի պարապ մի սենեակ, փոշոտ յատակով, մռայլ

ARAM webaram.com

պատերով եւ առաստաղով — ո՞վ գիտէ քանի դժբախտներ տարիներ-
րով չարչարուել էին այս դաժան կացարանում: Մարդուկը իր ձեռ-
քի փալասը ձգեց սենեակի մէջտեղը, ձեռքով նշան արաւ, թէ՝
«պարկիր վրան» եւ հեռացաւ: Սենեակը նորէն թաղուեց անթափանց
խաւարի մէջ:

Ուրեմն, բանտարկուած էի: Ահա քեզ սէր քոմիսէր. ահա՝
«կէս ժամից կը վերադառնաք»: Եւ ինչո՞ւ, իմ ո՞ր յանցանքի հա-
մար: Ի՞նչ էի արել եա «Օսմանեան հայրենիք»ին, կամ սէր քոմիսէ-
րին՝ անձնապէս:

Բայց փիլիսոփայելու ժամանակը չէր: Ծոդնած էի ու պար-
տասած: Ջղերս լարուած էին: Մարդկային արժանապատուութիւնս
վիրաւորուած էր, բայց ի՞նչ կարող էի անել: Սպասենք, տեսնենք,
վերջը ի՞նչ կը լինի:

Եւ պժգանքով տարածուեցի «անկողնի» վրայ: Բայց հազիւ
պառկել էի՝ մի տարօրինակ չարժում սկսուեց ողջ մարմնիս վրայ:
Ջնդանի բնիկները, երեւի, ուրախացած նորեկ հիւրի այցելութիւ-
նից, ամէն կողմից արշաւանքի դիմեցին ոտքմական կարգ ու սար-
քով.— առաջ հեծելազօրը՝ ոստոստուն լուերը, ապա հետեւակները՝
դարշահոտ մլուկները, վերջը օսմանեան հրետանին՝ ոջիլները — օ՛,
կարինի բանաի ոջիլները՝ հսկայամարմին ու անողորմ... Անկարելի
էր պառկել. ամբողջ մարմինս այրւում էր խայթոցներից: Ելայ ոտքի
ու սկսեցի խարխափելով՝ «դրօսնել» խաւարի մէջ՝ կոյրի պէս ձեռ-
քերս առջեւ պարզած:

Ժամերը անցնում էին, բայց ոչ մէկ չարժում դրսից: Մարդու
սիրտը պայթում էր մութ մենութեան մէջ: Գոնէ ծղրիթի ձայնը լըս-
ուէր: Մի չարժում գոնէ: Գերեզմանայի՛ն լռութիւն: Երեւակայե-
ցէք կենդանի թաղուած մէկը, որ արթնանում է գերեզմանում — ա-
հաւոր գերեզման էր իմ գնդանը:

Քանի՞ ժամ անցաւ — չիմացայ: Մէկ էլ դուռը բացուեց ու
նորէն նոյն մարդուկը:

— Բուլյուրո՛ւն:

Հրեշտակի փողը աւելի քաղցր չէր կարող հնչել — «բուլյու-
րուն»...

Դուրս եկայ: Երկու ոստիկաններ առաջս անցան ու նորից.

— Բուլյուրո՛ւն:

Մութ փողոցներից անցանք, այս անգամ, իսկապէս դէպի ոս-
տիկանատուն: Կենտրոնական ոստիկանատունը, հակառակ ուշ գի-
շերուան, լուսաւորուած ու եռուզեռի մէջ էր: Մարդիկ արագ ելեւ-

ARAM webaram.com

մուտ էին անում. լսում էին ճնշուած ձայներ: Ինչ որ խորհրդաւոր բան էր տեղի ունենում:

Ոստիկանները ինձ առաջնորդեցին ուղիղ դէպի սէր քոմիսէրի սենեակը: Այդ պարոնին ես ճանաչում էի, հետը նոյն իսկ աղ ու հաց էի կերել: Սելանիկցի դէօնմէ էր: Ինձ որ տեսաւ.

— Վա՛հ, Վրացեան էֆենդի, դո՞ւք այստեղ ինչ գործ ունիք այս ժամին. ի՞նչ թիւրիմացութիւն է այս...

Ու բարկացած՝ գոռաց ոստիկաններուն վրայ:

— Ինչո՞ւ էք անհանգստացուցել էֆենդին, տարէք սրահը, թող հանգստանայ:

Ոստիկանները անվրդով առաջնորդեցին ինձ հիւրասրահը — երկար եւ ընդարձակ մի սենեակ՝ կակուղ կարասիներով կահաւորուած: Այս սրահում քանի՛ անգամներ սէր քոմիսէրը ընդունել էր Ռոստոմին, Ատրունիին, Փիլոսին: Ինձ էլ...

Քաշուեցի մի անկիւն, բայց հապիւ նստել էի, եկան հրաւիրելու նորից ոստիկանապետի մօտ: Այս անգամ պարոնը առանց ժպիտի, պաշտօնական դէմքով, առաջարկեց նստել եւ անմիջապէս անցաւ հարցաքննութեան — անուն, ազգանուն, որտեղացի, զբաղում, ինչո՞ւ համար եկած եմ կարին, ի՞նչ պիտի անեմ, ո՞ւր պիտի երթամ ու այսպիսի բազմաթիւ հարցումներ: Ապա՝ մէկ ոստիկան խուզարկեց վրաս եւ առաւ մօտիս թղթերը, ժամացոյցն ու դրամը:

— Բույուրո՛ւն: — Նորէն առաջնորդեցին ինձ սրահը, ուր ես քաշուեցի իմ անկիւնը:

Զաւեշտա-ողբերգական էր դրութիւնս: Ի՞նչ էի ես, վերջապէս — ոճրագո՞րծ, թէ սէր քոմիսէրի բարեկամը: Ինչո՞ւ այս կատակերգութիւնը:

Ելեւմուտ անող պաշտօնեաների ու ոստիկանների մէջ նկատեցի եւ՛ ինձ ծանօթ հայեր, որոնք հեռուից կարեկցանքով նայում էին ինձ, բայց չէին համարձակւում մօտենալ: Մանաւանդ, թաղային ոստիկանապետ Եղիշէ էֆենդին յաճախ էր երեւում. կարծես մի բան էր ուզում հասկացնել, բայց վախենում էր: Մէկ էլ, ծխացող ճրագի պատրոյգը շտկելու պատրուակով, մօտեցաւ արագ եւ առանց երեսիս նայելու, չընջաց.

— Պարոն Վրացեան, չհաւատաս այդ սրիկային, դուշացի՛ր, դլխուդ փորձանք չկայ... Ու արագ էլ հեռացաւ:

Զգուշացի՛ր — բայց ես ի՞նչպէս կարող էի զգուշանալ. ես ի՞նչ ունէի որ: Կատուի ճանկը ընկած մկան պէս՝ «սրիկայի» ճիրաններում էի. ինչ ուզէր՝ կարող էր անել: Իմ զգուշութիւնը քանի՞ փարա

ARAM webaram.com

արժէր: Մնում էր նստել ու ապասել: Անշուշտ, եղիչէ էֆենդին լուր հասցրած կը լինէր Ռոստոմին: Եթէ մի բան հնարաւոր էր՝ Ռոստոմը կարող էր անել: Իմ ալիւրը մաղուած, մաղը պատից կախուած էր: Այլեւս մաղելիք չունէի: Մնում էր քայլել ճակատագրի ցոյց տուած ճամբով:

Քիչ անցած՝ մի նոր հիւր բերին սրահը — ծանօթ մի ռուս ինժինէր, սոցիալիստ-յեղափոխական, փախստական Ռուսաստանից, որ կարինում մօտիկ յարաբերութեան մէջ էր մեր ընկերների հետ: Մերոնք օգնում էին նրան էական պրակտիկան փոխադրելու կոմկատ: Ընդհանուր ժողովի մեր վերջին ճաշկերոյթին էլ ներկայ էր:

— Դո՞ւք այստեղ ինչ էք անում, պարմացաւ նա:

— Նոյնը ինչ որ դուք:

— Ինչո՞ւ համար են բերել մեզ այստեղ:

— Ես ի՞նչ գիտեմ: Համբերեցէք՝ շուտով կ'իմանաք:

Եւ, իրօք, շուտով եկան ու կոպիտ կերպով հրամայեցին նրան, որ դուրս գայ: Գնաց ու մէկ էլ չվերադարձաւ: Տարիներ վերջը, լսեցի, որ նրան աքսորել էին Թուրքիոյ ներսերը, իբրեւ ռուսական լրտես: Վերջը ինչ եղաւ, չիմացայ:

Ինժինէրի մեկնելուց յետոյ՝ ահա մի հիւր եւս: Կարմիր ֆէսը գլխին, առանց օձիքի ու փողկապի, վերարկուն չապկի վրայ ձգած, սեւ ակնոցը աչքերին, կարծես մի քիչ օդ առնելու էր դուրս եկել, վարանումով սրահը մտաւ Սանասարեան վարժարանի նախկին տեսուչ Գէորգ Աբուլեանը: Անխօս նստաւ ինձանից քիչ հեռու, բաղկաթոռի վրայ ու խորունկ չունչ քաշեց: Շուրջը չէր նայում եւ անընդհատ չոյում էր մօրուքը՝ ջղային շարժումներով:

Տեսարանը սկսում էր հետաքրքրական դառնալ: Պ. Աբուլեանի հետ մենք «հակառակորդներ» էինք: Սանասարեանում ուսուցիչ եղած միջոցիս մի պարապ բանի համար բախում էինք ունեցել եւ այլեւս իրար չէինք բարեւում: Կռուի պատճառը ինքն էր — անարդար եւ անճիշդ բաներ էր խօսել Դաշնակցութեան մասին — բայց խնդրին ես էլ աւելի սուր կարեւորութիւն էի տուել: Եւ հետեւանքը — դպրանապետական յարաբերութիւնների խզում: Ի հարկէ, ես, իբրեւ իրենից տարիքով շատ փոքր, պէտք է աւելի ներողամիտ լինէի ու հարցը ծայրայեղութեան չտանէի, բայց երիտասարդութիւնը երիտասարդութիւն է...

Լուսանալու վրայ էր, որ դուրսը ինչ որ իրարանցում առաջ եկաւ: Ոտների տրոփիւն, խուլ բացագանչութիւններ: Ապա պատու-

ARAM webaram.com

հանից երեւաց մի հայլի կառք: Ինչ որ պատրաստութիւններ էին տեսնըւում: Մի ոստիկան եկաւ ինձ նորից տանելու սէր քոմիսէրի մօտ: Այս անգամ, կէս-պաշտօնական, կէս-բարեկամական, բայց չատ սիրալիր (ոստիկանապետը) հրաւիրեց նստելու եւ առջեւս դրեց մի թուղթ, որ ստորագրեմ: Խնդրեցի, որ բովանդակութիւնը կարդայ:

— Ի՞նչ հարկ կայ, ջանըմ, պաշտօնական ձեւակերպութիւն է միայն, վտանգաւոր բան չկայ մէջը:

Այնուամենայնիւ, ես պնդեցի, որ կարդացուի:

Կանչեց Եղիշէ էֆենդիին, որ միշտ աշխատում էր մօտ լինել, եւ հրամայեց, որ թղթի բովանդակութիւնը հաղորդէ ինձ հայերէն:

Պարզուեց, որ ես, այսինչ այսինչեան, ռուսաստանցի եմ, Թուրքիայում որոշ գրաղում չունեմ եւ, օրուայ պայմանները ի նկատի ունենալով, որոշուած է ինձ հեռացնել Ռուսաստան, եւ այդ մասին ես յօժար կամք եմ յայտնել եւ նոյնիսկ խնդրել եմ:

Շնական ծիծաղը աչքերին՝ ոստիկանապետը ասաց, թէ ինքը չատ ուրախ է, որ ես հայրենիք պիտի վերադառնամ, եւ իմ ապահովութեան համար ոստիկաններ է դնում հետս, որոնք պիտի ուղեկցեն ինձ մինչեւ սահման: Վերադարձրեց թղթերս, ժամացոյցս ու դրամս եւ ձեռքս սեղմելով՝ բարի ճանապարհ մաղթեց:

Դուրս եկայ: Պ. Աբուլեանն էլ արդէն դուրսն էր, հայլիի մօտ, որ չրջապատուած էր ձիաւոր ոստիկաններով:

— Բույուրո՛ւն, էֆենդիմ, հրաւիրեց ոստիկաններից մէկը Աբուլեանին, որ կառքը բարձրանայ:

— Ի՛նչ, ո՞ւր կ՝ուղէք տանել... ինձի բերիք հոս քանի մը վայրկեանով... Այսպէս ո՞ւր կրնամ երթալ ես... զաւակներս չեեսած...

Աբուլեանը չէր ուզում կառք նստել, բողոքում էր կոպիտ վերաբերումի դէմ, բայց, ոստիկաններից մէկը կոպտութեամբ հրեց նրան.

— Դէ՛, հայտէ՛, չատ մի՛ խօսիր, նստէ կառքը, հէրիֆ...

Ու խեղճ Աբուլեանը, ընկճուած, բարձրացաւ կառքը:

Հերթը իմն էր: Ես այլեւս «բույուրուն»ի չսպասեցի ու չատ պեցի տեղ դրաւել Աբուլեանի կողքին: Զաւուշը նստաւ կառապանի մօտ՝ հրացանը ձեռքին պատրաստ: Հինդ ձիաւոր ոստիկաններ առաջ անցան:

— Սի՛ւր, պագալըմ, լսուեց հրամանը, եւ հայլին երեքալով չարժուեց տեղից: Մի վայրկեան աչքիս ընկաւ Եղիշէ էֆենդիի թախծոտ հայեացքը, եւ ոստիկանատունը մնաց մեր յետեւը:

ARAM webaram.com

Պ. Աբուլեանը սկսեց խնդրել ոստիկաններին, որ գոնէ մի վայրկեանով տուն հանդիպի, տեսնէ զաւակներին, կարգադրութիւն անէ տան մասին, տաք հագուստ առնէ — խնդրեց, աղաչեց, դրամ խոստացաւ, բայց չաւուշը մնաց անողոք. հրամայուած էր ո՛չ մի տեղ կանգ չառնել:

— Նզովուա՛ծ լինիք... Աստուած ձեր պատիժը տայ: Երեսուն տարի ծառայեցի այս անիծեալ ազգին եւ — ահա վարձատրութիւնը, քթի տակ մրմնջում էր վրդովուած Աբուլեանը, որին «մէկ վայրկեանով», «պարզ տեղեկութեան համար» հանել էին տնից: Նա կարծել էր, թէ մօտի ոստիկանատունն են հրաւիրում, ինչպէս որ սեպտեմբում նստած է եղել, այնպէս էլ, միայն վերարկուն վրան ձգելով, դուրս եկել, առանց նոյնիսկ մէկ փարա դրամ առնելու հետը: Դուրս էր եկել «մի վայրկեանից» վերադառնալու համար, եւ ահա տանում էին — ո՞ւր, ինչո՞ւ համար — առանց իսկ թոյլ տալու, որ զաւակներին «մնաք բարեւ» ասէր:

II.— ՀԱՍԱՆ ՂԱԼԱՑԻ ԲԱՆՏՈՒՄ

Պաղ քամի էր փչում Դեւէ Բոյնուից: Ես, ամառուայ թեթեւ հագուստով, դողում էի ցրտից: Լուսաբացը հեռու չէր, ամպերը ցրուել էին, եւ երկնքի պայծառ աստղերը, կարծես, աւելի եւս ուժեղացնում էին ցուրտը: Կառքը սուրում էր ամայի փողոցներով, կարսի դրան ուղղութեամբ: Ջիաւուր ոստիկանները չրջապատել էին մեզ, հրացանը ձեռներին, ամէն վայրկեան պատրաստ հակահարուած տալու թշնամուն: Առաջին անգամը չէր, որ ես տեսնում էի թուրք ոստիկանի այսպիսի լրջազութիւնը — քաջ, երբ վտանգ չկայ, նապաստակի պէս վախկոտ թշնամու առաջ: Կառապանի մօտ նստած չաւուշը չուտ-չուտ շուրջն էր նայում, չխչխկացնում էր ձեռքի հրացանը եւ ինչ որ հրամաններ արձակում ձիաւորներին:

Հանդիսաւոր ու զաւեշտական պիտի լինէր մեր չքերթը, եթէ չլինէր ողբերգական: Մանաւանդ, խղճալի էր պ. Աբուլեանի վիճակը: Նա բոլորովին ընկճուած էր: Կծկուած վերարկուի տակ, երեւի նոյնպէս դողում էր ցրտից եւ մերթ ընդ մերթ անորոշ բաներ մրմնջում: Մէկ էլ դարձաւ ինձ.

— Հրամանքդ ո՞վ էք, կարելի՞ է իմանալ ձեր անունը:

Ծուզումից թէ կարճատեսութիւնից չէր ճանաչել ինձ:

— Վրացե՛ն, պատասխանեցի ես ներքին խնդութեամբ:

ARAM webaram.com

— Վա՛խ, Տէր Աստուած, ան ալ պիտի դար դլուխս, բացա-
դանչեց նա՝ չուարած։

— Ի՞նչ կայ որ, Ծիծաղեցի ես. մի՛ անհանդստանաք, անցեա-
լը՝ մոռցուկ, լաւ ճամբորդութիւն կ'ունենանք։

Եւ, իսկապէս, անցեալը չատ չուտով մոռացուեց։ Մի քանի
րոպէում մենք արդէն հաշտուել էինք ու լաւ բարեկամներ դար-
ձանք։ Նեղութիւնը մարդկանց են մօտեցնում է, և՛ւ հեռացնում՝ նա-
յելով նրանց բնաւորութեան։ Աբուլեանը առաջիններից էր։ Մեր
ճամբորդութեան ամբողջ տեւողութեան ընթացքին նա մարդկային
նկարագրի այնպիսի բարձր, կարող եմ ասել, աղնուական գծեր ե-
րեան բերից, որ ես անկեղծ ցաւ զգացի, որ, ակամայ, վշտացրել
էի նրան եւ աւելի առաջ չէի կարողացել վայելել նրա մտերմու-
թիւնը։ Լայն զարգացման տէր, ուսեալ, լրջախոհ, բարեմիտ, ընկե-
րական մարդ էր՝ նուիրուած հայ ժողովրդին ու հայ մշակոյթին,
լաւատեղեակ՝ հայոց անցեալին ու ներկայ իրականութեան։ Հաճելի
էր նրա հետ զրուցելը. ամէն նիւթի մասին կարող էր խօսել հետա-
քրքրութեամբ։ Աբուաքնապէս մի քիչ չոր եւ ինքն իր մէջ ամփոփ-
ուած, երբ բացւում էր, կարծես, մտաւորական ու հոգեկան ջերմու-
թիւն էր ճառագայթում։ Մեր յուզումնալից ճամբորդութիւնը տանե-
լի զարձաւ միայն մեր մտերիմ զրոյցների շնորհիւ, որոնք բարոյա-
կան կորով էին ներշնչում մեզ։ Ցաւում եմ, որ ժամանակին զրի չա-
ռի նրա պատմածները — երեսուն տարիների բուռանդակալից կեան-
քը Սանասարեան վարժարանի եւ Կարնոյ հայ հասարակութեան։ Ա-
ւելի ցաւալի, որ ինքը զրի չէր առել իր յուշերը, որոնք պիտի ճո-
խացնէին մեր հասարակական կեանքի յուշագրութիւնը։

Եւ միայն Աբուլեա՞նը։ Քանի՛-քանի իրական արժէքներ, մեծ
մտքի եւ մեծ սրտի տէր ազգային դէմքեր անջնջահատելի ծառայու-
թիւն են մատուցել հայ ժողովրդին, բայց մնացել են անյայտութեան
մէջ, չեն արժանացել իսկական գնահատութեան ու յարգանքի։ Ո-
մանք այն պատճառով, որ չափազանց համեստ են եղել եւ իրենց
պահել են տուների մէջ։ Ոմանք՝ որովհետեւ կուսակցութեան չեն
պատկանել եւ կուսակցական միջոցներով չի յայտնաբերուել նրանց
արժանիքը։ Ոմանք էլ՝ մեր անփութութեան հետեւանքով...

Վաղուց արդէն կարել էինք Դեւէ Բոյնուի բարձունքները։
Անցնում էինք արագ դէպի Հասան Ղալա։ Արեւը ծագել էր եւ ճոխ
ճառագայթներով ծածկել ճանապարհը, դաշտ ու բլուր։ Սակաւ պա-
տահող գիւղերից ծուխ էր բարձրանում երկինք։ Բնութիւնը կենսու-
րախ խրախճանքի մէջ էր։ Մերթ ընդ մերթ հանդիպում էին ձիաւոր

ARAM webaram.com

դինուորները, որոնք տեսնելով մեր չքերթը՝ բարեւի էին բռնում, անշուշտ, երեւելի մեծաւորների տեղ դնելով մեզ: Աբուլեանը միշտ յարգանքով պատասխանում էր նրանց բարեւին:

Հասան Ղալայում մեզ տարին ուղղակի միւդիւրլըկ — գաւառապետարան: Դեռ պաշտօնէութիւն չկար: Մէկ-երկու ոստիկաններ չտապելով՝ մեծարանքներով դիմաւորեցին մեզ եւ առաջնորդեցին հիւրասրահը ու.

— Բույուրո՛ւն, հրաւիրեցին, որ նստենք բազմոցի վրայ: «Ղահփէ», պոռաց մէկը:

Պ. Աբուլեանը տեղաւորուեց զորգերի վրայ ու հանգիստ չունէր քաշեց: Ես խոհեմութեամբ մնացի ոտքի վրայ. ո՞վ գիտէ՝ ինչեր կարող են պատահել:

Եւ, յիրաւի, մի քանի վայրկեան չանցած, նոյն ոստիկանները եկան, թէ՝

— Հայդէ՛, ելէք:

Էլ «բույուրուն» չկար, ոչ էլ յարգալից խոնարհութիւններ: Մեզ առաջնորդեցին մի ընդարձակ, ախոռի նմանող չէնք — ժանդարմների դովուշը: Բայց այստեղ էլ երկար չպահեցին, տարին մի տեղ, որ, ինչպէս չուտով պարզուեց, Հասան Ղալայի բանտն էր:

Բանտի դրան առջեւ մեզ դիմաւորեց մի զարմանալի տեսքով ծերունի: Բարձրահասակ, նրբակազմ, ճիւնի պէս ճերմակ սիրուն մօրուքով ու գմբուխտի նման վճիտ աչքերով մի մարդ — իսկական Սուրբ Նիկողայոս Սքանչելագործի պատկերը: Մի պահ հիացումով դիտեցի բնութեան այդ դեղեցիկ կերտուածքը: Գարզուեց, որ այս հրեշտակապետը բանտապետն է: Շուտով պիտի համոզուէինք, նաեւ, որ հրեշտակ չէր, այլ դերադրական աստիճանի սատանայապետ: Ստոր եւ զաժան մարդիկ ես շատ եմ տեսել, բայց Հասան Ղալայի հռչակաւոր բանտապետ Հասան աղայի նման մի հրէշի ոչ մի տեղ չեմ հանդիպել:

Հասան աղան մեզ դիմաւորեց լայն ժպիտով ու խոնարհ բարեւով: Կարծես, թանկագին հիւրերի էր սպասում եւ երջանիկ էր տեսնելու նրանց: Հոգ տարաւ մեզ տեղաւորելու եւ կարգադրեց, որ դրաւենք բակի վրայ նայող իր լուսաւոր սենեակը: Ինքը քիչ էր լինում սենեակում, եւ մենք հանգիստ կը մնայինք: Բնաւ պէտք չէ մտածէինք, ինքը մեզ դոհ պիտի թողնէր: Մեզ նման յարգելի անձանց թոյլ կը տա՞ր նեղութիւն քաշելու...

Պ. Աբուլեանը ուրախ էր: Այս ի՛նչ պատուական մարդ է: Նրան Աստուած ղրկեց մեզ:

ARAM webaram.com

Մեր ուտելիքի մասին էլ հոգ տարաւ Հասան աղան։ Ի հարկէ, բանտի կերակուրը անյարմար էր մեզ պէս նրբաճաշակ էֆենդիներին։ Ինքը կարող էր դրսից բերել տալ, եթէ ուզէինք։ Մեծ բան չէր. մէկ–երկու մէջիտ բաւական կը լինէր։

Սակարկելու տեղը չէր, բնական է։ Դրամը տուի, եւ տեղաւորուեցինք սենեակում։ Աւելնք՝ տեղաւորուելու էլ հարց չկար. ինչ որ ունէինք՝ մեր վրան էր։ Պարզապէս տեղ գրաւեցինք թախտի վրայ պատուհանի առջեւ՝ պր. Աբուլեանը ծալապատիկ, ես՝ ալա ֆրանկա։

Հասան Ղալայի բանտը քառակուսի մի մեծ չէնք էր՝ մէկ կողմը բաւական ընդարձակ բակով, չրջապատուած քարէ բարձր պարիսպներով։ Պատերի եւ տանիքի վրայ կանգնած էին հրացանաւոր պահակները։ Փայտէ հաստ դարբասը ամուր գոցուած էր՝ նոյնպէս զինուած պահակի հսկողութեան տակ։ Ներսը ինչ կար՝ դեռ չգիտէինք. բայց յետոյ տեսանք, որ ներսը բաղկացած էր մի մեծ սրահից եւ մի քանի առանձին, առանց պատուհանի խուցերից։ Սրահը լեցուած էր ամէն ազգի բանտարկեալներով, որոնք տեղաւորուած էին ըստ դասակարգային աստիճանի։ Թուրք եւ քիւրդ աղաները բռնել էին ամենալաւ անկիւնները, հայերը խմբուած էին առանձին, միւսները՝ ցրուած տեղի համեմատ։

Բանտարկեալները ապրում էին իրենց սեփական տնտեսութեամբ — կերակուր էին եփում, թէյ չինում, լուացք անում — ամէն բան նոյն սրահում։ Աղաները ծառաներ էին պահում բանտարկեալներից, որոնք աշխատում էին մի փոր հացի համար։ Կառավարութիւնից յատկացուած անուննդի դրամը, մեծ մասով, մտնում էր Հասան աղայի որկորը։ Հասան աղան իր բանտարկեալ հպատակների համար հաստատել էր ճորտատիրական կարգեր. ո՛չ միայն կառավարութեան դրամն էր իւրացնում, այլ եւ մարդապլուխ տուրք էր դրել բանտարկեալների վրայ. հարուստները դրամով էին վճարում, իսկ չունեցողները՝ աշխատանքով։ Պարտապանցներին ծեծում էր, կամ ծեծել էր տալիս անխնայ։ Պէտք էր լսել, թէ հայհոյանքների ի՛նչ հեղեղ էր թափւում այդ հրեշտականման հրէշի բերանից։

Եւ հայհոյանքն ու կռիւը միայն Հասան աղայի մենաշնորհը չէին։ Բանտում օր ու գիշեր կռիւ ու հայհոյանք անպակաս էին։ Անգործութիւնից ու նեղութիւնից անասնացած մարդիկ՝ ուրիշ հաճոյք չունէին, բայց եթէ հայհոյանքը, իրար դէմ չարախօսելն ու դաւեր լարելը։ Կռիւն ու ծեծկռուքը մեծագոյն հաճոյքն էր բանտարկեալների։

Մեր առաջին տպաւորութիւնը, սակայն, կարելի է ասել՝ նոյ-

ARAM webaram.com

նիակ հաճելի էր: Մեր սենեակը լուսաւոր էր ու մաքուր: Դիմացի բակը ոչինչ ունէր խոտելի: Արեւը ճառագայթներ էր ուղարկում դէպի մեզ, եւ բաց պատուհանից լսւում էր թռչունների ճռուողիւնը: Դեռ ժամանակ չէինք ունեցել անդրադառնալու մեր վիճակին, — ինչո՞ւ էին բերել մեզ այստեղ, — միայն սկսում էր զգալ տալ անօթութիւնը: Ի՞նչ պատահեց մեր Հասան աղային, ինչո՞ւ չի երեւում, ինչո՞ւ ուշացաւ ուտելիքը:

Կէսօրն անցաւ. բանտարկեալների մի մասին հանել էին բակը օդ առնելու — ցնցոտիապատ, գազանացած ամբոխ, որի տեսքը ահ էր ազդում մարդու վրայ: Բակում երեւաց է՛ւ Հասան աղան, որ աջ ու ձախ հայհոյելով եւ այս ու այն բանտարկեալին մտրակելով՝ մըտաւ մեզ մօտ:

Մեզմ ձեւով հասկացրինք, որ անօթի ենք, մինչեւ այժմ կերակուր չեկաւ: Պարզուեց, որ մեր տուած դրամը իր նպատակին չէր ծառայել: «Անզգամ մարդը» դրամը առել ու փախել էր: Եթէ ուզում էինք, կարող էինք նորից դրամ տալ, որ ուրիշ մէկին ուղարկէր կերակուր բերելու:

Ո՞վ էր այդ «անզգամ մարդը» եւ ի՞նչպէս էր պատահել, որ փախել էր, որի պատճառով մենք անօթի էինք մնացել — չիմացանք երբեք, բայց ստիպուած եղանք նորից դրամ տալ ու սպասել:

Երեկոն հասաւ, բայց կերակուրը չեկաւ: Հասան աղան նորից ներս մտաւ՝ սուրբի պէս անմեղ տեսքով: Հազիւ պր. Աբուլեանը բերանը բացել էր, որ դժգոհութիւն յայտնէր, մէկ էլ մեր Նիկողայոս Աքանչելագործը սկսեց պոռալ.

— Ի՞նչ է, միսափի՞ր էք եկել. այստեղ բանտ է. մի քիչ էլ անօթի մնացէք... Այս էֆենդիներին նայէ — անօթի են եղել... Հայդէ՛. փասա-փուսան հաւաքեցէք, ձեր տեղը այստեղ չէ:

Պ. Աբուլեանը ափ ի բերան, ապշած նայում էր դէմքին ու խօսք չէր գտնում պատասխանելու:

— Հայդէ՛, — աւելի կատաղած պոռաց Հասան աղան, չուտ փասա-փուսա հաւաքեցէք ու... բաց արաւ դուռը, որ դուրս գանք:

«Փասա-փուսա» չունէինք, որ հաւաքէինք: Շարժուեցինք դէպի դուռը:

— Ահա՛, այստեղ է ձեր տեղը, ցոյց տուեց նա կողքի խուցի դուռը: «Անօթի» են մեր էֆենդիները, լսեցի՞ք մի, փախլաւա կ'ուզեն. միւհալէպի կ'ուզեն... Դէ՛. մտէք ներս:

Բոլորովին մութ, անլուսամուտ մի գնդան՝ հեղձուցիչ, անչնչելի օդով: Դուռն էլ որ փակուեց, ո՛չ մի տեղից օդի հոսանք չը-

ARAM webaram.com

մնաց: Ձեմ կարծում, թէ Գրիգոր Լուսաւորչի վիրապը սրանից վատ լինէր:

Դեռ ուշքի չէինք եկել, մէկ էլ խորքից հնչեց մի խռպոտ ձայն.

— Քտո տամ — ո՞վ է այդտեղ: Ու եօթը յարկանի ռուսերէն մի հայհոյանք: Ա՛հ, սքանչելի ռուս ժողովուրդ: Ի՞նչ հայհոյանքներ գիտես:

— Դո՞ւ ով ես, հարցրի ես ռուսերէն:

Մարդը ուրախ ճիչ արձակեց եւ, ըստ երեւոյթին, ճիգ արաւ տեղից ելնելու, բայց հայհոյելով դեռին ընկաւ: Ներխուժելով մօտեցայ նրան — անկիւնում դիակի պէս պառկած, ծանր շնչում էր՝ դժուարանալով խօսել: Կցկտուր բառերով պատմեց իր դլխին եկածը, որ չատ էլ մխիթարական չէր մեզ համար. մեզ էլ կարող էր նման բան պատահել:

Կովկասեան ռուս բանակի զինուոր էր — սովորական մի իւան: Ինչ որ հակակարզապահական յանցանքի համար, պատժից վախեցած՝ փախել էր Թուրքիա: Սահմանի վրայ Թուրք իշխանութիւնները բռնել էին եւ մի լաւ ծեծ քաշելուց յետոյ, ուղարկել էին էրզրում: Եւ ահա, ամսից աւելի է, նրան տանում էին բանտից — բանտ՝ ամէն տեղ ծեծ քաշելով: Մի քանի օր է այստեղ է, անօթի, թշուառ: Չէր իմանում՝ ինչ պիտի լինի իր վերջը: Հայհոյանք չկար, որ չթափէր «անհաւատ Թուրքերի» դլխին, եւ աղերսում էր, որ փրկենք իրեն...

Հիանալի՛ էր — մե՞նք պիտի փրկէինք: Եւ ո՞ւմ միջոցով — մեր անզուգական Հասան աղայի՞: Արդէն անօթութիւնից ու յուզումից մենք էլ ողորմելի վիճակ ունէինք: Պ. Աբուլեանը հազիւ ոտքի վրայ էր մնում. ես էլ աւելի լաւ չէի: Մի կերպ տեղաւորուեցինք պատի տակ եւ փորձեցինք քնել:

Քնե՞լ — այդ դժոխքում, ուր խեղդւում էինք նեխած օդից: Հապա միջատնե՞րը — կարնոյ բանտը արքայութիւն էր սրա համեմատութեամբ: Արդէն Թուրքիայում ոջիլից, լուից ու մլուկից զատ ի՞նչ կար որ...

Թոստոմը սիրում էր, յաճախ, մեզ ոջիլի պատմութիւններ անել: Երբեմն նստած, յանկարծ ձեռքը տանում էր դէպի վիզը, խնդալով՝ օձիքի տակից հանում էր պարարտ մի ոջիլ եւ սկսում էր մեզ դասախօսութիւն կարդալ ոջիլի տեսակների, նրանց զանազան յատկութիւնների, նոյնիսկ հոգեբանութեան մասին: Թուրքիոյ յառաջդիմութիւնը նա չափում էր ոջիլի քանակով. Սահմանադրութիւ-

ARAM webaram.com

նից յետոյ, ասում էր, Հայաստանում ոչինչը դժուարին չափով պակասել էր...

Դժբախտաբար, Հասան աղայի էշօշկում, Ռոստոմի թէորիան չէր արդարանում. մի քանի վայրկեանից մեր ամբողջ մարմինը ոչինչ ու լուի ախրապետութեան տակ անցաւ: Քերուիր, որքան ուզում ես...

Հաղիւ աչքերս փակել էի, մէկ էլ մի զարհուրելի դունդ ընկաւ դէմքիս: Բնազդօրէն ձեռքս տարի դէպի երեսս ու չփեցի — մատներիս տակից անպատմելի զարշահոտ հեղուկ դպաց: Մլուկների մի ամբողջ ոզկոյզ, առաստաղից, ընկել էր վրաս... Ցետոյ, մեր Հասան աղան բացատրեց, թէ իր բանտի մլուկները սովորութիւն ունէին հաւաքուելու առաստաղի վրայ եւ վերեւից ընկնելու ընտրած զոհի գլխին:

Զարմանալի բնաւորութեան տէր էին Հասան աղայի մլուկները...

Ընդոստ ցատկեցի տեղիցս եւ խելայեղ՝ պոռալով սկսեցի բախել դուռը: Չէի կարողանում պատասխանել Աբուլեանի անհանգիստ հարցումներին: Խեղդւում էի զարշանքից:

Դրսից՝ ո՛չ մի պատասխան: Շուրջը՝ գերեզմանային լռութիւն: Մեռնէիր՝ հարցնող չէր լինի:

Չեմ կարող ասել, թէ ինչքան տեւեց այս չարչարանքը: Երբ դուռը բացուեց, հաղիւ կարողանում էինք չարժուել: Հասան աղան էր՝ իր հրեշատակաւոխ դէմքով.

— Բույուրո՛ւն:

Ա՛հ, թրքական այս «բույուրուն»ը՝ կեղծաւոր, լիրբ ու չնաքանօրէն դաժան:

Դուրս եկանք եւ սկսեցինք ապահութեամբ ծծել առաւօտուայ զով օդը: Աբուլեանի տեսքը խղճալի էր: Իմ կերպարանքը ես չէի տեսնում:

Հասան աղան սիրալիր ժպիտով հարցրեց, թէ՝ լաւ քնեցի՞նք, հանգի՞ստ էինք, անօթի չե՞նք: Ինքը պատրաստ է մեզ հիւրասիրելու:

Եւ, իսկապէս, իր սենեակում մեզ հրամցրեց տաք թէյ, հաց ու պանիր: Ուռտացաւ ճաշ էլ բերել տալ, եթէ ուզենք: Եթէ դիչերը հանգիստ չէինք, այսուհետեւ իր սենեակը մեր տրամադրութեան տակ կը լինի: Ազատ էինք գրօսնելու բակում, կամ բանտում պտըտելու:

Ի՞նչ էր պատահել այս հրէչին — այնքա՞ն ուշադիր ու հաճո-

ARAM webaram.com

յակատար էր դարձել։ Գիշերը հօ՞ սուրբ հոգին չէր իջել վրան։ Նրբից դրամ առաւ, որ մեզ համար ճաշ բերել տայ։

Եւ, յիրաւի, կէսօրին, մի մեծ սինիյով ճաշ եկաւ մեզ — խորոված, թարմ լաւաշ հաց, կարագ ու պանիր, կանաչեղէն, մածուն։ Ամէն աստուածային բարիք, սեղանի վրայ, մեր առջեւն էր։ Հասան աղան ինքն էլ ընկերացաւ մեր ճաշին։ Անհոգ ուտում էր եւ զանազան պատմութիւններ անում բանտային կեանքից։

Շուտով հանելուկը բացատրուեց։ Կէսօրից յետոյ, մեզ այցելութեան եկան մի խումբ հայեր։ Երեւի, բանտապետից իմացել էին մեր բանտում լինելը, կաշառել էին նրան, որ մեզ հետ լաւ վարուի, ու այնուհետեւ սեւ օր չտեսանք։ Տեղաւորուեցինք բանտապետի սենեակում, եւ Հասան աղան մեղր ու չաքար դարձաւ մեզ հետ։ Ամէն օր մեզանից դրամ էր առնում «ճաշի համար», որ Հասան Ղալայի հայերը ուղարկում էին մեզ նուէր։

Հասան Ղալայի հայերը, որոնց մէջ կային եւ դաշնակցական ընկերներ, պատմեցին մեզ, որ դուրսը սարսափ է տիրում։ Ամէն կողմ պատրաստում էին պինուած չեթաներ, որոնք անպատիժ նեղում են հայերին։ Խօսում էր հայերի տեղահանութեան ու կոտորածի մասին։ Մարդ էին ուղարկել Կարին՝ յայտնելու համար առաջնորդին իրենց ծանր վիճակը եւ պաշտպանութիւն խնդրելու։

Ու այնուհետեւ ամէն օր, մեր հայրենակիցները այցելում էին մեզ, դրսից լուրեր բերում եւ իրենց սեւ պատմութիւններով ու զանգատներով աւելի եւս դառնացնում մեր դառն տրամադրութիւնը։ Մեզ յուզում էր նրանց դուրգուրանքը։ Երախտապարտ էինք ուղարկուած կերակուրների եւ ցոյց տրուած հոգածութեան համար, բայց անզօր էինք որեւէ բանով փոխարինելու նրանց բարիքը։ Հասան աղան առանում էր իր նուէրները, ճաշ «դնելու» համար դրամ էր առնում, ուտում-խմում էր մեզ հետ եւ այլեւս չէր նեղում մեզ։

Օրերը այսպէս անցնում էին միապաղաղ ու ժժգոյն։ Մեզանով ոչ ոք չէր հետաքրքրւում. կարծես, բոլորովին մոռացել էին մեր գոյութիւնը։ Պրն. Աբուլեանը, համարեա ամբողջ օրը, պառկում էր թախտի վրայ՝ մելամաղձոտ խոկումների մէջ, երբեմն յուսահատ «ա՛խ» քաշելով եւ անիծելով «նզովեալ թուրք»ին։ Ես ժամանակը սպանելու համար, չափում էի բակի լայնքն ու երկայնքը, դիտում էի երկնքի ամպերը, կամ պատրաստում էի ներսը, բանտարկեալների մէջ։

Թրքական բանտը մի առանձին աշխարհ էր։ Բանտարկեալները խումբ-խումբ բաժանուած՝ խօսում, վիճում, աղմկում էին։ Ոմանք կերակուր էին եփում։ Ոմանք չապիկների մէջ ոջիլ էին փընտ-

ARAM webaram.com

ռում: Ամանք, մերկ յատակին տարածուած, խոմփում էին: Ուրիշներ մելամաղձոտ երգեր էին երգում: Աղմուկ հանողները անպակաս էին: Երբ ներս էր մտնում Հասան աղան, յանկարծ, ամէնքը լռում եւ աճապարանքով ոտքի էին ելնում: Հասան աղան չատ սիրալիր էր «աղաներին» հետ: Սրանք իրենց պահում էին վեհօրէն, կարծես, բանտի տէրը լինէին եւ միւս բանտարկեալները՝ իրենց հպատակները:

Ի հարկէ, բանտարկեալների մէջ զարդացած էր եւ բախտախաղը: Ամէն տեսակ խաղեր կային — թուղթ, վէգ, նոյնիսկ քաւլու, բայց ինձ համար ամենէն հետաքրքրականը... ոջլարշաւն էր:

Մի քանի հոգի խմբուած՝ յատակին ածուխով կլոր շրջան էին գծում. ապա իւրաքանչիւրը իր վրայից մի ոջիլ էր հանում: Ոջիլները դասաւորում էին շրջագծի կենտրոնում եւ սկսում էին աղմկել: Ոջիլները տարածւում էին ամէն ուղղութեամբ: Ոջլի տէրերը սրբատաշուի հետեւում էին իրենց երիվարի չարժումներին: Էլ ի՞նչ քաջալերանք, յորդոր, փաղաքշանք, անէծք, ուրախութեան ու հայհոյանքի ճիչեր... Որի ոջիլը որ առաջինը դուրս էր գալիս շրջանակից, նա էր շահում դրամը:

Պէտք էր տեսնել շահողի ցնծութիւնը: Մատներով քնքշօրէն բռնում էր յաղթական ոջիլը, մօտեցնում էր բերանին, համբուրում սիրով ու — նորից չապիկի մէջ էր ձգում: Տարուղները հայհոյանքով տրորում էին իրենց ապարախտ գոհերին:

Այս խաղը, առաւօտից մինչեւ երեկոյ, չէր վերջանում եւ դէթ մասամբ կենդանացնում էր բանտի չորս պատերում տարիներով անասունի վիճակին հասած թշուառների կեանքը: Ես ժամերով դիտում էի նրանց՝ անցնելով մէկ խմբից միւսի մօտ: Եւ պէտք է ասեմ՝ ո՛չ մի տարբերութիւն չէի դնում ոջլարշաւի ու ձիարշաւի միջեւ...

Շաբաթից աւելի էր անցել, եւ մենք դեռ տուայտում էինք անորոշութեան մէջ: Մի օր էլ երեւաց Հասան աղան ու հանդիսաւորապէս յայտարարեց.

— Պատրաստուեցէ՛ք, պիտի մեկնիք:

Ո՞ւր, ի՞նչ — Հասան աղան չգիտէր, բայց չատ էլ դոհ չէր, որ հեռանում էինք. իր եկամտի աղբիւրը պիտի պակասէր: Մեզ նման կթան կովեր յաճախ չէին երեւում իր թագաւորութեան սահմաններում:

ARAM webaram.com

Լոյսը նոր էր բացուել, որ եկաւ կարնից մեզ ուղեկցող չաուշը։

— Բույուրուն։

Դրան առջեւ մեզ սպասում էին մխեւնոյն եայլին ու մխեւնոյն ձիաւոր ոստիկանները՝ հրացաններըը ձեռքերին պատրաստ։ Ու կառքը սուրց առաջուայ հանդիսաւորութեամբ եւ ճանապարհի մխեւնոյն տեսարաններով։

Քէօփրի Քէօյում մի պահ առիթ ունեցանք հանդիպելու տեղական հայերի, որոնք աղիողորմ պատմութիւններ արին իրենց սարսափելի վիճակի մասին։ Հայերից ոմանք արդէն վախից հեռացել էին կարնից. ուրիշներ պատրաստւում էին դաղթելու։ Ապահովութիւնը վերացած էր, եւ ամէն օր կարդ էր սպասւում չեթաների ձեռքից։

Խորասան պիւդում էր, երէկ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում, որ պիչերելու համար մեզ տեղաւորեցին Թուրք պիւդապեի տանը, վերի յարկի մի լայն սենեակում։ Պիւդապեաը՝ մեծ սպիտակ մօրուքով մի բարի ծերունի մեզ լաւ հիւրասիրեց եւ, ընթրիքից յետոյ, բարի պիչեր մաղթելով՝ իջաւ վար։ Հանդիստ տարածուեցինք թախտերի վրայ ու դեռ չէինք քնել, երբ դրսից աղմուկ եւ իրարանցում լսեցինք։ Անասելի գոռում-գոչում ու հայհոյանք։ Քիչ անցած՝ նաեւ հրացանաձգութիւն։

Ես ոչի՛նչ չէի հասկանում։ Հարցումներս արին. Աբուլեանին մնում էին անպատասխան։ Խեղճ մարդը, աենդով բռնուածի պէս, դողում էր, առամները առամներին էին դարնում, ու չէր կարողանում խօսել։ Դէմքը չէի տեսնում, բայց երեւակայում էի վիճակը։

Պարզ էր, որ վարը արտասովոր մի բան էր տեղի ունենում։ Մի ժամից աւելի տեւեց աղմուկը, մինչեւ որ ձայները կտրուեցին։ Ի՞նչ էր պատահել։ Ինչի՞ համար էր հրացանաձգութիւնը...

Յաջորդ առաւօտ, երբ արդէն կառքում էինք, արին. Աբուլեանը բացեց բերանը.

— Ի՞նչ լաւ է, որ այդ նզովեալների լեզուն չէք հասկանում։ Դրսից չեթաները մեզ էին պահանջում, որ սպանեն։ Ասում էին չաուշին. «Մխեւնոյնն է, դուք պիտի սպանէք, թոյլ տուէք, որ մենք տեսնենք այդ գեաւուրների հաչիլը»։ Մեզ համար էր կռիւը...

Եւ չաուշն էլ հասատաց, թէ չեթաները պահանջել էին, որ մեզ իրենց յանձնէին, բայց ինքը ընդդիմացել էր եւ յաջողել մեզ

ARAM webaram.com

փրկելու: Ինքը հրաման ունէր մեզ մինչեւ սահման ապահով հասցնելու եւ պիտի կատարէր հրամանը: Պէտք չէ վախենայինք, ինքը պիտի պաշտպաներ մեզ: Մեր մտքին դիպչող չէր լինի:

* * *

Վերջապէս, հասանք եւ սահմանը — Թրքական Քէօթակ աւանը, որից անդին ռուսական հողն էր:

Մեզ առաջնորդեցին ուղիղ միւդիրի մօտ — մի դունտ ու կլոր թուրք պաշտօնեայ, ֆէսը ղլխին, ծուռ, համրիչը ձեռքին՝ ծուլօքէն նստած պրասեննակում: Չաուշի տուած թուղթը կարդալուց յետոյ, ղլխով նշան արաւ, եւ մեզ դուրս հանեցին ու տարին ժանդարմների դովուշը — փայտաշէն մի երկար ախոռ, որտեղ, տախտակէ թախտերի վրայ, պառկած կամ նստած էին 15—20 ժանդարմներ: Ոմանք հրացան էին մաքրում, ուրիշներ թուղթ խաղում, կամ աննպատակ իրենց չուրջն էին դիտում: Պատերին կախուած էին հրացաններ, ձիու սանձեր, ղլխարկներ, վերարկուներ: Տեսարանը ոչինչ ունէր հրապուրիչ:

Լուռ նստեցինք մի անկիւնում, խարխուլ թախտի վրայ: Մեզանով հետաքրքրուող իսկ չեղաւ, կարծես, դովուշի ամէնօրեայ բնակիչներ լինէինք: Մի պահ երեւաց չաուշը եւ յայտնեց, թէ մինչեւ երեկոյ այստեղ պիտի մնայինք, ապա՝ պիտի անցկացնէին մեզ ռուսական կողմը:

Չաուշի լուրը կասկած ձգեց մեր սրտերում: Ինչո՞ւ մինչեւ երեկոյ մնալ: Եթէ մեզ Ռուսաստան պիտի ուղարկէին, ինչո՞ւ անմիջապէս սահմանը չանցնէինք:

Ու դլուխ-դլխի խորհրդակցելուց յետոյ, որոշեցինք դիմել միւդիրին: Դովուշի դուռը բաց էր, պահակ չկար, դուրս եկանք եւ գնացինք միւդիրի մօտ: Պ. Աբուլեանը խնդրեց, որ թոյլ տրուի մեզ անմիջապէս անցնել սահմանը:

Միւդիրը, կարեկից արտայայտութեամբ, բայց անյողդողդ վճռականութեամբ մերժեց: Ինչե՛ր էք ասում, Աբուլեան էֆենդի, ձեզ պէս պատուական մարդկանց ինչպէ՞ս կարող ենք այդ ուս դրանններին յանձնել: Կը մնաք մինչեւ որ մթնի, դիշերը սահմանը կ՝անցնէք եւ ապահով կ՝երթաք ձեր տեղը...

Մարդը մեր ապահովութեան մասին էր մտածում — չլինի՞ թէ ուս կառավարութեան ձեռքը անցնէինք եւ, իբրեւ քաղաքական յանցաւորներ, բանտարկուէինք: Թուրք պաշտօնեան թոյլ կը տա՞ր այդպիսի անպատիւ վերաբերմունք: Չէ՛, անկարելի էր: Անհոգ եղէք: Գիշե՛րը կ՝անցնէք:

ARAM webaram.com

Ո՛չ մէկ խնդրանք ու յորդոր չօգնեց։ Գլխիկոր վերադարձանք մեր տեղը։

Աբուլեանը մտամոլոր տեղաւորուեց թախտի վրայ, ես կանգնած պատուհանի առջեւ՝ դիտում էի լայն բակը։ Բնութիւնը այնպէ՛ս խաղաղ էր։ Արեւի բարկ ճառագայթները ողողել էին ամէն կողմ։ Ճնճղուկների երամները, աղմուկով, թաւալւում էին փոշու մէջ։ Մի քանի ոչխարներ խմբուած էին բակի անկիւնում։ Մի էշ, ծառի տակ, դլուխը կախ՝ խոկում էր աշխարհի ունայնութեան մասին։ Իմ հոգին, սակայն, խաղաղ չէր։ Մի չար կասկած կրծում էր ուղեղս։ Հապա եթէ դիչերը տանեն, սահմանի վրայ դնդակահարեն ու յետոյ ասեն, թէ ռուսներն են սպանե՛լ... Սէր քոմիսէրի լկտի դէմքը աչքիս առջեւ էր։ Թուրքից ամէն բան կարելի էր սպասել։

Ամբողջ ուշադրութիւնս դուրսն էր։ Զէի տեսնում, թէ ինչ էր կատարւում չուրջս։ Անորոշ կերպով նկատեցի, սակայն, որ մի երիտասարդ ժանդարմ, հեռուից, հետեւում էր ինձ։ Մէկ էլ, արագ կերպով, նա մօտեցաւ, կանգնեց մօտս եւ, առանց ինձ նայելու, սկսեց դիտել բակը։ Ու աննկատելի կերպով չչնջաց.

— Ընկեր Վրացեան, դիս չճանչցա՞ք. ես եաղանցի Գրիգորն եմ։ Ի սէր Աստծոյ, աչքատեցէք ցերեկով անցնել սահմանը, դիչերը ձեզ կը սպանեն...

Ու նոյնքան արագութեամբ հեռացաւ։

Եաղանցի Գրիգո՛րը, ինչպէս չէ, ճանաչում էի։ Երբ մի քանի տարի առաջ, «Ցառաջ»ի խմբագիր էի կարինում, նա եկել էր մօտս, խմբագրատուն, խնդրելու, որ օգնեմ իրեն ժանդարմների դպրոցը ընդունուելու։ Ոհոստոմի եւ Ատրունիի աջակցութեամբ յաջողել էր դպրոց մտնել, եւ այժմ այստեղ ժանդարմ էր։ Որտեղի՛ց որտեղ — ի՛նչ հանդիպում...

Ուրեմն, կասկածներս անհիմն չէին — դիչերը պիտի սպանեն մեզ։ Բայց ի՞նչպէս ազատուել։ Ի՞նչպէս համոզել միւդիրին, որ մեզ ազատ ձգէ։

Առանց Գրիգորի ասածը յայտնելու, համոզեցի Աբուլեանին, որ մի անգամ էլ տեսնուի միւդիրի հետ եւ խնդրի մեզ արտօնելու ցերեկը անցնել սահմանը։ Աբուլեանը վերարկուի գրպանները քրքրեց ու դուրս մի հին այցեստմա, որի վրայ Թուրքերէն նշանակուած էր իր անունը եւ Սանասարեանի տեսչի պաշտօնը։ Մի ժանդարմ այցեստմաը տարաւ միւդիրին։ Քիչ անցած՝ Աբուլեանը հրաւիրուեց միւդիրի մօտ։ Եւ մի քանի վայրկեանից վերադարձաւ՝ մռայլ ու նողվելով։ Միւդիրը կտրուկ կերպով մերժել էր. հրամանը կարինից էր,

ARAM webaram.com

սահմանը պէտք է անցնենք դիշերով:

Ի՞նչ կարող էինք անել: Մնում էր, սպանդանոց տարուող ոչխարի պէս, անմռունչ սպասել ճակատագրի տնօրինութեան:

Աբուլեանը բռնեց իր թախտը, ես, պատուհանի առջեւ, դիտում էի դուրսը: Ուղեղիս մէջ հազար տեսակ մտքեր էին վխտում: Փախչե՞լ — անկարելի էր. չրջապատուած էինք ժանդարմներով: Եաղանցի Գրիգորի օգնութեա՞ն դիմել, բայց ի՞նչ կարող էր անել խեղճ տղան, որ հեռուից ահով ու կարեկցութեամբ դիտում էր մեզ: Ո՛չ մի ելք: Թո՛ղ ճակատագիրը տնօրինէ ինչ որ պիտի տնօրինէ: Ես հաւատում եմ ճակատագրին:

Մէկ էլ, հեռուից, փոչու մի ամպ երեւաց: Մի խումբ ձիաւորներ մօտենում էին մեր կողմը: Հասան: Մտան բակը: Առջեւից՝ մի սպայ: Եռեւից՝ մի տասնեակ թուրք զինուորներ: Սպան արագ շարժումով ցատկեց ձիուց: Թափ տուեց վրան: Ոտները զարկեց գետնին, թօթափեց իր վրայի փոշին: Մի վայրկեան դիտեց չուրջը, մի ակընթարթում ուղղուեց մեր կողմը, կանգ առաւ դռվուշի դրան առջեւ եւ կտրտուած ռուսերէնով.

— Վրացեան էֆենդի, դո՞ւք այստեղ ինչ էք անում:

Շուարած դիտում էի նրան:

— Ինձ չճանաչեցի՞ք: Մոռացե՞լ էք Հասան բէյին, ձեր աշակերտին...

Ա՛հ, Հասան բէյը, ի՞նչպէս չէ. ճանաչեցի: Իմ կարճն ապրած տարին, մի օր, «Յառաջ»ի խմբագրատունը եկան երկու թուրք սպաներ. լսել էին, որ ես Պետերբուրգի համալսարանից եմ եւ ուզում էին ինձանից ռուսերէն լեզուի դասեր առնել: Ես սիրով յանձն առի եւ 6—7 ամիս անընդհատ պարապեցի նրանց հետ: Բաւական չուտ սովորեցին կարդալ-գրել ու մի քիչ էլ խօսել: Դասերից դուրս էլ, յաճախ, հանդիպում էինք իրար: Համակրելի երիտասարդներ էին: Ինձանից ռուսերէն գրքեր էին առնում կարդալու եւ իրենց տպաւորութիւնն էին յայտնում կարդացածի մասին: Մի խօսքով՝ բարեկամացել էինք:

Փորձեցին ինձ վճարել դասերի համար — մերժեցի: «Թող այդ էլ իմ հայրենասիրական պարտականութիւնը լինի», ասացի: Երեւի, այդ խօսքը որոշ տպաւորութիւն էր թողել նրանց վրայ: Երբ կարնից հեռանում էի Ամերիկա, եկան ինձ ճանապարհ դնելու: Որոշ ժամանակ նամակներ էլ գրեցին եւ ես նրանց պատասխանում էի Ամերիկայից:

Ահա այդ սպաներից մէկն էր Հասան բէյը, որ այժմ Քէօթակի

ARAM webaram.com

ճակատի հրամանատար էր եւ ինձ հանդիպում էր ժանդարմների դռվուշում։

— Դուք այստեղ ի՞նչ էք անում, ո՞վ է բերել ձեզ, ինչո՞ւ համար, անվերջ հարցնում էր նա։

Ես ի՞նչ պիտէի, թէ ինչ եմ անում, կամ ինչո՞ւ համար էի եկել այստեղ։ Պատմեցի մեր գլխին եկածը եւ ծանօթացրի պր. Աբուլեանի հետ, որի անունը ծանօթ էր նրան։

Հասան բէյը վրդովմամբ լսեց պատմութիւնս եւ հրաւիրեց, որ հետեւենք իրեն։ Միւդիրն էլ արդէն հասել էր եւ լուռ դիտում էր տեսարանը։

Գնացինք միւդիրի հիւրասրահը։ Հասան բէյը հրամայեց անմիջապէս ոչխար մորթել եւ չուռով ճաշ պատրաստել։

Հասան բէյը զարգացած եւ լուսամիտ մարդու տպաւորութիւն էր թողնում։ Լաւատեղեակ էր միջազգային դէպքերին եւ Թուրքիայի ներքին կացութեան։ Ծանօթ էր նաեւ Կարնի վերջին իրադարձութիւններին եւ մեր ու Իթթիհատի փոխյարաբերութիւններին։ Ինքը իթթիհատական չէր, բայց, իր ասելով, հայրենասէր Թուրք էր։ Կարնում, մեր տեսակցութիւնների միջոցին, նա ջերմօրէն եւ անկեղծ երեւոյթով պաշտպանում էր Թուրք–հայկական բարեկամութիւնը։ Ցիշողութեանս մէջ մնացել էր նրա մէկ խօսքը. «Թուրքերը և հայերը կա՛մ պիտի ապրեն միասին, կա՛մ միասին պիտի մեռնեն»։ Այժմ յիշեցրի նրան այդ խօսքը։

— Այո՛, պատասխանեց նա վճռական չեչառով, ես այսօր էլ նոյն համոզման եմ։ Դուք՝ հայերդ մեծ ոյժ էք, բայց սխալ քաղաքականութեան էք հետեւում։ Դուք կարծում էք, որ եւրոպացիները կամ ռուսն են ձեր բարեկամը։ Ձեր իսկական բարեկամը մենք ենք՝ Թուրքերս — ոչ այն դէօնմէները, որ այսօր կառավարութեան գլխին են, — դրանք Թուրքերի էլ թշնամի են, — այլ բուն Թուրք ժողովուրդը։ Անիծուեն նրանք, որ մեզ ուզում են բաժանել միմեանցից։ Ռուսը ձեր ձեռքով ձգտում է մեզ կործանել։ Տեսէք թէ ինչ է կատարւում այժմ Կովկասում։

Ես լուր չունէի, թէ ինչ էր կատարւում Կովկասում, եւ Հասան բէյից իմացայ, որ այնտեղ հայ կամաւորական խումբեր էին կազմւում Թուրքիոյ դէմ, որ Անդրանիկը եկել էր Թիֆլիս կամաւորների գլուխը անցնելու համար եւ որ այդ բանը վատ հետեւանքներ կարող էր ունենալ։

— Ուրեմն, դուք կարծում էք, որ պատերա՞զմ տեղի պիտի ունենայ Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ, հարցրի ես։

ARAM webaram.com

— Եթէ դէպքերը այս ընթացքով չարունակուեն, պատասխանեց նա, ի հարկէ, տեղի կ'ունենայ: Մերոնք յիմարացել են եւ կրակի հետ են խաղում: Թուանների ուղածն էլ հենց այդ է:

— Այդ դժբախտութիւն կը լինի Թուրքերի եւ հայերի համար:

— Այո՛, դժբախտութիւն: Ես գիտեմ, որ դուք կարնում խորհուրդ էք տուել մերոնց պատերազմից հեռու կենալ, բայց ո՞վ է լսողը: Պոլսի մեր տաք գլուխները կարծում են, թէ ժամը հասել է ռուսների հետ հաշիւ տեսնելու: Այո՛, դժբախտութիւն է, ձեզ համար էլ, մեզ համար էլ: Պատերազմը դժբախտութիւն է ամբողջ մարդկութեան համար:

Այո, Հասան բէյը համոզուած էր, որ Օսմանեան կայսրութեան չահը պահանջում էր չէզոք մնալ սկսուած պատերազմում:

— Այս պատերազմում ոչ էլ յաղթէ, այնքան պիտի տկարանայ, որ այլեւս վտանգաւոր չի լինի մեզ համար: Չէզոք Թուրքիան կը մնայ գօրաւոր եւ պատերազմից աւելի կ'օգտուի, քան եթէ մասնակից պատերազմի:

— Մենք էլ այդպէս ենք կարծում:

— Այո՛, այո՛, ես գիտեմ, բայց..., չարժէր նա ձեռքը՝ առանց խօսքը վերջացնելու:

Զարմանալի էր Թուրք սպայի բերանից լսել նման մտքեր:

Խօսքի ընթացքին նա յայտնեց, որ իր նախահայրը աբխազ է եղել: Թերեւս այդ էր պատճառը, որ նա ուրիշ Թուրք սպաների պէս չէր մտածում:

Ճաշը վերջանալու վրայ էր: Պր. Արուլեանը, որ լուռ հետեւում էր մեր խօսակցութեան, սկսեց անհանգստութեան նշաններ ցոյց տալ: Խորոված, անշուշտ, համեղ էր, Թուրք սպայի յայտնած մբռաքերն էլ հաճելի էին, բայց սա մեր հարցը ինչ պիտի լինէր: Պիտի սպասէ՞նք մինչեւ երեկոյ, թէ...

Երբ ճաշը կերել-վերջացրել էինք, Հասան բէյը դարձաւ ինձ.

— Հիմա՛ ասացէք, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել ձեզ:

Պարզ չէ՞ր մէթէ, թէ ինչով: Ինդրեցի, որ մեզ անմիջապէս սահմանն անցկացնեն, առանց դիչերուան սպասելու:

— Շա՛տ բարի, սիրով:

Միւդիրը անհանգստացաւ, փորձեց միջամտել, աչխատեց արդելել. կարնից հրամայուած էր դիչերը անցկացնել...

— Հայդէ՛, պոռաց վրան Հասան բէյը: Ու մի Թունդ հայհոյանք էլ ուղղեց կարնեցիների հասցէին: Կանչել տուեց մի չաուշ ու հրամայեց.

ARAM webaram.com

— Այս բոպէիս, այս էֆենդիներին կը տանիս սահմանի միւս կողմը, կը յանձնես ռուս հրամանատարին եւ նրանից ստացական կ'առնես ու կը բերես ինձ: Եթէ էֆենդիներին մի բան պատահի, դըլխովդ պատասխանատու ես:

Միւդիրը ամքած՝ ատամներն էր սեղմել:

Առաւօրէն վարձատրեցի մեզ ուղեկցող չաուշին ու ոստիկաններին: Ջերմօրէն սեղմեցինք Հասան բէյի ձեռքը եւ չաուշի առաջնորդութեամբ ուղղուեցինք դէպի ռուսական հողը:

— Ս բոգո՛մ (Աստուած ձեզ հետ), եղաւ Հասան բէյի վերջին խօսքը:

Միւս կողմը մեզ դիմաւորեցին ռուս սահմանապահները եւ առաջնորդեցին սպայի մօտ, որ մի համակրելի վրացի երիտասարդ էր: Բարեկամաբար ընդունեց մեզ, ատացական տուեց չաուշին: Հիւրասիրեց մեզ թէյով, լսեց մեր պատմութիւնը, հարցուփորձ արաւ Թուրքիայի ներքին վիճակի, գօրքերի դասաւորման մասին եւ ազատ արձակեց.

— Ս բոգո՛մ:

Դուրս եկանք: Կարա-Ուրգանում էինք, ռուսական հողի վրայ: Արեւոտ, պայծառ օր էր: Բնութիւնը, կարծես, ծիծաղում էր: Ծիծաղում էր եւ պրն. Աբուլեանի մինչեւ այդ մռայլ դէմքը:

Նա կանգ առաւ: Նայեց չուրջը: Նայեց երկնքին եւ ֆէսը դըլխից պոկելով՝ ուժով նետեց դետին ու ոտքով կոխեց վրան.

— Նզովեա՛լ լինիս: Երեսո՛ւն տարի կրեցի քեզ դլխիս: Երեսուն տարի ծառայեցի այդ չներին... Թո՛ւհ, թքեց նա Թուրքիոյ ուղղութեամբ, մէկ էլ ոտքով տրորեց ֆէսը եւ դլխարաց՝ առաջ քայլեց: Ես հետեւեցի նրան:

— Ա՛յս էլ մեր ճակատագիրը, չընջաց Աբուլեանը:

Այո՛, ճակատագիրը: Մարդուս ճակատին ինչ որ դրուած է՝ այն էլ կը լինի:

1947 Դեկտեմբեր
Նիւ Եորք

ARAM webaram.com

ՉԷՐ ՈՒԶՈՒՄ ԷՇ ՆԱՀԱՏԱԿ ԼԻՆԵԼ

Ներսից լսում էր դաշնամուրի մեղմ տնկտնկոց, և մի կանացի ձայն աղերսագին երգում էր ռուսերէն.

Ո՛հ, գթա՛ ինձ, գթա՛, թանկագին,
Փայփայի՛ր այս մատաղ կուրծքը իմ...

Երեւանի առաջնորդարանի պատշգամբը լուռ ողողուած էր լուսնի արծաթէ շողերով: Վարը, կանաչի մէջ թաղուած ձորում, պրնգում էր Զանգուն: Եւ առջեւը, այդիների վրայից, հեւում, կիսախաւարի մէջ, նշմարւում էր Մասիսի հսկայ ուրուագիծը: Այնպէ՛ս խաղաղ եւ այնպէս թովիչ էր գիշերը: Եւ մի կանացի ձայն ներսից, դաշնամուրի տնկտնկոցով, երգում էր աղերսագին.

Չէ՞ որ ես ինձ սիրում եմ, ասիցին.
Գուրգուրա՛, փայփայի՛ր կուրծքը իմ...

— Ի՛նչ է ոռնում այդ աղջիկը, ջղայնացած բարկացաւ Վահան Տէրեանը:

— Քրոջս աղջիկն է, պատասխանեց հանդարտ Յովէն Սրբազանը...

Մի պահ տիրեց անյարմար լռութիւն:

Մի քանի օր էր բանաստեղծ Վահան Տէրեանը Երեւանում էր: Եկել էր Մոսկուայից, ուր նրան զօրակոչի պիտի ենթարկէին: Չէր ուզում զինուորական ծառայութիւն կատարել: Եկել էր Մոսկուայի

ARAM webaram.com

Հայկական կոմիտէի նախագահ Սեւքան Մամիկոնեանի յանձնարարութեամբ, կովկասում «մի բան անելու»՝ պինուորութիւնից ազատուելու համար: Թիֆլիսում Յովհաննէս Թումանեանը խորհուրդ էր տուել նրան արձանագրուել հայ կամաւորական խմբերի մէջ: Եւ որովհետեւ կամաւորական շտաբը տեղափոխուել էր Երեւան, Տէրեանը եկել էր Երեւան «մի բան անելու»:

Կամաւորական դնդերի շտաբի պետը այդ օրերին Նիկոլ Աղբալեանն էր: Ես՝ նրա համեստ օգնականը: Երկուսս էլ մանէինք պալիս պինուորական համազգեստով, երկարավիզ կօշիկներով ու փափախով՝ նւագած աւրճանակը գօտուց կախ: Կարող էք երեւակայել, թէ ինչ հերոսական տեսք ունէինք երկուսս էլ, բայց, մանաւանդ, Նիկոլը կախիչ փրէնչով եւ արդէն նկատելի զարճած կուզով: Դրոյի անվերջ կատակների նիւթն էինք երկուսս էլ:

Վահան Տէրեանի հետ ես թեթեւ ծանօթ էի: Մի երկու անգամ հանդիպել էի նրան Նոր Նախիջեւանում, Յովհաննէս Ղարապէտեանի եւ Գրիգոր Բեգլեանի հրատարակած «Նոր կեանք» չաբաթաթերթի խմբագրատանը, իր բանաստեղծութիւնների առաջին գրքոյկի — «Մրցնշադի Աւուրջներ» — հրատարակութեան առթիւ: Ես «Նոր կեանք»ի խմբագրութեան անդամ չէի դեռ, բայց օգնում էի խմբագիրներին՝ ձեռագիրներ կամ փորձեր սրբագրելով: Եւ առանձին հաճոյքով սրբագրում էի Տէրեանի չաբաթաթերթում լոյս տեսնող բանաստեղծութիւնները, որոնց ամէն նոր առացում հրճուանք էր առաջ բերում խմբագրատան մէջ: Վահան Տէրեանի երեւումը ուրախութիւն պատճառեց մեր շրջանակում: Եւ ինքն էլ գոհ եւ ուրախ էր երեւում, որ իր բանաստեղծութիւնները յաջողութիւն էին գտնում երիտասարդութեան մէջ: Մեր, գլխաւորապէս Բեգլեանի եւ Ղարապէտեանի քաջալերութեամբ եւ նիւթական հոգածութեամբ լոյս տեսաւ նրա բանաստեղծութիւնների առաջին հատորիկը: Ես միայն սրբագրութեան օգնեցի որոշ չափով:

Ձեմ յիշում՝ Տէրեանը դեռ դաշնակցակա՞ն էր այն ժամանակ: «Նոր կեանք»ը տակաւին անկուսակցական դեմքի վրայ էր: Մոքումդրա չի մնացել որեւէ հետք, որ քաղաքական կամ կուսակցական հարցերի մասին խօսած լինէինք: Այժմ, Երեւանում, Տէրեանը արդէն նեղմիտ կուսակցական էր՝ սոցիալ-դեմոկրատ եւ կատաղի հակադաշնակցական: Անշուշտ, թեթեւ սրտով չէր, որ նա դիմում էր մեզ այդպիսի մի փափուկ խնդրով, բայց «հարկ զօրէնս լուծանէ»...

Աղբալեանի հետ զրաւեհնեակումն էինք, երբ ներս մտաւ Տէրեանը՝ նիհար ու յոգնատանջ տեսքով: Ինձ բարեւեց — ակամայ —

ARAM webaram.com



ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇՏԱԲԸ

ԱՌԱՆՁԻՆ ՍԵՂԱՆԻ ՓՈՎ ՆՍՏԱԾ՝ Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ARAM webaram.com

ձեռքի սեղմումով, Նիկոլի հետ ողջագուրուեցին ջերմ համբոյրով։ Եւ զարմանալի չէր. ես դաշնակցական հասարակ «չրջիկ» էի նրա աչքում, Աղբալեանը՝ նշանաւոր գրական քննադատ։ Գուցէ եւ առաջուց էլ ծանօթ էին, թերեւս եւ մտերիմ, չգիտեմ։

Նիկոլը թեթեւ աչք նետեց Տէրեանի բերած Ցուկ. Թումանեանի յանձնարարական նամակի վրայ, ծալեց, գրպանը դրեց եւ խօսքը ուղղեց ինձ.

— Գլխի ե՞ս, Սիմոն, վահանը ուզում է համաւոր գրուել...

— Ո՛չ, կարեց Տէրեանը, վահանը ուզում է պինուորութիւնից ազատուել... Յանկութիւն չունեմ էշ նահատակ լինելու...

— Այդ պատիւը մե՞զ էք թողնում, նկատեցի ես։

— Ում ուզում էք՝ թո՛ղ մնայ, ի՞նձ ինչ, ջղայնացաւ նա։

Նիկոլը չտապեց միջամտել։

— Լա՛ւ, լաւ, ասաց նա, աւելորդ է փոխասացութիւնը։ Մի բան կ՚անենք, վահան, իսկ հիմա պատմիր տեսնենք, ի՞նչ կայ Թուսեթում, ի՞նչպէս տեսար մեր Թիֆլիսը։

Տէրեանը խօսում էր կարճ նախադասութիւններով, անկապ, նիւթից նիւթ ոստոստելով։ Կարծեմ՝ առանձին նորութիւն չասաց։ Գոնէ իմ յիշողութեան մէջ ոչինչ չի մնացել նրա ասածներից։

Նիկոլը յայտնեց նրան, որ երեկոյեան, ընթրիքից յետոյ, պնալու ենք առաջնորդարան, կը գա՞յ մեզ հետ։ Տէրեանը նախ՝ մերժեց, յետոյ համաձայնուեց։ Պայմանաւորուեցինք երեկոյեան ընթրել միասին Ամառնային ակումբում եւ այնտեղից երթալ առաջնորդարան։ Երբ Տէրեանը մեկնեց, Աղբալեանը ասաց, չգիտեմ՝ ի՞նձ, թէ ինքը իրեն.

— Տեսնո՛ւմ ես, չի ուզում էշ նահատակ լինել... Մարդը չի ուզում էշ նահատակ լինել... Հայրապետներն ու կարապետները կարող են էշ նահատակ լինել, իսկ ինքը վերի արտի ցորենն է։ Նոր հաւերը նոր հաւկիթ են ածում։ Լսո՞ւմ ես...

Ես, ի հարկէ, լսում էի...

Իսկապէս, ա՞յդ էր Նիկոլի անկեղծ համոզումը Տէրեանի մասին, թէ՞ ինձ համար էր այդպէս խօսում։ Թուում է, թէ վերջինն էր ճշմարիտը։ Տէրեանի խնդիրը աւելի արագ լուծուեց, բայց հետագային, Զարենցի օրինակով, Նիկոլը ցոյց տուեց, թէ տաղանդաւոր մտաւորականի կեանքը նրա համար աւելի արժէքաւոր էր, քան ինչ որ հասարակ Հայրապետի ու կարապետի կեանքը...

Երեկոյեան Խորէն Սրբազանը մեզ ընդունեց գրկաբաց։

Կաթողիկոսական փոխանորդ եւ Երեւանի թեմի առաջնորդ Խո-

ARAM webaram.com

բէն արքեպ. Մուրադբէգեանը փառաւոր տեսքով, արտասովոր անձնաւորութիւն էր: Նախկին ուսուցիչ, թատերասէր, կին ու զինի սիրող մարդ՝ հոգեւոր աքեմ էր ընդունել ոչ թէ ներքին մղումով, այլ պարզապէս անյաջող սիրոյ հետեւանքով: Թիֆլիսում, ուսուցիչ եղած մի ջոգին, սիրահարուել էր մի օրիորդի վրայ: Օրիորդը գերադասել էր ամուսնանալ մի հարուստ վաճառականի հետ, Մուրադբէգեանն էլ, յուսահատ, դնացել արեղայ էր ձեռնադրուել: Աբեղան դարձել էր վարդապետ, վարդապետը՝ եպիսկոպոս եւ այժմ կաթողիկոսական փոխանորդ եւ առաջնորդ Երեւանի մեծ թեմի:

Կենցաղագիտութիւնն ու չէնութիւնը չէին անհետացել է՛ւ վերարակիր Մուրադբէգեանից: Նրա դուռը, ինչպէս եւ սիրտը բաց էին ամէնքի առջեւ, բայց, մանաւանդ, մտաւորականութեան եւ արուեստագէտների: Նիկոլի հետ ես էլ, յաճախ, այցելում էի նրան՝ «մի բաժակ թէյ» առնելու առաջնորդարանի զմայլելի պատշգամբում, եւ «մի բաժակ թէյը» սովորաբար վերջանում էր տասը բաժակ գինով...

Տէրեանի երեւումը, մեզ հետ միասին, մեծ ուրախութիւն պատճառեց Խորէն Սրբազանին: Տէրեանը արդէն անուանի բանաստեղծ էր՝ Ազգաբեանի բարձր գնահատութեան արժանացած: «Մբընչաղ» եւ «Անուրջ» — հարազատ զգացումներ էին ժամանակի երիտասարդութեան հոգուն:

Բերին համիչք: Բացուեց Խորէն Սրբազանի չէն սեղանը:

— Ի՞նչ կը դերադասէք խմել, դարձաւ Խորէն Սրբազանը Տէրեանին՝ մի ժպիտով, որ կարող էր համարուել հեգնական, առնուազն՝ երկմիտ: Սրբազանի բնական արտայայտութիւնն էր այդպէս. անծանօթ մարդու վրայ, առաջին հայեացքից, հեգնող տպաւորութիւն էր թողնում:

— Կոնեա՛կ, կարճ ու կտրուկ պատասխանեց Տէրեանը:

Նիկոլն ու ես նախընտրեցինք Շուստովի թիւ 35 նշանաւոր գինին:

— Զե՛ր կենացը, պր. Տէրեան, բարի էք եկել. դարձեալ, կարծես, հեգնական մի բան կար Սրբազանի խօսքում:

Խմեցինք Տէրեանի կենացը՝ բաժակները չխկացնելով:

Ծանկարծ, Տէրեանը հարցրեց.

— Երկրից ի՞նչ լուր, վարդապետ:

— Նախ՝ վարդապետ չէ, այլ եպիսկոպոս, միջամտեց Ազգալեանը: Երկրորդ՝ ոչ թէ եպիսկոպոս, այլ Սրբազան...

— Եւ երրորդ, պատասխանեցի ես Խորէն Սրբազանի փոխա-

ARAM webaram.com

րէն, երկրից պահանջում են, որ դասալիք պինուորներին ճակատ ուղարկենք...

— Է՛հ, ինչո՞ւ չէք ուղարկում, անհոգ երեւոյթով ասաց Տէրեանը. Երեւանում դասալիքներ քի՞չ կան...

— Այո՛, կան. մէկն էլ այսօր աւելցաւ...

Տէրեանը կասկածելի մի չարժումով ոտքի ելաւ: Ես էլ կանգնեցի:

— Հէ՛յ, բարեկամներ, ի՞նչ բանի էք, նստեցէք ձեր տեղը, ձայնը բարձրացրեց Նիկոլը:

Խօրէն Սրբազանը, որ զարմանքով աչքերը սեղմած, հանդարտ հայեացքով զննում էր Տէրեանի տարօրինակութիւնները, ասաց անվրդով.

— Նստեցէք, խնդրեմ, պարոններ: Ձեր կենացը պր. Տէրեան, ձեր կենացը պր. Սիմոն:

Ամեցինք բաժակները չխկացնելով:

— Ես տունը, խրատեց Ադրալեանը, ապրի տուն է, հասկանո՞ւմ էք, չէզոք հող է. Խոտել կռիւ ու դալմադալ ընդունուած չէ... Ձեր կենացը, Սրբազան:

Բայց դեռ կենացը չէինք խմել, ներս մտան նոր հիւրեր, Շուստովի պինու եւ կոնեակի նշանաւոր գործարանի վարիչ Մկրտիչ Մուսինեանը, երեւանցի վաճառական Գէորգ Ամիրեանը եւ «Զանգի» գաբելքի գործարանի տէր Արտուշ Աւետեանը, որոնց քիչ առաջ հանդիպել էինք Ամառնային ակումբում: Հետզհետէ եկան նաեւ ուրիշներ: Եւ մեր պարզ այցելութիւնը, բան առիթեան, փոխուեց ժողովի՝ վերջը վերածուելու համար ֆէֆի:

Շուստովի գործարանի կառավարիչ Մուսինեանը դեռ այդ ժամանակ պաշտօնապէս դաշնակցական չէր, մի քանի տարի վերջը պիտի մանէր կուսակցութեան շարքերը եւ պիտի դառնար Հայաստանի մայրաքաղաքի անդրանիկ քաղաքապետը: Յարգանք վայելող անձնաւորութիւն էր թէ՛ հայ եւ թէ ռուս հասարակութեան մէջ եւ մօտիկ յարաբերութիւն էր պահում կառավարական շրջանակների հետ:

Սեղանը ընդարձակուեց, ճոխացաւ չիչերի նոր մարակոցներով: Բաժակների չխկոցը խառնուեց ընդհանուր խօսք ու ժխորին: Հնեկները խմեցին նորեկների կենացը, նորեկները՝ հնեկների: Եւ միջադէպը Տէրեանի հետ մոռացուեց: Մի բոլորովին անտեղի եւ անհամաստ միջադէպ, որ վերջը պարզուեց:

Տէրեանը կարծել էր, թէ Խօրէն Սրբազանը վերաւորուել էր քրոջ աղջկայ երգի մասին արուած կոպիտ նկատողութիւնից՝ հեղ-

ARAM webaram.com

նանքով էր վերաբերուել հետը, իր հերթին թոյլ էր տուել կոպիտ վերաբերում:

— Երկրից ի՞նչ լուր, վարդապետ...

Խորէն Սրբազանն ու Նիկոլը կարող էին չհմանալ այս խօսքի իմաստը, բայց ևս հասկանում էի: Ուսանողական շրջանակում այդ խօսքով էին հանդիպում սոցիալ-դեմոկրատները դաշնակցականներին՝ արհամարհական շեշտով:

— Երկրից ի՞նչ լուր... Ուզում էին ասել, թէ մենք՝ դաշնակցական ուսանողներս նեղմիտ ու տղէտ մարդիկ էինք. «երկրից», այսինքն՝ Տաճկահայաստանից դուրս ուրիշ աշխարհ չէինք հետաքրքրուում, մինչդեռ իրենք զարդացած ու լայնամիտ էին, ամբողջ մարդկութեան մասին էին մտածում...

Ինչպէս ամէն տեղ եւ համարեա միշտ, այդ օրն էլ խօսակցութիւնը կենտրոնացաւ ազգային-քաղաքական հարցերի շուրջ:

— Պր. Մուսինեան, ի՞նչ նորութիւն էք բերել մեզ այսօր, հարցրեց Խորէն Սրբազանը, երբ ազմուկը մի քիչ հանդարտել էր:

— Առանձին նորութիւն չունեմ, Սրբազան, պատասխանեց Մուսինեանը: Այում են՝ չուտով նոր յարձակումներ պիտի սկսուեն արեւմտեան ճակատում: Մեր բանակը պատրաստ է...

— Պատրա՞ստ, բացագանչեց Տէրեանը: Կօշիկ ու հրացան չունեն, իսկ դուք ասում էք պատրաստ է:

— Փափախներով կը պարենք Թշնամուն, սրախօսեց Ադբալեանը:

— Ինձ զօրավար Օղանովսկին ասաց, լուրջ կերպով առարկեց Տէրեանին Մուսինեանը: Կարծում եմ կորպուսի հրամանատարը աւելի լաւ տեղեակ է, քան թէ ես ու դուք, երիտասարդ պարոն:

— Ես Մոսկուայից եմ գալիս, ես դիտեմ ինչ որ ասում եմ, յամառեց Տէրեանը: Դուք ասում էք «նոր յարձակումներ»: Իսկ ես ասում եմ՝ չուտով նոր նահանջներ կը սկսուեն:

Խորէն Սրբազանը ուզում էր մի բան ասել, բայց մէջ մտաւ Ադբալեանը:

— Ներողութիւն, Սրբազան, էս խօսքերից ես բան չեմ հասկանում: Կօշիկի եւ հրացանի հաշիւը մեզ չեն տուել, չդիտենք: Բայց դիտենք, որ մեր բանակները բոլոր ռազմաճակատներում Թշնամու հողի վրայ են: Սիբելի բանաստեղծ, դու քո բանաստեղծութիւնը արա, կօշիկ ու հրացանի հետ գործ չունես:

— Իսկ դու, սիբելի քննադատ, քո քննադատութիւնը արա, ի՞նչ գործ ունես ռազմաճակատների հետ, բարկացաւ Տէրեանը:

ARAM webaram.com

— Օհօ՛, բարեկամ, բարկանո՞ւմ ես։ Ես քեզ ասում եմ, ա–կանջ դիր. մի քանի տարի չանցած՝ դու հայկական փուլով նամակ կը առանաս էրզրումից։

— Հա՛, հա՛, հա՛, ծիծաղից Տէրեանը։ Գուցէ եւ հայոց Թա–գաւո՞ր։ «Դրօշակները ծածան–ծածան, ականակուռ թագը գլխին»...

— Մի՛ ծիծաղիր, այո՛, եւ Թագաւոր... Ես կ'ուզէի տեսնել Թագաւոր «ականակուռ թագը գլխին»։ Այս ժողովուրդը պէտք ունի սեփական Թագաւորի... Սակայն, Թագաւորների դարը անցել է վա–ղուց, բայց «դրօշակները ծածան–ծածան» կը տեսնենք։ Էրզրումից հայոց նամակագրոշմով նամակ էլ կ'առնենք, վաաահ եղէք...

Տէրեանը ձեռքը բարձրացրեց, ուզում էր խօսել, բայց Յովէն Սրբազանը չհամբերեց.

— Պարոնայք, էս հօ Պետական Դումա դարձաւ մեր հաւաքոյ–թը։ Մոռացա՞ք, որ առաջնորդարանը չէզոք հող է, վէճի տեղ չէ...

— Ջէֆի տեղ է, մէջ ընկաւ Աբաուչ Աւետեանը, որ վաղուց սկսել էր յօրանջել ձանձրոյթից։

— Այո՛, ֆէֆի տեղ, չարունակեց Սրբազանը, վերցրէք բա–ժակները։ Մեր բանաստեղծի եւ քննադատի կենացը։

Յմեցին՝ բաժակները չխկացնելով։

Յմիչք ու վէճ — ես ձանձրացած քաչուեցի մի անկիւն, պա–տըշգամբի ծայրը, որտեղից հրաշալի տեսարան էր բացւում։ Լիա–լուսնի պայծառ շողերի տակ, հեռում, յստակ երեւում էր մեծա–պանգուտած Մասիսի փառահեղ տեսքը։ Վարը, ձորում, հառաչում ու փրփրում էր աղմկոտ Ջանգուն։ Շուրջը՝ անհուն խաղաղութիւն։ Եւ վերը՝ վառ ցոլքով աստղեր հայոց երկնքում։ Պակաս էր միայն սո–խակի դայլայլը...

Եւ չուտով սոխակի երգն էլ հնչեց։ Ընդհանուր պահանջի վրայ Նիկոլը ելաւ ոտքի, մաքրեց կոկորդը, կամացուկ փորձեց ձայնը եւ սկսեց մեղմ ու ոլորուն իր աննման ձայնով.

— Դու էն գլխէն իմաստուն իս...

Այս երգով էր սկսում նա, սովորաբար, Սայաթ Նովայի մե–ղեդիների չարքը։ Պատչամբում էլ տիրեց խորին լռութիւն։ Ամէն–քը լսում էին Նիկոլը՝ և՛ մարդիկ, և՛ դրսի բնութիւնը, և՛ Մասի–սը հեռում եւ աստղերը հայոց երկնքի...

Հազիւ երգի վերջին բառերը հնչել էին, եւ հիւրերը դեռ չէին սթափուել ծափահարելու համար, Նիկոլը, առանց չունչ առնելու, սկսեց երկրորդը, ապա՝ երրորդը, չորրորդը... Ի՛նչ վէճ, ի՛նչ հա–կառակութիւն։ Ամէնքը լսում էին յափշտակուած, բայց ամենից ա–


ARAM webaram.com

ւելի զգացուած էր Տէրեանը։ Նա աչքերը յառած երգչին՝ կումկում խմում էր եւ անվերջ ծխում։ Մօտեցայ — աչքերը թաց էին եւ չբթոնքները դողում էին յուզումից։

Աղբալեանը վերջացրեց նոյնպէս յուզուած։

— Նիկոլ ջա՛ն, հոգուդ մատաղ, ցատկեց տեղից երեքալով Տէրեանը, չբթոնքներդ ուտեմ... Ուզում էր համբուրել, բայց նըստեց տեղը անոյժ։ Ամիչքը եւ երգը հարբեցրել էին նրան։

Երբ յուզումն ու չնորհաւորութիւնները մի քիչ հանդարտեցին, ոտքի կանգնեց Յովէն Սրբազանը։ Ամիչքը նրա վրայ չէր ազդում, բայց տրամադրութիւնը լաւ էր երեւում։



ՆԵՐՍԻՍԵԱՆ ԼԻՃԸ՝ ԷՋՄԻԱԾԻՆ

— Պարոններ, համենք մեր Սայաթ Նովային չունչ տուող Նիկոլի կենացը։

Ամեցին՝ բաժակները չխկացնելով։

— Հիմա, պարոնայք, հերթը մեր հիւրինն է. երգ լսեցինք, ճառ չենք ուզում... «Ո՛չ տրտունջ, ո՛չ մրմունջ», հերթը ձերն է, պր. Տէրեան։

Տէրեանը չուարած նայում էր չուրջը. «բանաստեղծութիւն, բանաստեղծութիւն», բացագանչում էին չորս կողմից։ Վարանումով ելաւ ոտքի։

— Սրբազան, տիկիններ եւ պարոններ...

Նայեց չորս կողմը գինով աչքերով.

ARAM webaram.com

— Տիկիններ չկան այստեղ, բայց փոյթ չէ... Տիկիններ եւ պարոններ...

— Ճառ չենք ուզում, բանաստեղծութի՛ւն, լսուեց ամէն կողմից:

Նորից նայեց չուրջը երեքալով եւ սկսեց մեղմ, հազիւ լսելի, աստիճանաբար բարձրացնելով ձայնը.

Ո՛չ տրտունջ, ոչ մրմունջ սգաւոր,
Հեռացի՛ր, մոռացիր, մի՛ յիշիր...

Լաւ արտասանող չէր, ձայնն էլ չէր հպատակւում, բայց քնչ որ առինքնող անկեղծ ջերմութիւն էր բուրում նրա խօսքերից: Արտասանութիւնը արժանացաւ բուռն ծափահարութեան: — Նորից, նորից, խնդրեցին ամէնքը:

Նա զարձնալ աչք ածեց չուրջը, մի պահ մտածեց պլուխը կախ, կարծես ուզում էր նստել, բայց մնաց ոտքի եւ դանդաղ շարժումով ծոցի գրպանից հանեց սեւ կողքով մի տետրակ: Բացեց, մի քանի էջ թերթեց ու սկսեց:

Կարդում էր իրար յետեւից, առանց դադարի, առանց ծափահարութեան սպասելու, առանց ուշադրութիւն դարձնելու ներկաների բացատանչութիւններին: Թւում էր, թէ իրեն համար էր կարդում միայն:

Ձեմ յիշում այսօր կարդացած կտորները: Մէկը միայն մեխուել է մտքումս՝ իր առանձին առոգանութեամբ, առանձին չեչտով ու ոգեով: Իր տպաւորուած երկերի մէջ չեմ դտել այդ կարճ բանաստեղծութիւնը, հազիւ 6—7 տուն: Փչրանքներ միայն մնացել են յիշողութեանս մէջ, այն էլ վատահ չեմ, որքա՞ն հարազատ: Սկսում էր այսպէս.

...Իմ հայրենի վառ արեւ,
Հրեղէն աւուրջ ու երազ...
Մէկ կամ երկու տուն վերջը.
Ցոգնած ճամբորդ մեհեաւոր,
Հալածական fո որդի,
Երկրներից հեռաւոր,
Ես եկել եմ fեզ ուխտի...

ARAM webaram.com

Ու վերջին տողը·

Զարթի՛ր, երկիր Նայիրի···

Ընթերցումը լռոզների սրտին դիպաւ։ Ջերմ ծափահարութիւններն ու բացագանչութիւնները բանաստեղծին էլ յուզեցին։ Այլեւս ականջ չդրեց խնդրողներին եւ անխօս նստեց տեղը՝ ձեռքը մեկնելով կոնեակի գաւաթին։

Ուրախութիւնը չարունակուեց։ Այս անգամ Խորէն Սրբազանն էր բոլորի ուշադրութեան կեդրոնում, բայց Խորէն Սրբազանի մասին՝ մի ուրիշ անգամ։

Արդէն պիչերը ուշ էր, երբ հրաժեշտ տուինք Խորէն Սրբազանին։ Ամբողջ ճանապարհին Տէրեանը լուռ էր։ Գրեթէ ոչ մի խօսք չարտասանեց։ Քայլում էր գլուխը կախ, առանց չուրջը նայելու։ Նիկոլը զուր փորձեց նրան խօսքի քաշել···

Ես ապրում էի դեռ «Օրիանա» հիւրանոցում։ Տէրեանն էլ անեակ ունէր այնտեղ։ Հիւրանոցի առջեւ Աղբալեանը բաժանուեց մեզանից եւ գլուխը ուսերի մէջ առած՝ յամր քայլուածքով սուզուեց պիչերուայ վերկը։ Տէրեանը պատասխանեց, չգիտեմ նրա՞ն թէ ինձ —

— Ձը՛, եւ չտապով մտցրեց սանդուխն ի վեր։

Ճաշերդ առաւօտ, ըստ խոստումի, Տէրեանը պիտի զար մեզ տեսնելու։ Զերեւաց։ Մտածեցինք՝ յոգնած էր պիչերուայ էֆփից եւ կէսօրից յետոյ կը զայ։ Զերեւաց կէսօրից յետոյ էլ։ Երեկոյեան, Ամառնային ակումբում իմացանք, որ մեկնել էր Երեւանից, առանց մեզ մէկի հետ տեսնուելու։

— Չէր ուզում էշ նահատակ լինել, քմծիծաղով ասաց Նիկոլը։ Ո՞վ կ՚ուզէ էշ նահատակ լինել, ասա՛, խնդրեմ···

1930, Դիտրոյիտ

ARAM webaram.com

ՍԱՐԸՆԱՄԻՇՈՒՄ 1918-ԻՆ

Այդ տարի, 1918ին, Հայաստանի ձմեռը առանձնապէս սաստիկ էր: Նոր Տարին սկսուեց խիստ ցրտով եւ բուք ու բորանով: Կարսից, Կարինից, Երզնկայից, Մուշից, ամէն կողմից մարդու աբիւնը սառեցնող լուրեր էին հասնում ձիւնամրրիկների, հազորդակցութեանց դժերի խանգարման, որբանոցների, ղօրքի ու գաղթականների քաշած նեղութիւնների մասին:

Միաժամանակ ռազմաճակատի ու թիկունքի հրամանատարական կազմից եւ քաղաքացիական իշխանութիւններից հեռագրական յամառ պահանջներ էին հասնում՝ ազերսարկու կամ սպառնական — նայելով հեռագրողի խառնուածքին — որ Հայոց Ազգային Խորհրդի անդամները այցելեն ռազմաճակատ եւ մերձակայ վայրերը՝ զինուորների եւ ժողովրդի տրամադրութիւնը բարձրացնելու համար: Բայց Թիֆլիսում ձմեռը հաճելի էր. ձիւն չկար, օդը մեղմ էր եւ արեւի առատ ճառագայթները ողողում էին հայ մեծահարուստ Տէր Մարգարեանի չէնքը Գոլովինակի պողոտայի վրայ, ուր տեղաւորուած էր Հայոց Ազգային Խորհուրդը:

Ամէն առաւօտ, կանուխ մահուդով ծածկուած մեծ սեղանի չուրջ, հաւաքուում էին Ազգային Խորհրդի անդամները: Սեղանի գլխաւորը նստում էր նախագահ Աւ. Ահարոնեանը, նրա ձախ կողմը՝ նախագահի օգնական Տիգրան Բէդզադեանը, աջ կողմը՝ Մոսկուայի կոմիտէի նախագահ եւ այժմ Հայոց Ազգային Խորհրդի զինուորական գործերի վարիչ Սաեփան Մամիկոնեանը: Ապա՝ նրա օգնական Ռուբէն Տէր Մինասեանը, քարտուղար Յակոբ Քոչարեանը, սոցիալ-դեմոկրատ Արամայիս Երզնկեանը եւ ուրիշներ: Այդ ժողովներին յա-

ARAM webaram.com

ճախ ներկայ էի լինում եւ ես, իբրեւ «Հորիզոն» օրաթերթի խմբագիր, Սէյմի անդամ եւ էլ չդիտեմ ինչ:

Նախագահը բաց էր անում ժողովը: Քոչարեանը կարդում էր վերջին նամակներն ու հեռագիրները: Ներկաները հաղորդում էին իրենց ունեցած տեղեկութիւնները օրուայ անցքերի մասին: Տեղի էր ունենում մտքերի փոխանակութիւն: Ապա բերում էին թէյ սպիտակ հացով եւ կարագ-պանիրով: Դուբսը զժուարութեամբ էր մթերք ճարւում, բայց Հայոց Ազգային Խորհուրդը առատ թէյ ու շաքար ունէր: Եւ այնպէս հաճելի էր տաք եւ անոյշ թէյը սպիտակ հացով ու կարագ-պանիրով, մանաւանդ, հեռագրական լուրերից յետոյ Հայաստանի տառնամանիքների եւ դաղթականների կրած տառապանքների մասին:

Թէյին ընկերանում էին է՛ւ դուարճալի մանրավէպեր: Ահարոնեանն ու Բէգզադեանը աննման պատմողներ էին, իսկ երբ նրանց միանում էր է՛ւ Գիւտա Խատիսեանը, կարելի էր ժամերով կախուած մնալ նրանց շրթունքներից: Ուստի, բնաւ զարմանալի չէր, որ Հայոց Ազգային Խորհուրդը միշտ «վազուայ նիստին» էր յետաձգում ռազմաճակատ այցելելու հարցը:

Եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում, զօր. Նազարբէգեանի կարուկ հեռագրի վրայ էր, որ, վերջապէս, «վազուայ նիստը» հասաւ. ռազմաճակատի կացութիւնը աւելի քան սպառնական էր: Անհրաժեշտ էր «մի բան» անել: Ի՞նչ բան — անհրաժեշտ էր նախ՝ սեփական աչքով տեսնել եւ ուսումնասիրել իրական կացութիւնը առնելիքը որոշելու համար: Որոշուեց — Հայոց Ազգային Խորհուրդը պէտք է անմիջապէս մեկնի Ալեքսանդրապոլ, ուր մնում էր զօր. Նազարբէգեանի սպայակոյտը, այնտեղից Կարս ու Սարըղամիշ:

Մութ երեկոյ էր, 1918 թ. Մարտ 5ին, երբ խմբով մտանք Հայոց Ազգային Խորհրդին յատկացուած վագոնը: Ներկայ էին Ա. Ահարոնեանը, Տ. Բէգզադեանը, Ս. Մամիկոնեանը, Նիկոլ Ադբալեանը, Ռ. Տէր-Մինասեանը, Արեւմտահայ Խորհրդի նախագահ Վահան Փափազեանը, ես՝ Սէյմի լիազօրագիրը դրպանումս: Երկաթուղային վարչութիւնը փաստօրէն վրացիների ձեռքն էր, եւ վրդովեցուցիչ էր նրանց վերաբերումը: Հայոց Ազգային Խորհրդի նախագահի տրամադրութեան տակ վարչութիւնը դրել էր մի երբորդ կարգի վագոն՝ ջարդուած ապակիներով, կոտրտուած նստարաններով, ագռա՛ռ: Ահարոնեանի դայրոյթը անսահման էր: Նա ուզում էր բողոքել առ որ անկ է: Խիստ վրդովուած էր է՛ւ Բէգզադեանը, որ հայ-վրացական բարեկամութեան ջատագով էր: Ստ. Մամիկոնեանը իր պարզ փիլի-

ARAM webaram.com

սովայութեամբ հանդարտեցրեց նրանց, եւ հետզհետէ ամէնքը հաշտուեցին փաստի հետ:

Այդպէս էին այն ժամանակ հայ եւ վրացի դեկավարութեան յարաբերութիւնները: Վրացիները աւելի նպաստաւոր պայմաններում էին եւ առիթ չէին փախցնում վերաւորելու հայերի ինքնասիրութիւնը:

Ուշ գիշեր էր, երբ մեր գնացքը շարժուեց: Մեզ հետ էին, առանձին վագոնով, եւ՛ Հայ Զինուորական Միութեան անդամները Արսէն Շահմազեանի դլխաւորութեամբ: Նրանք էլ չափազանց վերդովուած էին վրացիների անիրաւութիւնից. դոնէ՛ արտաքին քաղաքավարութեան համար երկաթուղու իշխանութիւնից մի մարդ պէտք է դար Հայոց Ազգային Խորհրդին բարի ճանապարհ մաղթելու...


Ալեքսանդրապոլում ընդունելութիւնը ջերմ էր: Զօր. Նազարբէգեանի եւ իր սպայակոյտի հետ խորհրդակցելուց եւ պաշտօնական այցելութիւններից յետոյ, Հայոց Ազգային Խորհուրդը մեկնեց Կարս: Մեզ մեացան նաեւ զօր. Նազարբէգեանը իր սպայակոյտով եւ Վահան Նաւասարդեանը, որ այդ ժամանակ դեռ, եթէ չեմ սխալւում, Ալեքսանդրապոլի քաղաքագլխի օգնական էր: Քաղաքագլուխը պաշտօնապէս դեռ Ա. Խատիսեանն էր:

Ջերմ էր ընդունելութիւնը եւ՛ Կարսում: Բերդապահ զօր. Դէյեւը եւ իր օգնական Միշա Արզումանեանը ցոյց տուին բերդի ամրութիւնները, լաւ ճաշով եւ գեղեցիկ ճառերով ու վառ յոյսերով հիւրասիրելով՝ ճանապարհ դրին դէպի Սարըղամիշ, ուր գտնւում էր ռազմաճակատի հրամանատար զօր. Արէշեանի սպայակոյտի կեդրոնը:

Այստեղ արդէն պատկերը տարբեր էր: Ճիշտ է, զօր. Արէշեանն էլ մեզ լաւ ճաշ տուեց Սպաների ժողովարանում, եւ նոյն իսկ ճառեր էլ խօսուեցին, բայց ընդհանուր դրութիւնը բնաւ պերճախօսութեան չէր տրամադրում:

Սարըղամիշ հասնելուց եւ ընդունելութեան պաշտօնական արարողութիւնը լրացնելուց յետոյ, սկսուեց խորհրդակցութիւնը, որ ընդհատուեց ճաշի համար: Ապա, հազիւ վերսկսել էինք խորհրդակցութիւնը, լուր հասաւ ճակատից, թէ թշնամին յարձակման է անցել Հարամ Վարդանի կողմից, եւ կացութիւնը լուրջ է: Զօր. Արէշեանը բռնեց սիրտը, որ զարմանալի յատկութիւն ունէր լուրջ վայրկեաններին իր ներկայութիւնը զգացնելու: Զօր. Նազարբէգեանը ինչ որ չընջաց զօր. Վրչինակիի ականջին, Ա.Հարոնեան եւ Բէդզադեան լռելեայն խորհրդակցեցին իրարու հետ: Ստեփան Մամիկոնեանը խոր-

ARAM webaram.com



УДОСТОВѢРЕНІЕ.

Предъявитель сего гражданинъ Грузинъ-Врацянъ С.

дѣйствительно есть Членъ Закавказскаго Сейма.

Предсѣд. Закавк. Сейма:

Секретарь

ՍԷՅՄԻ ԱՆԴԱՄԱԹԵԱՆ ՌՈՒՍԵՐԷՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ, 1918, ԹԻՖԼԻՍ

ARAM webaram.com

հրդեհակոծութեան մէջ էր ինքն իրեն հետ: Դուրսը նկատում էր իրա-
նցում: Ելումուտ էին անում լարուած դէմքերով սպաներ...

Ի՞նչպէս եղաւ, ո՞վ որոշեց — չհասկացայ: Բայց իմացայ՝ որոշուել էր, որ Հայոց Ազգային Մորհրդի անդամները եւ զօր. Նա-
զարբէկեանի սպայակոյտը անմիջապէս պէտք է հեռանային եւ Սա-
րըզամիշում պէտք է մնային Ազահովութեան Մորհուրդից Վահան Փափազեանը, Հայոց Ազգային Մորհրդից՝ ձեր խոնարհ ծառան, եւ Վահան Նաւասարդեանը: Մեր դերը պէտք է լինէր սիրտ տալ եւ ա-
ջակցել զօր. Արչեանին պաշպանելու ռազմաճակատը, որ բնաւ պաշտպանուելու որամադրութիւն ցոյց չէր տալիս:

Պէտք է խոստովանեմ, որ Հայոց Ազգային Մորհրդի եւ բա-
նակի ընդհանուր հրամանատարութեան ռազմավիտական նահանջը այնքան էլ նպաստաւոր չէր ճակատի ռազմա-հոգեբանական սիտուա-
ցիային, ոչ էլ մեր՝ մնացողներիս հոգե-ռազմաբանական որամա-
դրութեան: Մենք կարծում էինք, որ փախուստի տալի վայելուչ ձեւ կարելի էր գտնել...

Ինչ որ է: Այստեղ իմ նպատակը այդ օրերի լրիւ պատմութիւ-
նը ներկայացնելը չէ: Ոչ էլ ուզում եմ մեր երրորդութեան — Փա-
փազեանի, Նաւասարդեանի եւ իմ — հերոսական գործունէութիւնը արձանագրել. դրա համար, անշուշտ, կը գտնուի մի նոր Հոմերոս: Ես պրիչ առի միայն արձանագրելու համար մի քանի դէպքեր Սարը-
զամիշի վիպական օրերից, մի քանի փոքր յիշողութիւններ, որոնք ծանրացել են իմ մտքի ու խղճի վրայ եւ որքան տարիները անցնում են, այնքան աւելի են ճնշում հոգիս:

Զարմանալի է մարդ արարածը: Յիշում եմ՝ ես ներկայ էի մի դատավարութեան, Փարիզում: Մի Ֆրանսուհի սեփական ձեռքով սպանել էր իր ամուսնուն եւ այժմ, դատաւորների առաջ, դլուխը բարձր, ամուր ձայնով, համարձակ պաշտպանում էր իր արարքը: Մէկ էլ, ո՞րտեղից-որտեղ, ճիշտ ամբաստանեալի առջեւից վազեց... մի մուկ: Կինը սարսափահար՝ ճչաց եւ ընկաւ ուշաթափ: Դատավա-
րութիւնը ընդհատուեց:

Կեանքումս ի՛նչ սարսափներ ասես չեմ տեսել եւ դիմացել եմ: Սարըզամիշի այս փոքր դէպքերը չեմ կարողանում մոռանալ: Հաս-
կանո՞ւմ էք. ինչ ասել է՝ «չեմ կարողանում մոռանալ»...

Սարըզամիշը գտանք քաոսային վիճակի մէջ: Քաղաքը դա-
տարկուել էր: Բնակիչները թողած տուն ու տեղ՝ հեռացել էին: Մը-
նացել էին կասկածելի մարդիկ, որոնք դիշեր ու ցերեկ թալանով էին զբաղուած: Զինուորական պահեստները մնացել էին անպաշտպան.

ARAM webaram.com

անհաշիւ հարստութիւն էր ամբարուած — դէնք ու ռազմամթերք, դինուորական եւ քաղաքացիական հագուստ, երկրագործական գործիքներ եւ մեքենաներ, խճուղիներուն եւ կամուրջներուն շինութեան մեքենաներ, անասուն դեղորայք, ալիւր, շաքար — տասնեակ միլիոններու արժէքով: Ռուս բանակը լքել ու հեռացել էր խուժանացած: Տէր չէր մնացել: Զօր. Արէշեանը հապիւ կարողանում էր իր դինուորական անմիջական պարտականութիւններին հասնել: Ռուս բանակի փայլուն դինուորականի համբաւ ունէր, բայց այժմ խեղճացել, ջղայնացել, թրջուած հաւ էր դարձել. բոլորովին անհամապատասխան էր իրեն վիճակուած դերին: Սրտի հիւանդութիւն էլ ունէր — ամանք ասում էին՝ հիւանդ էր ձեւանում — եւ ծանր վայրկեաններին կորցնում էր գլուխը: Նրան օգնելու կոչուած ճակատի հրամանատարը՝ զնդ. Բէյ-Մամիկոնեանը նոյնպէս ցաւագար ու վախկոտ մէկն էր: Հակառակ իր արտաքին պատկառելի տեսքին եւ երեւութական լրջութեան՝ իրապէս չրջուն խուճապ էր եւ ո՛չ մէկ վստահութիւն չէր ներշնչում իրեն ենթակայ դինուորներին ու սպաներին:

Ցիշողութեանս մէջ ո՛չ մէկ լուսաւոր գիծ չի մնացել եւ Արէշեան-Բէյ-Մամիկոնեան չրջապատից: Ո՞րտեղից էին հաւաքուել այս միջակութիւնները եւ ի՞նչ կարող էին անել ձեւի բերելու Սարըղամիշի անձեւ քաոսը, որ օրէցօր աւելի էր ծանրանում, մանաւանդ, պաղպականութեան հասանքի պատճառով: Ամէն օր Սարըղամիշ էին թափւում փախստականներ պատերազմի վայրերից, որոնց անհրաժեշտ էր տեղաւորել, կերակրել, եւ երկաթուղիով ուղարկել դէպի հիւսիս:

Աչխատանքը բաժանեցինք մեր միջեւ հետեւեալ ձեւով — Վահան Փափազեանը առանձնից գաղթականական գործը: Վահան Նաւասարդեանը գարձաւ զօր. Արէշեանի խորհրդական, մի տեսակ շտաբի պետ: Ինձ բաժին ընկաւ Սարըղամիշի պարէտի պաշտօնը — զինուորական կոմենդանտ: Եւ երեքով անցանք գործի:

Ռազմաճակատից չարունակ մռայլ լուրեր էին ստացւում. թշնամին աւելի եւ աւելի յանդուգն յարձակումներ էր գործում: Մեր ուժերը բաւական չէին եւ արագ կերպով տկարանում էին՝ հիւանդութեանց, դասալքութիւնների, կարգապահութեան խանգարման եւ, մանաւանդ, հրամանատարական հեղինակութեան բացակայութեան հետեւանքով: Անդրանիկը իր զօրամասերով հեռացել էր կռուի դաշտից, իրրեւ կարգախօս թողնելով իր հետեւը. «Թրքահայութիւնը կոտորուեց, թո՛ղ ռուսահայութիւնն էլ կոտորուի»: Այդպէս չէր ասուած իր խօսքը, բայց ամբոխը այդ իմաստով հասկացաւ:

ARAM webaram.com

Օրուայ հրամայական պահանջն էր՝ կանգնեցնել Թշնամու յառաջխաղացումը: Դրա համար, առաջին հերթին, պէտք էր ուժեղացնել ճակատի զօրամասերը օդնական ուժերով: Սարըղամիշում պահեստի մասերը դրեթէ սպառուած էին. մնացածները ո՛չ մէկ վստահութիւն չէին ներշնչում: Զօր. Արէշեանի դիմումները Ալեքսանդրապոլ զօր. Նազարբէկեանին ո՛չ մի արդիւնք չէին տալիս: Սկսեցինք ուղիղ հեռագրաթելով ամբակոծել Հայոց Ազգային Խորհուրդը Թիֆլիսում: Հետեւանքը եղաւ նոյնը. «Բաւականացէք ձեր ուժերով»:

Սարըղամիշում եւ, առհասարակ, ճակատի մերձաւոր թիկունքում սուր կարիք կար մոտաւորական զեկավար ուժերի, որոնցով լեցուն էր Թիֆլիսը: Մեր դիմումները Հայոց Ազգային Խորհրդին այս գծով էլ արձագանգ չէին գտնում:

Ռազմաճակատում պահանջում էին կարուկ միջոցներով վերջ տալ դասալքութեան: Բանակի կարգապահական ոգին կոտրողները մնում էին անպատիժ: Անհրաժեշտ էր զինուորական դատարան կազմել պատժելու համար դասալիքներին ու դասալիքներին: Զօր. Արէշեանը յարմար ուժեր չէր գտնում դատական կազմի համար եւ ի զուր բախում էր ընդհանուր հրամանատարութեան և Ազգ. Խորհրդի դռները: Մեր թախանձագին խնդրանքներին էլ պատասխանելով՝ Թիֆլիսից յորդորում էին սեփական ուժերով բանականանալ: Փորձեցինք «սեփական ուժերով» կազմել զինուորական ատեան. բան դուրս չեկաւ: Երկու վահանները վճռական կերպով մերժեցին զինուորական դատարանի կազմի մէջ մտնել. նրանց խիղճը թոյլ չէր տալիս մահուան դատավճիռ արձակել: Երբ զեկավարները իրաւունք էին համարում «խղճով» առաջնորդուել, բնական էր, որ ստորադասներն էլ նոյնպէս ապաւինէին խղճին: Օրեր տեւող խօսակցութիւններից ու վէճերից յետոյ, կարելի չեղաւ զինուորական ատեան կազմել, եւ դասալիքները անպատիժ վխտում էին թիկունքում:

Մի օր էլ ըմբոստացաւ եւ մերժեց ճակատ երթալ Սարըղամիշում գտնուող 101րդ ձիաւոր հարիւրեակը: Արէշեանի բոլոր ջանքերը կարգի բերելու անցան անօգուտ: Մարդիկ ուզում էին հետեւել դասալիք՝ ռազմաճակատից հեռացած ռուս զօրամասերին:

Զօր. Արէշեանը սիրտը բռնած՝ չարչարւում էր ցաւից ու անկարողութիւնից՝ չարչարելով նաեւ մեզ: Նստած մոայլ՝ ելք էինք որոնում անել եւ անտանելի կացութիւնից: Եթէ այս դրութիւնը չարունակուէր, կարճ ժամանակամիջոցում ռազմաճակատը փուլ կը գար, եւ Թշնամին անարգել կը յառաջանար դէպի Կարս եւ Ալեքսանդրապոլ:

ARAM webaram.com



ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳԻՍԲԷԳԵԱՆ ԵՒ ՍՊԱՐԱՊԵՏ ԿՈՒՌՕ (ձստած)
ՆԱԹԱՆ ՏԷՐ – ԱՍԱՏՐԵԱՆ ԵՒ ԼԵՒՈՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(ռուֆի վրայ) Թաւրիզ, 1921

Մէկ էլ — հրա՛չք։ Deux ex machina! *Վազնեբեան հերոսի պէս՝ մուտք գործեց Դրոն։ Ո՞րտեղից որտեղ եւ ի՞նչ օրհասական վայրկեանի։ Կարծես լոյս բերեց հետը։ Նոյն իսկ Արէչեանի դէմքը պայծառացաւ։ Դրոն բանակի կոմիսար էր եւ երեւանեան զօրամասերի հրամանատար։*

Բախտաւոր աստղի տակ ծնուած մարդիկ կան, որոնց համար

ARAM webaram.com

անկարելի բան գոյութիւն չունի: Հող առնեն՝ ոսկի կը դառնայ: Յաջողութիւնը անբաժան ընկերն է նրանց:

Դրոն յայտնեց, թէ եկել է Երեւանից զէնք ու ռազմամթերք հայթայթելու Արարատեան Դաշտի զօրամասերի համար: Կարսից առացել եւ ուղարկել է որոշ քանակութեամբ փամփուշտ եւ հրացաններ ու զնդացիրներ: Հիմա ուզում է Սարըղամիշի պահեստներից զէնք ու փամփուշտ ուղարկել Երեւան:

Բոլոր պահեստները, իրրեւ պարէտի, իմ տրամադրութեան տակ էին: Ես, ի հարկէ, առաջարկեցի ինչ որ հնարաւոր է փոխադրել: Արէշեանը անմիջապէս հաւանութիւն տուեց.

— Տարէք ինչ որ ուզում էք եւ ինչքան որ ուզում էք: Միայն թէ, սիրելի պարոն Դրօ, մնացէք մի քանի օր օգնելու մեզ:

Դրոն չտապում էր վերադառնալ Երեւանի նահանգը, ուր արիւնահեղ քաղաքացիական կռիւներ էին տեղի ունենում եւ ուր ինքը հրամանատար էր: Միայն ստիպողական հարկադրանքի տակ անձամբ եկել էր զէնք ու ռազմամթերք տանելու: Բայց զօր. Արէշեանի եւ մեր խնդրանքը այնքան բուռն էր, որ ստիպուած եղաւ տեղի տալ: Իր պինուորականի բացառիկ բնազդով նա արագ կերպով ըմբռնել էր կացութեան ահաւոր լրջութիւնը եւ անմիջական զարմանումի անհրաժեշտութիւնը:

Առաջին հերթին անհրաժեշտ էր վերջ տալ 101րդ հարիւրեակի ըմբոստութեան, որ բարոյալքում ու կազմալուծում էր բանակը: Մարդիկ պինուած՝ նստել էին զօրանոցում եւ մերժում էին ենթարկուել հրամանատարութեան՝ ցուցական կերպով:

Իրրեւ բանակի կոմիսար, Դրոն արագ կերպով պատրաստեց վստահելի պինուորական ոյժ եւ հրամայեց, որ ըմբոստները դուրս գան զօրանոցից: Հարիւրեակը դուրս եկաւ եւ չարուեց հրացանները ձեռներին: Դրոն մի կարճ ճառով դիմեց նրանց հայրենասիրութեան՝ յորդորելով, որ մեկնին ռազմաճակատ հայրենիքի պաշտպանութեան համար: Այդ ու ձախից լսուեցին արտոնչներ, մերժումի բացագանչութիւններ: Դրոն մի պահ լուռ դիտեց եւ, յանկարծ, վազրի ոստիւնով ատրճանակը ուղղեց հարիւրեակին ու գոչեց.

— Հանգա՛րտ:

Անակնկալի եկած պինուորները արագ կատարեցին հրամանը:

— Տասը քայլ առա՛ջ, պոռաց Դրոն:

Առանց վարանումի պինուորները առաջ անցան տասը քայլ:

— Հրացանները դնել գետին, հրամայեց Դրոն:

Մի պահ տատանումից յետոյ, ամէնքը հրացանները վար

ARAM webaram.com

դրին: Ֆիչ անդին կեցած էր Դրոյի պատրաստած վաչառը՝ գնդացիրներով զինուած: Զինուորները տեսնում էին այդ:

— Սուրերը գնել գետին, նորից հրամայեց Դրոն:

Զինուորները սուրերն էլ դրին վար:

— Տասը քայլ յե՛տ, գոչեց Դրոն:

Հարիւրեակը մէկ մարդու պէս քաշուեց յետ, նախկին տեղը:

Դրոյի կարգադրութեամբ եկան, արագ հաւաքեցին ու տարին հրացաններն ու սուրերը: Ապա Դրոն պահանջեց, որ անմիջապէս յանձնեն ըմբոստութեան պարագլուխներին: Առանց դժուարութեան յանձնեցին երեք հոգի:

Հարիւրեակը զղջում ու հնազանդութիւն յայտնեց: Լուրը կայծակի արագութեամբ հասաւ ռազմաճակատի զօրամասերին եւ ցընցող ազդեցութիւն գործեց նրանց վրայ:

Այնուհետեւ արագ կերպով կազմուեց պատերազմական տաեան, դատելու համար խռովարարների երեք պարագլուխներին:

Առանց ձգձգումի զօր. Արէշեանը հրաման արձակեց, — կազմըւում էր զինուորական դատարան, նախագահ՝ Ս. Վրացեան, անդամ՝ Դրօ, դատախազ՝ ապա... ախո՛ս, մոռացել եմ անունը, քարտուղար՝ տեզակալ Պետեա Բէգզադեան: Դատարանի յանձնւում էին վերեւ յիշուած երեք ըմբոստները:

Դատը տեղի ունեցաւ զօրանոցներից մէկում: Սուինաւոր պահակների հսկողութեան տակ ներկայացան երեք ամբաստանեալները: Երկուսը զօրչ և աննշան տեսքով մարդիկ էին, նախկին բանուորներ, որոնք անմիջապէս խոստովանուեցին իրենց յանցանքը եւ ամբողջ պատասխանատուութիւնը ձգեցին երրորդի վրայ. նա էր զըրպըռիչ ճառեր ասել եւ ըմբոստութեան դրդել զինուորներին. իրենք հետեւել էին նրան, անմեղ զոհեր էին... Գործից, սակայն, չէր հետեւում, որ նրանք անմեղ զոհեր եղած լինէին:

Երրորդը՝ նախկին անտառապահ, քառասունի մօտ, վիթխարի հասակով, երկար, սուր ոլորուած բեխերով, խոշոր եւ թափանցող աչքերով, պատկառելի արտաքինով, լեզուանի մի տղամարդ էր: Իսկական հերոս իր տեսքով:

Քննութիւնից — հրամանատարական տեղեկատուութիւնից եւ վկաների ցուցմունքներից — պարզուեց, որ երեքն էլ հաւատարատպէս յանցաւոր էին. ամէն առիթով դժգոհութիւն էին յայտնում չուրջը, չէին ենթարկւում կարգապահութեան, խուսափում էին պարտականութիւնից, ընկերակիցների մէջ զրգռիչ քարոզչութիւն էին անում, զրգռում էին թողնել դիրքերը եւ հետեւել ռազմաճակատից հեռացած

ARAM webaram.com

ռուս զօրամասերին: Ակնյայտնի կերպով ձգտում էին կազմալուծել բանակը, որպէսզի իրենք չուտով կարողանան տուն վերադառնալ...

Պատկերը ցնցող էր: Մի կողմից հրամանատարութեան անճարակութիւնը, միւս կողմից՝ ծայր աստիճանի բարոյալքում: Այս երեքը բացառութիւն չէին. բոլշեւիզմը պղծել էր բանակի հոգին. հայրենիքի պաշտպանը արագ կերպով ցնդում էր մարդկանց մտքերից՝ տեղ տալով անասունի նախնական բնազդին:

Դատախազը երեքի համար էլ պահանջեց մահապատիժ: Այս օրուայ հոգեբանութեամբ ոմանք թերեւս մեղադրեն դատախազին. ինչու ա՛յս երեքը պէտք է մեռցուէին, երբ իրենց նման ուրիշներ եւ աւելի մեծ յանցաւորներ, աւելի բարձր դիրքերում, պտըտում էին անպատիժ — «Զաչկա Զայու»ի եւ թիկունքային զանազան հիմնարկութիւնների հերոսներ: Ի՞նչպէս հաշտուել նման անարդարութեան հետ: Հապա «մարդկային խիղճը» կամ «սոցիալիստական գիտակցութի՛ւնը»: Հապա՝ «մի՛ սպաններ»ը: Հապա՝ մեր դաւանանքը մահապատժի դէմ...

Դիւրին է չարաշահել պատմուճանները՝ նստած կանաչ սեղանի չուրջ, ծէր Մարզարեանի չքեղ դահլիճում, Գոլովինսկիի վրայ: Դժուար չէ «մաքուր» պահել խիղճը եւ աւրբի կերպարանքով ներկայանալ ամբոխին ուրիշների վրայ, ձգելով «աղտոտ» գործերը: Սեփական պատմուճանի եւ սեփական խղճի մասին հոգացող ապնիւ մարդը պարտաւոր է նոյն ձեւով մտածել եւ ուրիշի պատմուճանի ու խղճի մաքրութեան մասին...

Բայց նման նուրբ խորհրդածութիւններով զբաղուելու ժամանակ չկար. մեր առջեւը կանգնած էին երեք ապացուցուած ծանր յանցաւորներ, որոնց համար դատախազը մահուան պատիժ էր պահանջում: Եւ ամէնքի հայեացքը ուղղուած էր մեր կողմը. անպարտ արձակել պիտի նշանակէր քաջալերել դասալքութիւնը հիմնապէս քայքայելով ռազմաճակատը: Դատարանը միաձայնութեամբ որոշեց դնդակահարել երեքին էլ, անմիջապէս, առանց վերաքննութեան իրաւունք տալու...

Երկուսը լսեցին դատավճիռը լուռ, համարեա անտարբեր, բայց անտառապահի վրայ չդմեցնող ապաւորութիւն թողեց: Նա մի պահ կարծես չըմբռնեց կարգացուածի իմաստը, ապա՝ ցնցուեց, սուր ճիչ արձակեց, սկսեց պոռալ... Անհասկանալի խօսքեր էր արտասանում: Լալիս: Եղկելի էր երեւոյթը. այդքան մեծ մարմնի մէջ այդպիսի՛ փոքր հոգի...

Մի քանի ժամ ժամանակ տրուեց ձեւականութիւնները լրաց-

ARAM webaram.com

նելու եւ ամբաստանուածներուն պատրաստութեան համար. կարող էին նամակ գրել իրենց ազգականներուն: Երեկոյեան դէմ գործադրուեց մահավճիռը:

Զօրանոցին քիչ անդին, վարը, փոքրիկ հարթավայրի վրայ կանգնած էր հրացանաւոր մի զինուոր: Փոքրիկ սեղանի չուրջ կեցած էին դատարանի անդամները՝ նախագահ, Դրօ, դատախազ: Պետեա Բէզդադեանը — տասը 20 տարեկան — ազատէց, որ իրեն ազատենք մահապատժի գործադրութեան ներկայ գտնուելու պարտականութիւնից: Անդին, բարձունքի վրայ, խոնուած էին դիտողները, որոնց մէջ, անշուշտ, «մաքուր խղճով» մարդիկ էլ...

Արեւը մօտենում էր մայրամուտին: Ցո՛ւրտ: Սարըղամիշը ծածկուած էր ձեան հաստ շերտով, որ սոթաոթում էր կօչիկների տակ:

Սուինաւոր զինուորներով չրջապատուած երեք դատապարտեալները յամր քայլերով մօտեցան ու կանգ առին հրապարակի մէջտեղ՝ գլուխները կախ:

Սարըղամիշը կարծես դադարել էր շնչելուց. քա՛ր լռութիւն էր տիրում:

Մի ակնթարթ, եւ նախագահը կարդում է դատավճիռը... Գերմարդկային մի աղաղակ, ապա, կարծես, վիրաւոր գազանի ոռնոց՝ անտառապահը տապալւում է գետին ու գլուխը կորուած հաւի պէս թպրտում, անիմաստ բացագանչութիւններով ճանկռտում է սառած հողը... Պահակները հանում են ոտքի: Միւս երկուսը կանգնած են անտարբեր, կարծես իրենց չվերաբերէր մահավճիռը...

Ու մի վայրկեանի մէջ կապում են աչքերն ու ձեռքերը, կանգնեցնում չարքով... Մէկ, երկու, երեք — որոտում են հրացանները ... Հեռախօսը չտապում է հաղորդել առաջաւոր գիրքերը:

— Երեք հայրենիքի զաւաճան խռովարարներ մահուան են դատապարտուած զինուորական ատեանի կողմից: Մահավճիռը գործադրուած է...

Նոյն երեկոյեան, ուղիղ հեռագրաթելը հաղորդում է Թիֆլիս.

— Զինուորական ատեանը Սարըղամիշում գնդակահարութեան դատապարտեց երեք չարամիտ դասալիքներ: Մահապատիժը գործադրուած է անմիջապէս:

Վաղը առաւօտեան, Տէր Մարգարեանի գահլիճում, Գոլովինըսկիի վրայ, կանաչ սեղանի չուրջ, անուշ թէյ խմելիս, Հայոց Ազ-

ARAM webaram.com

գային Ֆորհըդի անդամները, դլուխները օրօրելով, պիտի կարդան հեռագիրը...

Եւ օրեր վերջը, Շորապեալի դիւղերից մէկում, լացով ու վայնասունով պիտի կարդացուի այն նամակը, որ «հայրենիքի դաւաճան, դասալիք» անտառապահը, մահից առաջ, գրել էր իր կնոջ ու զաւակներին:

Ա՛հ, այդ նամակը... Մինչեւ այսօր էլ, երբ գիշերը քունը փախչում է աչքերից, անտառապահի վիթխարի հասակը ցցւում է առջեւս եւ մեծ, թախանցող աչքերը ծակում են սիրտս: Եւ տեսողութեանս պատկերանում է արցունքով թրջուած թղթի կտորը, որի վրայ մահապարտը իր կոպիտ ձեռքով չարել էր սրտի այնպիսի քնքոյշ զեղումներ, այնպիսի սրտառուչ խօսքեր...

Նամակը ուղղուած էր կնոջ եւ երեք մատաղ զաւակներին, որոնք անհամբեր սպասում էին հօր վերադարձին: Սկսւում էր պատչանքով, որ ներեն իրեն, ինքը Աստուծոյ առաջ իրեն զգում էր մեղաւոր: Իր կամքից անկախ էր զործել յանցանքը: Վախի ազդեցութեան տակ: Չէր ուզեցել մեռնել Թշնամու գնդակից, բայց ահա քիչ վերջը պիտի մեռնէր, իբրեւ դաւաճան, հայի գնդակից...

Ներողութիւն, հազար ներողութիւն: Աստուած այսպէս է կամեցել եւ Աստուած կը ներէ իրեն: Ինքը այդ համոզումով էլ կը մեռնի: Ե՛ւ հետը կը տանէ սրտի անհուն սէրը կնոջ եւ զաւակների հանդէպ... Ապա՝ թախանձագին յորդոր կնոջ, որ պատիւով պահէ զաւակներին. Թող նրանք յարգեն յիշատակը ապաբախտ հօր, որ այնքան սիրում է նրանց: Եւ վազաքչական անպաճոյճ խօսքեր, կարօտ ու զուրգուրանք զաւակներին՝ ամէն մէկին առանձին-առանձին... Եւ անէծքի կամ Թշնամանքի ո՛չ մէկ խօսք իշխանութեան կամ զատաւորների հասցէին: Միայն արցունք եւ անհուն սէր հարազատներին...

Թղթատարին յանձնելուց առաջ կարդացի մէկ, մի քանի անգամ: Եւ ինչ որ մի ձեռք ամուր սեղմում էր սիրտս: Սիրտս ճմլւում է ե՛ւ այսօր, երբ անքուն գիշերին պատկերանում է աչքերիս անտառապահի մահուան սարսափից սառած հայեացքը... Եւ երեւակայում եմ անտառապահի կնոջ եւ զաւակների վիշտը հօր նամակը կարդալիս իրենց որբացած խրճիթում...

Դատաւարութիւնից յետոյ, զօր. Արէշեանի Թախանձանքի վրայ, Դրոն մեկնեց ճակատ վարելու համար կռիւները Թշնամու դէմ: Ճակատը Ֆոնդէրէի ձորում էր, Սարըղամիշի մօտերը: Թնդանօթների որոտը հասնում էր մեր ականջներին...

ARAM webaram.com

Քիչ վերջը Թիֆլիս մեկնեց Վահան Փափազեանը պինուորական կնոջը հետ։ Գաղթական չէր մնացել այլեւս։ Սարըղամիշից հեռացան եւ բժշկա–առողջապահական ու խնամատարական խմբերը։ Սուր անհամաձայնութեան հետեւանքով զօր. Արէշեանի հետ, ռազմաճակատից հեռացան նաեւ Մուրադն ու Սեպուհը իրենց մարտիկներով։ Մենք մնացինք մենակ, համարեա կորուած դրսի աշխարհից. Դրան՝ Յոնդէրէի առաջաւոր դիրքերում, որտեղից թնդանօթների որոտը աւելի եւ աւելի սպառնական՝ մօտենում էր մեզ. Վահան Նաւասարդեանը՝ դայեակի դերում զօր. Արէշեանի մօտ եւ ես՝ «պինուորական կոմենդանտ» ամայացած Սարըղամիշի...

...Բայց մենք դատապարտուած էինք։ Բախտը լքել էր մեզ։ Մեր մխակ կապը դրսի աշխարհի հետ ուղիղ հեռագրաթելն էր։ Լուրեր էինք ստանում Ալեքսանդրապոլից եւ Թիֆլիսից, իսկ Հայոց Ազգային Յորհուրդը ժողովներ էր գումարում Գոլովինսկի փողոցի վրայ, Տէր–Մարգարեանի դահլիճում եւ Յորհրդի պինուորական դրծաւարի օգնականը քաջալերական խօսքեր էր ուղղում... մեզ։

Թիֆլիսի հիմնարկութիւններն ու արճարանները վխտում էին պինուորական հագուստ հագած դասալիքներով, իսկ մենք օրեր էինք հաչւում, թէ երբ պիտի հասնի մեր անխօս չարչարանքի վախճանը։ Եւ վախճանը չուշացաւ։

... Որոշուեց. Մարտ 28ին զօրքը կը հեռանայ քաղաքից. զօր. Արէշեանի հետ կը մեկնի եւ Վ. Նաւասարդեանը։ Վիրաւորները, հիւանդանոցների ու պահեստների ծառայողները, քաղաքացիների մնացորդները ինձ հետ կը հեռանան երկաթուղիով։ Քաղաքի պահեստներն ու ռազմական արժէք ներկայացնող չէնքերը կը պայթեցուին։ Պայթեցնող ջոկատը, գործը լրացնելուց յետոյ, կը միանայ մեկնողներին։

Արդէն մութը ընկել էր։ Վերջին անգամ աչք նետելուց եւ քաղաքի զանազան մասերը նայելուց յետոյ՝ հասայ կայարան, ուր, խաւարում, արդէն պատրաստ սպասում էր գնացքը՝ բեռնաւորուած տուներ զարձած մարդկանցով եւ ապրանքով։ Քաղաքում մարդ չէր մնացել։

Գնացքը զանգաղ դուրս եկաւ կայարանից եւ կանգ առաւ քաղաքից դուրս, բարձունքի վրայ։ Ամէնքը ականջ կտրած՝ սպասում էին։ Մէկ էլ՝ թրա՛խկ, բո՛ւմ, բո՛ւմ — քաղաքի բոլոր կողմերից որոտացին պայթող ռումբերը։ Պայթիւնին յաջորդեց հրդեհը։ Հեռվզհեռ քաղաքը լուսաւորուեց բոցավառ ջահերով։ Լոյսերի խաղն ու ռումբերի որոտը, հեռուից, ոճնական հրավառութեան տպաւո-

ARAM webaram.com

բութիւնն էին թողնում: Գնացքի ճամբորդները դուրս թափուած՝ դիտում էին հիացումով...

Կէս գիշերը մօտ էր, երբ ռումբերի որոտը դադարեց: Գնացքը պարտաւոր էր շարժուելու: Ես տեղ գտայ մինչեւ բերան գինուորներով լեցուած բեռնակիր վագոնում: Հազիւ տեղաւորուել էի ծալապատիկ, երբ մեծ դժուարութեամբ ներս մտցրին ծանր վիրաւոր մի եբիտասարդ գինուոր: Նստել չէր կարողանում: Տեղ բացինք ու պառկեցրինք մօտս: Գլուխը դրեց ծունկիս վրայ: Դժուարութեամբ էր շնչում: Ջառանգում տաքութեան մէջ: Շարունակ ցնցում եւ անկապ խօսքեր էր արտասանում: Ջուր էր խնդրում:

— Ջո՛ւր... ջո՛ւր...: Բայց ջուր չկար:

Շարունակ կրկնում էր:

— Մամա՛... Մամա ջա՛ն... Ջո՛ւր...

Ամուր կպաւ ձախ թեւիս եւ բաց չէր թողնում: Գլուխը անհանդիստ չարժւում էր ծունկիս վրայ: Ամբողջ մարմինը այրւում էր կարծես:

— Ջո՛ւր, կանչում էր մոլեգնօրէն:

Ո՞վ էր այս տղան: Ոչ ոք ծանօթ չէր նրան: Վէրքին պահուն, պատահաբար, հանել էին հիւանդանոցից ու բերել: Կարող էր մնալ եւ թուրքերի ձեռքը ընկնել:

Երեւոյթից էլ անհնար էր դուշակել իր ինքնութիւնը: Սովրական զինուորական հագուստ ու զինուորական վերարկու էին վրան: Մօտը՝ ո՛չ մէկ կտոր թուղթ չգտնուեց: Մեր հարցումներին չէր պատասխանում: Հասկանո՞ւմ էր ու չէր պատասխանում, թէ արդէն կորցրել էր գիտակցութիւնը:

— Ջո՛ւր, մամա ջան, ջո՛ւր, ճչում էր յուսահատ...

Գնացքը սողում էր դանդաղ՝ բերթ ցնցումներով: Վագոնում տիրում էր խոր լռութիւն: Ոմանք նիրհում էին նստած: Ոմանք ծրխում էին անշշուկ: Ամէն ոք ամփոփուած էր իր մութ խոհերի մէջ:

— Մամա ջա՛ն... Ջա՛ն...

Ու դառն հեծկլտանք... Խռկոց, կարծես խեղդում էին: Ջգային դալարումներ...

— Մամա՛ ջան... Մամա ջան... Ջո՛ւր...

Քաղաքացի պիտի լինէր այս տղան: Գիւղացին «մամա ջան» չէր ասէ... Այլեւս չէր ճչում: Գլուխը ծանր ընկած էր ծունկիս...

... Նիրհել էի, երեւի: Անթափանց խաւարը մէկէն ցնցեց ինձ: Տղան խաղաղ պառկած էր՝ գլուխը ծանր դրած ծունկիս: Ձեռքը ամուր փակած էր թեւիս: Շոյեցի ճակատը — պա՛ղ...

ARAM webaram.com

Ոչ ոք չէր զգացել, ի՞նչպէս էր փչել վերջին շունչը: Մեծ զբաղուածութեամբ տեղ բացինք. տեղաւորեցինք դիակը դրան մօտ: Անկիւնից մէկը ձայնեց.

— Հոգւոյն հանգուցեալոյն արա հանդիստ եւ ողորմութիւն... Դասաւորեա ընդ արդարան...

Լուսաբացը հեռու չէր: Գնացքը կանգ առաւ բաց դաշտում՝ ծանր հեւոցով: Մօտակայ բլրակի գլխին մի փոս փորեցինք բահով: Դիակը դրինք մէջը եւ ծածկեցինք հողով եւ չոր ճիւնով: Գլխի վերեւը՝ ծառի ճիւղերից մի խաչ անկեցինք: Եւ նոյն դիմաւորը, որ հողոց կարդաց, խօսեց դամբանական.

— Ո՛չ փող զարկինք, ոչ արճադանգ լեռնաստյղ... Ընկեր Ջան, անծանօթ երիտասարդ ընկեր, ննջիր հանդիստ քո նոր օթեւանում: Եւ ներիր մեզ, որ մենք դեռ ապրում ենք...

Գնացքը շարժուեց դանդաղ: Մօտենում էինք կարսին: Արեւը դեռ չէր ծագել, բայց շրջակայ բարձրութիւնները դորշ-մանիշակագոյն՝ պատրաստւում էին ողջունելու լուսաւուի երեւումը:

Վագոնում ոչ ոք չէր խօսում: Ամէն ոք անձնատուր էր իր մտքերին: Եւ իմ ականջին չարունակ հնչում էր.

— Մամա՛... Մամա Ջան, ջո՛ւր...

1952 Օգոստոս
Սան Ֆրանսիսկո

ARAM webaram.com

ՓՈԹՈՐԻԿ ՍԵՒԱՆԻ ՎՐԱՅ

I.

1920ի գարունը բացառիկ ժամանակ էր Հայաստանի համար: Անկախութեան գաղափարը արդէն տեղ էր գտել ժողովրդի մէջ, նոյն իսկ թերահաւատների մտքում: Հայաստանի Հանրապետութիւնը արագ կազմակերպւում էր, իբրեւ պետութիւն՝ ակնյայտնի նուաճումներ գործելով թէ ներսը, թէ արտաքին աշխարհում: Այնքա՛ն յուսախաբութիւններից եւ տանջանքներից յետոյ, հայ ժողովուրդը հոգեկան կազդուրւում էր եւ լաւատեսութեամբ նայում էր ապագային: Ցոյսի օրեր էին երկրի ներսը. յոյսի օրեր էին դուրսը՝ տարագիր հայութեան մէջ:

Ժողովուրդը, քաղաքներում եւ գիւղերում, ջերմ հաւատով եւ հային յատուկ չինարարական ոգիով՝ ձեռնարկել էր երկրի վերաշինութեան ու վերակառուցման: Խանդ ու խանդավառութիւն էր տիրում ամէն կողմ:

Ով տեսել է այդ տարուայ Մայիս 28ի հանդէսը Երեւանում, Հայաստանի անկախութեան տարեդարձի առթիւ, ժողովրդական մեծաշուք թափորը, հայրապետական մաղթանքը, մայրաքաղաքի կենտրոնական հրապարակի վրայ Խորհրդարանի նախագահի եւ կաթողիկոսի պլխաւորութեամբ, ով դիտել է զօրքի, աշխատաւորութեան, աշակերտների եւ հազարաւոր պատանի արիների խանդավառ չքերթը Սրովեան պողոտայով, ով ներկայ է եղել դեղարուեստական հանդէսին եւ յաջորդող պարահանդէսին ռուսների թերի ճգած դիմնագիայի մեծ չինքում, որ լրացած ու զարդարուած էր ակագ. Թամանեանի դեկավարութեամբ հայ ճարտարապետների ձեռքով, մի խօսքով՝ ով

ARAM webaram.com

տեսել է Երեւանը 1920ի Մայիսին, չի կարող չհամաձայնուել ինձ հետ, որ մեռած կարծուած Հայաստանը յարութիւն էր առել, հրաշք թռչունի պէս, դարերի մոխիրների միջից եւ արագ ու հզօր թափով կազմակերպւում ու վերաչինւում էր:

Կեանքը եռում էր եւ մեր՝ դիւզատնտեսութեան ու պետական գոյքերի նախարարութեան մէջ: Պաշտօնէութիւնը՝ բարձր մասնագէտներից սկսած մինչեւ մեքենագիր օրիորդներն ու ցարական իշխանութիւնից մեզ ժառանգութիւն մնացած դռնապան Իւանը, առանց ժամ ու ժամանակ հաշուելու, անյոգնում, համերաշխ ու ոգեւորութեամբ փարած էր գործի: Իսկ գործը անհատնում էր, բազմազան ու հրատապ: Հերթական խնդիրներ էին մեր առջեւ՝ հողաբաժանումը դիւղացիներին նոր՝ աշխատաւորական սկզբունքներով, գաղթականների տեղաւորումը լքեալ դիւղերում, սերմնացուի եւ լծկանների հայթայթումն ու բաշխումը, ինչպէս նաեւ երկրագործական մեքենաների եւ գործիքների մատակարարումը արտասահմանից, այգեգործութեան, բամբակի, ծխախոտի մշակութեան, կաթնատնտեսութեան ու մեղուաբուծութեան զարգացումը, ջրային ուժի եւ հանքերի հետազօտութիւնը եւ այլն եւ այլն: Այդ օրերին էր, որ մեր նախարարութիւնը գրաւեց Շուստովի հռչակաւոր կոնեակի գործարանը եւ վերածեց պետական «Արարատ» գործարանի: Շուստովները մասնակցել էին մայիսեան բոլշեւիկեան հակապետական ապստամբութեան եւ, իբրեւ հայրենիքի դաւաճաններ, ենթարկուեցին բոլոր գոյքերի գրաւման եւ արտաքսման երկրից: Գործարանը մինչեւ այժմ էլ գոյութիւն ունի մեր գրած «Արարատ» անունով: Նոյն օրերին մեր նախարարութիւնը ձեռնարկեց Սեւան–Զանգու աւազանի հետազօտութեան, որ յետոյ, խորհրդային իշխանութեան չըջանում, չարունակուեց եւ վերածուեց «Սեւանի–պրոբլեմ»ի:

Բայց մեր նախարարութեան ամենահրատապ, այսպէս ասած, հարուածային աշխատանքը այդ օրերին սերմնացանն էր: Ռուսական սիբապետութեան տակ երկրի ալիւրի մեծ մասը Հայաստան ներմուծւում էր Հիւսիսային Կովկասից, այդ պատճառով, երբ Ռուսաստանը հեռացաւ 1918ին, մեր երկիրը մատնուեց անասելի սովի: Այժմ կառավարութեան վճռական որոշումն էր Հայաստանը հարիւր տոկոսով ապահովել հացով: Այդ նպատակով դիւղատնտեսութեան նախարարութեան տրամադրութեան տակ դրուեցին մեծագումար վարկեր, եւ նախարարութիւնը յատկի դիւղատնտես–մասնագէտ Առ. Կամսարականի ղեկավարութեամբ մշակեց ընդարձակ ծրագիր ու եռանդով անցաւ գործի: Ծրագրուած էր, ըստ կարելւոյն, բոլոր մշա-

ARAM webaram.com

կելի հողերը յատկացնել հացահատիկների։ Ամերիկայից եւ Հիւսիսային Կովկասից բերուած ցորենի, գարիի, ընդեղէնների մէկ կարեւոր մասը բաժանուեց պիւղացիներին, իբրեւ սերմնացու։ Զբաւոր հողագործներին տրամադրուեց նաեւ դուքան ու լծկան։ Մասնագէտ պիւղատնտեսները ուղարկուեցին չրջաններըը, ուժեղացնելու համար հսկողութիւնը սերմնացանի վրայ։

Պէտք է ասել, որ բացառիկ միջոցների կարիք էլ չկար։ Ժողովուրդը խրատուած նախորդ տարուայ սովից՝ մխահամուռ ճիգով լծուեց աշխատանքի։ Մարդիկ կարում էին իրենց ընտանիքի բերանի հացը եւ խնայած հացահատիկը հողն էին ձգում։ Մայիսին արդէն դաշտային հողերի վարուցանքը վերջացել էր. մնում էին լեռնային չրջանները, որտեղից անհանդստացնող լուրեր էին հասնում. սերմնացուն, իբր թէ, քիչ էր, լծկան չկար եւ այլն։ Ահազանգ հնչեցնող հեռագիրներ էին ստացւում, մասնաւորապէս, նոր Բայազէտի պիւղերից։ Նախարարութիւնը յատուկ ուշադրութիւն էր դարձրել այդ կողմերի վրայ, ինչո՞վ բացատրել այդ պահանջները։ Անհրաժեշտ էր անձամբ այցելել ու քննել այդ վայրերի դործերը։ Հայ պիւղացու հողեբանութիւնն ինձ ծանօթ էր. տասը պահանջիր, որ մէկ տանաս։ Բայց այս անգամ դրա պէտքը չկինք տեսնում։ Ուղարկել էինք ինչ որ կարեւոր էր եւ ինչ որ կարելի էր։

Մի խօսքով՝ ես որոշեցի այցելել Նոր Բայազէտի դաւառը եւ սեփական աչքերով տեսնել ինչ որ կատարւում էր այնտեղ։

II.

Մայիսեան վաղ առաւօտ էր, երբ մեր ինքնաչարժը սուրալով Աբովեանով՝ մտցնեց Քանաքեռի բարձունքը, որտեղ մի պահ կանգ առինք։ Հետս էին Յորհրդարանի անդամ բժ. Արշակ Ղազարեանը (*) եւ նախարարութեան պիւղատնտեսներից մէկը։

Կարելի չէր անտարբեր առաջանալ, առանց Քանաքեռի բարձունքից մի վայրկեան հիանալու բնութեան գեղեցկութեամբ։ Կանգնած մի քարի վրայ՝ ես սրտատրոփ դիտում էի առջեւս բացուած

(*) Սա այն Արշակ Ղազարեանն է, «Նոր Հոսանք» ամսագրի եւ «Հորիզոն» օրաթերթի խմբագիրը Նիկոլ Աղբալեանի հետ, որ ձշանաւոր դարձաւ, իբրեւ «Զարբախի հերոս» եւ հետագային, Պարսկաստանում, դաւանափոխ եղաւ, վերադարձաւ Ցեղկոմի գիրկը, ախտորուեց եւ մեռաւ ախտորում յետին թշուառութեան մէջ։

ARAM webaram.com

համայիչ տեսարանը: Վարը, նօսր մշուշի քողով ծածկուած, դեռ հանդիստ նիրհում էր Արարատեան դաշտը: Ալ ու ձախ՝ այդիներով շրջապատուած հազիւ նշմարուող գիւղերի վրայ, երեւում էին ծուխի երերուն սիւներ. մամիկներն արդէն վառել էին թոնիրները: Խաղաղութիւն էր բուրում ընդարձակ դաշտից, որ քիչ վերջը պիտի զարթնէր ու լեցուէր կենդանի ժխորով: Այնտեղ արդէն դաշտային աշխատանքները վերջացել էին, եւ չինականները զբաղուած էին այդիներով: Ցորեն, բամբակ, խաղող, դեղձ ու ծիրան եւ այլազան պտուղներ՝ արարատեան գիւղացու հարստութիւնն էին կազմում:

Անդին, դաշտի հարաւային եղերքին, վեհափառ տեսքով կանգնած էր Հայոց Աչխարհի արեւուն պահակը՝ Մեծ Մասիսը իր փոքր ընկերոջ հետ: Բրանքսի կենդանաբանական այգում ես տեսել էի մի վիթխարի փիղ եւ կողքին կանգնած իր փոքրիկ ձագուկը, այժմ այդ դոյդ փիղերն էին յիշեցնում ինձ մեծ ու փոքր Մասիսները:

Լերան ստորոտը դեռ կիսախաւարն էր տիրում՝ գորշ, անթափանց զանգուած: Լանջերը աստիճանաբար պայծառանում էին՝ եռանգների յաջորդական խաղով — մուգ — լաջուարդ չագանակագոյն, կապտաւուն, նարնջագոյն–դեղին եւ դազաթը, արդէն արեւի ճառագայթներով ողողուած, պէսպէս գոլքերով: Այդտեղից ամէն առաւօտ Հայաստան աչխարհի վրայ իջնում էր կենարար լոյսը, ու քանի կ'ապրի լուսապայծառ Մասիսը, յաւիտեան կը տեւի եւ՛ Հայոց Աչխարհը իր զաւակներով:

Մասիսից դէպի աջ, գորշ–մոխրագոյն երիզով, ձգւում էր Բարթողեան լեռնաչղթան, որից այն կողմ տարածուած էին Վասպուրական, Տարօն–Տուրուբերան, Բարձր Հայք, Նուիրական սրբավայրերը բոլոր հայերի համար: Եւ աւելի առաջ, դէպի աջ, լեռնաչղթայից իր գլուխն էր ցցում ազատատ Կողբը. այնտեղ, տաք կըռւում, նահատակուեց Սասունցի Մհերնուկը, որ իր քաջ ընկերներով դուրս էր եկել պաշտպանելու հայրենիքը զաւադիր թշնամիների դէմ:

Հայեացքդ զարձրու միչտ դէպի աջ. դիմացդ՝ Արագածը ջրաբաչխ իր չորս զագաթներով, որոնց վերեւ կախուած էր Հայոց Աչխարհի յուսատու կանթեղը մշտավառ: Մասիսն ինձ յիշեցնում է հայր Արամազդը վեհափառ, որի հովանու ներքեւ զարեր ու զարեր անասան ապրել է հայ ժողովուրդը: Արագածը դիցուհի Անահիտն է՝ մայր զգաստութեան եւ արդասաբերութեան, հայ երկրի ու հայ ազգի սոնատուն:

Լուռ դիտում էի Քանաքեռի բարձունքից, որտեղից, ո՞վ դե-

ARAM webaram.com

ոէ, թերեւս նոյն քարի վրայ, Աբովեանն էլ է խոկացել եւ տաք արցունք թափել վիրաւոր Հայաստանի համար: Դարերն էին սահում իմ աչքերի առջեւից, վերյիշումները խռովում հոգիս...

— Բնական է, չարժուենք, քանիերորդ անգամն է ասում էր Արշակը: Ա՛հ, այս Արշակը... Ներան ի՛նչ, թէ իր առջեւը բուրվառի պէս ծխում էր Արարատեան դաշտը եւ այնպէ՛ս կախարդական էր Մասիսի լուսաշող գագաթը...

Ինքնաշարժը սուրալով՝ կտրում է Քանաքեռի դեռ քնած փողոցները՝ դէպի Զօր Ազբիւր, դէպի Ախտա, մի չա դէպի վեր՝ Սեւանի ուղղութեամբ: Շուրջը ցանուած արտեր կանաչ, բլուրներ ու լեռներ եւ յետեւը՝ մեզանից անբաժան վեհաշուք տեսքը Մասիսի:

Ելենովկայում առաւ պիւղացիութիւնը մեզ ընդունում է աղ ու հացով: Ապա՝ նոր նաւաշինարանը Սեւանի եղերքին: Բնաարաբիայից եկած երիտասարդ ծովային սպան — Կոստան Զարեանի նաւապետ Հէրեանի նախաձիւղը — մեզ հանդիսաւոր ընդունելութիւն է ցոյց տալիս եւ ներկայացնում է իր գործակիցներին: Դիտում ենք նաւաշինարանը եւ նորաշէն «Աչոտ Երկաթ» «ռազմանաւի» թերատարտ կմախքը: Երիտասարդ սպան հպարտութեամբ բացատրում է. Հայաստանի նաւատորմիղի առաջին միաւորն է, որի կառուցման բախտը իրեն է վիճակուած: Ռազմանաւը ունենալու է երկու թեթեւ թնդանօթներ եւ չիսուն նաւասոխներ: Այդքանը բաւական էր Սեւանի եղերքներին խաղաղութիւն պահելու համար:


Առաջին ծիծեռնակներից էր այս երիտասարդ սպան, որ հօր հետ միասին Բնաարաբիայից եկել էր նորապատ Հայաստանին ծառայելու: Հայրը՝ մաթեմատիկի ուսուցչապետ՝ մնացել էր Երեւանում պետական փողերանոցի վարիչի պաշտօնով, իսկ իրեն վստահուած էր նաւատնտեսութեան կազմակերպումը Սեւանի վրայ: Իր չինած առաջին նաւը՝ «Աչոտ Երկաթ», շուտով պիտի սկսէր բանել: Վրայ հասաւ, սակայն, Հայաստանի խորհրդայնացումը: Քոլչեւիկները վերջ տուին ապագեղատ նաւատեսի կեանքին, որ իր երիտասարդական խանդավառութիւնը նուէր էր բերել ի սպաս հայրենիքին: Հայաստանի Հանրապետութեան պատմութեան մէջ յաւէտ պիտի յիշուի ծովային սպայ Գարագաշեանի անունը:

Թեթեւ ճաշից յետոյ Ելենովկայում, չարժուեցինք առաջ դէպի Նոր Բայազէտ, լճի արեւմտեան ափերով: Երկինքը ամպոտ էր, եւ ջրերը գորշ-պղտոր գոյն էին առացել: Ճանուղին անցնում էր անհրապոյր, ժայռոտ եղերքով: Ով տեսել էր Վանի լիճը իր եզակի

ARAM webaram.com

գեղեցկութեամբ, Սեւանի այս ափերից հիացման արժանի ոչի՛նչ չէր կարող պակսել...

Ճանապարհը անցնում էր քարաչատ մացառուտ տեղերով: Հեռուից, մեր առջեւը, նշմարուեցին ինչ որ տարօրինակ բաներ: Կարծես պիւղի տներ էին, բայց կտուրները ծածկուած էին կանաչով: Ի՞նչ գործ ունէին այստեղ կանաչ կտուրները, որոնք յատուկ էին միայն մալական կամ գերմանական գիւղերին:



ԾՈՎԱՑԻՆ ՍՊԱՑ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Հետզհետէ անորոշ ուրուագծերը դարձան աւելի պարզ: Մեր առջեւը բացուեց հայկական տիպարական մի գիւղ՝ աթարի բուրգերով — ամեհաւայ գլխաւոր վտեղիքը այս ցուրտ, անտառազուրկ գաւա-

ARAM webaram.com

ռում: Եւ որքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ տեսանք, որ պիւղի դրեթէ բոլոր տների տանիքները վերածուած էին արտ. չբաւականանալով իրենց հողերով՝ պիւղացիք կառուրների վրայ էլ դարի էին ցանել, որպէս զի այլեւս երբեք հացի պակասութիւն չզգային: Մեր նախարարութեան ծրագիրը իրագործուած էր աւելի, քան հարիւր տոկոսով:

Երեւոյթը նոյնն էր դրեթէ բոլոր պիւղերում: Անմշակ հող չէր թողնուած ոչ մէկ տեղ: Կառավարութեան բաշխած սերմնացուն ցանուած էր ամբողջապէս: Լծկանի սուր պակասութիւն էլ չէր երեւում: Պիւղացիք ամէն տեղ զոհունակութեամբ ժպտում եւ չոյում էին մօրուքները. յաջորդ տարի իրենց երեխաները հացի պակաս պիտի չզգային...

Եւ վերջը, երբ Նոր Բայազէտի քաղաքապետ մեր ընկեր Վահան Աֆրիկեանին հարցրի.

— Ա՛յ մարդ, էդ ի՞նչ պահանջներ էիք անում մեզանից — նա ծիծաղով պատասխանեց.

— Շատ ուզիր, որ քիչը ստանաս...

Այդպէս էր այդ ժամանակուայ հոգեբանութիւնը. ամէնքը մեծ-մեծ պահանջներ էին դնում, եւ կառավարութիւնը պարտաւոր էր ամէնքին բաւարարել:

Ցիշում եմ՝ նոյն Նոր Բայազէտի գաւառից մի օր մեր նախարարութեան մէջ ստացուեց չրջանի կոմիսարից մի հեռագիր. մօտակայ թուրք պիւղացիք յարձակուել էին այն ինչ պիւղի վրայ, թալանել-տարել էին նախիրը, պիւղում լծկան ու կթան չէր մնացել. չուտափոյթ օգնութիւն էր հարկաւոր...

Անմիջապէս օգնութեան հասանք եւ քննութիւն բացինք: Պարզուեց, որ... ա՛յդ պիւղի բնակիչները իրենք գչել-տարել էին հարեւան թուրք պիւղի նախիրը...


Աֆրիկեանի փիլիսոփայութիւնը — շատ ուզիր, որ քիչը ստանաս — տիրական էր ամէն տեղ: Այդ փիլիսոփայութիւնն էլ, ուրիշ շատ յոռի բաների հետ, ժառանգութիւն էր մնացել մեզ ցարական տիրապետութիւնից:

Վահան Աֆրիկեանը, իբրեւ Նոր Բայազէտի քաղաքապետ, շատ լաւ իւրացրել էր այդ փիլիսոփայութիւնը: Եւ զարմանալի չէր, որ նրա քաղաքը, հակառակ ժողովրդի յետամնացութեան, պակաս թերութիւններ ունեցող եւ յաջող կառավարուող վայր էր: Իր դիմումները Երեւան, սովորաբար, չէին մերժւում: Ամէն այցելելիս մայրաքաղաք մի քանի տանում էր հետը Նոր Բայազէտի համար:

ARAM webaram.com

Զուարթ բնաւորութեամբ, ապրել եւ ուրախանալ սիրող, բայց եւ պարտաճանաչ ու բարեխիղճ գործիչ էր Վահանը: Նա սիրում էր իր քաղաքն ու իր պաշտօնը: Քաղաքացիք էլ սիրում էին նրան: Եթէ քաղաքապետութիւն չլինէր, պէտք է ղեկաւան լինէր Վահանը: Կամ — քահանայ՝ Թիֆլիսի տէր Նիկոլի տեսակից...

Պէտք է տեսնէիք, թէ նա ի՛նչ ընդունելութիւն սարքեց մեզ: Ամբողջ քաղաքը ոտքի էր հանել: Ուղերձ ու ճառ: Երգ ու բարի գալուստի մաղթանքներ: Եւ, ի հարկէ, յաւուր պատշաճի փառաւոր ճաշ իշխան ձուկով: Այդպէս ընդունում էին առաջ ցարական նահանգապետներին:



Ս Ե Ի Ա Ն

Աֆրիկեանը ծանօթացրեց մեզ քաղաքի եւ շրջանի գործերին: Մենք էլ տեսանք ու քննեցինք ինչ որ կարելի էր եւ պէտք էր տեսնել ու քննել: Անհանգստացնող լուրջ երեւոյթներ չկային: Ժողովուրդը ապրում էր այդ օրերին ամէն տեղերին յատուկ պայմաններում եւ բարձր տրամադրութեամբ: Հայաստանի Հանրապետութեան փաստը այստեղ էլ զգացւում էր: Սկսուել էին բարեկարգութիւններ: Գիւղացիութիւնը ազահութեամբ ապասում էր հողային հարցի լուծման: Մեր ժողովուրդը ծարաւ էր հողի, որի պակասութեան հետեւանքով

ARAM webaram.com

արտագաղթ էր տեղի ունենում: Ցարական կառավարութիւնը քաջալերում էր հայերի հողագրկութիւնը եւ արտագաղթը: Այժմ, հայկական կառավարութիւնը ձեռնարկել էր նոր հողաբաժանման ու հողաբաշխման: Յատուկ յանձնախումբ էր ուղարկուած է՛ւ Նոր Բայազէտի գաւառը, որից, անշուշտ, չափազանցուած սպասելիքներ ունէր գիւղացիութիւնը. յանձնախումբը չէր կարող նոր հողեր ստեղծել: Ջաղաքը եւ գաւառը նոր գաղթոցների պէտք ունէին: Այդ հարցը մեր նախարարութեան իրաւասութեանց սահմաններից դուրս էր, բայց մենք համաձայնուեցինք վահանի հետ, որ առանձնապէս ուժ տրուի գիւղատնտեսական կրթութեան եւ գաղթօջախնութեան:

Մեր կողմից քննութեան առնուեց է՛ւ Սեւանի ձկնորսութեան եւ ձկնաբուծութեան խնդիրը: Արդէն գործում էր մեր առաջին ձկնաբուծարանը՝ լճի ձուկը բազմացնելու համար: Այդ ուղղութեամբ դեռ շատ անելիք կար: Ձկնաբուծարանը, ինչպէս եւ պետական այլ ձեռնարկներ տուժել էին բոլշեւիկների յարուցած խռովութիւնից:

Նոր Բայազէտի գաւառում քննական հարցերը սպառելուց եւ քաղաքապետ վահան Աֆրիկեանի հիւրասիրութիւնը լիովին վայելելուց յետոյ, ուղեւորուեցինք լճի միւս կողմը, դէպի Թոխլուճա, որտեղից նոյնպէս մտահոգիչ հեռագիրներ էին ստացուել:

III.

Գոհ չրջապատութիւնից, բարձր տրամադրութեան տակ լինանք լճափ, ուր արդէն սպասում էր մեզ առագաստանաւը: Ճամբու դնողները, վահան Աֆրիկեանի դլխաւորութեամբ, վերջին բարեմաղթութիւնը արին՝ բաղձանք յայտնելով, որ հանդիստ ճամբորդութիւն ունենանք: Եւ ինչո՞ւ պիտի չունենայինք: Լիճ էր մեր առջեւը, հօ ովկիանոս չէ՞ր:

Նաւը բեռնաւորուած էր ցորենի եւ գարիի տոպրակներով: Աբչակ Ղազարեանը նաւը տեսաւ թէ չէ, տարածուեց տոպրակների վրայ ծովախոից բռնուած: Ծիծաղելի էր այդ մօրուսաւոր երեխայի եղկելի վիճակը:

Ծովախոտը ինձ չէր վախեցնում: Ես տեսել էի Սեւ ու Միջերկրական ծովերի կատաղի մրրիկները: Ահաւոր ալեկոծութեան էի ենթարկուել Ատլանտեանի վրայ Նոյեմբեր ամսին: Եւ ոչ մէկ ան-

ARAM webaram.com

դամ չէի ազդուել մարդուն իսկ։ Հիմա Սեւանի՞ց պիտի վախենա-յի...

Նստած կապերտով ծածկուած տոպրակի վրայ՝ դիտում էի նաւաստիների ճարտար շարժումները, մէկ էլ առագաստը կախուեց աղաւնիի կոտրուած թեւի պէս։ Լճի մէջտեղն էինք դրեթէ։ Օդը կար-ծես մեռել էր։ Նաւը դանդաղացրեց պնացքը եւ վերջը կեցաւ ան-շարժ։ Նաւավարների մեծը յուսահատ գլուխն էր օրօրում եւ ինչ որ բաներ ասում քթի տակ։

— Հը՛, ի՞նչ կայ, հարցրի ես նրան։

— Ինչ պիտի ըլնի, քամին կտրուեց, պիտի համբերենք։

— Համբերենք, չա՛տ լաւ, վե՞րջը։

— Վերջը, որ փչի՝ կը շարժուենք, որ չփչի, պիտի համբերենք, աւելացրեց նա փիլիսոփայօրէն։

— Երկա՞ր։

— Ասուած պիտի, ազա. մէ սհաթ, եա երկու սհաթ, եա իրեք։ Աստծու բան է, ո՞վ պիտի։

— Իսկ եթէ չփչե՞ց, հետաքրքրուեցի ես։

— Եթէ չփչի, չի փչի։ Եթէ փչի, կը փչի, էն էլ ո՛նց կը փչի։

Ի՞նչ կարելի էր պատասխանել — ճակատագիր էր։ Նաւը դամ-ուել-մնացել էր անեռեր։ Երկու կողմը, հեռում, երեւում էին ափե-րը։ Եւ արեւը վերեւից այրում էր անխնայ։ Ա՛յ քեզ, Սեւան...

Փիլիսոփայ նաւապետը իրաւունք ունէր թերահաւատ լինելու։ Քամին չփչեց, բայց հետզհետէ երկինքը սկսեց ծածկուել ամպերով։ Ջրերը մութ արճիճի գոյն առին։ Ամպերը թանձրացան ու սեւացան։ Ամպերի միջից վայրեց կայծակը։ Լսուեց հեռաւոր գոռոց, որ հե-տզհետէ մօտեցաւ։ Մէկ էլ՝ թունդ որոտ. կարծես երկինքը պատըռ-ուեց եւ չանթ ու կայծակի կուրացնող լոյսերով լեցուեց լիճը։ Փչեց ուժեղ քամի, ապա՝ սեղաւտարաւի կարկուտ, եւ մեր նաւը խաղալիք դարձաւ ալեկոծ տարերքի։ Նաւավարները ոգի ի բուին աշխատում էին պահել նաւի հաւասարակշռութիւնը զեկի եւ առագաստների մի-ջոցով, բայց նաւը չէր հնազանդւում եւ օրօրւում էր վեր ու վար, մի կողմից միւս՝ առչեզի նման։ Ես էլ պարտուած ընկայ Արշակի կողքին՝ ծովախտից գարնուած։ Ես, որ համարձակ մարտահրաւէր էի կարդացել Աղանեանան ովկիանոսի վիթխարի ալիքներին, այժմ գալարում էի ցաւից՝ խղճուկ առագաստանաւի վրայ...

Ինչքա՞ն տեւեց փոթորիկը Սեւանի վրայ, ի՞նչպէս եւ ե՞րբ հասանք լճի միւս եղերքը — ոչինչ չէի յիշում։ Երբ նաւաստիների օգնութեամբ դուրս եկայ ափ, հազիւ պահում էի ինձ ոտքի վրայ։

ARAM webaram.com

Ռուս գիւղացիները ընդառաջ էին եկել: Ի՞նչպէս ընդունեցի նրանց աղն ու հացը, ի՞նչ ասացին նրանք, ի՞նչ պատասխանեցի ես, որ ապանէք, չեմ կարող ասել: Երբ երեկոյեան աչքերս բացի, տեսայ ինձ ռուս գիւղապետի տանը, մահճակալի վրայ:

— Սեւանը կատակներ չի սիրում, ասաց գիւղապետը, որ կատաղեց՝ կը կատաղի: Հարազատ մայր է մեզ համար, երբեմն էլ խորթ մայր: Մերթ հրէշ է եւ մերթ հրեշտակ...

Երբ Թոխլուճայի ջրջանը այցելելուց յետոյ ուրիշ մէկ նաւով վերադառնում էինք այս անգամ դէպի Ելենովկա, Սեւանը մեզմ ծփում էր զառնուկի հեզութեամբ: Եւ այնպէս գեղեցիկ էին Գեղամայ լեռները Սեւանի լճից: Եւ այնքա՜ն զմայլելի էր Սեւանի կղզու տեսարանը կապոյտ ջրերի երեսին:

1946, Ուաշինգթըն

ARAM webaram.com

ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Արագի ափին բոստանս լինի...

Բոստան չկար, սակայն, Արագի ափին: Անողորմ ուժից հալածուած, հայրենիքից անյայտութեան դիրկը նետուող մարդկանց մի բազմութիւն էր խռնուած կիսիչ արեւի տակ...

1921 թ. Մայիսն էր, Արեւիքում, ուր, Մեղրիի մօտ, «կամուրջներ չհանդուրժող Արաքս» հայոց մեծ գետը, առանձնապէս կատաղի այդ տարի, պատնէշ էր կազմել Հայաստանի եւ Պարսկաստանի միջեւ: Գամառ Քաթիպայի հեզ Արաքսը չէր, պղտոր ու յորդ ալիքները չէին վազում «լալագին»: Ընդհակառակը, մոլեգին փրփուրներով եւ ազմուկով, առաջ էր նետւում ամէհի իրանը սեղմած բարձրաբերձ լեռների գօտիով: Վայրագ էր Արաքսը, անգութ, դաժան... Մա՞յր — ո՛չ երբեք: Անսիրտ էր անխնայ կամուրջներ չհանդուրժող Արաքսը...

Մերոնք փորձել էին «կամրջել» անզուսպ գետը: Ակադ. Թամանեանի գլխաւորութեամբ՝ հայրենիքից — ո՛չ, հայրենիքի թշնամիներից — փախչող հայ ճարտարապետները երկաթէ պարաններ էին բերել տուել Հանքերից, աշխատել էին՝ միացնելով երկու ափերը՝ պարանի լաստ ձգել գետի վրայ, բայց Արաքսը չէր հանդուրժել. խփել էր յանդուգն մարդկանց իր հուժկու ալիքներով, ապառնացել էր ջրախեղդ անել: Եւ միա՞յն ապառնացել: Շատ համարձակներին ճզմել էր իր խօլական գրկում, անհետացրել ջրերի տակ: Երիտասարդ, գաղափարական ճարտարապետ Խաչակեանը, որ Ֆրանսայից եկել էր ծառայելու հայրենիքին, Երեւանի անթելի կայանի պե-

ARAM webaram.com

տը, այս ձեւով էր գտել իր մահը երկաթի պարանը միւս ափը հասցնելու փորձի միջոցին...

Եւ, սակայն, հազարաւորներ արդէն անցել էին երերուն տիկերի վրայ կկզած: Շատերն էլ սպասում էին իրենց հերթին: Ամէր Արշաղը, Ղարադաղի հռչակաւոր աւազակապետ խանը, հրամայել էր իր մարդկանց տիկերով պարսկական ափը փոխադրել հայերին, մեր դիմումի վրայ եւ մեր ծախսով՝ մարդապլուխ կէս ոսկիի:

Դուք նատե՞լ էք, այսպէս ասենք, Արաքսի տկալասաների վրայ: Այծի կաշիէ զոյդ տիկեր իրար միացած: Վրան վոխտ տախտակներ: Մէկ ձեռքով կարելի է վերցնել: Մի կողմ, ծունկի, պարսիկ «նաւավարը», մի երկար փայտ ձեռքին: Մօտը նստում ես դու. կողքիդ մէկ ուրիշը: Եւ այսպէս նետւում էք փրփրուն ալիքների մէջ: Երկար փայտը ուղղութիւն է տալիս «նաւին»: Եթէ բախտդ բանեց, առանց թրջուելու կը հասնես միւս ափ: Կարող ես եւ «նաւաբեկութեան» ենթարկուել: Աւելի դժբախտները կարող են և՛ մատաղ դառնալ անասուած ալիքներին...

Այս ձեւով բազմահազար հայեր հեռացան հայրենիքից: Եւ ուրիշ հազարներ ահա, խռնուած Արաքսի ափին, կիսիչ արեւի տակ, անհամբեր սպասում էին իրենց հերթին:

*
* *

Թաւրիզում, կառավարութեան յանձնարարութիւնը կատարելուց յետոյ, կոտրած սրտով, վերադառնում էի Զանդեզուր: Անյոյս էր մեր դրութիւնը: Դաշնակիցները ոչ կարողութիւն ունէին մեզ օգնելու, ոչ էլ կամեցողութիւն: Սովետները, Մարտ 16ի Մոսկուայի դաշնագրից յետոյ, աւելի եւս մտերմացել էին Թուրքերի հետ: Մեզ համար արտաքին աջակցութեան յոյս չկար:

Վերադառնում էի մի անդամ եւս ուրք դնելու հայրենի հողի վրայ եւ վերջին զեկոյցս տալու կառավարութեան: Հետս էին Լեւոն Քալանթարեանը, Սահակ Տէր Թումասեանը, Լոյսպարոն Զոհրաբեանը, դաժան օրերի իմ հաւատարիմ ընկերները — Լեւոնը, հին յեղափոխական, Հանրապետական Հայաստանի գաղտնի ոստիկանութեան պետը, Սահակը, չատախցի, Արամի ճեռերից եւ այժմ իմ քարտուղար-գործակիցը, Լոյսպարոնը, ինձ հայրենակից, նախկին ուսուցիչ ու սպայ, այժմ իմ անբաժան համհարզը:

Մեր երեւումը Արաքսի հայկական ափին ապշութիւն պատճառեց ամէնքին: Չէին հաւատում աչքերին: Չէին սպասում: Արաքսը

ARAM webaram.com

անցնելուց յետոյ, ո՞ր անխելքը պիտի վերադառնար Զանգեզուր բոլշեւիկեան վտանգին ենթարկուելու համար:

Բայց եւ յոյս ներշնչեց ամէնքին մեր երեւումը: Ամիր Աբշաղը արգելել էր հայերի անցքը դէպի Պարսկաստան, եւ Արաքսի ափին թափուած բազմութիւնը յուսահատական վիճակի էր մատնուած: Մեզ յաջողուեց ամոքել խանի սիրտը ոսկու խոստումով. նա հրամայեց վերսկսիլ փոխադրութիւնը մարդադլուխ կէս ոսկի վճարով:

Տիկերը, իրենց պարսիկ «նաւավարներով», նորից գործի պիտի սկսէին: Կարգադրեցինք, որ առաջին հերթին փոխադրուեն վիրաւորները, հիւանդները, կանայք ու երեխաները. ապա միւսները հերթով: Բայց ամբոխը, խռնուած գետի ափին, թոյլ չէր տալիս կարգը գործադրելու. ամէնքը ուզում էի իրենք նստել առաջինը: Հենց որ խղճուկ լաստը մօտենում էր եզերքին, վիրաւորներն ու հիւանդները յետ էին մղւում եւ ով ուժեղ էր, առաջ էր նետւում, ու տիկը չուռ էր գալիս ջրի մէջ: Հակիչները անզօր էին կարգ հաստատելու: Սպայ Գարեգին Սարգիսբէգեանի, հակիչների պետաւորի ձայնը կտրուել էր պոռալուց: Իր օգնականներին լսող չկար: Անզօր էին անցնում եւ իմ յորդորներն ու ապառնալիքները: Ամբոխը խելացնոր՝ ազմկում, թոյլ չէր տալիս, որ հիւանդներն ու վիրաւորները առաջ անցնէին: Ամբոխի պարապմունքի երեւոյթ ունէր նախկին ճեմարանական՝ ուսուցիչ Արամ Շալճեանը: Ծուռ վիզով, աչքերը կապտաղի, կրակ կտրած՝ նա անվերջ պոռում եւ հայհոյում էր: Գրգռում ուրիշներին մեր դէմ. հասկանալի չէր, թէ ի՞նչ էր ուզում...

Մէկ–երկու անգամ լուսցրի. աշխատեցի համոզել, որ համբերեն, թոյլ տան, որ հերթով կատարուի փոխադրութիւնը, վատահեցրի, թէ ամէնքը պիտի փոխադրուեն — անօգուտ, լսող չկար: Հենց որ տիկը մօտենում էր ափին, բազմութիւնը, Արամ Շալճեանի գլխադրումով, առաջ էր նետւում, գրաւում էր լաստը: Առաջին իսկ նետուղից լաստը չուռ էր գալիս, եւ պարսիկ լաստաւարը հայհոյանքով մի կողմ էր քաշւում...

Անհնարին էր վիճակը: Այս ձեւով լաստերը կարող էին հեռանալ եւ այլեւս անկարելի կը դառնար գետը անցնելը: Հիւանդ ու վիրաւոր, ամէնքը պիտի մնային Արաքսի եզերքին անխնամ, բնաջնջման վտանգին ենթակայ:

Ամէն ճիգ հանպատասխանելու խուժանացած մոքերը անցնում էր ապարդիւն: Հենց որ բերանս բաց էի անում մի բան ասելու, ամբոխաւար Շալճեանի եւ իր համախոհների պոռչտուքը խեղդում էր ձայնս:

ARAM webaram.com

Անհանդուրժելի էր։ Աչքերս մթնած՝ մի ուժեղ ապտակ իջեցրի Շալճեանի երեսին, երկրորդ, երրորդ։ Շալճեանը թաւալգլոր փըռուեց գետին՝ քիթն ու բերանը արիւնոտ։ Ամբոխը մի պահ լռեց՝ չհասած անսպասելի անակնկալից, մնաց անշարժ։ Ու նորից սկսեց պոռչտալ ու հայհոյել։

Այլեւս չեմ յիշում, ի՞նչպէս պատահեց, ո՞րտեղից ձեռքս ընկաւ մի հաստ գաւազան։ Սկսեցի անխնայ զարնել, անհաշիւ, առանց մարդու երես տեսնելու, աչ, ձախ, հարուածը հարուածի հետեւից...

Ապշեցուցիչ էր։ Մարդիկ ծեծի տակ՝ մնում էին անշարժ, կարծես, վախենալով, որ եթէ յետ քաշուեն, կը կորցնեն լաստ նստելու պատեհութիւնը։ Կարծես ուզում էին ասել. «Ծեծի՛ր, ինչ ուզում ես արա, բայց մենք պէտք է անցնենք գետը»։

Ի՞նչքան տեւեց այս վայրենի տեսարանը, չեմ կարող ասել։ Յոգնա՞ծ, թէ ընկերների ջանքերով՝ մի կողմ քաշուեցի... Պարսիկ լաստաւարները հեռացել էին գետի միւս կողմը։ Յայտարարեցի բազմութեան.

— Վերջ փոխադրութեան։ Դուք կը մնաք այստեղ, ինչ ուզում էք՝ արէք։ Ուր ուզում էք՝ գնացէք։ Ես այլեւս պատասխանատու չեմ ձեզ համար։ Գնացէք, ուր որ կամենաք...

Եւ մի կողմ քաշուեցի ընկերներիս հետ, որոնք աշխատում էին հանդստացնել ինձ։

Հեռվհեռէ հանդարտուեց եւ գետափին խռնուած ամբոխը։ Շալճեանին իւրայիններով յետ մղեցին։ Առաջ անցան աւելի բանիմաց մարդիկ։ Եկան խնդրելու, որ ներողամիտ լինեմ. խոստացան ենթարկուել կարգապահութեան, միայն թէ հրամայեմ վերսկսել փոխադրութիւնը...

Այդ նոյն մարդիկ էին, որ երբ Պարսկաստանից եկանք, ուրախութեամբ ողջունեցին իմ վերադարձը.

— Բարի՛ եկար դու մեր դլխի վրայ... Թախտ կանդուն մնայ...

Թա՞խտ էր մնացել, որ կանդուն մնար։

Արեւը արդէն հասել էր զենիթին։ Այրում էր անխնայ։ Այս ափից արուած նշանի վրայ, լաստերը վերադարձան։ Սկսուեց փոխադրութիւնը՝ առաջ վիրաւորներն ու հիւանդները, ապա՝ կանայք ու երեխաները, վերջը միւսները՝ նախորդուած հերթով...

Երբ այլեւս ամէնքս տարագիր էինք Թաւրիզում, մօտս եկան Արամ Շալճեանը եւ ափի իր ընկերակից հերոսները։

— Ներեցէ՛ք Արաքսի ափին պատահածի համար, ընկեր

ARAM webaram.com

վրացեան։ Մենք կորցրել էինք մեր խելքը...

Ներելու հարց չկար։ Ես հասկանում էի նրանց, բայց չէի կարող երեւակայել, թէ մարդու մէջ այդ աստիճան հզօր է անասունը...

Անասնական վախն էր խելակորոյս դարձրել նրանց։ Ամիսներ շարունակ լարուած նեարդներով, Արաքսի կիզիչ արեւի տակ անապատան եւ անօթի, երբ լերան միւս կողմից որոտում էին բոլշեւիկեան թնդանօթները, երբ ամէն վայրկեան կարող էին յարձակման ենթարկուել, վարարած գետին հասած, որտեղից մի քանի հարիւր քայլի վրայ էր Պարսկաստանի ափատ հողը — ինչո՞ւ զարմանալ, որ նրանք կորցրել էին իրենց համբերութիւնը եւ համբերութեան հետ նաեւ մարդկային բանականութիւնը։ Այո՛, ես չդիտէի թէ մարդու մէջ այդ աստիճան ուժեղ էր անասունը... Աւա՛ղ, նաեւ իմ մէջ...

*
* *

Զանգեզուրում էլ մեր երեւումը չատերին զարմանք պատճառեց։ Իմ շտապով մեկնումը Պարսկաստան, Քաջաղնունիի ընկերակցութեամբ, փախուստի տպաւորութիւն էր թողել ոմանց վրայ. «լքեցին մեզ ու փախան»։ Այժմ լայն բացած աչքերով էին նայում մեր վրայ։ Թերեւս եւ յոյսերով. «եթէ վերադարձել են, նշանակում է մի բան կայ»...

Ռուբէնը չարունակում էր ճղռել Մեղրիում՝ յուսալքուած եւ ամէն բանից ձեռնթափ։ Կառավարութեան անդամներ Վ. Մինախորեանը եւ Ա. Խոնդկարեանը Ղափանի հանքերում էին։ Մեր կառավարութեան միւս անդամները՝ Գորիսում էին կամ ռազմաճակատում, Կուռոյի հետ, Բաղաբէյում։ Իմ բացակայութեան Լեռնահայաստանի համար կազմուել էր նոր կառավարութիւն՝ տեղական եւ երեւաննից եկած կառավարութիւնների անդամներից խառն՝ Ժողհէի դլխաւորութեամբ։ Ժողհէը ստացել էր ապարատեան կոչում։ Ասյոխով, այժմ մենք ունէինք երկու ապարատ...

Երկիրը խաղաղ էր երեւում։ Լեռները՝ կանաչ, արտերը՝ կանաչ, դետերը՝ վարար, բնութիւնը պճնուած էր դոյնզդոյն հագուստներով, դիւղական նորահարսի պէս։ Մարդիկ էլ երեւում էին խաղաղ, նոյնիսկ ուրախ դէմքերով՝ լծուած հանապազօրեայ աշխատանքի։

Գեղեցիկ է Զանգեզուրը Մայիս ամսին, հիւսիսից հարաւ եւ արեւելքից արեւմուտք, ամբողջ տարածութեան վրայ։

ARAM webaram.com

Բարձրացէք Արաքսից դէպի վեր, Մեղրի դեպի ափով: Հեռվից նեղացող լայն հովիտը լեցուած է վառ կանաչով: Փարթամ թփենիներն ու խաղողի որթատունկերը հետզհետէ իրենց տեղը զիջում են ծիրանենուն ու կեռասենուն, դեղձենուն ու նշենուն, սերկեւիլին, սալորին, տանձին ու խնձորին: Հարուստ է Արեւելքը համեղ պտուղներով եւ բնութեան այլազան բերքերով: Մեղրիի դինին իր նմանը չունի:

Մեղրի դեպի երկու կողմերից բարձրանում են կանաչ լեռները: Եւ լեռների վրայ՝ ճոխ արօտավայրեր, համբաւաւոր եայլաները, ուր Արեւիքի պիւղական բնակչութիւնը անցընում է ամառը իր անասուններով: Տեսե՞լ էք երբեք հայ լեռնաբնակների կարապի եւ սերի համը, վայելե՞լ էք հայ գիւղացու հիւրասիրութիւնը եայլաներում...

Միշտ բարձր ու բարձր, դեպն ի վեր սարալանջերով: Գետը մնում է վարը, խաւար անդնդում՝ պահուած ժայռերի եւ խիտ անտառի մէջ: Լեռները վեր-վեր՝ սկսում են մերկանալ ծառերից: Այժմ՝ ցանցառ թուփեր են չուրջը եւ կանաչ, հիւթալի արօտ:

Մեղրի դեպի ակունքների մօտ ենք, բարձր, ամպանման ապատակ մառախուղի մէջ, որի ճեղքերից զգլխիչ տեսարան է բացւում Մեղրի դեպի հովիտն ի վար: Այստեղ ծնունդ են առնում զուլալ աղբիւրներ ու գետակներ: Այստեղ է սաւառնում լեռների արքան՝ Արծիւը իր վեհափառ թռիչքով: Օդը յստակ է: Մառախուղը հետզհետէ անհետանում է, եւ արեգակի չքեղ ճառագայթները ողողում են լեռ ու ձոր: Ուզում ես կանչել: Բնութեան յանձնել մէջդ կուտակուած յոյզերն ու տենչերը: Ուզում ես ձուլուել բնութեան հետ, հալուել աղամանդ օդի մէջ, այս եթերային բարձունքներում...

Մեղրի դեպի անդնդախոր հովիտը անհետանում է մեր յետեւը: Առջեւը լերկ կատարը լերան, որից սկսւում է էջքը դէպի հիւսիս՝ նոր, առինքնող, վառ կանաչ տեսարաններով: Զախ կողմը ընկնում է Ղափանի զեղեցիկ ձորը՝ Դաւիթ բէկի բարձրանիստ, ահարկու Զէյվա բերդով: Մենք իջնում ենք ուղղակի ճակատէնի վրայ եւ այնտեղից Հանքերը՝ կարուկ վայրէջքով:

Ճակատէնում, ասում են, մոլիբդէնի եւ պղնձի առատ հանքեր են գտնուած այժմ եւ հանքային մեծ կենտրոն է հաստատուած:

Ղափանի պղնձի հանքերը տարածուած են, վարը, հովտում, համբաւաւոր Քոստուսի ստորոտը: Այստեղ դեռ նոր եռում էր կեանքը. Ֆրանսական ընկերութիւնը, Մելիք Ազարեան եւ ուրիշներ հարուստ պղինձ էին արտադրում: Այժմ ամէն ինչ անշարժ էր. հան-

ARAM webaram.com

քափորները ցրուել էին, զօրծարանները՝ կանգ առել. պղնձից մնացած քարերի դէզերը միայն յիշեցնում էին երէկուայ եռուզեռը:

Վաղը նորից պիտի զարթնի այս աստուածապարզեւ հովիտը: Շոգեմեքենաների ու փորիչների ազմուկով պիտի լցուեն լեռ ու ձոր: Ոսկէ մետաղը չարժում, նոր կեանք պիտի պարգեւի աշխատող բազուկներին:

Միշտ լեռ ու ձոր կարելով, հրաշագեղ բնութեան մէջ, յառաջանում ենք դէպի հիւսիս: Կաւագործ Տանճատափի մօտ չրջւում ենք դէպի աջ, Գորիսի ուղղութեամբ, առանց Տաթեւ հանդիպելու:

Արժէր մի անգամ էլ տեսնել Տաթեւի սրբավայրը, հինաւուրց մենաստանը Սիւնեաց աշխարհի, իր պատմական յիշատակարաններով, իր չարժական սիւնով. իր պատմական աննման տեսարաններով: Մի անգամ էլ, վանահօր ծիծեռնակի բոյնը յիշեցնող պատշգամբից դիտել Տաթեւի անդնդախոր ձորը, ուր մի քանի դեսերի միացումով Որոտան գետ աւազանի հետ կազմւում է ընդարձակ ու վիթխարի մի ձոր՝ կանաչ անտառներով պատած: Թւում է, թէ սաւառնակից ես դիտում նօսր մշուշի մէջ այդ եզակի տեսարանը: Պատշգամբի տակ Տաթեւի ջրվէժն է թափւում անդունդի մէջ արծաթէ երիզով: Վարը, Որոտան գետի եզերքին՝ պատմական Անապատը՝ հակայ թթենիների մէջ թաղուած: Այստեղ, ճգնութեան մէջ, մեր սրբակրօն վարդապետները, արթուն պահակները հայ մշակոյթի, մատաղաթների վրայ յաւերժացրել են հայոց անցեալը՝ ապագայի համար անմահ պահելով հայ միտքն ու հայ ոգին:

Դէպի աջ, ժայռերի եւ կանանչների ծոցում, բարձր լեռների մէջ սեղմուած է Սատանայի կամուրջը Որոտան գետի վրայ: Ո՞վ է իմանում, քանի դար առաջ, Որոտանի ափի բարձր տարից կտրուել է մի ահռելի կտոր եւ տարածուել գետի վրայ՝ մէկ ափից մինչը: Հողքի կրային աղբիւրից ջուրը հոսել է նորակառոյց կամուրջի վրայ եւ ամրապնդել ու խտացրել հողը: Կամուրջը զարձել է անխոցելի գետի ամենի հարուածների տակ: Կրային չիմեր զարդարում են նրա եզերքները: Որոտանը կատաղի ազմուկով, փրփրած, սրընթաց վազում է նրա տակից: Բնական կամուրջը անխորտակելի՝ ծառայում է Տաթեւ-Գորիս ճամբորդների ապահով երթուղարձի համար: Մէկ ժամ Տաթեւից էջք դէպի Որոտանի եզերքը, Սատանայի կամուրջը, մէկ ժամ էլ վերելք քարքարոտ արահետով Գորիսի ճանապարհին հասնելու համար: Անիւ տեսած չէ. ձի ու ջորի եւ պատուական իշուկը միայն կարող էին կտրել Սատանայի կամուրջի ճամբան:

Տանճատափից Գորիս մի քանի ժամուայ տարածութիւն է կե-

ARAM webaram.com

ռասենինների ու սալորենիների մէջ, մինչ կանաչապարդ լեռներով ու ձորերով։ Արդէն Զանգեզուրը ամբողջապէս լեռ է ու ձոր, քար է ու ծառ։ Եւ ջինջ, պայծառ, արեւոտ երկինք։

Գորիսը հեռուից մեծ պարտէզի է նման։ Ծառերի միջից երեւում են սպիտակ տներ. մի մասը կանաչ թիթեղէ կտուրներով։ Դէպի ձախ՝ հին քաղաքը՝ նախապատմական քարանձաւներով։ Պատմութիւնը դեռ չատ յայտնագործումներ կարող է ունենալ այդ տարօրինակ երեւոյթով հնութիւնների պեղումներից։

Գորիսի մուտքին առջեւ, այլիների մէջ, անակնկալ է սպասում։ Սպարապետի կարգադրութեամբ մեզ ողջունելու են եկել մի ջոկատ պիոներներ եւ Դաւիթ-Բէգեան արի պայլիկ պատանիները։ Ջոկատը պիոներական պատիւ է տալիս՝ չեկացնելով հրացանները։ «Պատուի՛ տո»... կանչում է պայլիկների հրամանատարը, 10–12 տարեկան մի աչքաբաց պատանի՝ հպարտ իր համազգեստով եւ իրեն վիճակուած բացառիկ դերով։ «Պատուի՛ տո»... Պայլիկները պատուի են առնում՝ չեկացնելով իրենց փայտէ հրացանները։ Ամէնքը միահեւ են հագուած, կարմրաթաշուչ եւ լուրջ դէմքերով։ Խմբապետի մէջքին՝ կարմիր գօտի սպարապետի նմանողութեամբ։ Մենք պատասխանում ենք նոյն ծիսական ձեւով։ Պարտաւոր եմ ճառ խօսել։ Եւ Ջոկատի ու պայլիկների, այլեւ ճանապարհին հաւաքուած բազմութեան ուղեկցութեամբ, կեցցէներով ու ծափերով մտնում ենք Գորիս նախկին գաւառական կենտրոնը, որ այժմ դարձել է Լեռնահայաստանի մայրաքաղաք։ Այստեղ էր նորակազմ կառավարութիւնը Լեռնահայաստանի։ Այստեղ էին եւ երեւանից եկած ու տեղական ղեկավար դէմքերը։ Գորիսի բնակչութիւնը ջերմ ընդունելութիւն ցոյց տուեց մեզ։

Մի քանի օր խորհրդակցութիւններով անցաւ մեր ժամանակը Գորիսում։ Կառավարութիւնը լսեց իմ ղեկուցումը։ Ես ծանօթացայ գործերի ընթացքին։ Ինձ համար, արտասահմանի վիճակին ծանօթանալուց յետոյ, պարզ էր այլեւս, որ մենք գաղափարուած էինք հեռանալու երկրից, որքան չուտ, այնքան, թերեւս, աւելի լաւ երկրի եւ մեզ համար։ Կառավարութիւնը այդպէս չէր մտածում։ Որքան երկար դիմանանք, այնքան լաւ, թերեւս դրանով յաջողուի ապահովել Լեռնահայաստանի ինքնավարութիւնը. թերեւս նոր դէպքեր տեղի ունենան, նոր հորիզոններ բացուեն մեր առջեւ, ո՞վ գիտէ։ Յեղափոխական ժամանակ է, ինչե՛ր ասես չեն պատահիր...

Անհրաժեշտ էր այցելութիւն տալ եւ Երեւանից եկած զօրամասերի հրամանատարութեան, բացատրեմ, որ սպարապետ Կուռոյի

ARAM webaram.com

ապայակոյաի կենտրոնն էր: Բայց նախ քան այդ, պէտք էր ներկայ գտնուել Հայաստանի Հանրապետութեան տարեդարձի՝ Մայիս 28ի հանդէսին, Գորիսում:

Քաղաքի հրապարակում համախմբուած էր, կարելի է ասել, ամբողջ Գորիսը: Կառավարութիւնը իր կազմով ու բարձր պաշտօնէութեամբ, զօրքը, Դաւիթ-Բէկեան արիները, աշակերտութիւնը: Բազմութեան վերեւ, բարձր, ծածանւում էր եռագոյն մեծ դրօշակը: Ժամը խորհրդաւոր էր: Մեր վերջին Մայիս 28ը պիտի տօնուէր հայրենի հողի վրայ...

Առաւօտեան հանդէսից առաջ, այցելել էինք Վահան Քորէնու եւ միւս նահատակ ընկերների եղբայրական գերեզմանին: Հայ բոլշեւիկների ձեռքով, բանտում, վայրագօրէն սպանուել էին Վահանը, Արշակ Շերբինեանը, կարիճ Սաքոն, որ ցարական տաժանավայրից էր վերադարձել, եւ ուրիշներ: Մանաւորապէս Քորէնու հետ մենք մտերիմ ընկերներ էինք ճեմարանից սկսած: Երիտասարդ, զարգացած, կլոր չարժուձեւով, դաղափարական համարձակ տղամարդ էր, բարի եւ ազնիւ, ինչպէ՛ս կարելի էր ձեռք բարձրացնել նրա վրայ. ինչպէ՛ս կարելի էր սպաննել...

Զախարանց տղուած էի. խօսելու տրամադրութիւն չկար մէջս, բայց ի՞նչպէս կարելի էր խօսք չառնել Հայաստանի անկախութեան տարեդարձի հանդէսին: Ինձանից յետոյ, խօսեց Նժդեհը: Սպարապետի կարմիր գօտին մէջքին, ձեռքերը խաչաձեւած կրծքի վրայ՝ նա սկսեց ճառը մեղմ ձայնով. ապա՝ աստիճանաբար ձայնը բարձրացաւ՝ հաւատ եւ հզօր նախադասութիւններով, յուզելով ու համակելով բազմութիւնը: Ի՞նչ ասաց. մինչ կարեւո՞ր էր, թէ ինչ ասաց. կարեւորը ասելու ձեւն էր: Նժդեհը գիտէր խօսքով մարդկանց սրտերը գերելու արուեստը, եւ այդ օրը գերազանցեց ինքն իրեն:

***

Ճանապարհը Գորիսից Բազարչայ անցնում էր Իչ Թափալարի բարձունքով, լծէն գիւղի տակից, ալ կողմ Թողնելով Ներսէս Սըրբազան Մելիք-Թանգեանի, փրոֆ. Նիկողայոս Ադոնցի եւ Վահան Քորէնու ծննդավայր Բռնակոթ գիւղը, Որոտն գետի հովիտն ի վեր:

Իչ Թափալարի բարձունքներում չատ արիւն էր հոսել անցեալում: Այստեղ տաք կռիւներ էին տեղի ունեցել Ազուաի, Վազուաի Թրքական գիւղերի եւ դաշնակցական հայդուկների միջեւ հայ-թա-

ARAM webaram.com

թարական ընդհարումների օրերին: 1918ին, Անդրանիկ իր մարտիկներով ոչնչացրել էր այդ աւազակաբարոյ դիւղերը, եւ այժմ ամայութիւնն էր իշխում նրանց փլատակների վրայ: Այս ճամբով անցել էին Խալիլ փաշայի կարմիր ասֆեարները բոլշեւիկեան ոսկիով ծանրաբեռնուած՝ հազիւ ճողոպրելով Դրօյի հետապնդող քաջերի ձեռքից: Այժմ անցնում էինք մենք՝ որբացած Հայաստանի որբ զաւակները...

Լծէնը ինձ յիշեցրեց հին օրերը: Բարձր լերան գլուխ թառած այս արծիւների բոյնը ևս այցելել էի, երբ աշակերտ էի ճեմարանում, Համազասպ Բաղէշցեանի եւ ուրիշ երկու ընկերների հետ: Ամառուայ արձակուրդին հիւր էինք Տաթեւի վանահայր Ներսէս վրդ. Մելիք-Թանգեանի մօտ եւ մէկ-մէկ երեսորբիչ ձգած մեր վրին՝ ոտի տակ էինք տալիս ողջ Զանգեզուրը պատմական յուշարձանների ու բնութեան գեղեցիկ տեսարանների յետեւից: Գնում էինք Բռնակոթ և անօթի, ճանապարհից չեղուելով, մտցնեցինք Լծէն: Առաջին իսկ գռնից, դիւղի ծայրում, որ բացուեց մեր առջեւ, դուրս եկաւ մի ժպտուն մամիկ, անոյշ աչքերով նայեց մեր վրայ, ինչ որ բաներ խօսեց զանգեզուրեան բարբառով, ներս հրամցրեց, դէս ու դէն ընկաւ, եւ վերջը մենք նստած էինք ծալապատիկ սիրոցի չուրջ, մեր առջեւը՝ կարագ, պանիր, մածուն, ձուածեղ բուրաւէտ լաւաշով: Եւ մամիկի անվերջ յորդորը՝ «կեր, քէ մատաղ»: Եւ պատմութիւններ: Այն ժամանակ դեռ ինձ համար դժուար հասկանալի բարբառով...

Հազիւ մեր խրախճանքը վերջացել էր, մամիկի չեմքին երեւաց դիւղի քահանան, ցանցառ մօրուքով եւ մաշած վերարկուով մի դիւղացի: Ցայտնապէս բարկացած էր երեւում: Մի պահ կեցաւ, ապա ծանր խօսքերով յարձակուեց տանտիրուհու վրայ: Այս ի՛նչ խայտառակութիւն է, հիւրեր գան, այն էլ հայր-սուրբի մարդիկ, եւ պատուը փոխանակ իրեն բերելու՝ ինքն է պահել մօտը...

Կշտամբանքը պատուին էր ուղղուած, բայց մենք հասկանում էինք, որ ամբաստանեալը մենք էինք: Իսկապէս, մեր կողմից վայելչութեան բացարձակ անտեսում էր, դիւղ մտնել եւ քահանային հիւր չերթա՛լ...

Այժմ, Լծէնի տակ, մի ժայռի ստորոտում նստած, սպասում էինք, որ ձիերը քիչ կշտանան ու հանդիստ առնեն: Ոչ մամիկ կար իր մածունով ու ձուածեղով, ոչ էլ հիւրեր սպասող քահանայ: Բնութիւնը առաջուանն էր. կանաչ լեռներ, կանաչ հովիտներ, պաղ աղբիւրներ, խոխոջուն գետակ, թռչունների խայտանք օդի մէջ... Ամէն ինչ, առաջուայ նման, գեղեցիկ էր ու կենսուրախ, փոխուած

ARAM webaram.com

էր գիւղի արտաքին կերպարանքը, կարծես, մի ահարկու բռունցք ճնշել էր նրան: Առաջուանը չէին, փոխուել էին և՛ մարդկանց հոգինները, մի կսոր հաց իսկ դժուարանում էին տալ անցորդին:

— Կայ ոչ, քէ մատաղ, լոխ Անդրանիկը տարալ ա...

Անդրանիկը որեւէ դեր ունէ՞ր, իսկապէ՞ս «կար ոչ», թէ՞ հոգինները դատարկուել էին: Ահաւոր բան է, երբ մարդու հոգին ամայանում է...

Բազարչայում մեզ դիմաւորեցին գինուորական պատիւներով: Սպարապետ Կուռոն — այդ ժամանակ յայտնի Սուրէն անունով — գլխաւորում էր ընդունելութեան հանդէսը: Այդտեղ էր և՛ նախարար Արշակ Յովհաննիսեանը, միւս մարտական տրամադրութեան մէջ, գինուորական ու քաղաքական ծանօթ դէմքեր: Մալականի մի խրճիթում հանդիպեցինք ա՛յն օրերի մեր ժան դ'Արքին, Հելէն Բիւզանդին, գինուորական վերարկու հագին: Նոր էր ամուսնացել բժ. Քիւթուկեան — Կիլիկեցու հետ:

«Նահանջ բիւրոյը», պէտք է ասել, չատերին բախտ բերեց, ամուսնացան եւ ընտանիք կազմեցին Ճանապարհին կամ տարագրութեան մէջ...

Մալականների խաղաղ Բազարչայը վեր էր ածուել գինուորական աղմկոտ կայանի: Զինուորները տեղաւորուած էին գիւղացիների տներում: Ռուս տղամարդկանց մի մասը պատանդ էր առնուած. գիւղը համաբուում էր անթաթեյոյս: Մնացածները աղ ու հացով դիմաւորեցին մեզ ի նշան օրհնապահութեան: Սրտերում, ի հարկէ, «աղ ու հաց» չունէին...

Սպարապետի, բարձր հրամանատարական կազմի, պատասխանատու գործիչների հետ ունեցանք խորհրդակցութիւն: Այստեղ տրամադրութիւնը դեռ ռազմական էր: Ոչ ոք չէր ուզում մտածել նահանջի մասին: Գնդեւազի բարձր դիրքերից երեւում էին Հայոց Ձորի լեռները ու հովիտները: Աւելի հեռուն ընկած էին Միլի Ձորն ու Կոտայքը Բաչ Գառնիի քաջերով: Էլ աւելի հեռուն՝ Երեւանը, որ մոգական ուժով իրեն էր քաշում ամէնքի սրտերը: Նահա՞նջ — ոճիր էր մտածել: Կը մնանք այս դիրքերում, տեսնենք ինչ կը լինի, միայն թէ օդնական ուժ պէտք էր հասցնել...

Օդնական ո՛ւժ... Առանձին տեսակցութեան միջոցին Կուռոն ցոյց տուեց ինձ Լեռնահայաստանի սպարապետից նոր ստացուած գրութիւնը՝ ուղարկուած յատուկ սուրհանդակով ի պատասխան իր դիմումի օդնական ուժ հասցնելու մասին:

— Ասուած եւ իմ հոգին ձեզ օդնական:

ARAM webaram.com

Կուռոն չէր իմանում՝ ինչ ասել, վրդովուե՞լ, թէ խնդալ։

— Շատ բարի, Աստծուն դնեմ Գնդեւապի դիրքերում, հոգին էլ՝ Բորիսովկայի դիրքերում, թշնամո՞ւ դէմ ինչ հանեմ, սրախօսում էր նա։

Կուռոն ըմբռնում էր կացութեան լրջութիւնը, բայց չէր կարող հաշուի չառնել ե՛ւ զօրքի ու իր չրջապատի տրամադրութիւնը։ Վախ չունէր բնաւ, համարձակ նայում էր իրականութեան երեսին եւ, իբրեւ կարզապահ ու քաջ զինուորական, անվախ հետեւում էր ճակատագրի անօրինութեան։ Արդէն ամէն զինուորական ճակատագրապաշտ է որոշ չափով...

— Զմռռանաք մեզ, եղաւ Կուռոյի վերջին խօսքը, երբ համբոյրով բաժանուում էինք իրարից։

Մոռանա՞լ... կարելի՞ էր մոռանալ։

Անչուշտ, պիտի գրուի այդ վիպական օրերի պատմութիւնը։ Եւ սիրելի Կուռոյի ու նրա արիասիրտ զինակիցների գէմքը կը ներկայացուի բովանդակ պայծառութեամբ։ Մեզ, նրանց ժամանակակիցներիս ու գործակիցներիս պարտականութիւնն է վառ պահել մեր սրտերում նրանց յիշատակն ու բարձր ոգին։

Մոռանա՞լ... Ամբողջ ճանապարհին, Զանգեզուրի հետագայ բոլոր թախառումներիս ընթացքին ականջիս հնչում էր Կուռոյի վերջին խօսքը.

Զմռռանաք մեզ...

Որքան որ գուարթ էր մեր ուղեւորութիւնը Զանգեզուրն ի վեր, այնքան տխուր եղաւ վերադարձը դէպի վար։ Տաթեւին չհասած, երբ ձիուս հանգիստ տալու նպատակով՝ ոտքով կարում էի վերելքը, ինձ միացաւ մոթալ փափախով, անուշ երկար զաւազանը ձեռքին, մի պիղպզի։

Բարեւեց ու լուռ քայլեց հետս։ Ուզում էր մի բան ասել, բայց չէր համարձակւում։

Ես էլ չէի ընդառաջում։ Անխօս քայլում էինք կողք-կողքի։

Վերջապէս, չդիմացաւ։ Խզեց լռութիւնը։

— Էն ա, տեսնո՞ւմ ես, զաւազանը մեկնելով մի կողմ՝ ասաց նա զանգեզուրցու այնքան ինքնատիպ բարբառով, որ, դժբախտաբար, անզօր եմ վերարտադրելու։

— Էն քա՞րը, ցոյց տուի ես զաւազանի ուղղութեամբ։

— Հա՛, էն քարը... էդ քարի տակ մեր տղերքը չարդեցին Սեվիմի թուրքերին...

ARAM webaram.com

Ո՛վ էր Սելիմը, ե՞րբ, ի՞նչ բանի համար ջարդեցին։ Ո՞վ էր ջարդողը։

Ծերուկը բացատրեց. հայ-թաթարական կռիւների չրջանում, Սելիմի խումբը, յանդուգն յարձակումներով, մեծ վնասներ էր հասցընում հայ գիւղերին։ Քեռի՞ թէ Դրոյի մարտիկները — լաւ չեմ յիշում— թակարդն են ձգում Սելիմին եւ մինչեւ վերջին մարդը կոտորում՝ մեծ ցնծութիւն պատճառելով հայ գիւղացիներին։

— Գո՞հ ես, որ ջարդեցին, հարցրի ես։

— Բա՛, ո՞նց թէ գոհ եմ։ Ի հարկէ, գոհ եմ, Աստուած նրանց արեւը վառ պահէ։

— Իսկ Անդրանի՞կը, հետաքրքրուեցի ես, նրա՞ արեւը ինչպէս է։

— Աստուած նրա փափախն էլ միշտ գլխին պահէ, խիստ մարդ էր, խօսք չկայ, ամա — ուրիշ մարդ էր։ Էն ա, դիտո՞ւմ ես, — գաւազանը երկարեց Իշ Թաիրլարի ուղղութեամբ, — մաքուր է հիմա։ Փափախդ դիր գլուխդ՝ անցիր, մտիդ դիպչող չի լինի։

— Հապա Նժդեհի մասի՞ն ինչ կ'ասես։

— Մեր սպարապե՞տը, խնդաց նա քթի տակ. դէ՛, էն մերն ա, ոնց որ մեր արիւնից լինէր, Անդրանիկ չի...

Առհասարակ, Նժդեհի մասին ջերմ կարծիք կար գանգեզուրցիների մէջ, ե՛ւ սիրում էին նրան, ե՛ւ մի քիչ վերից էին նայում վրան։ Ինքը Նժդեհն էլ լաւ էր ըմբռնել գանգեզուրցիների հոգեբանութիւնը։ Իր դերը աւելի կազմակերպական-ցուցական էր. երկրի զինուորական ու քաղաքացիական զօրքը հիմնուած էր վաշտապետական դրութեան վրայ։

— Անդրանիկը անհաւատ օտարի արիւնը թափեց, Աստուած զօրաւոր պահէ նրա բազուկը, մեղմ ձայնով, բառեր փնտռելով, ասաց իմ ուղեկիցը։ Համա էսօր հայը հայի արիւնն է թափում...

Ու նայեց դէմքիս կասկածով. ուզում էր հասկանալ՝ սխալ տեղ չէ՞ր ձգել կարթը։

— Այո՛, լաւ չէ, որ հայը հայի արիւն է թափում, բայց ո՞վ է յանցաւորը, անորոշ հարցումով պատասխանեցի ես։

— Ո՛վ է յանցաւորը — Աստուած դիտէ։ Դիտո՞ւմ ես. Աստուած ասաց. «կայէն, ո՞ւր է եղբայրդ Աբէլ»։ «Ես ի՞նչ իմանամ», պատասխանեց կայէնը։ Անօրէնը գիտէր, ուր էր եղբայրը... Ես ի՞նչ իմանամ ով է յանցաւորը։ Էսի յանցաւոր ե՛ն. եղբայրը եղբօր արիւնը չի՛ թափի։

— Հրամանքդ ո՞վ կը լինես, փոխեց նա խօսքը։

ARAM webaram.com

— Վարժապետ եմ, Երեւանից. գնում եմ Տաթեւ ուխտի...

— Չա՛, Երեւանից ուխտաւորներ չատ կեան ու անցան... Ուխտդ ընդունական լինի... Դէ՛, իմ ճամբան էս կողմն ա: Ուխտդ ընդունական լինի...

Ցայտնապէս ձեռք էր առնում ինձ: Ընկերներս հասան: Մտախոհ հեծայ ձիս: Անշուշտ, վախենում էր ծերուկը պարզ արտայայտուելու, ով է իմանում, թէ ինչ մարդ է երեւանցի վարժապետը... Բայց եւ այնպէս իր ասելիքը ասաց. «Եղբայրը եղբօր արիւնը չի թափի»: Իսկ ի՞նչ էինք անում մենք: Ո՞վ էր յանցաւորը: Մենք գիտէինք, թէ մենք չենք յանցաւորը: Թշնամին էլ համոզուած էր, թէ ինքը չէ յանցաւորը: Զանգեզուրցի գիւղացին այլ կերպ էր դատում. «Լոխ յանցաւոր են»: Հիմա այդպիսիներին ասում են քողարկուած բոլշեւիկ կամ ուղեկից...

Որքան հեռանում էինք ռազմաճակատից, վար, Մեղրիի ուղղութեամբ, այնքան աւելի զգացւում էր ժողովրդի տրամադրութեան փոփոխութիւնը: Այլեւս մեզ աղ ու հացով չէին ընդունում: Նոյն իսկ խուսափում էին մեզ հետ շփում ունենալուց. նշանակո՞ւմ էր այդ, թէ նրանք մեզ չէին համակրում: Ի հարկէ, ոչ: Բայց գիւղացին ամէն տեղ մխեւնոյն հոգեբանութիւնը ունի — կասկածամիտ, խոհեմ, զգուշաւոր: Ինչո՞ւ անցաւ գլուխը աւետարանի տակ դնել: Հապա եթէ տակից մի վատ բան դուրս գա՞յ: Սրանք գնալական են, գալիքը դաժան ուժ է, ինչո՞ւ ի դուր տեղը կասկածելի դառնալ:

Ճակատէնում էր կարծեմ, ոչ, յաջորդ գիւղում, ուր հասել էինք երեկոյեան, մտածում էինք պիշերելու մասին: Անախորժ անձրեւ էր մաղում: Գիւղացիք խումբ-խումբ, տների ճակատին, անիսա դիտում էին մեր երթը: Ոչ ոք չբարեւեց: Ո՛չ ոք բերան չբացեց հրաւիրելու համար տուն պիշերելու: Ոչ ոք չառաջարկեց մի պատառ հաց: Անձրեւը մեզ անխնայ թրջում էր: Օրը արդէն մթնելու վրայ էր: Մի խումբ հայեր անցնում էին գիւղից եւ օթեւան ու հաց չէին գըտնում — կարելի՞ բան էր, որ մէկը չհրաւիրէր: Ամէնքս ապրուած էինք, բայց առանձնապէս վրդովուած էր Լեւոն Քալանթարեանը: Նա սկսեց կշտամբել ու հայհոյել գիւղացիներին ծանր խօսքերով, բայց ես արգելեցի. իմ կողմից եւս յանդիմանելով մեզ դիտող մարդկանց: Այստեղից ու այնտեղից լսուեցին հրաւէրներ իրենց տունը իջնելու, բայց ես այնքան վրդովուած էի, որ մտրակեցի ձիս եւ առաջ անցայ:

— Զեզ լինի ձեր հիւրասիրութիւնը, ամօ՛թ ձեզ...

Հրաւէրները, բարձրաձայն, աւելի չատացան, ներողութեան

ARAM webaram.com

խօսքեր, բայց ես չէի ուզում լսել, ձին քշեցի առաջ. միւսները հետևեցին...

Արշէն մթնել էր: Ճանապարհը անցնում էր նօսր անտառի միջից, նեղ կածանով. վերից մաղում էր պաղ անձրևը: Մո՛ւթ, մաութը, որ կոխէին աչքդ, չէիր տեսնի...

Ինչքա՜ն ժամանակ էր անցել, չեմ կարող ասել: Գնում էինք լուռ, ամէն մէկս թաղուած իր մտքերի մէջ, որոնք, ի հարկէ, զբաղրթ չէին: Մթութեան մէջ անհնար էր ձին վարել. ես թողել էի սանձը՝ վստահելով ձիուս բնազդին: Նա փոնչացնելով՝ առաջ էր շարժում դանդաղ՝ զգուշութեամբ փոխելով քայլերը: Մէկ էլ, յանկարծ, կեցաւ, յետ-յետ շարժուելով: Քաշեցի սանձը եւ ասպանդակը սեղմեցի կողքին. առաջ չշարժուեց: Սանձը նորից քաշեցի, սեղմեցի ոտներս, մնաց անշարժ:

Ընկերներս շարքով կանգնած էին յետեւում. կածանը նեղ էր երկու կողմի քարքարոտների միջեւ. ո՛չ մէկը չէր կարող անցնել առաջ: Մնացինք մեր տեղը անշարժ. ձիուց իջնելն էլ վտանգաւոր էր...

Անձրեւը մաղում էր անխնայ՝ թափանցելով մինչեւ մեր ոսկորները: Ձիս յամառութեամբ մերժում էր առաջանալ: Անտանելի էր...

Կարծես նիրհել էի: Աչքս որ բացի, սկսում էր լուսանալ: Եւ սարսափով տեսայ, որ ձիս կանգնած էր մի ժայռի գլխին եւ առջեւը բացւում էր անյատակ, ահաւոր մի անդունդ: Մի քայլ եւս, մի անզգոյշ շարժում, եւ ձի ու ձիաւոր՝ կատը-կատը կը լինէինք վիթխարի վիհի քարերի վրայ: Ապշահար նայում էին եւ իմ ընկերները յետեւից: Ձիու բնազդը մեզ փրկեց սոսկ մահից...

Այնուհետեւ ես միշտ հնազանդ մնացի ձիուս: Երբեք չմտածեցի, բանի ուժով չսոխեցի, որ առաջ երթայ. սանձի շարժում եւ յորդոր չրթունքներով՝ բաւական էին, որպէսզի խելացի կենդանին տիրոջ կամքը կատարէր: Եթէ չէր հնազանդում, նշանակում էր մի արգելք կար...

Վաղ պատանութեան օրերիս ես շատ էի սիրում ձի հեծնել: Յատկում էի, առանց թամբի, դաշտում արածող ձիու մերկ մէջքը եւ բաշից ամուր բռնած՝ թռչում էի դէմքս քամուն տուած: Իմ սիրական Ձալիկը, որ զժուարութեամբ էր պապում ուրիշներից, իմ տակը հեզ ու հնազանդ էր դառնում պէս-պէս. բաւական էր, որ ոտներս սեղմէի կողերին եւ չրթունքներս շարժէի, կը սկսէր վազել արագ՝ զգուշութեամբ տանելով իր թանկագին բեռը...

ARAM webaram.com

Ու մի օր, երբ ըլրի գագաթից սրարչաւ ինձ իջեցնում էր վար, սայթաքելով ընկաւ առաջին ոռների վրայ: Ես թաւալլոր զարնուեցի գետին եւ մնացի անշարժ: Նուաղե՞լ էի: Երբ աչքերս բացի, տեսայ մօտս կանգնած Զալիկին, որ դունչը քաշում էր երեսիս եւ անհանգիստ խրխնջում: Ինձ թուաց, թէ նա ժպտում էր, երբ տեսաւ որ վեր էի կենում ընկած տեղիցս...

Ճանապարհի միւս մասը, Մեղրի գետի հովտով, դէպի Արաքսի եզերքը այլեւս նորութիւն չէր պարունակում. նոյն լեռները հայ գիւղացիների հօտերով ու վրաններով, նոյն անդնդախոր ձորը, նոյն կիպիչ արեւը մեր գլխին: Բայց նոյնը չէր մեր տրամադրութիւնը. մենք հեռանում էինք հայրենի երկրից, գուցէ ընդմիշտ, այլեւս երբեք չտեսնելու համար բնութեան այս հարազատ տեսարանները:

Արաքսի ափը դեռ չէր մերկացել միւս եզերքը անցնել ձգտող մարդկանցից, որոնք խումբ-խումբ, արեւի տակ, իրենց հերթին էին սպասում յեղյեղուկ լաստերի վրայ տեղ գրաւելու համար: Գաղտնի կերպով, որպէսզի ուրիշները չտեսնեն, մի քանի հոգ լեցրի գրպանս — որ ինձանից անբաժան մնաց հետագայ կեանքիս պայծառ ու մռայլ օրերին — գաղտնի լեցրի գրպանս ու... կէս ժամ վերջը միւս ափին էինք, պարսկական Դուզալում: Եռեւը մնաց կամուրջներ չհանդուրժող Մայր Արաքսը: Միւս ափին՝ աննման Մեղրին, Մեղրի գետի կանաչ հովիտը իր անզուգական գեղեցկութեամբ: Աւելի հեռուն՝ Զանգեզուր, Հայոց Ձոր, Արարատեան դաշտն ու հայ ժողովրդի աննզատու Արագածը ջրառատ: Երեւանը որբացած, զրնգուն Զանգուի բարձունքին: Եւ Երեւանի դիմաց՝ Մասիսը վեհափառ, արծուն պահակը Հայոց Աշխարհի, իր զարաւոր խոհերով...

Մէկ էլ պիտի տեսնէի՞նք այդ ամէնը, թէ՞ նորից երազների աշխարհ պիտի դառնար մեզ համար հայրենիքը, որի համար այնքա՞ն աշխատել, աքնել ու չարչարուել էինք, պայքարել, քրտինք եւ արիւն թափել: Պիտի տեսնէի՞նք նորից...

Այդ դիշերը անցկացրինք ագռաո — բայց ագռաո — Դուզալում:

Օտար եզերքին, ողջ դիշերը անքուն, անցեալի խոհերով ես դեռ չնչում էի հայրենի օդը, ապրում էի հարազատ ժողովրդի մէջ, անցեալի խոհերով եւ ապագայի յոյսերով: Ինչ որ ունէինք՝ էլ չկար: Ի՞նչ էր խոստանում մեզ ապագան...

Տասնեակ տարիներ են սահել-գնացել այդ օրերից: Ի՞նչ է կատարում այժմ Զանգեզուրի լեռներում — ես չգիտեմ: Բայց պիտեմ հաստատ, խորապէս հաւատացած եմ, որ եթէ այսօր պատահէին մեզ

ARAM webaram.com

հայ եւ օթեւան մերժող զանգեզուրցի գիւղացիները, լալով թողուԹիւն պիտի խնդրէին այն գիշերը մեզ պատճառած ցաւի համար:

Գիտեմ եւ խորապէս հաւատում եմ, որ այն իմաստուն գիւղացի ծերուկը, Տաթեւ չհասած, եթէ մէկ էլ հանդիպէր մեզ, պիտի չդանդաղուէր, որ հայը հայի դէմ է ելել — այնքա՛ն անիրաւութիւն եւ չարիք տեսաւ հայը իր եղբայր հայից:

Խորապէս հաւատում եմ նաեւ, որ Զանգեզուրը վաղը, ուշ կամ կանուխ, — ողջ Հայաստանի հետ միասին, ի հարկէ, — նորից կը լինի ազատ եւ հպարտ, ինչպէս իր ազատ եւ գեղեցիկ բնութիւնը, ինչպէս քաջ եւ հպարտ զաւակները իր:

Ժամանակները յղի են խորհուրդներով:

Պիտի հնչէ նորի՛ց ազատութեան երգը Զանգեզուրի լեռներում...

1936, Սաո Փաուլո
Բրազիլ

ARAM webaram.com

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

I.

ԲՐԱԶԻԼԱՀԱՑ ՀԱՄԱՅՆԱՎԱՐԸ

1936ին, ճակատագիրը ինձ նետեց Հարաւային Ամերիկա։ Առաջին ոտքս կոխած երկիրը եղաւ Բրազիլ։

Փոքրիկ հայ գաղութ կար Ռիօ դէ Ժանէյրոյում, ինչպէս ամէն տեղ հեռաւոր երկրներում, հայրենակարօտ ու սրտալի, որ գրաւեց եւ իմ սիրտն էլ։

Իմ սիրտը գրաւեց նաեւ ինքը, Ռիօ դէ Ժանէյրօ քաղաքը իր բնութեան հեքիաթային գեղեցկութեամբ։ Անկարելի էր չհիանալ եւ անկարելի է մոռանալ համայիլ Ռիոն։

Իմ յիշողութեան մէջ, սակայն, առանձին տեղ է բռնում մի մարդ, որի անունը մոռացել եմ, բայց որ խորապէս յուզեց ինձ։

Պանդոկի վարի սրահում դիտում էի մի անցորդ նկարչի ցուցադրած իւղանկարները, երբ ինձ մօտեցաւ մի պարոն։ Բրոնզէ դէմք, փայլուն աչքերով, գանգուր, սեւ մազեր, բայց վիզը արեւահար, բարակ, նուրբ չրթունքներ, տիպար հայկական քիթ ու թեթեւ, անփոյթ հագուստ — գրաւ կը գայի, թէ զտարիւն բրազիլիացի էր։

— Բարեւ ձեզ, արտասանեց օտարացած հայերէնով։

ARAM webaram.com

Ես, յանկարծակիի եկած, չկարողացայ անմիջապէս պատասխանել։

— Չեմ զարմանար, որ կը զարմանաք։ Հայի նման չե՞մ. բայց հայ եմ։ Այս անգամ նկատելի էր նրա խարբերդցիական չեշտը։

— Ո՛չ միայն հայ էք, այլ եւ խարբերդցի՞...

Ի՞նչ կարող է պատահել, երբ երկու հայեր իրար են հանդիպում հեռաւոր, օտար մի երկրում։ Ջաչուեցինք ընդարձակ սրահի մի անկիւնը, կակուղ բազմոցի վրայ կողք-կողքի, ու սկսուեց հարց ու փորձը։ Առաջին քառորդ ժամը անցաւ փոխադարձ ծանօթութեամբ, յաջորդ կէս ժամը վերածուեց վիճաբանութեան եւ վերջին տասնըհինգ վայրկեանը յատկացուեց ջերմ ու սիրալիր բաժանումի։

Այո, ծագումով խարբերդցի էր։ Կիրթ, զարդացած, շատ կարդացած, համակրելի մի ազամարդ, երեւոյթով 35—40 տարեկան։ Ի՞նչ էր զբաղումը — չասաց։ Վերջը, սակայն, պարզուեց. Բրազիլի Ամանաեան եղբօրը վերից վար ոտքի տակ էր տուել՝ հեռու հայկական չրջանակներից։ Զծածկեց՝ համոզումով համամիտ էր եւ հիացում ունէր Թուսասատանի հանդէպ։ Ինչ որ Մոսկուան էր ասում՝ արբազան պատգամ էր իրեն համար։ Ինչ որ Մոսկուան էր անում՝ լաւ էր անում։

— Բայց ես հակառակորդ եմ համամիտներին, դիտել տուի ես։

— Գիտեմ եւ ատոր համար փափաքեցայ տեսնել ձեզ։ Կ'ուզեմ, որ պատմէք Հայաստանի մասին։

Պատմեցի։ Պատմեցի նրան, թէ ինչ խաղեր խաղացին բոլշեւիկները Հայաստանի դլխին, թէ իրապէս ինչ է իր հիացումի առարկայ ռուս համամիտութիւնը։

Հաւատա՞ց։ Ի հարկէ, ոչ։ Աբտասահմանի համամիտը չի կարող տարհամոզուել, մինչեւ որ սեփական աչքերով չտեսնէ իրականութիւնը։ Չի կարող չառարկել ու վէճի չբռնուել։ Ու մենք վիճեցինք՝ նոյն իսկ կծու ածականներ փոխանակելով։

Հետաքրքրականը, սակայն, վերջն էր։

— Ներողութիւն կը խնդրեմ, ասաց նա, ձեզ վշտացուցած ըլլալուս համար։ Հազար ներողութիւն։ Ինչ որ ըսիք ձեր համոզումն է։ Ինչ որ ես ըսի՝ իմ համոզումն է։ Ես եկայ ձեր քով, որ Հայաստանը տեսնեմ, Հայաստանը չօշափեմ — չնորհակալ եմ ատոր համար։ «Դուն հայ, ես հայ՝ չկայ մեր մէջ խորութիւն», եզանակով արտասանեց ծանօթ երգի բառերը։

— Դուք հայերէն ե՞րբ ալ գիտէք։

ARAM webaram.com

— Ֆահ, քահ, քահ, ծիծաղեց նա: Շարականն ալ պիտեմ ու յաճախ կ'երգեմ ալ: Գիտէ՞ք, երբ Բահիայի լեռնեռուն մէջ սեւամորթներուն համաչխարհային յեղափոխութեան եւ համայնավարութեան մասին կը խօսիմ ու վերջը իմ սենեակը կը քաշուիմ, այնքա՛ն պահանջ կը զգամ հայերէն երգելու: Ու կ'երգեմ «Բամբ սրոտան», «Արիք Հայկազունք» ու շարականներ մօրմէս ինծի ժառանգութիւն մնացած:

— Կը սիրէ՞ք հայերէն մեղեդիները:

— Կը սիրե՞մ... կը պաշտեմ ամբողջ հոգիով: Եւ մի՛ զարմանաք, եթէ ըսեմ — կ'երգեմ ու կու լամ...:

Տարօրինակ համայնավար, որ շարականներ է երգում եւ լալիս:

— Գուցէ աղօթում էլ էք, հարցրի ես հեղնանքով:

— Ոչ, չեմ աղօթեր — մի հեղնէք: Ձեմ հաւատար Աստծոյ գոյութեան: Եթէ Աստուած գոյութիւն ունենար, ես այսօր Հայաստան կ'ըլլայի:

— Բայց ինչո՞ւ Հայաստան չէք երթար. չէ՞ որ հոն ձեր ընկերներն են այժմ:

— Այդ տարբեր խնդիր — մի՛ հեղնէք... Օր մը կ'երթամ: Բոլոր հայերը կ'երթան... Պէտք է երթան...

Եւ թախիծ կար աչքերում: Եւ կարօտ խօսքերի մէջ: Եւ նուրբ չրթունքները դողում էին: Հայի թախիծը, կարօտն ու դողը օտարութեան մէջ:

— Սիրելի բարեկամ, ասացի նրան պինդ սեղմելով ձեռքը, Աստուած պահէ քեզ եւ լսէ քո խօսքը: Քո երազիդ արժանանաս:

Ու բաժանուեցինք, ինչպէս բաժանւում են անծանօթ ճանապարհների վրայ պատահաբար իրար հանդիպած երկու հայեր օտարութեան մէջ:

Շարաթներ վերջը, Սան Փաուլոյում ինձ այցելութեան եկաւ մի երիտասարդ, յար եւ նման առաջինին, որ նոյնպէս բրազիլիական համայնավար էր: Հայաստանի մասին չխօսեց, ոչ էլ վէճի բռնուեց հետս: Ձամեստ ու յարգալից մի քանի խօսք միայն արտասանեց: Եւ արա աչքերում էլ ես տեսայ նոյն թախիծն ու կարօտը, չրթունքների նոյն դողը, երբ ես խօսեցի Հայաստանի ու հայ ժողովրդի մասին: Ո՞վ գիտէ, գուցէ սա էլ համայնավարական քարոզից յետոյ, իր սենեակում հայերէն շարականներ էր երգում ու լալիս: Մարդու հոգին անհուն ովկիանոս է՝ լի գաղտնիքներով եւ անիմանալի խորհուրդներով, ո՞վ կարող է թափանցել մարդու հոգու խորքերը...:

ARAM webaram.com

II.

ՃՈՐՃ ՈՐԶԳԱԼԱ ԹԱՀԱՆ

Սան Փաուլոյի հայերը արքայական ընդունելութիւն ցոյց տուին ինձ 1936ին: Եկել էին յատուկ գնացքով մինչեւ Սանթոս նաւահանգիստը՝ հոգաբարձութիւն, դպրոցի ուսուցիչներ, հայրենակցական, Հայ կարմիր Խաչ, ընկերներ եւ ընկերուհիներ, համայնքի հովուի գլխաւորութեամբ, եռագոյն դրօշի հովանու ներքեւ:

Առանձնապէս յուզիչ էր ընդունելութիւնը Սան Փաուլօ քաղաքում: Կայարանում խռնուած էր մեծ բազմութիւն եւ դպրոցի աշակերտութիւնը դրօշակներով ու ծաղիկներով: Օտարները զարմանքով դիտում էին այս եռ ու դեռը, բայց ամենից աւելի ես էի զարմացած: Այսպիսի ցոյցերի ես ոչ ապառում էի, ոչ էլ արժանի էի համարում ինձ: Սակայն, չուռով գլխի ընկայ, որ իմ անձը առիթ էր միայն: Իմ տեղը ուրիշ այցելուի վերաբերմամբ էլ, հաւանաբար, նոյնը պատահէր: Հայրենիքից բազմահազար մղոններով հեռու, հայրենիքի կարօտը յորդացած սրտերում, Սան Փաուլոյի հայրենակիցները հոգեկան պահանջ ունէին իրենց հայրենասիրական բուռն զգացումներին ազատ ելք տալու: Ինձ մնում էր համակերպուել եւ պարկեշտօրէն կատարել ինձ վիճակուած դերը:

Յաջորդ առաւօտից սկսուեցին պաշտօնական այցելութիւնները պատուիրակութիւնների եւ անհատների: Եւ արտորոշապէսը, մեծ մասամբ, մեր պատուական ընկեր Գիւտ Մխիթարեանն էր՝ կենտրոնական դէմքը Սան Փաուլոյի հայութեան մէջ:

Անհատ այցելուներից առանձնապէս իմ ուշադրութիւնը գրաւեց միջահասակ, ամուր կազմուածքով, կենդանի աչքերով եւ լուրջ արտայայտութեամբ, եօթանասունին մօտեցող մի պարոն:

— Ճորճ Ըրզդալա Թահան, ներկայացրեց Գիւտը, Սան Փաուլոյի հայ գաղութի ամենահին եւ յարգելի անդամներէն:

Ձեռքերի չափ սեղմում եւ... իմ դիտցած լեզուներից ոչ մէկը նա չէր իմանում, ես էլ անծանօթ էի նրա գիտցած փորթուգալերէնին, արաբերէնին ու թուրքերէնին: Գիւտը առանձնեց Թարգմանի պաշտօնը մեր միջեւ:

Մի քանի սիրալիր խօսքեր երկուստեք, մի քանի հարցումներ, եւ նոր այցելուները յետ մղեցին նրան:

Ինձ հետաքրքրեց այդ մարդը: Գիւտից եւ ուրիշներից, վերջը եւ իրենից ես ստացայ նրա մասին տեղեկութիւններ:

ARAM webaram.com

Ճորճ Ռըզդալան 43 տարի էր, որ ապրում էր Բրազիլում: Գաղթել էր Հալեպից: Պանդուխտ ասուննցիի զաւակ էր: Արաբախօս: Եկել էր, իբրեւ երկաթագործ համեստ արհեստաւոր: Աչխատել էր հային յատուկ ջանասիրութեամբ եւ շահած դրամով աժան հողեր էր գնել Սան Փաուլոյի ծայրում:

Տարիների ընթացքում քաղաքի ծայրը գարձել էր քաղաքի կենտրոն: Երկաթագործի փոքրիկ արհեստանոցն էլ գարձել էր մեքենայական մեծ գործարան:

Այժմ Հալեպի համեստ արհեստաւորը այլ եւս Սան Փաուլոյի ամենահարուստ քաղաքացիներից մէկն էր: Ունէր մեծ գործարան: Ունէր խոշոր աներ բազմաթիւ յարկաբաժիններով: Ունէր չքեղ ապարանք հարուստների Փաուլիստանա-պողոտայի վրայ: Եւ բազմանդամ ընտանիք: Որդիները չարունակում էին հօր գործը: Կինը, հարսները, թոռնիկները չէնացնում էին նրա ստուացծային ամէն բարիքով լեցուն տունը: Ինքը սկսել էր արդէն մտածել հոգու ու նաեւ բարեգործութեան մասին:

Գաղմում էին, որ մինչեւ հայերի պանդուխտային ներգաղթը Բրազիլ, Ճորճ Ռըզդալան աւելի արար էր դրում իրեն, յարաբերութիւն էր պահում բրազիլացնակ սիւրիացիների հետ եւ նիւթապէս օգնում արաբական բարեսիրական ձեռնարկներին: Երբ, 1923ին, տեղի է ունենում կիլիկեցի հայերի գաղթը դէպի Հարաւային Ամերիկա, նրա մէջ արթնանում է ազգային զգացումը: Նա լայն աջակցութիւն է ցոյց տալիս Սան Փաուլո հասնող տարագիրներին, որա-մագրում է նրանց պատսպարան, օգնում է գործի ձեռնարկելու:

Երբ գաղութը արդէն հաստատուում է եւ սկսւում մտածել նաեւ ազգային կազմակերպութեան մասին, երբ տեսնում է դպրոց եւ եկեղեցի վարձուած չէնքի մէջ, Ճորճ Ռըզդալան խոստանում է համայնքին նուիրել հող եւ վրան չինել եկեղեցի, պայմանով որ համայնքը ինքն էլ որոշ մասնակցութիւն բերէ նիւթապէս: Սակայն, մինչեւ իմ Սան Փաուլո հասնելը այս խոստումը գործադրուած չէր ինչ որ անհամաձայնութեան կամ, աւելի ճիշտ, անհասկացողութեան հետեւանքով, Ճորճ Ռըզդալայի եւ համայնքի միջեւ:

Երբ երկրորդ անգամ, Գիւտի հետ, այցելութեան եկաւ Ճորճ Ռըզդալան, ես արդէն բաւական ծանօթ էի նրա կեանքին եւ գործին: Պահասը լրացրեց ինքը յաչորդական տեսակցութիւնների միջոցին:

Ինդրեցի պատմել իր անցեալի մասին: Կրկնեց ինչ որ ես արդէն գիտէի: Եւ պատմութեան ընթացքին, յաճախ, առանձին չէչտով արտասանում էր՝ ասսուցլի: Հպարտ էր, որ ծագումով քաջ ասսուն-

ARAM webaram.com

ցիներից էր: Իր յաջողութիւնը կեանքում բացատրում էր միայն մէկ բանով՝ աշխատասիրով: Աչխատող ձեռքը չի մուրայ, իսկ հայը ի ծնէ աշխատասէր է: Աչխատանք եւ խնայողութիւն: Ուրիշներ դրամ էին վատնում եւ ամբողջը ծախսում օրը օրին: Ինքը չահած դրամով հող էր գնում: Ամէն հայ, եթէ կամենայ, կը հարստանայ, որովհետեւ հայը ընդունակ է, նախաձեռնող է եւ խնայասէր: Այս էր իր կեանքի փիլիսոփայութիւնը:

— Դուք տեսէք սա մեր Սան Փաուլոյի հայերը, ասում էր նա դժունակութեամբ, ի՞նչ էին, երբ եկան այստեղ եւ ի՞նչ են այժմ: Երբ նաւից ափ իջան, դեռ կարպին չտեղաւորուած, չուկայ եկան. մէկը մի արկղ եւ մի խոզանակ առած փողոց գնաց կօշիկ ներկելու, միւսը ասեղ ու կոճակ սկսեց ծախել, երրորդը սոխ ու կանաչեղէն եւ այսօր կօշիկ ներկողը կօշիկի գործարանի տէր է, սոխ ու սխտոր ծախողը նպարավաճառի խանութ ունի, թել-ասեղի փերեզակը մեծ ապրանք է բանեցնում: Ես ուղղակի ապշում եմ հայի հնարամտութիւնից: Ո՞ր ազգի մէջ այսպիսի բաներ կարելի է տեսնել...

Եւ, իրաւի, ես էլ չուտով պիտի ապշէի՝ տեսնելով Սան Փաուլոյի հայութիւնը: Այո՛, ինչ հրաշագործ ժողովուրդ է հայը: 13 տարի առաջ, գաղթականների ակլոր եւ ընչազուրկ մի բազմութիւն, այժմ արդէն տիրական տեղ էին գրաւել Սան Փաուլօ մեծ քաղաքի տնտեսական կեանքում: Կօշիկի գործը, օրինակ, գրեթէ ամբողջութեամբ անցել էր հայերի ձեռքը: Քաղաքի ամենամեծ կերպասեղէնի գործարանն ու վաճառատունը, բազմաթիւ մասնաճիւղերով, հայ վահրամ Քէօթէնճեանին էր պատկանում: Մուրացող հայ չկար Սան Փաուլոյում: Գործաւորների թիւն էլ նուազ էր. հայերը գործատէր էին եւ տեղացիները՝ գործաւոր իրենց մօտ:

Այնուհետեւ Ճորճ Ռըզդալան յաճախ էր գալիս մօտս, եւ երկար զրուցում էինք, մեծ մասամբ, Հայաստանի եւ հայ ազգի ճակատագրի մասին: Փորձառութեամբ հարուստ եւ հաճելի խօսակից էր: Գիտէր իմաստալից եւ սրամիտ պատմութիւններ անել:

Մի անգամ ես նրան հարց տուի.

— Պարոն Ռըզդալա, ես զարմանում եմ, ի՞նչն է կապում ձեզ հայութեան հետ. դուք հայերէն չէք խօսում, հայոց պատմութեան ծանօթ չէք, հայերէն «Հայր մեր» անգամ չգիտէք, ինչո՞ւ էք ձեզ հայ համարում:

Նա, յանկարծակիի եկած, մի պահ լուռ մնաց: Ապա խնդրեց Գիւտին, որ լաւ թարգմանէ իր ասելիքը, եւ պատասխանեց.

— Կար-չկար մի ապուաւ կար: Ասուած նրան սպիտակ էր

ARAM webaram.com

ստեղծել: Բոլոր ագռաւները զարմանում էին նրա վրայ, որովհետեւ նա սպիտակ էր եւ լաւ երգիչ էր համարւում: Երբ միւս ագռաւները կանչում էին, անճոռնի ձայնով, ղա՛ա, ղա՛ա, ղա՛ա, ղա՛ա, սա, աղաւնիի պէս, կուրծքը դուրս էր ցցում եւ, աղաւնիի նման, ձայնում էր՝ վո՛ւու, վո՛ւու, վո՛ւու:

Վերջը այս խելացի ագռաւը մտածեց, թէ ինքը ագռաւ չէ, այլ աղաւնի է: Արդէն գոյնն էլ ապացոյց էր, որ ագռաւ չէր: Թողեց իր ագռաւիցներին եւ դնաց-միացաւ աղաւնիների երամին:

Եւ ի՞նչ էք կարծում՝ ինչ պատահեց: Երբ մեր խելացին փորձեց աղաւնիների հետ սիրաբանութիւն անել եւ վո՛ւ վո՛ւ երգել, բոլոր աղաւնիները յարձակուեցին վրան, կտցահարեցին եւ փետուրները փետեցին, խեղճը մնաց մերկ եւ հազիւ ազատեց կեանքը: Ու երբ վերադարձաւ իր ցեղակից ագռաւների մօտ, սրանք էլ յարձակուեցին վրան, կտցահարեցին, մնացած փետուրներն էլ փետեցին: Եւ թշուառականը մնաց մենակ՝ ո՛չ ագռաւ, ո՛չ աղաւնի:

Միտ բանին պարզ էր: Ատուած նրան ագռաւ էր ստեղծել, ի՞նչպէս կարող էր աղաւնի դառնալ:

— Ճիշտ է, հայերէն չեմ խօսում, հայոց պատմութիւն չգիտեմ, բայց հայի զաւակ հայ եմ՝ սասունցի: Հայ եմ ծնուել, հայ էլ հող պիտի մտնեմ: Կրկի՛ն հասկցնել, սիրելի բարեկամ:

Հայը, նրա կարծիքով, օտարութեան մէջ եթէ լեզուն էլ, ամէն բան էլ կորցնի, բայց հաւատարիմ մնայ Գրիգոր Լուսաւորչի սուրբ հաւատքին, միշտ կը մնայ հայ: Ինքը հաւատարիմ էր հայոց եկեղեցուն: Ապացոյց, որ Հալեպի եկեղեցու զանգակատան համար կարեւոր դռմար էր նուիրել:

Մեր սիրելի Գիւտը օգտուեց առիթից եւ ինձ դառնալով՝ ասաց.

— Պարոն Ռըզդալան Սան Փաուլոյի մէջ ալ հայոց եկեղեցի պիտի չինէ:

Ճորճ Ռըզդալան չպատասխանեց, գլուխը կախ ձգեց, եւ ինձ թուաց, թէ նրան հաճելի չեկաւ Գիւտի խօսքը: Ժամանակը չէր հասած այդ փափուկ հարցով զբաղուելու:

Մի ուրիշ անգամ Ճորճ Ռըզդալան ինքը խօսք բացեց Սան Փաուլոյի եկեղեցու մասին:

— Ճիշտ է, ես խոստացել եմ եկեղեցի չինել Սան Փաուլոյում, բայց այս մարդիկ ուզում են, որ ամէն բան ես անեմ եւ իրենք միայն վայելեն:

— Եթէ մարդ իր քրտինքից մի կաթիլ չդնէ գործի մէջ, այդ

ARAM webaram.com

դործից բան բան դուրս չի գայ, բացատրեց նա: Ես ազգի համար ո-չինչ չեմ խնայի: Ես ասացի նրանց. «Եկեղեցի կը չինեմ, բայց դուք էլ պէտք է մասնակցէք, որպէսզի չինուելիք եկեղեցու յարդը իմանաք, ձերը նկատէք: Եթէ չմասնակցէք, կը նշանակի եկեղեցին պիտի լինի Ճորճ Ռըզդալայի եկեղեցի: Այդ դէպքում, եկեղեցու վարչութիւնն էլ ինձ պիտի պատկանի. դուք դործ չունէք նրա մէջ»: Բայց չէ, սրանք ուզում են, որ եկեղեցին ես չինեմ, իրենք դրամ չտան, եւ եկեղեցին բոլորովին իրենց յանձնեմ: Այդ պայմանով ես եկեղեցի չեմ չինի: Որպէսզի եկեղեցիի յարդը դիտնան, պէտք է իրենք էլ մասնակցեն:

Ըստ էութեան ես համամիտ էի նրա հետ: Լոնդոնի եկեղեցու օրինակը աչքիս առջեւ էր, որ կռուախնճոր էր դարձել եկեղեցու տիրոջ եւ համայնքի միջեւ: Պէտք էր, որ Սան Փաուլոյի համայնքը, թէկուզ փոքր չափով, մասնակցութիւն ունենար եկեղեցու չինութեան դործում, որպէսզի իրաւատէր զդար իրեն: Եւ արդէն Սան Փաուլոյի հայութիւնը չէր խուսափում իր բաժինը բերելուց, եղածը անհասկացողութեան հետեւանք էր, ուրիշ ոչինչ:

Մի ուրիշ առթիւ ես դաղափար տուի բարեկամիս.

— Պարոն Ռըզդալա, դուք կատարեցէք ձեր խոստումը եւ չինեցէք եկեղեցին: Սան Փաուլոյի դաղութն էլ թող եկեղեցու կողքին դպրոց չինէ: Դպրոցն էլ նոյնքան անհրաժեշտ է, որքան եկեղեցին:

— Լաւ ես ասում, բայց այս մարդիկ ազգի համար չէնք չինող չեն, պատասխանեց նա: Սակայն, ինձ թուաց, թէ այս անդամ մերժումը այնքան էլ վճռական չէր: Կարծես մի բան չարժուել էր նրա հոդում:

Գիւտը դոհ էր այս խօսակցութեան արդիւնքից: Նա ամենից աւելի էր ցանկանում, որ եկեղեցու չինութիւնը դլուխ դար եւ աչխատում էր, այդ նպատակով, օդտուել իմ ներկայութիւնից:

Պէտք է ասել, որ Գիւտը իր համակրելի բնաւորութեամբ սիրուած էր ամէնքի կողմից. նրա խօսքը ազդու էր, եւ Սան Փաուլոյի հայ դաղութը չատ բանով պարտական էր նրան:

Մեկնումիս օրերը մօտենում էին: Ճորճ Ռըզդալան եկաւ մօտս հրաւիրելու իր տունը մի բաժակ թէյի: Առաջարկեց, որ հետս բերեմ իմ ուզած մարդկանց: Գիւտը ժամը հասած համարեց, իր ծրադրի իրադործման: Ասաց Ռըզդալային, որ հոդաբարձուներն էլ ուղեկցեն ինձ:

— Ուրախ կը լինեմ, պր. Վրացեանը ով ուզում է թող բերէ հետը, իմ տունը բաց է ամէնքի առջեւ, եղաւ պատասխանը:

ARAM webaram.com

Այս խօսքերն էլ բարի նշան էին Գիւտի համար:

Որոշուած օրը, ժամը 5ին, պէտք է երթայինք Ճորճ Ռըզդալայի ապարանքը «մի բաժակ թէյ առնելու»:

Ճաշեցինք մարաչցի գործարանատէր Լեւոն Աբովեանի մօտ:

Դուք երեւակայո՞ւմ էք, ինչ ասել է ճաշել մարաչցու տանը: Ընդարձակ սեղանը բեռնաւորուած էր անհաչիւ ուտելիքներով, տեսակ-տեսակ քուֆթաներ ասես, խորոված ասես, բազմաձեւ խմորեղէններ ասես, աղանդերներ եւ խմիչքներ: Մի ամբողջ զօրամաս կարելի կը լինէր կշտացնել սեղանի վրայ չարուած ուտելիքներով: Եւ դեռ յետեւից էլ բերում էին ուրիշներ:

Երեւակայո՞ւմ էք, թէ ինչ է նշանակում մարաչցու հիւրասիրութիւնը: Պիտի ուտես, բոլոր կերակուրներից էլ պէտք է ճաշակես ոչ միայն ըստ կարգի, այլ եւ ըստ էութեան: Հենց որ տկարութիւն ցոյց տուիր, ահա համակրելի տանտիկնոջ ձեռքը... «Կ'աղաչեմ, այս պատառը իմ խաթեր համար»: Չես կարող մերժել: կերա՞ր, ահա տանտիրոջ ձեռքը. «Կ'աղաչեմ, ատ ալ իմ խաթեր համար»: Պատում չկայ, պէտք է ուտես: Տանտիրոջ ձեռքին յաջորդում է մի ուրիշ ձեռք. «Ա՛ս ալ իմ խաթեր համար»: Մէկ ուրիշն էլ՝ իր «խաթեր համար»: Եւ այսպէս անվերջ...:

Երբ ճաշը վերջացաւ, ես հազիւ կարողանում էի չարժուել: Քանի չորս ժամ էր պէտք մարսելու համար...

Ճաշից յետոյ անմիջապէս մեկնեցինք Ճորճ Ռըզդալայի մօտ: Ինքնաչարժ նստելիս, համայնքի հովիւ տէր Գաբրիէլը ինձ մի կողմ տարաւ եւ աղաչական ձայնով խնդրեց:

— Պարոն Վրացեան, եկեղեցիի յաջողութիւնը ձեզմէ կախուած է: Ճորճ Ռըզդալան եւ իր տիկինը կը սիրեն հիւրասիրել եւ լաւ կը ղպան, եթէ հիւրերը չատ ուտեն: Կ'աղաչեմ չմերժէք անոնց հիւրասիրութիւնը...

Այսպէս, ուրեմն, իմ ստամոքսից էր կախուած Սան Փաուլոյի եկեղեցու կառուցումը: Բայց մենք դնում էինք «մի բաժակ թէյ առնելու»: Առանձնապէս մտահոգուելու պատճառ չկար:

Մեր երկու ինքնաչարժերը առաջ չարժուեցին. գնում էինք նուաճելու Ճորճ Ռըզդալայի սիրտը: Գնում էինք քահանան, հոգաբարձուները, դպրոցի տնօրէնը՝ Սագօ Յակոբեան, Գիւտը եւ ես՝ նուաստս, որի ստամոքսին բախտորոշ դեր էր վերապահուած այս արշաւանքում:

Փաուլիստանա պողոտայի լաւագոյն մի մասում կանգնած էր Սասունցի Ճորճ Ռըզդալա Թահանի հոյակապ ապարանքը: Սան-

ARAM webaram.com

դուխքի գլխին մեզ զրկաբաց ընդունեցին ապարանքի տէրն ու տիրուհին, իրենց զաւակների եւ հիւրերի հետ: Մեր բարեկամը ցոյց տուեց իր պալատի չքեղութեամբ եւ ճաշակով կահաւորուած բոլոր մասերը: Եւ վերջը հրաւիրեց հիւրասրահ եւ սեփական ձեռքով հրամ-



ՁՈՐԱ ՌԸԶԳԱԼԱ ԵՒ ԻՐ ՀԻՒՐԵՐԸ

ցրեց Թանկագին սիպառները, որոնց մեծութիւնը սարսուռ ազդեց վրաս: Ես սիպառ չէի սիրում, բայց կարո՞ղ էի մերժել. Տէր Գաբրիէլի աղերսող հայեացքը միշտ վրաս էր:

ARAM webaram.com

Ձմերժեցի, բայց միայն ես գիտեմ, թէ ինչ գնով։ Ամէն անգամ, երբ քաշում էի այդ վիթխարի սիզաւը, տաք քրտինք էր գալիս վրաս, եւ ականջներիս մէջ զանգակներ էին զօդանջում...

Զրոյցը չատ սիրալիր էր։ Պարոն Ռըզդալան ուրախ տրամադրութեան մէջ էր։ Մեծ որդին հաճելի պատմութիւններ էր անում։ Հովիւն ու հոգաբարձուները զոհ էին երեւում. մեր առաքելութիւնը յուսատու ճամբու վրայ էր։

Բացուեց առջեւի լայն դուռը, եւ չեմքին երեւաց տան տիկինը՝ նուրբ, ազնուական դէմքով, համակրելի մի կին, որ քիչ առաջ այնքան յարգանքով ու քաղցր ժպիտով դիմաւորել էր մեզ։ Հայերէն չգիտէր։ Խօսում էր արաբերէն ու բրազիլերէն։

— Համեցէք մեր համեստ սեղանը բաժանելու մեզ հետ։

Ճորճ Ռըզդալան մտաւ թեւս եւ առաջնորդեց դէպի սեղանատունը. միւսները հետեւեցին մեզ։

Երբ մտայ սեղանատուն, քիչ էր մնում ուշաթափուէի բացուած տեսարանից։ Ձեան պէս սպիտակ, ծաղիկներով զարդարուած անծայրածիր մի սեղան եւ Աստուած իմ, ինչեր ասես չկար վրան. այլազան խորտիկներ. տապակած թռչուններ, ձկնեղէն, մսեղէն, խմորեղէն, քաղցրեղէն, պէսպէս խմիչքներ, ինճ ծանօթ եւ անծանօթ այլեւայլ ուտելիքներ ու պտուղներ։ Եւ սրան ասում էին՝ «մի բաժակ թէյ»...

Տանտէրը սեղանի վերի գլխին եւ տանտիկինը մօտս անվերջ հրամցնում էին. «Այս էլ կերէք, այս ըտորն էլ ճաշակեցէք, սրանից էլ փորձեցէք, սրա համն էլ տեսէք»... Եւ երբ նկատում էին կոկորդիս թուլացումը, իրենց ձեռքով պատրաստում ու հրամցնում էին պատառներ. «Անուշ արէք, մի մերժէք, խնդրեմ»։

Կարո՞ղ էի մերժել։ Իմ ուղեկիցները բոլորը պինաթափ եղան, ես չարունակում էի անյողդողդ մնալ ռազմաճակատի առաջաւոր դիրքում։

Երբ վերջին «խնդրեմ, համեցէք»ը լրացաւ, եւ մենք ոտքի ելանք սեղանից, ես հազիւ կարողանում էի չարժուել։ Ինճ թուում էր, որ Ճորճ Ռըզդալայի ապարանքը հիմա փուլ պիտի գար գլխիս։

— Ճաղթանակը ապահովուած է, չչնջաց ականջիս Գիւտը ժպտուն։

Ապահովուած էր, բայց ի՞նչ գնով. Պիւռոսեան յաղթանակ...

Երբ նորից բազմել էինք հիւրասրահի կակուղ բազկաթոռների վրայ եւ նորից դինուել սոսկալիթխար սիգառներով, Ճորճ Ռըզդալան, երջանիկ դէմքով, յուզուած՝ ոտքի ելաւ եւ խօսք ուղղեց ներ-

ARAM webaram.com

կաներին.

— Այս օրը երջանիկ օր է ինձ համար: Պատմական օր: Ինձ համար բացառիկ պատիւ էր հիւրասիրել ձեզ իմ համեստ սեղանից: Այս նշանաւոր օրը յաւերժացնելու նպատակով ես խօսք եմ տալիս մեր թանկագին հիւրին Սան Փաուլոյի հայութեան նուիրել եկեղեցի: Բարի ճանապարհ եմ մաղթում մեր թանկագին հիւրին եւ խնդրում եմ վերադարձին նորից այցելել մեր քաղաքը, որպէսզի աչնան միասին եկեղեցու հիմքը դնենք:

Գիւտը իրաւունք ունէր. յաղթանակը ապահովուած էր. ապահովուած էր ի դին իմ բազմաչարչար առամոքսի...

Եթէ աչխարհում արդարութիւն գոյութիւն ունենար, պէտք է չինուելիք եկեղեցու ճակատին փորագրուէր «Շինեցաւ տաճարս այս արդեամբ մեծանուն բարերարի Տեառն Ճորճ Ռըզդալայի աքնաջանութեամբ առամոքսի բարեկամի իւրոյ»... Բայց այս աչխարհում ո՞վ է տեսել արդարութիւն...

Ինձ մնում էր ջերմ չնորհակալութիւն յայտնել եւ հրաժեչտ առնել իմ թանկագին բարեկամից:

Արժանապինից վերադարձիս ես նորից այցելեցի Սան Փաուլո, այս անգամ դերասան Ց. Զարիֆեանի հետ միասին: Եկեղեցու յատակագիծը ներկայացուած էր, բայց դեռ վաւերացուած չէր քաղաքային իչխանութեան կողմից, թէեւ չինութեան մասին այլեւս կասկած չկար: Հիմնարկէքի հանդէսը տեղի չունեցաւ իմ ներկայութեամբ, բայց Ճորճ Ռըզդալան ամէն աջակցութիւն ցոյց տուեց Զարիֆեանի ներկայացման, նիւթապէս օգնեց նրան եւ իր ընտանիքի հետ միասին ներկայ եղաւ եւ հիացումով դիտեց մեծանուն դերասանի խաղը:

Եկեղեցին չինուեց յաջորդ տարի եւ օծուեց Գարեգին Տրապիզոնի Սրբազանի ձեռքով: Ճորճ Ռըզդալայի առորակրութիւնը կրող մի հեռագիր աւետում էր ինձ այդ բարի լուրը:

Մի երկու տարի անցած, փողոցի լայնացման հետեւանքով, քաղաքապետարանը քանդեց հայոց եկեղեցին: Ճորճ Ռըզդալան չինեց նորը, աւելի գեղեցիկը: Իսկ Սան Փաուլոյի երախտապէտ հայութիւնը, եկեղեցու կողքին, կանգնեցրեց գպրոց եւ առաջնորդարան: Եւ Ճորճ Ռըզդալա Թահան հանգիստ սրտով հրաժեչտ տուեց այս աչխարհին:

Իր ապարանքը ցոյց տալիս Ճորճ Ռըզդալան բացեց իմ առջեւ բոլոր սենեակների դռները: Մի սենեակի մօտից, սակայն, անցաւ

ARAM webaram.com

առանց բանալու, ձեռքի մի չարժումով, իրը թէ անկարեւոր բան էր:

Վերջը իմացայ, որ այդ իր անձնական սենեակն է եղել, որտեղ ոչ ոք մտնելու իրաւունք չունէր: Սենեակում տեղաւորուած էին այն հազուստը, որով բարեկամս մեկնել էր Հալեպից եւ Հալեպից բերած իր դարբինի գործիքները: Ամէն առաւ, կաղանդի գիշերը, նա առանձնանում էր այդ սենեակում, հագնում Հալեպի հագուստը, առնում էր ձեռքը դարբինի մուրճը, աքցանը եւ ժամերով նստում խորասուզուած լռութեան մէջ: Այդ հնամաշ հագուստը եւ այդ պարզունակ գործիքները հիմք էին եղել նրա բարեկեցութեան ու երջանկութեան:

III.

ԴՈՆ ԽՈՒԱՆ ՊԵՆՆԷ

Կարճահասակ, դիրուկ, պինդ կազմով, ապիտակահեր, մի քիչ խորամանկ ու կենդանի աչքերով եօթանասունի մօտ մի ծերունի էր առջեւս կանգնած, Բուէնոս Այրէսի պանդոկի հիւրասրահում: Եկել էր բարի գալուստս ողջունելու:

Ամուր սեղմեց ձեռքս ու.

— Պարիե՛ւ ես եկեր տիւ մեր fեադաf...

Տէր Աստուած, կարծես Այդեստանից հենց նոր էր դուրս եկել, այնքա՛ն վանեցիութիւն էր բուրում խօսքից:

— Յովհաննէս Պեննէեան — Դոն Խուան Պեննէ, ներկայացրեց նա իրեն:

Հին եւ անուանի բուէնոս այրէսցիներից էր: Ծանօթացանք: Մի քանի խօսք միայն փոխանակեցինք. վրայ հասան նոր այցելուները, եւ վանեցի «Դոնը» հրաժեշտ տուեց՝ ուրիշ օրուայ ժամադրութիւն ապահովելով:

Իմ ուշադրութիւնը գրաւեց այդ հետաքրքրական ծերունին: Հարց ու փորձ արի նրա մասին: Եւ երբ նշանակուած ժամին նորից եկաւ, ես արդէն ծանօթ էի նրա կենսագրութեան: Վանեցի էր, Բուէնոս Այրէսում ունէր գործարան եւ ապարանքի նման տուն: Ամուսնացած էր օտարականի հետ եւ տէր էր 13 աղջիկների եւ մէկ տղայի — Պարսիս Պեննէ — որ դասախօս էր համալսարանի եւ յայտնի գրական քննադատ:

Մի քանի տեսակցութիւնից յետոյ, մենք արդէն բարեկամ

ARAM webaram.com

էինք: Ինչն էլ, որ խմբագիրն էր «Արմենիա»յի, բաւական նպաստեց մեր մերձեցման:

Ու մի օր, երբ առանձնապէս լաւ տրամադրութեան մէջ էր, Դոն Ջուան Պեննէն սիրտը բացեց իմ առջեւ եւ ներկայացրեց իր կեանքի վէպը: Հազար ափսոս, որ պիտի չկարողանամ իր ինքնատիպ վանի բարբառով պատմել այդ վէպը:

Ե՞րբ էր ծնուել, ինքն էլ չէր իմանում: Մանկութիւնն ու պատանութիւնը, մինչեւ երիտասարդութիւն, ապրել էր Այդեստանում: Եղել էր աշակերտ Խրիմեան Հայրիկի եւ Փորթուգալեանի: Մանաւանդ, խորունկ պաշտամունք ունէր Հայրիկի անձի հանդէպ:

96ի «դէպքից» յետոյ, թողել էր վանը եւ անցել Կովկաս «բախտ փնտռելու», բայց բախտը չէր ժպտացել իրեն: Եւ արդէն բախտը ե՞րբ է ժպտացել պանդուխտ հային...

Ռուսաստանում որոշ ժամանակ թափառելուց յետոյ, Ջովհաննէս Պեննէեանը, չեմ յիշում ինչպիսի հանգամանքներում, ընկնում է Հարաւային Ամերիկա՝ Չիլի: Այստեղ, վերջապէս, բախտը հասնում է նրան օգնութեան. հարստանում է: Չիլիի մայրաքաղաքում ապահով միլիոնների արժէքով կալուածների տէր է դառնում: Այլեւս Դոն Ջուան Պեննէ, ամենից յարգուած պատուաւոր քաղաքացի, ամուսնանում է չիլեցի ազնուական ընտանիքի մի աղջկայ հետ ու զաւակներ ունենում:

Ջովհաննէսը դիւրութեամբ դառնում է Ջուան, բայց վանեցու բարբառը եւ վանեցու հոգին չեն փոխում: Հայրենիքի կարօտը մաշում է նրա սիրտը: Ի՞նչպէս մոռանալ դեղեցիկ Այդեստանը, Վարագը, Վանի ծովը իր անմահական ապեխով: Ի՞նչպէս ապրել առանց հայերէն խօսք լսելու: Առանց հայ երգի: Առանց հայի երես տեսնելու:

Չի դիմանում: Ու մի օր էլ թերթերում յայտարարութիւն է տալիս. հարիւր փեսօ նուէր այն անձին, որ մի հայ բերէ մօտը: Եւ չատ չանցած՝ նրան ներկայանում է հայի անունով մէկը, խօսում է հետը հայերէն եւ առանում է հարիւր փեսոն: «Պիտի խենթանայի, ասում էր Դոն Ջուանը, ամբողջ օրը անցուցի հետը, հիւրասիրեցի ու հայերէն խօսեցայ անվերջ, կարօտս առի: Վերջը պարզուեցաւ, որ ասորի էր նզովեալը»...

Սակայն, քամու բերածը քամին էլ կը տանի: Ինչքան դիւրութեամբ հարստացել էր, նոյնքան արագ էլ կորցնում է իր հարստութիւնը:

ARAM webaram.com

Անյայտութիւնը յայտնուում է անյայտութեան, եւ ամբողջ ունեցածը գնում է ձեռքից:

Հարստութեան հետ թռչում է եւ խելքը: Բոլորից մեծարուած, պատուաւոր քաղաքացի Դոն Պեննէն այժմ խելագոռոյս թափառում է մայրաքաղաքի փողոցներում: Ամէնքը ծաղրում են նրան. «Խե՛նթ Պեննէ, խե՛նթ Պեննէ»:

Եւ մի օր՝ հրաշք: «Խենթ Պեննէն», ըստ սովորութեան, փողոցում է: Դիտում է չուրջը անմիտաստ: Յանկարծ, տեսնում է մի երիտասարդ, երկու ոտքից զուրկ, փոքրիկ սայլակում նստած, ձեռքերով առաջ է քշում սայլակը մայթի երկարութեամբ եւ զուարթ երգում ու կատակներ է փոխանակում անցորդների հետ:

Այս երեւոյթը այնքան է ազդում Դոն Խուանի վրայ, այնպէս է ցնցում նրան, որ խենթութիւնը մի վայրկեանից անհետանում է: Խելքը գլուխը, առողջ վերադառնում է տուն:

Այդ օրերը Հարաւային Ափրիկէում ազամանդի նոր հանքեր էին բացուել: Առանց երկար-բարակ մտածելու՝ հաւաքում է իր ունեցած-չունեցածը, առնում է կնոջ ու երկու աղջիկներին եւ հայդա դէպի Տրանսվալ նոր բախտ գտնելու յոյսով:

Սակայն, բախտը քմահաճ դիցուհի է. սիրում է մարդկանց գլխին խաղեր խաղալ: Դեռ ծովի վրայ, Դոն Խուանը լսում է, որ անգլեւբոէական պատերազմ է սկսուել: Այդ բաւական չէր. նաւի վրայ կինը մի աղջիկ էլ է բերում:

Երեք զաւակներով, կնոջ հետ եւ պարապ գրպանով, Դոն Խուանը հասնում է Հարաւային Ափրիկէ: Ազամանդի հանքերը յօդս էին ցնդել: Աչխատանք չկար, դրամ չկար, ծանօթ մարդ-մարդամանք չկար: Եւ ահա սկսւում են տառապանքի մռայլ օրեր: Ֆիչ էր մնում այստեղ էլ կրկնուէր Զիլիի պատմութիւնը. ազամանդախոյզ Պեննէն նորից դառնար «խենթ Պեննէ»:

Յուսահատութեան դադաթնակէտին հասած՝ Դոն Խուանը անընպատակ թափառում է Բափչուաոի փողոցներում մտամոլոր: Ու, յանկարծ, մէկը բռնում է նրա թեւից: Նաւապետն էր այն նաւի, որ Պեննէ ընտանիքը բերել էր Հարաւ. Ափրիկէ:

— Ի՞նչ ես անում այստեղ, հարցնում է նաւապետը:

Դոն Խուանը անում է իր տխուր պատմութիւնը:

— Հայդէ՛, բարեկամաբար Դոն Խուանի ուսը թօթուելով, ասում է նաւապետը, հայդէ՛, չուտ պատրաստուիր: Վաղը նաւը մեկնում է. ես կը տանեմ քեզ հետս Արժանտին:

Յաջորդ առաւօտ վաննեցի Դոն Խուան Պեննէի ընտանիքը ճա-

ARAM webaram.com

նապարհ է ընկնում Բուէնոս Այրէս: Պարապ գրպանով, անծանօթ տեղին, առանց բարեկամի, առանց արհեստի՝ Դոն Խուանը սկսում է չափել Բուէնոս Այրէսի փողոցները եւ գործ որոնել:

Եւ մի օր, մեծ վաճառատան պատուհանից ապրանքներ դիտելիս, նկատում է մի փոքրիկ առարկայ, վրան գինը 15 փեսո: Կարապի աղուամազից չինուած փոքրիկ մի բարձիկ էր կանանց երեսին բրինճափոշի քսելու համար: Հետաքրքրւում է: Հարց ու փորձ է անում: Արժանտինը կարապներով հարուստ երկիր է, աղուամազը առատ եւ աժան: Անգլիացի գրամատէրերը աժան գնով հաւաքում էին կարապի աղուամազը, տանում Անգլիա եւ անգլիական գործարաններում բարձիկների վերածելով՝ բերում էին Արժանտին սուղ գնով ծախելու համար:

Վանեցու հանճարը չարժւում է Դոն Խուան Պեննէի մէջ. ինչո՞ւ նոյն բարձիկները չպատրաստել Արժանտինում, ուր կարապի աղուամազը առատ է եւ աշխատող ձեռքերը աժան: Ջափում-ձեւում է, կնոջն էլ դնում գործի եւ մի օր բարձիկներով լեցուն զամբիւղը ձեռքին՝ ներկայանում է վաճառատան տնօրէնին:

— Դուք 15 փեսոյով էք ծախում կանանց բրինճափոշիի բարձիկները, ես ձեզ կէս գնով կը տամ, կ'առնէ՞ք:

Վաճառատան տնօրէնը կասկածով վերից վար չափում է իր առջեւ կանգնած տարօրինակ մարդուն:

— Կատա՞կ էք անում:

— Ո՛չ, ի՛նչ կատակ, համեցէք նմոյշները:

Տնօրէնը նայում է եւ փորձի համար առնում մի տասնեակ՝ հատը եօթը փեսոյով:

Բարձիկները գնում են: Ցաջորդ անգամ տնօրէնը ապսպրում է հարիւր հատ: Վերջը աւելի, աւելի ու աւելի: Այլեւս իր կնոջ ուժերը բաւական չէին, վարձում է աշխատողներ: Հետզհետէ ուրիշ վաճառատներ էլ ապսպրանքներ են տալիս: Եւ Դոն Խուանի գործը մեծանում է: Փոքրիկ արհեստանոցը դառնում է գործարան բազմաթիւ աշխատաւորներով: Դոն Խուան Պեննէն դառնում է Բուէնոս Այրէսի առեւտրական հրապարակի վրայ ծանօթ եւ յարգուած անձնաւորութիւն:

Երբ ես նրան հանդիպեցի, 1936ին, Դոն Խուանը ունէր բանուկ գործարան, պալատանման մեծ տուն եւ 13 աղջիկներ՝ հայկական աչքերով, հայկական քթերով ու հայկական անուններով, որոնք ամէնքը աշխատում էին հօր գործարանում ամսավճարով:

Մի օր, իր մօտ ճաշին, Դոն Խուանը ծանօթացրեց ինձ իր ըն-

ARAM webaram.com

տանիքին: Երկար սեղանի դիմին նստած էր տիկ. Պեննէն՝ պարզ ու համակրելի մի կին:

Սեղանի երկու կողմը շարուած էին սիրունիկ ու կենսուրախ աղջիկները, իսկապէս որ հայկական աչքերով ու հայկական քիթերով: Ինքը տանտէրը, մօտս, թարգմանում էր մեր խօսակցութիւնը եւ անվերջ հրամցնում կերակուրները:

Ամբողջ ժամանակ նա վանն ու հայ ազգն էր գովում եւ իր սրտի ցաւը լալիս. ինչո՞ւ այս աղջիկները հայ պիտի չլինէին: Եւ բարկանում էր կնոջ վրայ.

— Նզովեալ լինի: Եթէ ան հայ լինէր, տունք ալ հայ կ'ըլլային:

Կինը պատասխանում էր ներողամիտ ծիծաղով: Ծիծաղում էին եւ աղջիկները: Եւ սիրով կատակում հօրը հետ:

Երբ հայրը գովում էր հայերին, աղջիկների ծիծաղը աւելի անզուսպ էր դառնում: Հայրը բացատրեց այս ծիծաղի պատճառը:

Սկզբից ի վեր Դոն Խուանը համոզել էր կնոջ եւ զաւակներին, թէ աշխարհի երեսին հայից աւելի ազնիւ ազգ ու Հայաստանից աւելի գեղեցիկ երկիր գոյութիւն չունեն: Հայը առաքինի է, քաջ է, խելացի եւ պարկեշտ է: Աղջիկները հայի երես չէին տեսել եւ հաւատում էին հօրը առածներին:

Մի օր էլ Դոն Խուան հետը տուն է բերում համակրելի տեսքով մի հայ երիտասարդ, ծանօթացնում է ընտանիքին եւ աշխատանք տալիս իր դործարանում:

Երիտասարդը իսկապէս որ հիանալի տպաւորութիւն է թողնում Պեննէ ընտանիքի վրայ: Քաղաքավարի, հաճոյակատար եւ սիրալիր: Ուշիմ եւ լաւ աշխատաւոր:

Բայց... արհեստի գաղտնիքը լաւ իւրացնելուց յետոյ, երիտասարդը դուրս է գալիս, հաստատում է սեփական գործ եւ սկսում է մրցել Պեննէի հետ: Կոտրում է ապրանքի գինը եւ ահագին վնաս հասցնում Դոն Խուանի գործարանին:

— Խայտառակ եղայ գաւակներուս առջեւ, դանդաղում էր Դոն Խուանը գառնութեամբ, ամօթով մնացի: Նզովեալ...

Քառասուն տարի էր, որ Դոն Խուան Պեննէն հետացել էր Վանից, բայց փոխուել էր միայն արտաքինով, հոգին մնացել էր հայ, հայից էլ աւելի՝ վանեցի: Այդեստանի կամ Խրիմեանի անունները չէր կարողանում լսել առանց արտասուքի:

Ախ էր քաշում կարօտով ու թախիծով:

Հայաստանի Հանրապետութեան օրերին որոշել էր երթալ հայ-

ARAM webaram.com

բեններ: Ուզում էր մի անգամ էլ տեսնել Վանը, Այգեստանը, Վարագը, մի անգամ էլ ուսել Վանի տառերը ու խմել Շահապուր անմահական ջրին: Մտադիր էր վերջը ընտանիքն էլ, գործն էլ փոխադրել Հայաստան:

Հանրապետութեան անկումը չմեղմեցնում է նրան: Ինչ է մնում նորից խելագարուէր:

Նիւթապէս ինչո՞վ են արտայայտուել Դոն Խուանի հայրենասիրական այնքան վառ զգացումները, չգիտեմ: Տպաւորութիւնս այն էր, սակայն, որ նիւթը տեղ չունէր նրա հոգեկան դեղումների մէջ:

Մի օր եկաւ մօտս մի ծրար ձեռքին: Խնդրեց, որ կարզամ եւ տանեմ հետս մեր թանգարանում պահելու: Մի քանի նամակներ էին Մ. Փորթուգալեանից «Արմենիա»յի մասին եւ երկու հեռագիր Ֆրանսայի նախագահ Փուանքարէին ուղղուած:

Առաջին հեռագրով, Դոն Խուան Պեննէն պահանջում էր Փուանքարէից — ինքը արտասահմանում էր Փոինքիրէ — անմիջապէս օգնութեան հասնել Հայաստանին: Հակառակ դէպքում, սպառնում էր, որ Ֆրանսան էլ կ'ընկնի Հայաստանի վիճակի մէջ:

Երբ այս հեռագիրը պատասխանի չի արժանանում, երկրորդ հեռագրով Դոն Խուան անիծում է Փուանքարէին, որ չարաչար մահով մեռնի: Եւ յայտարարում է, թէ ինքը որոշել էր Ֆրանսայի վրայով անցնել Հայաստան. բայց այժմ ոտք պիտի չդնէ Ֆրանսական հողի վրայ...

— Տեսա՞ր, ասում էր նա դժունակութեամբ, Փոինքիրէն չան աստակ եղաւ, ու ես ալ երբեք ոտք պիտի չդնեմ Ֆրանսայի հողի վրայ:

Եւ, յիրաւի, Դոն Խուան Պեննէն մեռաւ առանց Ֆրանսայի հողը կոխելու: Եթէ ապրէր, իր վերջին մարզարէութիւնն էլ իրականացած պիտի տեսնէր. Ֆրանսան էլ հասաւ Հայաստանի վիճակին, վերջին պատերազմում:

Դոն Խուանը մէկ ուժեղ մտաբեռում ունէր. նա հաւատում էր, որ հայ երգը պիտի փրկէ Հայաստանը: Ֆրանսան փրկուեցաւ Մարսէյեզի շնորհիւ, ինչո՞ւ հայերն էլ պիտի չունենային իրենց Մարսէյեզը: Եւ անպատճառ գրաբար լեզուով:

Դոն Խուան Պեննէն էր, որ «Հայրենիք» ամսագրի խմբագրութեան մխամտութիւնից օգտուելով՝ խոստացել էր 30·000 փեսոյի մրցանակ հայերէն երգի համար՝ պայմանով, որ երգը լինի գրաբար եւ մէջը գործածուին Խ· ղ, ծ, ճ, եւ նման խժալուր տառեր:

Ամսագրի մէջ մի քանի անգամ յայտարարուեց այդ մասին,

ARAM webaram.com

բայց բան դուրս չեկաւ, միայն Մխիթարեաններից մի դիւրահաւատ վարդապետ ուղարկել էր գրաբար ճոռոմաբան մի ոտանաւոր...

Դոն Ժուանը սաստիկ զարմացած էր. մի՞թէ ոսկեղինիկ լեզուն հայոց մէջ այդքան մոռացուել էր. մի՞թէ հայ ժողովուրդը մտաւորապէս այդքան ընկել էր, որ մոռացել էր իր լեզուն: Նրա աչքում աչխարհաբարը արժէք չէր ներկայացնում. հայի լեզուն գրաբարն էր:

Ռէնն եւ ես չատ աչխատեցինք համոզելու նրան, որ յետ կենայ այդ ժամանակավրէպ մտքից, հրաժարուի գրաբարի պայմանից եւ գումարը յատկացնէ ընդհանրապէս հայերէն երգի ու երաժչտութեան: Անկարելի եղաւ համոզել. նա յամառ կերպով պնդեց իր պայմանի վրայ:

— Այս խորամանկ ծերուկը, ասում էր Ռէնը, մեզ ձեռք է առնում, միտքը գրամ տալը չէ, այլ իր մասին խօսեցնելը:

Եւ կարծես իրաւունք էլ ունէր: Դոն Ժուանը մեռաւ, եւ 30 հազարն էլ հետը գնաց: Ու ամբողջ հարստութիւնն էլ կորաւ հայութեան համար: Իր յետեւը մնացին հայկական աչքերով, հայկական քթերով ու հայկական անուններով 13 արժանահնչի աղջիկները եւ որդին՝ Նարսես Պեննէ, Արժանահնչի փայլուն մտաւորականներից մէկը...

Ռէնն ու ես չատ աչխատեցինք, որ մեր բարեկամը իր հարստութիւնից որոչ բաժին հանէր ազգային նպատակների համար. նա ուչադրութեամբ ու համակրանքով լսում էր մեզ եւ ժպտում քթի տակ: Հայաստանի համար Փոինքիրէին անիծող հայ հայրենասէրը, որի աչքերից արցունք էր հոսում Վանի եւ Վարագի անունը լսելիս, երբ հարցը դրպանին էր վերաբերում, քար էր կտրում:

Եւ ես ուղղակի ապչած մնացի, երբ մեկնելուցս մի քանի օր առաջ Ռէնի հետ եկաւ մօտս եւ դողդոջուն ձեռքերով դրպանից հանելով մի ծրար՝ մեկնեց ինձ — նուէր իր կողմից: Ջեմ յիչում, քանի հարիւր փեսո էր: Ես պատասխանեցի.

— Եթէ անձնապէս ինձ համար է, չնորհակալ եմ, պէտք չունեմ: Եթէ հանրային նպատակի համար է, չնորհակալ եմ, կ'առնեմ:

Նա պնդեց, որ չմերժեմ:

— Քեզի կու տամ, ինչի կ'ուզես գործածէ:

Ես այդ գումարը յատկացրի «Վէմ»ի հրատարակութեան եւ իր անունով «Վէմ»եր ուղարկեցի Սիւրիոյ, Լիբանանի եւ Ցունաստանի դպրոցներին:

Այդքանով նա իր պարտականութիւնը կատարած համարեց

ARAM webaram.com

ազգի հանդէպ։

Երբ ես նրան դիմեցի նիւթապէս նեղութեան մէջ ընկած դերասան Զարիֆեանի համար, պատասխանեց.

— Կը մտածեմ։ Բան մը կ՚ընեմ։

Եւ մինչեւ այսօր էլ մտածում է։

Այնուամենայնիւ, ջերմ զգացումներով եմ յիշում Խրիմեան Հայրիկի աշակերտ վանեցի Յովհաննէս Պեննէեանին, որ Լա Փլաթայի եպերքին դարձել էր մեծահարուստ Դոն Խուան Պեննէ...

IV.

ԶԷՅԹՈՒՆ

Բոմբէյում էինք՝ Ց. Քալջաղնունին, Լ. Շանթը, Ց. Տէվէճեանը եւ ես։ Գալիս էինք Հայաստանից Եւրոպայի վրայով Հայաստան վերադառնալու յոյսով։ Նստած Հնդկաստանի այս մեծ քաղաքում նաւի էինք սպասում, բայց նաւը ուշանում էր։ «Մեծ քաղաք՝ մեծ մենակութիւն», ասել է անգլիացի իմաստասէր Բէյկընը։

Ժամանակը, մեծ մասամբ, անցընում էինք պանդոկի ընդարձակ, ծաղկաւէտ պատշգամբում։ Դիտում էինք փողոցի երթ ու դարձը՝ յօրանջելով ոտթից եւ ձանձրոյթից։

Արդէն Բոմբէյի բոլոր նշանաւոր տեղերը դրեթէ տեսել էինք։ Նաւահանգիստ մեծ ու փարթամ քաղաք է Բոմբէյը կանոնաւոր լայն պողոտաներով, ճոխ վաճառատներով ու պանդոկներով, փարթամ ու հարուստ թաղերով եւ... անսահման աղքատութեամբ...

Բնակչութեան հարուստ եւ ուսեալ մասը կրակապաշտներ են, վտարուած Պարսկաստանից կամ փախստական։ Այստեղ նրանք ազատ պաշտում էին իրենց կրօնը։ Ես հիացումով դիտել եմ հարիւրաւոր կրակապաշտներ, այր ու կին, բազկատարած, չարականների երգով արեւածագը ողջունելիս Հնդկաց ովկիանոսի աւազոտ եղերքին...

Մեզ առանձնապէս հետաքրքրում էին Բոմբէյի ազմկոտ չուկաները, ուր քեզ կարող էին, աժան գնով, ծախել... Հնդիկ ձեռագործ հարուստի «տեղական ձեռագործ հազուագիւտ նմոյշներ... made in England!

Ուշագրաւ էին քաղաքի կենտրոնական թաղերում ընկած ընդարձակ զբօսմանոցները, ուր բնիկները տանում էին իրենց ննջեցեալներին եւ դնում որոշ տեղ առանց թաղելու։ Պարիսպների վրայ

ARAM webaram.com

թառած հարիւրաւոր անզգները յարձակում եւ յօշոտում էին դիակները: Անգլիական իշխանութիւնները չէին արգելում այդ հակառողջապահական բարբարոս սովորութիւնը: Ի՞նչ կայ որ. թող ինչ ուզում են անեն, միայն թէ հանդիսատ մնան...

Բայց հնդիկները հանդիսատ չէին մնում եւ դլուխներին տեղական կերպասից սպիտակ դլխարկներ դրած՝ ազմկոտ ցոյցերով ավարտջ էին պահանջում:

Ծանօթացանք, ի հարկէ, եւ Բոմբէյի հայ գաղութի հետ: Փոքրը էր հայերի թիւը, սեփական եկեղեցիով, հայրենասէնչ ու հիւրասէր, ազնիւ մարդիկ: Մեր ընկերը Լեւոն Սանոսեանը նրանց անպաշտօն ոգին էր եւ մեր առաջնորդը եղաւ ամէն տեղ:

Բոմբէյում անհամբեր նաւի էինք սպասում, երբ մի օր պատրչդամբ մտաւ բարձրահասակ, սպիտակ մօրուքով, դեղեցկադէմ մի ծերունի: Չէր կարող ուշադրութիւն չդրաւիրել իր վրայ, այնքա՛ն նշանակալից էին իր տեսքն ու շարժումները:

Մօտեցաւ: Հպիւ նշմարելի խոնարհութիւն արաւ, հաճելի ձայնով բարեւեց հայերէն.

— Թոյլ տուէք ներկայացնել անձս — Ջէյքուն:

կապոյտ, հրապուրիչ աչքերում չորեր էին խաղում:

Անունը ծանօթ էր մեզ. հաշիշի հռչակաւոր մաքսանենդ էր: Ճարպիկ եւ հարուստ: Գաղտնի ճանապարհներով եւ գաղտնի միջոցներով մեծաքանակ հաշիշ էր մատակարարում Զինաստանին, Մալայեան կղզիներին, Բուրմային, Պարսկաստանին: Զարմանալի պատմութիւններ էին չրջում նրա արկածախնդրութիւնների մասին: Եւ ասում էին, թէ չատ դրամ է դիզել:

Տեսքով այնքան վայելուչ, այնքան հեզ, բարի ու համակրելի ծերունի էր երեւում, կարծես նոր էր վերադարձել Երուսաղէմից՝ հոլի դարձած...

Հպիւ մի քանի խօսք էինք փոխանակել, երբ Քաջաղունեին ցուցական կերպով եկաւ տեղից ու հեռացաւ՝ նորեկի հասցէին նեռալով ռուսերէն ծանօթ փաղաքչանքը.

— Մերզաւեց — Սրիկայ:

Շանթը մնաց նստած, առանց մէկ բառ արտասանելու: Նա հետաքրքրութեամբ հետեւում էր մեր խօսակցութեան:

— Այո՛, Ջէյքուն, կարծես փարատելու համար որեւէ կասկած, կրկնեց համակրելի այցելուն: Լսած կը լինէք այս անունը, չատ էլ հաճելի անուն չէ, եւ դուք, անշուշտ, զարմացած էք, թէ ի՞նչ գործ ունի այս «մերզաւեց»ը ձեզ մօտ — պարզուեց, որ ռուսե-

ARAM webaram.com

բէն էլ դիտէր։ Եւ իրաւունք ունէք, իմ անունը կրող մարդիկ պատուաւոր հասարակութեան մէջ յարգելի չեն։ Բայց audiatur et altera pars — մարդը լսուներէն էլ դիտէր։ — Խնդրեմ, լսեցէք եւ միւս կողմը։

Եւ պատմեց իր «կողմը»։ Գիտէր խօսել զարդարուն լեզուով, հնդկահայերէն՝ սրամիտ եւ զուարճալի մանրամէպերով համեմուած։

Հին Ջուղայեցի գաղթականներէն սերնդից էր։ Իր պապը Սպահանից եկել էր Հնդկաստան։ Շրջուն առեւտրական էր եղել։ Հարբուսացել էր։ Ամուսնացել Նոր-Ջուղայից բերած աղջկայ հետ։ Զաւակներ ունեցել։ Դարձել էր փողատէր եւ պատուաւոր քաղաքացի։ Անտարբեր չէր եղել եւ դէպի ազգի ցաւը։ Զաւակներին փոխանցելով իր անունն ու դրամը եւ հայրենասիրական ոգին՝ մեկնել էր առ հաւս։

Հայրը ընկերացել էր մի անգլիացու հետ, եւ միասին վաճառատուն էին հիմնել։ Գործերը գնացել էին յաջող, բայց «անիծեալ ինգլիզ»ը կեղծ մէջոցներով դուրս էր նետել իր հայ ընկերոջ եւ յափշտակել նրա հարստութիւնը։ Խեղճ մարդը ցաւից երկար հիւանդանալով՝ նոյնպէս մեկնել էր առ հաւս։

Մեր խօսակիցը չէր կարողացել աւարտել քոլէջը։ Թողել էր դպրոցը եւ բռնել պապի ճամբան — շրջուն առեւտրական դարձել։ Թափառել էր դանագան երկիրներ. եղել էր Զինաստան, Ռուսաստան, Հարաւային Ափրիկէ՝ «բախտի յետեւից», բայց բախտ չէր գտել, մինչեւ որ ընկել էր ուղիղ ճանապարհի վրայ. դարձել էր հաշիւի մաքսանենգ։ Մի անգամ, Զինաստանում, ինչ որ մանդարինից քիչ էր մնացել սպանուէր։ Ուրիշ անգամ, Հոնկ-Կոնգում, բանտարկուել էր եւ մեծ կաշառք տալով ազատուել։ Շատ տաք ու պաղ բաներ էր տեսել, բայց բախտ չէր գտել։

Հարստութիւն էլ ունէր, պատիւ էլ հասարակութեան մէջ, բայց հոգին խաղաղ չէր։ Մի անբացատրելի թախիծ մաշում էր սիրտը։ Գիշերները չէր կարողանում քնել եւ ականջին միշտ զանգեր էին հնչում — այնքան նման Նոր Ջուղայի վանքի զանգակներին, որոնց մասին իրեն պատմել էր պապը։

Քանի գնում պատմութիւնը լրջանում էր։ Սկզբի զուարթ ու հեղնական ոճը փոխուեց։ Այժմ մի խեղճ ծերունի էր մեր առջեւ, տառապող հոգի, որ կարծես օգնութեան էր ապաւում մեզանից։

— Ընտանիք ունի՞ք, հարցրի ես։

ARAM webaram.com

Ոչ, չունէր։ Զէյթունի առհմից մնացել էր միայն ինքը։ Զէր ամուսնացել։

Եւ ինչո՞ւ ամուսնանար։ Որպէսզի ուրիշ մի ա՞զգ բազմացնէր։

Մի տարի առաջ որոշել էր դրամի վերածել ամբողջ ունեցածը եւ մեկնել Հայաստան՝ «մեր հայրենի երկիրը», բայց...

— Ես տեղից չշարժուած՝ ահա դուք եկաք։ Հայաստանի արեւը խաւարեց։

— Ո՛չ, չխաւարեց, կարեցի ես։

— Ի՞նչպէս թէ չխաւարեց, հարցրեց նա, կասկածով ու յոյսով։ Եւ կապոյտ աչքերում նորից չոզեր փայլեցին։

Որքան կարող էի, բացատրեցի նրան, թէ ժամանակաւոր է Հայաստանի դժբախտութիւնը։ Շուտով մեր հայրենիքը կրկին կը լինի ազատ։ Ցունահատուելը փոքրոգութիւն է...

Համոզուե՞ց։ Զգիտեմ, չեմ կարծում։ Բայց ուզում էր համոզուել։ Վարանումով եւս տեղից հաչիչ առածի պէս։ Մի պահ կեցաւ ու.

— Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել ձեզ։

— Ոչնչով, ոչնչով, կարեցի ես։ Հայաստանում կը տեսնըւենք, այն ժամանակ...

— Ուրեմն պիտի տեսնուե՞նք, Երեւանո՞ւմ...

— Անշուշտ։ Անպատճառ կը տեսնուենք Երեւանում...

Մեկնեց սուսերի պէս ձեռքը երեսին։ Ինձ թուաց, թէ արցունքն էր ծածկում։

Յաջորդ օր, երբ վար իջայ, պանդոկի չարաթուայ հաչիւը փակելու, անդլիացի մենեջըրը յայտնեց.

— Վճարուած է։

Հաչիչի մաքսանենգ Զէյթունը — հայրենաբաղձութիւնից տառապող հնդկահայն էր վճարել...

Երբ վերջը Քալգնունիին արի այս պատմութիւնը, զարմացած եւ ուսերը վեր թօթուելով պատասխանեց.

— Ոչինչ չեմ հասկանում։

Այն ժամանակ ես էլ ոչինչ չէի հասկանում։ Հիմա հասկանում եմ։

Եւ ինչպէ՞ս եմ հասկանում...

ARAM webaram.com



ԼԵՒՈՆ ՇԱՆԹ, ՅՈՎՀ· ՏԻՎԼԷՃԵԱՆ, ՅՈՎՀ· ՔԱՋԱԶՆՈՒՆԻ
Ս· ՎՐԱՑԵԱՆ 1922, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ARAM webaram.com

V

ԹԱՂԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ

Ուսանող էի Պետերբուրգի համալսարանում։ Ապրում էի Հայոց ամուսնի Հանրապետութեան ապագայ ելեւմտական նախարար Համբարձում Տէրտէրեանի հետ միասին։ Միասին յաճախում էինք դըպրոց։

Ճաճախ, փոխում էի անցագիրս եւ տեղս ոստիկանութեան ձեռքը չանցնելու համար։ Դաշնակցութեան դէմ սկսուած խիստ հալածանքի օրերն էին։ Ինձ էլ փնտռում էին ձերբակալելու համար։

Մի օր, համալսարանից վերադառնալիս, Նեւսկի պողոտայի վրայ, հայոց եկեղեցու դիմաց, երբ դիտում էի Սուվորինի դրախանութի ցուցափեղկը, մէկը բռնեց թեւս։ Դարձայ, եւ սիրտս ճմլի ասաւ. մօտս կանգնած էր Ռոստովի թաղային ոստիկանապետ Ալեքսանդրովը։ Ինձ լաւ ծանօթ, կարելի է ասել՝ բարեկամ։ Նրա հետ մենք չատ երեկոներ էինք անցկացրել «Արաքս» դինեվաճառատանում, որ պատկանում էր մեր կենտրոնական կոմիտէի անդամներից Նաւասարդին եւ մեր կուսակցական ժամադրավայրն էր։ Միասին խորոված էինք կերել եւ դինի խմել։ Ալեքսանդրովը զուարթ նայում էր դէմքիս եւ անկեղծօրէն ուրախ էր երեւում։

— Գոլուբչիկ, վի զդե՞ս, — սիրելիս, դուք այստե՞ղ էք, — սեղմում էր ձեռքս ուժով։ Ի՞նչպէս ուրախ եմ ձեզ հանդիպելուս համար։ Չէք կարող երեւակայել, ինչքան ուրախ եմ։

Ես բնաւ ուրախ չէի։ Անկասկած, նա դիտէր իմ պարագան։ Աւելին, իրրեւ մեր թաղի ոստիկանապետ, նրա պարտականութիւնն էր հետապնդել ու բռնել ինձ։ Այո՛, ես բնաւ ուրախ չէի, բայց, նոյնպէս.

— Օ՛, հապա ե՞ս որքան ուրախ եմ, պատասխանեցի, զուարթ։ Դո՞ւք ինչ էք անում այստեղ։ Ե՞րբ էք եկել, ի՞նչ լուր մեր բարեկամներից, ի՞նչ կայ-չկայ։

Մի քանի չաբաթ է եկել էր արձակուրդով «մի քիչ մայրաքաղքի օդը շնչելու»։ Բարեկամները ամէնքը լաւ էին եւ բարեւում էին։ Պիտի վերադառնար վաղը։ Առանձին նորութիւն չկար։

— Օ՛, ինչքան ուրախ եմ, ինչքան ուրախ, կրկնում էր նա։ Իսկ հիմա դուք իմ հիւրն էք։ Միասին պիտի ընթրենք։ Ես այստեղ մի լաւ ճաչարանի տեղ գիտեմ, երթանք։

«Սկսուեց», մտածեցի ես։ Հի՛ւր։ Պարզ էր, որ ինձ պիտի ա-

ARAM webaram.com

ռաջնորդէր ոտիկանատուն: Չէ, ես չնորհակալ էի: Ի՞նչ նեղութիւն: Ես ժամադրութիւն ունէի, դժբախտաբար: Ախորժակ էլ չունէի...

— Ի՞նչ նեղութիւն, ի՞նչ ժամադրութիւն, ի՞նչ ախորժակ, չէ՞ք ամաչում: Երթա՛նք:

Թեւանոցուկ չարժուեցինք, Սադովայա փողոցի ուղղութեամբ, ուր գտնւում էր չրջանի ոստիկանատունը: Ցայտնի էր լինելիքը: Ալեքսանդրովը խօսում էր անընդհատ: Անցեալի զուարճալի դէպքերն էր յիշում ու քահ-քահ ծիծաղում, իսկ իմ սիրտը թռչկոտում էր նապաստակի պէս, ոտքերս դժուարութեամբ էին չարժւում: Ա՛յ քեզ բան. ո՞րտեղից բուսաւ այս փորձանքը...

Երբ մօտենում էինք ոստիկանատան, վախը աւելի սաստկացաւ մէջս: Մի քանի քայլ եւս եւ պրծա՛ւ-գնաց: Բայց ո՛չ. ապահով անցանք ոստիկանատան առջեւից: Ալեքսանդրովը չնայեց անգամ ոստիկանատան կողմը եւ չարունակում էր չաղակրատել:

Մէկ-երկու փողոց էլ անցանք ու կանգ առինք մի լուսաւոր ճաշարանի առջեւ: Ներսը բաւական մի ճոխ ճաշ ապատրեց: Բերին գինի: Եւ սկսուեց խրախճանքը: Խոստովանում եմ՝ վաղուց այդպիսի համեղ ճաշ չէի կերել...

Բայց եւ այնպէս, սիրտս հանգիստ չէր: Վե՞րջը, ի՞նչ պիտի պատահէր այս ամենի վերջը: Արդեօք սա այն ճաշը չէ՞ր, որ սովորաբար տալիս են մահապարտին կախաղան հանելուց առաջ:

Երբ ճաշը մօտեցաւ վախճանին, Ալեքսանդրովը, որի լեզուն, գինու ազդեցութեան տակ, աւելի էր բացուել, հանդիսաւոր կերպով բարձրացրեց բաժակը.

— Ա Էտոտ պոսլեդնիւ, բոկալ՝ զա նաշու դրուժբու — այս վերջին բաժակն էլ մեր բարեկամութեան կենացը:

Խմեցինք: Ալեքսանդրովի դէմքը փայլում էր, եւ աչքերում խորհրդաւոր կայծեր էին խաղում:

— Հիմա լսեցէք ինձ, բարեկամ, ուզո՞ւմ էք ասեմ, թէ դուք ինչ էք մտածում: Դուք մտածում էք, թէ այս սրիկայ ոստիկանը խաղում է ինձ հետ, ինչպէս կատուն մկան հետ: Ա՛յո՛, ինձ ծանօթ է ձեր վիճակը: Աւելին, ինձ հրամայուած է փնտռել ձեզ և ձերբակալել: Այնտեղ, Ռոստովում: Այստեղ ես արձակուրդի մէջ եմ եւ պարտական չեմ ձեզ հետապնդելու: Կարծում էք, ես անաստո՞ւն եմ: Ոստիկանը մարդկային զգացում չունի՞: Ո՛չ, բարեկամ, ոստիկանն էլ մարդ է: Մենք ձեզ հետ աղ ու հաց ենք կերել: Ով աղ ու հացը մոռանայ, նրա աչքը կուրանայ: Ա՛յո՛, այո՛, ոստիկանն էլ մարդ է...

Խօսում էր յուզուած, անկեղծ չեչոով, իր զգացումները ար-

ARAM webaram.com

տայտանելով նաեւ ձեռքի չարժումներով: Ի՞նքն էր խօսողը, թէ դի-նին — մխիթնոյնը չէ՞ր ինձ համար: Ես զգում էի, որ, այո՛, ոստի-կանն էլ մարդ է:

— Հիմա ինձ լսեցէք, սիրելի բարեկամ, չարունակեց նա: Ռոս-տով չվերադառնաք ոչ մի դէպքում: Դուք ծանր ամբաստանութեան տակ էք, ես դիտեմ: Եթէ ես տեսնեմ ձեզ Ռոստովում, կը ձերբա-կալեմ: Անպատճառ կը ձերբակալեմ: Վատահ եղէք, կը ձերբակա-լեմ: Այդ իմ պարտականութիւնն է: Աղ ու հացն էլ չի օգնի: Իսկ հի-մա — մնաք բարով: Երջանիկ եմ ձեզ հանդիպելուս համար: Գնացէք: Մնաք բարով: Եւ յիշեցէք — ես ձեզ չեմ հանդիպել, դուք ինձ չէք տեսել: Աչխարհ կը փոխուի. մենք դեռ կը տեսնուինք: Սարը սարին չի հանդիպի. մարդ մարդու կը հանդիպի: Մնաք բարով: Ջմռռանաք՝ այս ճաչի մասին դուք դիտէք, ես դիտեմ եւ մէկ էլ Աստ-ուած երկնքում: Ուրիչ՝ ոչ ոք:

Ու պինդ սեղմեց ձեռքս:

— Ս բոգոմ — Աստուած ձեզ հետ:

Ալեքսանդրովին ես այլեւս չտեսայ, բայց չատ եմ մտածել այդ տարօրինակ հանդիպման մասին: Անբացատրելի է մարդկային, նոյն իսկ ոստիկան մարդու հոգին...

VI

ՌՈՒՍ ԺԱՆԴԱՐՄ ԲԱՐԵԿԱՄՍ

Տրապիզոնցի Խաչիկի կաթնատունը — «Կաթնատուն Արմե-նիա» — Ռոստով–Նախիջեւանի բոլոր ուտարանների հաւաքավայրն էր:

Խաչիկի այս հաստատութիւնը գտնուում էր Ռոստովի Սադո-վայես կեդրոնական պողոտայի վրայ, բակում, եւ բազկացած էր մի խոհանոցից եւ երկու համեստ սենեակներից, որոնց պատերը զար-դարուած էին նկարներով. Նիկոլայ Բ. ցարի կողքին անվրդով բազ-մած էր Սարգիս Կուկունեանը իր փառահեղ մօրուքով, Խրիմեան Հայրիկի մօտ՝ քաջամարտիկ զօրավար Սկոբելեւը կատաղի նժոյգի վրայ Բալկաններում անցնելիս, եւ դէմ–դիմաց Ալաբայրի ճակատա-մարտը քաջն Վարդանի հրամանատարութեամբ եւ Կուլիկով դաշտի կռիւը Դմիտրիյ Դոնսկոյի գլխաւորութեամբ: Կատարեալ հայ–ռու-սական եղբայրութիւն...

Ով ասես չէր յաճախում «Արմենիա» կաթնատունը — անօթի

ARAM webaram.com

ուսանողներ, անօթի վարժապետներ, անօթի դերասաններ, անօթի մատուռականներ, ապագայ հերոսներ, դիշերաշրջիկներ... Այստեղ կարելի էր հինգ կոպեկով մի բաժակ կաթ խմել կամ մի պնակ մածուն ուտել եւ առաւօտից մինչեւ երեկոյ նստել թերթ կարդալ, դոմինո խաղալ, վիճել Ժորէսի կամ Բեբելի վերջին ճառի եւ կամ Զաքարեանցի «Փալերմօ» թերթեւ Թատրոնի նոր դերասանուհի Բալդաչիի ֆանֆանի մասին:

Մեզ համար Խաչիկի կաթնատունը մի տեսակ դաշնակցական ակումբ էր՝ կապի, տեսակցութեանց եւ լուրերի փոխանակութեան վայր, իսկ երբեմն նաեւ ժողովների տեղ: Խաչիկը մեր շարքերում էր, հարիւր տոկոսով վստահելի տղայ: Ցարաշարժ, ճարպիկ, լեզուանի ու ծակամուտ՝ մարդ չկար, որին ծանօթ չլինէր, Թաղի բոլոր ոստիկաններին բարեկամ, խիստ դաշնապահ — Խաչիկին կարելի էր վստահել, եւ «Արմենիա» կաթնատունը մեզ համար ապահով վայր էր գաղտնի գործերի համար: Խաչիկին շատ նման էր ե՛ւ նրա նչանածն ու գործի ընկերը՝ Լուսինը, որ մեր օրիորդների «Ցոյս» խումբի եռանդուն անդամներից էր:

Մի օր, երեկոյեան դէմ, երբ վեց-եօթը ընկերներով տաք վիճաբանութեան մէջ էինք, յանկարծ, իրարանցում ընկաւ սենեակում: Խաչիկը հապիւ էր փախցրել մեր առջեւի կուսակցական թղթերը, որ ներս մտան Օխրանայի որսկան շները: Մկների պէս թակարդն էինք ընկել:

Առանց հարց ու փորձի մեզ հաւաքեցին մի կողմ — պարզ էր, որ մատնուած էինք, եւ գործը, ուրեմն, լուրջ հանգամանք էր առնում: Մեզ տարին առ որ անկ է...

Կիսախաւար ընդունարանում անիծս սպասում էինք հսկողութեան տակ, երբ դրսից, արագ քայլերով, ներս մտաւ ժանդարմական մի սպայ: Սեւ չրջանակով խոշոր ակնոցները նրան բուի տեսք էին տալիս: Կանգ առաւ: Մի պահ նայեց ինձ, որ կեցած էի մեկուսի, ուսանողի գլխարկը ձեռքիս: Եւ ասաց աճապարանքով.

— Գալուբչիկ — սիրելիս —, որքա՞ն ուրախ եմ տեսնելու ձեզ: Ես հիմա շատ զբաղուած եմ: Ինդրում եմ, տուն եկէք: Կը սպասեմ: Կառեան էլ շատ ուրախ կը լինի: Անպատճառ եկէք:

Ձեռքս պինդ սեղմեց ու ճամբու դրեց ինձ:

Շուարած, վարանոտ քայլերով դուրս եկայ:

Անշուշտ, մի թիւրիմացութիւն էր պատահել — անհասկանալի մի բան — բայց դանդաղելու ժամանակը չէր: Ես չտապեցի հետքս կորցնել եւ, ի հարկէ, չյարգեցի ժամադրութեան հրաւէրը, երեւի,

ARAM webaram.com

մեծ ցաւ պատճառելով ժանդարմ բարեկամիս եւ իր ազնուափայլ տիկնոջ...

Անցան տարիներ: Անհամեմատ աւելի ծանրակշիռ դէպքեր տեղի ունեցան, եւ Ռոստովի միջադէպը ջնջուեց մտքից: Ու մի օր փոթորկոտ կեանքի իններորդ ալիքը ինձ էլ նետեց Փարիզ, Նէոյի, Մաղամ Սիւզիի պանսիոնը: Սկսւում էր նոր կեանք տարագրութեան մէջ:

Մի պայծառ առաւօտ, ռուսերէն թերթը ձեռքիս, նստած էի պանսիոնի պարտիզում: Կարդում էի հեռագիրները Լենինի մահուան մասին:

Ծառերի միջից դուրս եկաւ պարտիզպանը՝ մեծ մկրատը ձեռքին... Միջահասակ, կարճ կտրած մազերով մի մարդ՝ կապոյտ դոդնոցը վրան. սեւ չրջանակով խոշոր ակնոցներ: Կատարեալ բու:

Ցամք քայլերով մօտեցաւ իմ կողմը եւ թերթին ակնարկելով՝ ասաց ռուսերէն.

— Սահե՞լ է...

— Ո՞վ, չհասկացայ ես մէկէն:

— Շունը:

Խօսքը Լենինի մասին էր:

— Թոյլ տուէք ներկայացնեմ ձեզ իմ անձը, ասաց նա. Գնդապետ Զաւարզին, Պաւել Պաւլովիչ:

Զաւարզին... Մի ակնթարթում վերականգնեց իմ ուղեղում Ռոստովի միջադէպը:

— Ժանդարմակա՞ն գնդապետ, հարցրի ես:

— Այո՛, բայց դուք ո՞րտեղից գիտէք, զարմացաւ մարդը:

— Ռոստովի ժանդարմական վկայագի՞ր:

— Այո՛, այո՛, բայց, խնդրեմ, դո՞ւք որտեղից գիտէք:

— Ի՞նչպէս է տիկին Կատեան...

— Ողորմած Աստուած, ասացէք՝ դուք ո՞րտեղից գիտէք:

— Գիտեմ, պատասխանեցի ես եւ պատմեցի Ռոստովի միջադէպը:

Մարդը սկսեց քահ-քահ ծիծաղել.

— Այդպէ՛ս... իսկ գիտէ՞ք ես ինչքա՛ն եմ հայհոյել ինձ: Երբ իմացայ, որ սխալուել եմ, իսկոյն հրամայեցի, որ գտնեն ձեզ, բայց գնա ու բռնիր քամին բաց դաշտում...

Պարզուեց, որ նա նոր էր տեղափոխուել Ռոստով Օդեսայից: Մի քիչ կարճատեսութեան պատճառով, մի քիչ էլ որովհետեւ կոնծել էր այդ օր, ինձ ընդունել էր իր Օդեսայի մէկ բարեկամի ու-

ARAM webaram.com

ռանող որդու տեղ...

Ռոստովի ժանդարմական գլխապետ Զաւարզինը այժմ գնդապետ Զաւարզին էր, Նէոյիի Մագամ Սիւզիի պաճսիոնի պարտիզպանը:

Շուտով մենք դարձանք խաս բարեկամներ գնդապետ Զաւարզինի եւ իր կառեայի՝ Եկատերինա Պրոկոֆիեւնայի հետ:

Տիպար ռուս էր Զաւարզինը, գոռող, եւ աններող, երբ իշխանաւոր է. խոնարհ ու բարի, երբ իշխանութիւն չունի ձեռքին: Լայն սիրտ ու վեհանձն, ձեռքը բաց, ինչպէս եւ սիրտը: Լաւ բաժակ բռնող, զուարճասէր ու պատրաստաբան: Ինչքան խնդալիք պատմութիւններ գիտէր: Իր սրամիտ, յաճախ, վրան բաց կատակաբանութիւնները մեռցնում էին մարդկանց ծիծաղից, մանաւանդ կանանց, որոնք կպչում էին նրան, ինչպէս ճանճը չաքարին:

Ինձ համար աւելի հետաքրքրական էին նրա պատմութիւնները Ռուսական Օխրանայի ներքին կեանքից, մանաւանդ նրա տեղեկութիւնները լրտեսների գործունէութեան մասին, որոնց թուում, աւա՛ղ, կային, եւ իմ ազգակիցները, նոյն իսկ ինձ ծանօթ մարդիկ:

Մի օր ես առաջարկեցի նրան գրել իր յուշերը:

— Ես էլ շատ եմ մտածել, բայց չեմ կարողանում. գրելու վարժութիւն չունեմ, պատասխանեց նա:

— Է՛, ժանդարմական հարցաքննութիւններ կամ արձանագրութիւններ գրի չէ՞ք առել:

— Անշուշտ, առել եմ:

— Հենց այդ ձեւով էլ գրեցէք: Երբ ասելիք բան ունէք, գրելու ձեւը կը գտնէք:

Եւ գտաւ: Միասին կազմեցինք յուշերի ծրագիրը, եւ վեց ամիս անցած հատորը պատրաստ էր: Գիրքը լոյս տեսաւ ռուսերէն, ապա թարգմանուեց Ֆրանսերէնի եւ կարճ ժամանակում սպառուեց:

Հետաքրքրական գիրք դուրս եկաւ: Իմ խորհուրդով նա որոշ տեղ էլ նուիրեց հայերին — ժանդարմական վարչութեան պայքարը հայ յեղափոխականների, մանաւանդ, Դաշնակցութեան դէմ: Զաւարզինը մեծ համակրանքով էր խօսում հայ յեղափոխականների քաջ եւ անձնուէր գործունէութեան մասին: Մի հայ կնոջ տիպ ունի նկարագրած, որ դասական կարող է համարուել: Գրքի այդ մասերը թարգմանուեցին եւ լոյս տեսան հայերէն թերթերում:

Յուշերի լոյս տեսնելուց յետոյ, Զաւարզինը հրաւիրուեց պաշտօնի բոլշեւիկների առեւանգած Կուռեպովի յաջորդ գօր. Միլլերի

ARAM webaram.com

մօտ, իրրեւ հետախուզական բաժնի վարիչ, այս անգամ արդէն զօրավարի աստիճանով:

Մեր յաճախակի հանդիպումներուն մէջտեղ Զաւարդինը տեղեկութիւններ էր հաղորդում ռուսական չրջաններուն ներքին անցուդարձերուն մասին: Հաճելի բան չկար նրա պատմածների մէջ: Վերջը ինքն էլ քաշուեց գործից: Հիասթափուել էր «ճերմակ չարժումից»:

Երբ ես մեկնում էի Ամերիկա 1939ին, մեր վերջին տեսակցութեան ժամին, իմ ժանդարմ բարեկամը, որ մի քիչ էլ կոնծած էր, մի ջերմ խրատական կարգաց պլխիս:

— Դուք, հայերդ, ասաց նա, աքանչելի ժողովուրդ էք, չինարար, ճեռներէց, պարկեչտ, բարեկամութեան մէջ անկեղծ եւ հաւատարիմ, բայց աղաւնիի պէս միամիտ էք քաղաքական հարցերում եւ այդ պատճառով էլ ձեզ միշտ խաբում են: Երէկ մենք՝ ռուսներս էինք խաբում ձեզ, այսօր էլ Ամերիկայի պոչից էք բռնել: Սիրելի բարեկամ, ձեզ հետ ամենից անկեղծ վարուողը Թուրքն էր, որ չէր խաբում ձեզ, այլ կոտորում էր առանց կեղծիքի...

— Ոչ, առարկեցի ես, Թուրքն էլ էր կեղծում եւ խաբում էր:

— Ուրեմն, աւելի վատ. ոչ ոքի չհաւատաք: Միայն ձեզ հաւատացէք. եղէք ուժեղ եւ համարձակ: Դուք՝ դուք եղէք, օձի պէս խորամանկ եւ առիւծի պէս քաջ: Այս ես եմ ասում ձեզ, ես, ռուս ժանդարմական գնդապետ Զաւարդինը, որ շատ բան է տեսել եւ շատ բան գիտէ: Ասում եմ, որովհետեւ սիրում եմ ձեզ: Բարի ճանապարհ:

Համբոյրով բաժանուեցի իմ ժանդարմ բարեկամից:

Մի օր էլ լսեցի, թէ մեռել է:

Ինձ նուիրած իր գրքի վրայ Զաւարդինը մակագրել էր.

— Ռուս ժանդարմից՝ Հայ յեղափոխականին: Ի յուշ:

1944, Նիւ Եորք

ARAM webaram.com

ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐ

I

ԾԱԳՈՒՄՈՎ ՀԱՅ

Ճիշդ թուականը չեմ յիշում, եւ այդ կարեւոր էլ չէ։

Այն տարի, Փարիզում, տեղի ունեցաւ Ազգերի Դաշնակցութեան Ազգային կազմակերպութիւնների Միջազգային Համագումարը։

Ո՛ւհ, ինչ բարդ անուն։ Արդէն բոլոր պարզ բանները բարդ անուն են կրում։ Օրինակ՝ Հայաստանի Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկա, փոխանակ ասելու պարզ՝ Հայաստանի Հանրապետութիւն։

Այդ Համագումարին ներկայացուած էր եւ Հայաստանը։ Հանրապետական Պատուիրակութեան կողմից պիտի մասնակցէին Ազնաւանդը Խատիսեանը եւ Արշակ Ջամալեանը։ Բայց Արշակը, ըստ սովորութեան, այդ օրերին բացակայ էր Փարիզից։ Ճամբորդութեան մէջ էր չգիտեմ արեւելքում թէ հիւսիսում։ Խատիսեանը ասաց ինձ. «Գնանք միասին»։ Գնացինք։

Համագումարը բազմամարդ էր եւ բազմազմուկ։ Նախկին վարչապետներ, նախկին նախարարներ, նախկին դիւանագէտներ, բոլոր նախկին մարդիկ հաւաքուել էին երկարապատում ճառեր խօսելու։ Եւ ինչպէս ընդունուած է միջազգային ժողովներում Ադամեւայի օրերից սկսած, ամէնքը ճառում էին խաղաղութեան մասին, մինչ իրենց կառավարութիւնները պատրաստւում էին պատերազմի։

ARAM webaram.com

Եւ դարձեալ, ինչպէս ընդունուած է բոլոր միջազգային ժողովներում, Համազումարը վերջացաւ փառաւոր ճաշկերոյթով — ամէն անգամ ինքը վճարեց իր ճաշի գինը: Եւ, ի հարկէ, նորից՝ պերճաբան ճառեր աշխարհի խաղաղութեան եւ ժողովուրդների ազատութեան ու եղբայրութեան մասին: Կարգը այդպէս է հնուց ի վեր. նախ՝ ճառեր խաղաղութեան մասին, յետոյ՝ պատերազմ: Խաղաղութիւն եւ պատերազմ յաջորդաբար՝ ըստ փրոթոֆոլի:

Ճաշկերոյթին էլ ըստ փրոթոֆոլի էր: Տեղերը դասաւորուած էին մեծ հոգածութեամբ. վերը՝ մեծերը — փայլուն անուններ չոր-չորուն տիտղոսներով, մեծ պետութեանց ներկայացուցիչներ, վարերը՝ մեղ նման խլէզներ: Աղքատ Ղազարոսի զաւակները: Պնակների դէպերի վրայ խնամքով ծալուած սպիտակ անձեռոցիկ, վրան՝ ձիթենիի ոստով զարդարուն տոմս երկրի եւ պատգամաւորի անունով Armenia, S. Vratzian: Առջեւը՝ ճերմակ մեխակների ծաղկեփունջ — խաղաղութեան խորհրդանշան:

Գրաւեցի տեղս: Այ ու ձախ՝ ինձ նման խլէզներ:

Հազիւ սաւանի մեծութեամբ անձեռոցիկս բացել էի, ձախ հարեւանս, ժպիտը աչքերում, հարցրեց.

— Կարելի՞ է իմանալ, թէ ո՞ր երկիրն էք ներկայացնում:

— Արմենիա, պատասխանեցի ես հպարտ:

— Արմենիա՞, արտասանեց հարեւանս, զարմացած եւ վարանումով:

— Այո՛, Արմենիա, ի՞նչ կայ որ:

— Ոչինչ, ոչինչ, խնդրեմ:

Ու սկսեց հետաքրքրութեամբ հարցումներ ուղղել Հայաստանի մասին: Եւ վերջը.

— Թոյլ տուէք ներկայացնել ինձ, ես էլ Լեհաստանի պատուիրակ եմ՝ ծագումով հայ: Վերջին բառը արտասանեց առանձին հանդիսաւորութեամբ:

Ծագումով հա՛յ... ինձ անծանօթ չէր Լեհաստանի հայոց ողբերգական պատմութիւնը: Ես ու այս ծագումով հայ լեհը միեւնոյն ճակատագիրն ենք ունեցել: Մեր նախահայրերը միասին էին տարագրուել Հայաստանից, շատ դարեր առաջ, Անիի կործանումից յետոյ: Միասին անցել էին Վոլգայի ափերը, Թաթարստան: Միասին փախել թաթարների անհրապոյր աշխարհից: Մեր հաստատուածը հաստատուել ու ծաղկեցրել էր Յրիմի թերակղզին, վերջը խաբէութեամբ տարագրուելու համար Դոնի եզերքները: Լեհ ազգակից պատերը գաղթել էին Լեհաստան ու Մաճառստան, չէնացրել Գալիցիան

ARAM webaram.com

ու Տրանսիլվանիան եւ Եան Սոբէսկու բանակում կռուել էին Թուրքերի դէմ Վիեննայի տակ: Ճարտար վաճառականներ, հմուտ արհեստաւորներ, խորագէտ դեսպաններ, գինուորականներ էին եւ քաղաքական ու մշակութային մեծ անձնաւորութիւններ էին տուել իրենց հիւրընկալ ազգերին՝ վերջը ձուլուելով նրանց հետ: Դարձել էին հայ քթերով եւ հայ աչքերով լեհեր, մաճառներ եւ ռումիններ...:

— Այո՛, ես էլ ծագումով հայ եմ... Լեհաստանում շատ են ինձ նման ծագումով հայերը: Մենք ունեցել ենք եւ ունենք ծագումով հայ մեծ մարդիկ — բանաստեղծներ, պետնականներ, անտեսապէտներ, քաղաքագէտներ: Հայ, արտասանեց նա հայերէն, առանձին շեշտով:

Ես նկատեցի, որ իմ ազգակցական հարեւանը ուշադրութեամբ հետեւում էր մեր խօսակցութեան: Եւ օգտուելով մի պահ լռութիւնից՝ դարձաւ մեզ.

— Թոյլ տուէք, պարոններ, ներկայացնեմ ինձ՝ հունգարացի պատուիրակ: Ես էլ ծագումով հայ եմ...:

Այսպէս, դարերով իրարից անջատուած երեք հայեր նստել էինք կողք-կողքի, իրար դեմ Փարիզում, Ազգերի Դաշնակցութեան Ազգային կազմակերպութիւնների Միջազգային Համագումարի ճաշասեղանի շուրջ, ուր ճառեր էին խօսում խաղաղութեան եւ ժողովուրդների ազատութեան ու եղբայրութեան մասին...:

Այդ Համագումարից ոչինչ չի մնացել իմ մտքում: Ազգերի Դաշնակցութիւնն էլ իր Ազգային կազմակերպութիւններով վաղո՛ւց դարձել է թառամած յիշատակ, բայց դեռ իմ աչքի առջեւ են «ծագումով հայ» լեհի եւ «ծագումով հայ» մաճառի երջանիկ դէմքերը, որ հանդիպել էին «ծագումով հայ» մի երրորդ՝ իրենց սրտին հարազատ հայի, որից դարերով բաժանուած էին: Ո՛հ, հայի ճակատագիր — դարեր չարունակ արիւն է հոսում, դարերի միջից արիւնն է խօսում...

II

ՄԵՆՔ ՀԱՑ ԵՆՔ

1926ին ես հիւր էի Դրոյի մօտ, Փլոէշտիում, Ռումանիա: Գնացել էի մօտը մի քիչ հանգստանալու եւ «Հոդեշարժ» խօսակցութեան համար:

Դուք պիտի՞ք, ինչ էր նշանակում հիւր լինել Դրոյի մօտ: Եթէ չպիտիք, ասեմ:

ARAM webaram.com

Նախ՝ կայարանից մինչեւ տուն, ամբողջ ճանապարհին, ինքնաշարժի մէջ, աղմուկ եւ իրարանցում. ի՞նչպէս ճամբորդեցիր, հանգի՞ստ էիր, ի՞նչ կայ-չկայ: Ու ոտոտաուն խօսքեր մէկ նիւթից միւսը. կարօտի եւ սիրոյ զգացում ընկերների հանդէպ...

Ապա, տուն հասնելուդ, հոգուդ մատաղ, երկար ճամբայ ես կտրել, պէտք է բաղնիք առնես: Տունը ամբողջ ոտքի կը հանէ, որպէսզի բաղնիքը պատրաստ լինի: Ու սեփական ձեռքերով քեզ ջուրը կը կոխէ եւ վերջը ամբողջ աշխարհի առջեւ խայտառակ կ՝անէ, թէ այնքան ապուռ ես եղել, որ ջրի խողովակները փչացել են...:

Ապա՝ նախաճաշ. «մի պատառ հաց» պիտի ուտես եւ չի հանդըստանայ, մինչեւ որ հաւի, կովի, ցամաքի ու ծովի բոլոր արտադրութիւնները առամոքդ չուղարկես:

Ապա՝ ճաշ: Ապա՝ ընթրիք: Փլոէշտիի ամբողջ չուկան կը փոխադրէ տուն: Ամբողջ քաղաքը հիւր կը հրաւիրէ, սպասաւորներին վազէ-վազ հոգին կը հանէ, որպէսզի քեզ «մի պատառ հաց» կերցնէ:

Ու անվերջ իրարանցում, դուրդուրանք, ընկերական ջերմութիւն: Խօսք ու զրոյց առաւօտից մինչեւ երեկոյ եւ երեկոյից մինչեւ առաւօտ: Այցելութիւններ ընդունել եւ այցելութեան գնալ:

Գնացել ես մօտը մի քանի օրով հանգստանալու եւ հիւրասիրութիւնից աւելի յոգնած կը վերադառնաս տեղդ: Ու չես նկատի, թէ ինչպէս անցաւ ժամանակը...:

Մի խօսքով՝ ես հիւր էի Դրոյի մօտ, Փլոէշտիում: Գնացել էի մօտը մի քիչ հանգստանալու եւ թարմանալու: Եւ չզգացի, թէ ինչպէս անցաւ ժամանակը: Եւ երբ վերադարձի օրը հասաւ, դեռ մեր խօսելիքների կէսը չէր սպառած: Մինչեւ կայարան էլ, ինքնաշարժի մէջ, չարունակուեց մեր «խորհրդակցութիւնը»: Գնացքը քթիս տակից պիտի փախչէր, եթէ մի վայրկեան էլ ձանդաղէի եւ չնետուէի առաջին իսկ վագոնի մէջ:

Եւ երբ արդէն Բուքրէշից բաւական հեռացել էինք, սոսկումով լսեցի տոմսակս քննող պաշտօնեայի յայտարարութիւնը.

— Պարոն, դուք սխալ գնացք էք նստել:

Սխալուել էի. փոխանակ Բելգրադի՝ ուրիշ ուղղութեամբ էի գնում: Բայց ամէն դժուարին կացութիւնից միշտ դանւում է մի ելք:

— Պէտք է իջնէք Տէմիշվոարա, այնտեղ երեկոյեան Բելգրադի գնացքը կ՝առնէք, բացատրեց պաշտօնեան:

Եւ չատ չանցած ես դուրս եկայ Տէմիշվոարայի կայարանը, ուր հինգ-վեց ժամ պէտք է սպասէի մինչեւ յաջորդ գնացքը: Տեղաւորեցի իրերս, կարգադրութիւն արի տոմսակիս համար եւ ելայ դիտե-

ARAM webaram.com

լու քաղաքը:

Լայն փողոցներով ու դեղեցիկ չէնքերով մաքուր եւ բարեկեցիկ երեւոյթով քաղաք էր Տէմիշվորան, կանաչով եւ արեւի ճառագայթներով ողողուած: Փողոցները դրեթէ ամայի էին: Բանեցի պողոտան ու սկսեցի քայլել: Շուտով չէնքերը փոքրացան, սկսուեց պարտէզների չրջանը, եւ աննկատելի կերպով դուրս եկայ քաղաքի սահմաններից: Մարդ-մարդասանկ չէր երեւում:

Մէկ էլ, հեռուից, տեսայ երեք ձիերով լծուած բեռնակիր մեծ կառք. մօտեցաւ-մօտեցաւ ու կանգ առաւ, եւ կառավարը ցատկեց տեղից ու սկսեց մարակել եւ հայհոյել ձիերին... մաքուր վանեցիական բարբառով: Անակնկալի եկած՝ մօտեցայ նրան.

— Դու հա՞յ ես, հարցրի:

Մարդը, յանկարծակիի եկած, հանդիստ ձգեց ձիերին ու դարձաւ ինձ: Աչքերը փայլում էին ուրախութիւնից:

Երկար ժամանակ էր «խայի» երես չէր տեսել: Դժուարանում էր բացատրել, թէ ինչպէս էր ընկել այս հեռաւոր անկիւնը: Մեծ պարտէզի երես էր առել եւ այժմ պտուղներ էր տանում քաղաք ծախելու: Հարց ու փորձ: Խնդրանք-աղաչանք, որ հիւր լինեմ իրեն: Ափսոսանք, որ չեմ կարող: «Խաղար» օրհնութիւն, որ ճամբաս հանդիստ անցնի: Հաւատախացում, որ ինքն էլ երկար չի մնալու այս օտար աշխարհում...

— Ուրիշ հայեր կա՞ն այստեղ, հարցրի բաժանուելիս:

Ո՛չ, չկային: Միակ հայը ինքն էր:

Ու երբ կառքը արդէն չարժուել էր, մէկ էլ ձիերին զսպեց ու կէս-հեգնանքով, կէս-արհամարհանքով պոռաց.

— Կ՛ասեն, թէ խին խայեր կան այնտեղ — մարակով ցոյց տալով քաղաքի կենտրոնը — ի՛նչ խայեր...:

Այդքանն էլ բաւական էր ինձ: Ելայ «խին խայեր» փնտռելու: Ճանապարհին ում որ հարցնում էի, զարմանքով դլուխ էին չարժում, ուսերը թօթուում. «Ճաւում ենք, չդիտենք»:

Հասել էի վանեցու մարակի ցոյց տուած կենտրոնը, ուր իրաբու մօտ չարուած էին մեծ-մեծ խանութներ՝ զարդարուն ցուցափեղկերով: Մէկը դրաւեց ուշադրութիւնս. ուտելիքի եւ համեչքեղէնի մեծ վաճառատուն էր՝ դուռը լայն բացուած: Մտայ ներս:

Խանութը լիքն էր եւ ու մուտ անող յաճախորդներով: Դրամարկղի մօտ կանգնած էր պատկառելի տեսքով մի պարոն: Երեւի տէրն էր: Բարեւեցի եւ իմ պիտացած ու չպիտացած բոլոր լեզուներով աշխատեցի հասկացնել միտքս — այստեղ հայ կա՞յ:

ARAM webaram.com

Մարդը նայում էր երեսիս զարմանքով: Ու մէկ էլ·

— Օհ: Արմէ՞նի... Արմէ՞նի... եւ բարձր ձայնով կանչեց յետեւի սենեակի ուղղութեամբ՝ Նիկիտա:

Դուրս եկաւ առաջինի հարազատ պատճէնը, բայց աւելի երիտասարդ մի պարոն: Առաջինը ինչ որ բաներ ասաց նրան մաճառերէն: Նիկիտայի դէմքը պայծառացաւ:

— Դուք հա՞յ էք, դիմեց նա ինձ ռուսերէնով:

Ես հասել էի նպատակիս:

Պարզուեց, որ երկու եղբայրները էին՝ «ծագումով հայ»: Փոքրը պատերազմին դերի էր ընկել ռուսների ձեռքը, մի քանի տարի ապրել էր Սիբիրում եւ բաւական սահուն խօսում էր ռուսերէն: Գործը թողած երկուսն էլ հրաւիրեցին ինձ յետեւի սենեակը, եւ սկսուեց ջերմ խօսակցութիւն երեք հայերի միջեւ:

Տէմիչվորայում ուրիշ «խին խայեր» էլ կային, իմ խօսակիցները, խանութից եւ իրենց կեցուածքից դատելով, հարուստ եւ քաղաքում դիրք ունեցող մարդիկ էին: Մեծ ու բարեկեցիկ ընտանիք:

Երկու եղբայրների անվերջ հարցումներին պատասխանելուց եւ իմ հարցասիրութիւնը յագեցնելուց յետոյ, ոտքի ելայ մեկնելու:

— Անկարելի է, բողոքեցին երկուսն էլ միաձայն: Դուք այսօր հիւր պիտի մնաք մեզ: Անպատճառ պէտք է մնաք: Ի՞նչ կ'ասէ մայրիկը, եթէ իմանայ, որ մի հայ է եկել մեր քաղաքը եւ առանց մեր տանը հիւրասիրուելու հեռացել է: Խնդրում ենք՝ մնացէք:

— Բայց ես այսօր պէտք է մեկնեմ, այլապէս երկաթուղու տոմսս կը փչանայ, առարկեցի ես:

— Այդ ոչինչ, կայարանապետը մեր բարեկամն է· կը կարգադրենք:

Եւ անմիջապէս հեռախօսեց կայարան, որ յաջորդ օրուայ համար ինձ տեղ պահեն:

Պարտաւոր էի համակերպուել: Ասենք՝ մերժելու էլ առանձին պատճառ չունէի: Սախպուած չէի ճճապարելու: Միւս կողմից՝ հետաքրքրական էր ծանօթանալ «խին խայերի» հետ:

Երկու եղբայրները խնդրեցին, որ մի քիչ հանդստանամ դրասենեակում եւ դուրս եկան գործի: Մնացի մենակ, եւ հազար-հազար խոհեր պաշարեցին միտքս:

Զարմանալի է հայի հոգին: Բագրատունեաց սերնդի վերջին բեկորներն էին սրանք: Ո՛ւր Անին, ո՛ւր Տէմիչվորան: Դարեր ու դարեր ապրել էին մաճառների մէջ ու մաճառների հետ: Լեզուն մաճառերէն, կենցաղը մաճառ, ամէն ինչ մաճառ: Բայց տեսէք, պա-

ARAM webaram.com

տահական մի անցորդ հայի են հանդիպել եւ արիւնը սկսել է եռալ նրանց երակներում: Առհասարի՞ւն: Ընդհանուր ի՞նչ կար սրանց եւ իմ միջեւ: Նոյն իսկ միմեանց լեզուն չէինք հասկանում...:

Տարիներ առաջ, ես այցելել էի Լվովը, Գալիցիայի հայոց վառապանծ ոստանը: Գնացի հայեր փնտռելու:

Տուին Օռմիանսկա Ուլիցայի անունը: Ոչինչ կար այնտեղ հայկական: Գտայ հայոց եկեղեցին: Այստեղ էլ հայութիւն չէր երեւում շատ, բացի մի քանի տապանաքարերից: Եկեղեցու ներսը սովորական կաթոլիկ եկեղեցու երեւոյթ ունէր: Երէցը, որ վերջին վայրկեանին վրայ հասաւ — հաւատարիմ ժառանգը Նիկոլ Թորոսովիչի — հայերէն ոչ մի բառ չգիտէր:

Տխրութիւն եկաւ վրաս: Հեռացայ լուռ ու մտախոհ: Եւ երբ Հայկական փողոցի անկիւնից մոլորուած հայեացքով դիտում էի հինաւուրց եկեղեցին, մի մամիկ դուրս եկաւ կողքի դռնից փոքրիկ թոռնիկի ձեռքից բռնած, այնքան նման մեր Նոր Նախիջեւանի մամիկներին: Հարցական նայեց չուարած դէմքիս: Մի պահ կեցաւ: Ու.

— Օրմեա՞ն, հարցրեց լեհերէն, օրմեա՞ն...

— Օրմեան, օրմեան: Այո, հայ էի:

Այնպէս պայծառացաւ դէմքը: Ինչ որ խօսեց յուզումով: Ձեռքըս սեղմեց: Թոռնիկին ինչ որ ասաց: Չէի հասկանում, բայց զգում էի, որ լաւ բաներ էր ասում: Եւ ձեռքը կրծքին զարնելով՝ կրկնում էր.

— Օրմեան, օրմեան:

Հայ էր ինքն էլ, «խին խայերից»: Եւ երջանիկ էր, որ մի ուրիշ հայի էր հանդիպել...:

Յոհերս կարեց Նիկիտան, որ ներս մտաւ խնդումերես: Ժամանակն էր տուն երթալու:

Տունը մի քանի փողոց այն կողմ էր: Ընդարձակ եւ ծաղկաւէտ պարտէզում երկյարկանի քարէ մի խոշոր չէնք պատուհանները կանաչ փեղկերով եւ կղմինարէ տանիքով: Բարեկեցութիւն էր բուրում չէնքի բոլոր կողմերից:

Լայն սանդուխքով բարձրացանք վեր: Մեծ դահլիճում կխսախաւար էր տիրում: Ցերեկը եւ գիշերը դեռ կռւում էին իրարու հետ, եւ բաց պատուհաններից զովութիւն էր փչում:

Երբ դահլիճը լուսաւորուեց, աչքիս ընկաւ, վերի անկիւնում, պատուհանի մօտ, զորգով ծածկուած ընդարձակ մի թախտ եւ վրան բազմած — իրապէս բազմած — սեւեր հագած տարէց մի կին, սաթէ

ARAM webaram.com

համբիչը ձեռքին: Գլուխը կապած ճի՛շտ մեր Նոր Նախիջեւանի մամիկների ձեւով:

— Մայրս է, ներկայացրեց նոր բարեկամս: Եւ ինչ որ բաներ ասաց նրան մաճառերէն:

Կարծես արեւ բացուեց — պայծառացաւ կնոջ դեղեցիկ դէմքը: Բնազդօրէն համբուրեցի պարզած ձեռքը, ինչպէս համբուրում էի տատիկիս ձեռքը, երբ դեռ մանուկ էի: Նա էլ քաշեց ինձ եւ համբուրեց ճակատս:

Շատ տարիներ են անցել այդ օրից, բայց այսօր էլ դեռ սարսուռ է անցնում մարմնովս, երբ յիշում եմ այդ վայրկեանը եւ այդ փառաւոր մամիկի կերպարանքը: Կարծես Բագրատունեաց մայրաքաղաքից բերել-դրել էին Տէմիչվորայում: Դարերը անհետեւանք էին անցել այդ հայուհու վրայից: Տեսքով — վերջը համոզուեցի, որ հոգիով էլ — մնացել էր հայ: Եթէ չլինէր մաճառերէն լեզուն, ո՞վ կարող էր կասկածել, թէ նա հայ չէ:

Ո՞վ եմ: Ո՞րտեղից եմ գալիս: Ո՞ւր եմ գնում: Ի՞նչպէս են այժմ այնտեղի հայերը:

Պատասխանիս համեմատ կա՛մ ուրախութեամբ ուսս էր թոթուում, կա՛մ ախ ու վախով ծնկները ծեծում:

Եւ մինչ մենք խօսում էինք, հետզհետէ դահլիճը սկսեց լեցուել ընտանիքի անդամներով: Եկաւ մեծ եղբայրը: Եկան հարսերը: Եկան թոռնիկները մանչ ու աղջիկ: Ամէնքը յարդանքով համբուրում էին մեծ-մայրիկի ձեռքը եւ նստում լուռ՝ ուշադրութեամբ ականջ դնելով մեր խօսակցութեան:

Ապա՝ սկսեցին հաւաքուել եւ հիւրերը: «Մեր այտեղի հայերը», բացատրեց Նիկիտան. «Այս դիշեր մեզանից պիտի ընթրենք»:

Գալիս էին զոյգերով: Այրերը երկար փէշերով սեւ հագուստ հագած, փքուն փողկապներով, սիլինդր գլխարկը ձեռներին: Կիները երեկոյեան արդուզարդերով, ոսկի ապարանջաններով, ադամանդէ օղերով ու մատանիներով: Հանդիսաւոր մուտք էին գործում, երկիւղածութեամբ համբուրում էին տանտիրուհու ձեռքը եւ նստում անխօս: Փոքր եղբայրը ծանօթացնում էր հիւրերին.

— Սա մեր քաղաքապետն է եւ իր յարդելի տիկինը: — Փոխադարձ գլխի խոնարհում ու յարգալից ժպիտ: Սա մեր քաղաքի դատաւորն է եւ իր յարգելի տիկինը: Սա մեր քաղաքի բժիշկն է, դեղագործը, փաստաբանը, հրշէջ պետը, քաղաքապետարանի քարտուղարը... Թուում էր, ամբողջ Տէմիչվորայի իշխանութիւնը հայերից էր բաղկացած...:

ARAM webaram.com

Տանտիրուհին բոլորին ընդունում էր սիրով, քաղցր խօսքերով, կատակով: Կարծես, ամէնքը իր հարազատ զաւակները լինէին:

Մինչեւ ընթրիք խօսակցութիւնը չէր տաքանում: Ամէնքը զուսպ, կարծես, ինչ որ բանի էին սպասում: Եւ մէկէն աշխուժացան, երբ սպասաւորը բացեց սեղանատան դուռը հանդիսաւոր յայտարարութեամբ.

— Ընթրիքը պատրաստ է:

Տանտիրուհին ոտքի ելաւ իր փառահեղ հասակով:

— Համեցէք մեր համեստ սեղանը բաժանելու մեզ հետ:

Համե՛ստ... Ինչ ասես չկար ծաղիկներով եւ թանկագին ամաններով զարդարուած ընդարձակ սեղանի վրայ: Բազմատեսակ, հոգածութեամբ զասաւորուած ուտելիքներ ու խմելիքներ պատկառելի քանակութեամբ: Ամէնքը տեղ գրաւեցին ըստ կարգի եւ աստիճանի: Սեղանի գլուխը տան թագուհին՝ մեծ մայրիկը: Նրա աջ կողմը ես, ձախ կողմը՝ քաղաքապետը եւ իր յարդելի տիկինը, եւ այսպէս աստիճանաբար:

Մի պահ տիրեց խորին լռութիւն: Ամենափոքր թոռնիկը կարգաց մաճառելէն աղօթքը: Եւ ճակատամարտը սկսուեց: Ինչքա՜ն էին ուտում ու խմում այդ մարդիկ, ի՜նչ ախորժակով ու գործի դիտակցութեամբ: Սպասաւորները հազիւ հասցնում էին կերակուրներն ու խմիչքները: Իսկական ճակատամարտ:

Եւ ընթրիքի վերջը բոլորի լեզուները արդէն բացուել էին: Նիկիտան հազիւ կարողանում էր հասցնել իրար բերանից խօսք խլող ճառախօսների թարգմանութիւնը: Եւ բոլորի խօսքը միայն մէկ յանկերդ ունէր. «Մենք հայ ենք»:

Երբ հերթը հասաւ ինձ, ես այնքան էի յուզուած, որ հազիւ կարողացայ մի քանի խօսք թոթովել: Ինձ թւում էր, թէ դարերի խորքից եկած ուրուականներ էին նստած առջեւս: Լսում էին, ծիծաղում, բայց իրապէս զոյութիւն չունէին: Պատուղ էին իմ երեւակայութեան...

Այսում էին Հայաստանի կենացը, բայց ո՞ւր էր Հայաստանը: կուրծք էին ծեծում, թէ «մենք հայ ենք», բայց ո՞ւր էր հայութիւնը: Ի՞նչ էր հայութիւնը նրանց համար: Ի՞նչ էին նրանք հայութեան համար: Եւ ի՞նչ գործ ունէին հայն ու Հայաստանը մաճառական այս Տէմիչովրայում...:

Զեմ յիշում՝ ինչ ասացի, բայց չկարողացայ խօսքս վերջացնել: Եթէ լալ իմանայի, պիտի լայի, թէեւ հոգիս խեղդւում էր նեբքին արցունքից...:

ARAM webaram.com

կացութիւնը վրկեց տանտիրուհին: Նա կարեկցանքով չոյեց ձեռքս եւ այնպէս զորովով ասաց.

— Հասկանում եմ, որդիս, դու էլ յուզուած ես մեզ նման: Գիտեմ, ինչ է խոովում այժմ միտքդ: Դու մտածում ես՝ կորած հայեր են սրանք: Ո՛չ, այդպէս չէ: Աստուած երբ ստեղծեց մարդկանց, ասաց. «Դու հայ ես, դու լեհ ես, դու մաճառ ես, դու գերման ես»: Ամէնքին անուն տուեց: Լեզուն նշանակութիւն չունի: Տեղն էլ նշանակութիւն չունի: Կրօնն էլ նշանակութիւն չունի: Մենք ամէնքս Աստծոյ զաւակներ ենք, բայց հայը հայ է, մաճառը մաճառ: Բարի եկար մեզ մօտ: Բարի լինի քո ճամբան...:

Ճիշտ այս խօսքերով չէր դուցէ, բայց միտքը այս էր. հայ ենք ու հայ էլ կը մեռնենք:

Եւ երբ ընթրիքը վերջացել էր եւ ամէնքս նորից հաւաքուել էինք զահլիճում, տանտիրուհին մեծ հարսի ականջին ինչ որ բան չշնջաց: Մի րոպէ չանցած՝ հարսը կողքի սենեակից բերեց մի հին անուուկ եւ ակնածանքով դրեց մեծ–մօր առջեւ: Տիրեց հանդիսաւոր լռութիւն:

Մեծ–մայրիկը զրպանից հանեց բանալիների մի որցակ, բացեց անուուկը եւ երկիւղածութեամբ միջից դուրս բերեց մետաքսի կտորի մէջ փաթաթուած մի ծրար: Դանդաղ, կարծես հաղորդութեան սկիհ լինէր ձեռքին, մի կողմ ծալեց մետաքսէ կտորը: Գիրք էր: Մօտեցրեց շրթունքներին, համբուրեց եւ մեկնեց ինձ:

Մաշաշաթեայ զրչագիր Աւետարան էր: Ընտանիքի նախնիքները իրենց հետ էին բերել Անիից: Եւ այժմ այդ տան — Տէմիշվոբայի բոլոր հայերի — սրբութիւնն էր: Երբ մէկը հիւանդանար, Աւետարանը դնում էին գլխին, եւ հիւանդը առողջանում էր: Երբ մէկը ամուսնանար, հարս ու փեսայ պէտք է համբուրէին Աւետարանը: Երբ մէկը մահանար, թաղելուց առաջ, նրա կրծքին դնում էին Աւետարանը: Երբ երեխայ ծնուէր, Աւետարանով էին մկրտում: Ուրախութեան եւ սուգի օրերին Աւետարանը հանւում էր անուուկից: Եւ ամէնքը համբուրում էին հաւատով ու երկիւղածութեամբ:

Այս անգամ էլ համբուրեցին: Առաջ տանտիրուհին, ապա՝ ես, ապա՝ քաղաքապետը եւ յաջորդաբար միւսները: Լուռ մօտենում էին Գրչագրին, խաչակնքում երեսը եւ համբուրում...

Արարողութիւնը վերջացաւ միւնոյն հանդիսաւորութեամբ: Երբ Աւետարանը տեղաւորուեց անուուկում, եւ մեծ մայրիկը դարձաւ ինձ.

— Տեսա՞ր, որդիս, քանի մեր պապերից ժառանգութիւն մնա-

ARAM webaram.com

յած այս սուրբ վիրքը մեզ հետ է, մենք հայ ենք ու կը մնանք հայ: Հանգիստ քներ այս գիշեր...:

Բայց ես չկարողացայ հանգիստ քնել: Մինչեւ լոյս աչքերս չփակուեցին: Անբացատրելի մաքերը անվանելի մեղուների պէս բզզում էին ուղեղումս:

«Քանի այս Սուրբ Վիրքը մեզ հետ է, մենք հայ ենք ու կը մնանք հայ»... Ոչ կարողանում էին կարդալ այդ վիրքը, ոչ հասկանում էին նրա լեզուն, չգիտէին, թէ ինչ է պրուած մէջը, բայց հաւատում էին հզօր հաւատով: Եւ հաւատը պահում էր նրանց:

Մենք էլ այդպէս էինք՝ Տէմիչվորայի հայերի բախտակիցները, Դոնի ափերին: Մեր առնը սուրբ մագաղաթ չկար՝ Անիից բերուած, բայց կար սուրբ «կէտէրբաւայի ջուր»ը (*): Ամէն անգամ, երբ մեզ մօտ հիւր էին գալիս այլազգիներ եւ սեղան նստում մեզ հետ, տատիկս ուշադրութեամբ հսկում էր, որ նրանց ամաններըը չիպառնէին մերոնց ամաններին հետ: Մեկուսացնում էր օտարականների գործածած պնակներն ու գաւաթները եւ դանակ-պատառաքաղները վերջը եռացրած ջրով ու սապոնով լուանում եւ վրան ցանում «կէտէրբաւայի ջուր»: Գետ Ցորդանանի ջուրը հանում էր անմաքրութիւնը, որպէսզի հայ-քրիստոնեաները չպղծուէին: «կէտէրբաւաւն գաբեր չարունակ պահեց մեզ հայ:

Այժմ «կէտէրբաւայ» չի մնացել Դոնի ափերին: Մնացե՞լ է արդեօք արբատան մագաղաթը Տէմիչվորայում: Եւ կարո՞ղ են արդեօք այսօր էլ Տէմիչվորայի «խին խայերը» ասել. «Մենք հայ ենք ու հայ էլ կը մեռնենք»...

Ցաջորդ առաւօտ ես մեկնեցի Տէմիչվորայից տանելով հետս սիրելի մամիկի եւ իր զաւակների ու թոռնիկների օրհնութիւնը, որ մինչեւ այժմս էլ ամուր պահում եմ իմ սրտում:

Երբ 1928ին լոյս տեսաւ իմ «Հայաստանի Հանրապետութիւն» հատորը, մի օրինակ էլ, փառակալմ, ուղարկեցի Տէմիչվորա: Նիկիտան պատասխանեց մօր կողմից: Մայրը յայտնում էր իր շնորհակալութիւնն ու օրհնութիւնը եւ խոստանում էր իմ նուէրը պահել իրենց սուրբ վրքի կողքին...:

(*) Գետ Ցորդանանի ջուրը, որ Երուսաղէմի ուխտաւորները մեծ շիշերով բերում էին իրենց հետ:

ARAM webaram.com

III

ՀՈԳԻՆԵՐԻ ՇԱՐԺԸ

1920 թուականին ես դիւզատնտեսութեան եւ պետական գոյքերի նախարար էի Հայաստանի Հանրապետութեան:

Անկախ Հայաստանի ամենայուսալից չրջանն էր:

Շարժուել էր հայոց ժողովուրդը· արտասովոր ոգեւորութիւն ու եռ ու զեռ էր տիրում թէ՛ երկրի ներսը եւ թէ Հայաստանից դուրս, հայութեան բոլոր խաւերի մէջ:

Ծայր էր տուել հայրենադարձը: Տարերային թափով, ամէն կողմից, հայ մարդը շտապում էր վերադառնալ իր հայրենի երկիրը:

Գալիս էին անծայրածիր Ռուսաստանի բոլոր վայրերից, Հիւսիսային Կովկասից, Անդրկասպեան երկրներից, Խրիմից եւ Ուկրաինայից, Պետրոգրադից, Մոսկուայից, Սիբիրից, Հեռաւոր Արեւելքից: Գալիս էին Բալկաններից, Ամերիկայից, Պոլսից ու Եգիպտոսից, Միջագետքից ու Պաղեստինից: Եկողներ եղան նոյն իսկ Հնդկաստանից ու Հարէշիստանից: Հայրենադարձի տենդով էր բռնուած ողջ հայութիւնը:

Կեանքը մեր նախարարութեան մէջ եռում էր: Պաշտօնէութիւնը օր ու գիշեր լարուած՝ գործի վրայ էր: Պէտք էր տեղաւորել նորեկներին, հող յատկացնել նրանց, լծկան ու սերմնացու ապահովել, երկրագործական գործիքներ հասցնել: Անընդհատ խորհրդակցութիւններ եւ աշխատանք: Եւ անվերջ ընդունելութիւններ:

Ու մի օր՝ հեռախօս վարչապետութեան գրասենեակից. Բուդափեշտից պատուիրակութիւն է եկել, ընդունեցէք:

Նշանակուած ժամին նախարարութեան ընդարձակ գրասենեակս մտան հինգ թէ վեց պատկառելի անձնաւորութիւններ իրենց թարգմանի հետ միասին: Հպարտաւոր, կերպարանքով ու տեսքով այնքա՜ն նման հեռապային Տէմիշվորայում տեսած իմ հայրենակիցներին:

Մեր պետութիւնը նոր էր կազմակերպւում: Փաստաբաններ, հայ վարժապետներ, խմբագիրներ եւ հանրային գործիչներ դարձել էին նախարար, եւ հայ մարդը դեռ չէր վարժուել կառավարական պաշտօնատարների հետ վարուելու ձեւին. ի՞նչպէս ասել՝ «պարոն նախարար» կուսակցական ընկերոջ: Ինչո՞ւ ժամադրութիւն խնդրել, երբ կարելի էր առանց դուռը ծեծելու, մտնել «Ընկեր Աբրահամի» կամ «Ընկեր Սարգիսի» գրասենեակը:

ARAM webaram.com

Հունգարիայից եկած պատուիրակների յարգալիր, չասելու համար երկիւղած վերաբերումը դէպի պետական հիմնարկութիւնները կամ դէպի պետութեան պաշտօնատարները առաջին իսկ օրից աչքի էր ընկել Երեւանում: Նրանք մտնում էին կառավարական պաշտօնատները այնպէս, ինչպէս սովոր էին մտնելու Բուդափեշտի պետական հիմնարկութիւնները՝ լրջութեամբ եւ ակնածանքով:

Փոխադարձ քաղաքավարական ողջոյններից եւ մի բաժակ թէյից յետոյ, սկսուեց պաշտօնական խօսակցութիւնը: Պատուիրակութեան նախագահը — կարծեմ ուսուցչապետ համալսարանի — խնամքով պատրաստուած զեկուցում տուեց Հունգարիայի հայերի մասին: Նրանց անցեալ պատմութիւնը, Հունգարիայում խաղացած դերը, ներկայ վիճակը: Իմացել էին, որ Հայաստանի անկախ պետութիւն է ստեղծուել, իրենց մէջ արթնացել էր հայրենեաց զգացումը եւ ուրախ էին «տուն վերադառնալ»: Եկել էին անձամբ ծանօթանալու Հայաստանի դրութեան եւ խնդրում էին ընդունել «մոլորուած զաւակներին»: Զեկուցումը համեմուած էր մէջբերումներով Պատուածաշնչից: Ցիշում էին Բաբելոնեան գերութիւնը եւ Ցորի չարչարանքները: Հայաստանի Հանրապետութիւնը փրկութեան լաստ էր նրանց համար:

Հարց ու փորձից յայտնի եղաւ, որ ստ այժմ մի քանի տասնեակ ընտանիքներ միայն պատրաստակամ էին ներգաղթելու, մեծ մասը մայրաքաղաքի բնակիչներ՝ մտաւորական, պետական պաշտօնեայ, տնտեսագէտ, առեւտրական: Դրամագլուխ շատ չունէին, բայց հարուստ էին մասնագիտական հմտութեամբ եւ փորձառութեամբ: Հայերէն չգիտէին: Իրենց լեզուն մաճառերէնն էր, որը Հայաստանում հասկացող չկար:

Դժուար լուծելի խնդիր: Հայաստանը ցարերի օրով յետամնաց, հազիւ նախնական տնտեսութեան շրջանը բոլորած գաւառական մի երկիր էր: Բարձր մշակոյթն ու ճարտարարուեստը նոր պիտի զարգանային: Ի՞նչ գործով պիտի զբաղուէին եւ ո՞ւր պիտի բնակեցուէին դրամատիրական տնտեսութեան եւ որակեալ աշխատանքի ու ապրելակերպի վարժուած այս մարդիկը:

Մի քանի անգամ հանդիպումներ ունեցանք, քննեցինք, չափեցինք բոլոր պայմաններն ու հնարաւորութիւնները: Զարմանալի համբերութեամբ ու մանրակրկիտ ուսումնասիրում էին բոլոր հանգամանքները, եւ վերջը եկանք համաձայնութեան:

Եկողներից ոմանք կարող էին դասախօսի պաշտօն ստանձնել Հայաստանի համալսարանում ու մասնագիտական դպրոցներում: Ո-

ARAM webaram.com

մանք գործ կ'ունենային դիւզաւանատիրութեան եւ հանքագործութեան բնագաւառում: Ոմանք չինարարութեան եւ ճարտարարուեստի ու առեւտրութեան զանազան ճիւղերում: Ոմանք էլ «մի գործ կը գտնէին իրենց համար»:

Այդ որոշումով էլ վերազարձան Բուդափեշտ...

Հունգարիայի պատուիրակներից առաջ Երեւան էր եկել մի ուրիշ պատուիրակութիւն, Դոնի եզերքներից: Սրանց «պատուիրակութիւն» կոչելը դժուար էր: Մի խումբ նախաձեռնող դիւզացիներ էին, որոնք յոգնած Ռուսաստանի քաղաքացիական կռիւներից եւ անիշխանութիւնից, դուրս էին եկել խաղաղ անկիւն որոնելու:

Դոնի շրջանում, Ռոստով ու Նոր Նախիջեւան քաղաքներից ոչ հեռու, Եկատերինա կայսրուհու օրերին, խաբէութեամբ Ղրիմից դուրս բերուած հայերը հիմնել էին հինգ զուտ հայաբնակ դիւղեր — Զալիբը, Թոփխի, Փոքր Սալա, Մեծ Սալա եւ Նիսվիթա: Բարեկեցիկ, չէն դիւղեր, որոնց բնակիչները խորունկ արմատներ էին ձգել Սարմատեան դաշտերի բարեբեր հողում:

Ընկած ռուսական ծովի մէջ՝ նրանք ամուր պահել էին իրենց լեզուն ու հաւատը, որի չնորհիւ մնացել էին հայ:

Բոլշեւիկեան քաոսը աւերի եւ աւարի մատնեց նաեւ այս դիւղերը եւ սկսեց սպառնալ նրանց գոյութեան: Իսկ անդին՝ Հայաստան էր առեղծուել, որ մագնիսական ուժով իրեն էր քաշում բոլոր հայերի սիրտը: Դոնի հայ դիւղերում թարմ էր Հայաստանի յիշատակը: Սուրբ կարապետ ուխտի գնացած ծերերը պատմում էին Ալաշկերտի ու Տարօնի դաշտերի արդասաւորութեան մասին: Բնական էր, որ բոլշեւիկների ձեռքից ազատուելու ձգտող հայ դիւղացիների մէջ էլ ծագէր «հայրենիք վերադառնալու» միտքը: Եւ ահա «պատուիրակութիւն»ը հասել էր Երեւան: Երեւան կամ Անի — միեւնոյնը չէ՞ր միթէ: Դարեր առաջ Անիից փախած՝ այժմ Երեւանն էին համարում իրենց փրկութեան կայանը, իրենց «հարազատ տունը»: Տուն էին պատրաստւում վերադառնալու:

Եւ մի առաւօտ, նախաբարական զրասենեակումս յայտնուեցին իմ հայրենակիցները: Լաթէ ամուր զօտիներով կապած չեխմանիներով, երկաթէ պայտերով երկարավիզ կօշիկներով, ռուսական զբխարկներով, արեւահար դէմքերով ու կոշտացած ձեռքերով այդ դիւղացիները կարծես նոր էին կտրուել մաճից ու գերանդիից: Հոգ էր բուրում նրանց ողջ էութիւնից: Բուդափեշտցի յղկուած դիւանագէտները ո՛ւր, սրանք ուր:

Պաշտօնական «բարեւ-առածուբարեւներից» յետոյ, անպատճառ

ARAM webaram.com

խօսքերով նրանք բացատրեցին իրենց դառն խնդիրը. «Ղազախներու մէջ տիրլիֆ չմնաց, եոխ ըլլաւ պէֆիմ: Վերը Ատուած, վարը դուն, Սիմաւոն աղա, մեզի հող պիտ տաս Հայաստանի մէջ. տունով-տեղով, պալաչաղայով Հայաստան կ'ուզինք գալ. աս է մեր հաւատացեալի կամքը»:

Մեծ սալացի էր խօսողը, իմ մանկութեան ընկերը, որի հետ կռիւ ու բոի էինք խաղացել եւ այնքա՜ն երջանիկ օրեր անցկացրել:

— Սիմաւոն աղա, դուն մեզի կը ճանչնաս, մեր հալը գիտես: Ինչ անես-չանես, մեր պատուոմը քու ձեռքդ է: Ձէնէ եոխ կ'ըլլանք...

— Հա, քու ձեռքդ է, Սիմաւոն աղա, ձայնակցում էին իր ծանրամիտ ընկերակիցները: Եոխ կ'ըլլանք:

— Ուռե՞ք կ'ուզիք հող, հեռաքրքրուեցի ես:

— Ուռեք կ'ուզես տուր: Անպէս որ պոլ ըլլայ, մեր սապանին տեղ ըլլայ: Ալաչկերտի սեմքերը, կ'ասին, աղէկ հող կայ: Մինք Ալաչկերտին ռազի ինք:

Մարդիկ տեղն էլ էին որոշել: Երկար խօսելու ի՞նչ կարիք կար: Ալաչկերտն են ուզում — Թող Ալաչկերտը լինի: Վաղը-միւս օր, այդ չրջանը մերը պիտի լինի: Թող այդ հողի ագահ, աչխատասէր ու չարքաշ իմ հայրենակիցները հաստատուեն այնտեղ: Զգեն Թող սապաճը-գութանը — տակն ու վրայ աննն պարարտ հողը: Երեւակայում եմ, ինչպէ՛ս պիտի ծաղկի այդ Աստծոյ պարգեւած հովիտը...:

Հայաստանի կառավարութեան անունից խոստացայ նրանց հող տալ Ալաչկերտում: Եւ նրանք հեռացան երկաթէ պայտերի չըխկոցով: Ցաջորդ վաղ գարնան պիտի վերադառնային այլեւս երբեք Հայաստանը չլքելու որոշումով: Հեռացան ու... Ի՞նչ եղան վերջը իմ ապաբախտ հայրենակիցները: Հողմացրիւ եղաւ Դոնի կենսունակ ու չինարար հայութիւնը: Եւ չէն ու բարեկեցիկ գիւղերի տեղ հաստատուեց... կոլխոզ:

Ի՞նչ էր մաճառացած հայերին եւ Դոնի հայ գիւղացիներին դէպի Հայաստան մղող ոյժը: Ինչո՞ւ Հայաստան եւ ոչ, օրինակ, Ամերիկա՝ բոլոր ազատասէրների եւ բոլոր հալածեալների յոյսի փարոսը: Անմեկնելի մի խորհուրդ կայ բնութեան մէջ. ի վերջոյ, մարդու մէջ խօսում է արիւնը: Արիւնը քաշում է այնտեղ, որտեղից սկսել է հոսել երակներում...

1935, Սեպտեմբեր

Փարիզ

ARAM webaram.com

ARAM webaram.com

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

		Էջ
1.—	ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ	5
2.—	ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ	7
3.—	ԹՈՒՂԱՑԸ	10
4.—	ԶԻՐ ՄՆԱՑԵԼ ՀԱՑՈՒԹԵԱՆ ՀԵՏՔ	21
5.—	Ի՞ՆՉՊԷՍ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵՂԱՑ	48
6.—	ՄԵՐ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ	53
7.—	ՍԱՍՈՒՆԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ	63
8.—	ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏ	71
9.—	ԱՐԱՓԱԾԻ ԼԱՆՋԻՆ	106
10.—	ՇՐՋԻԿԻ ՑՈՒՇԵՐԻՑ	117
11.—	ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի Կ. ՊՈԼԻՍ	131
12.—	ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ	138
13.—	ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՄԻՋԵՒ	156
14.—	ԶԻՐ ՈՒԶՈՒՄ ԷՇ ՆԱՀԱՏԱԿ ԼԻՆԵԼ	181
15.—	ՍԱՐԸՂԱՄԻՇՈՒՄ 1918ԻՆ	192
16.—	ՓՈԹՈՐԻԿ ՍԵՒԱՆԻ ՎՐԱՑ	208
17.—	ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ	219
18.—	ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ	236
19.—	ԱՐԵԱՆ ՁԱՑՆԵՐ	267

ARAM webaram.com

ՏՊԱՐԱՆ ՀԱՄԱԶԳԱՑԻՆ

Պատուէր 284

Տպաքանակ 1500

Պրակ 18

Լոյս տեսաւ 4 Դեկտեմբեր 1967

Printed in Lebanon HAMASKAINE Press

ARAM webaram.com

ARAM webaram.com

Կեդրոնատեղի՝
Librairie "HAMAZKAINE"
10, Rue Hussein Beyhoum
Beyrouth - Liban

ARAM webaram.com